

ՓՈՐՁ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱԿԱՆ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.

ՆՈՅԵՄԲԵՐ

№ XL

ՏՓԽԻՍ

1879.

ΦΙΛΗ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

ΕΛΕΓΧΕΤΑΙ ΤΟ ΚΑΛΩΣ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

ΠΡΟΤΕΡΟΝ ΕΣΤΙΝ ΤΟ ΚΑΛΩΣ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա.

(Հրապարակական դասախոսութիւն. կարդացուած Տփլիսում 1879 թ. ապրիլի 29-ին)

Ես ինձ կարեւոր և նուիրական պարտաւորութիւն կը համարիմ բուն մեր առարկային չի մտած՝ իմ շնորհակալութիւնքս յայտնել ձեզ՝ իմ ազգայնոցս հիւրասէր ընդունելութեան և այն մարդավարութեան համար, որ այս հայ քաղաքս մտած օրէս ընդունեցայ: Կը շնորհաւորեմ ձեզ՝ թիֆլիզաբնակ ազգայնոցդ մեծ յառաջադիմութիւնը որ ըրեր էք երեսուն և հինգ տարուան միջոցի մէջ, յորում ես ծերացայ և դուք երիտասարդութեան մտաւոր զարգացումն ու կորովն առիք. և ես կը յուսամ թէ այդ զարգացման մէջ դուք այնպէս և այնչափ շուտով պիտի յառաջադիմէք՝ և այնչափ արագ պիտի քայլէք որ հայոց առաջինը պիտի լինիք, թէպէտ ինձ աւելի փափաքելի էր որ յետինը Վասպուրականի զիւղերուն ձեր կովկասն ու Պոլիս յետ թողու իւր մտաւոր բարգաւաճանօք՝ որոնց լուսաւորութեան համար երկուքն էլ ձեռք ձեռքի տուած կ'աշխատին, և որոնց աշխատութիւնը յուսանք Աստուծով՝ պսակուի:

Բայց պէտք է որ այս բանախօսութեան չսկսած ձեր ներողամտութիւնը և ձեր համբերութիւնը խնդրեմ որովհետև ձեր և իմ խօսակցութեան ոճի և հնչմունքի մէջ կան զանազանութիւնք, որ գուցէ մէկ մեծ մասին խորթ և երբեմն անիմանալի թուին. այս պակասութիւնը ոչ իմն է և ոչ ձեր՝ այլ երկրի հեռաւորութեան, հաղորդակցութեանց միջոցներու դժուարութեան, որ ժամանակին յառաջադիմութիւնն օր աւուր կը կարճէ և կ'ընտելացնէ: Նոյնպէս յայտնի է հիմկու հայ լեզուն որ շատ զարգացաւ այս վերջի ժամանակներս դեռ իւր կատարելութիւնը գտնելով՝ հայ ազգին լեզուաց

զանազան տարբերութիւնք պիտի միայնէ, և մինչև այն ժամանակ համբերութեան ու միմեանց ներողամտութեան պէտք պիտի ունենանք:

Եւ բարեբաղդութիւն պէտք է համարինք որ արդի սերունդը՝ որ լուսաւորութեան կարօտութիւն կը զգայ՝ խնայաւ. կարեւորութիւնը գործածական լեզուն գործիք առնուլ՝ հասնելու և ձեռք բերելու համար մտաւորական զարգացումը այս վերջի ժամանակներս. լրացիրք առաջին եզան բանիւ և օրինակաւ լեզուն մշակելու. կամայ և ահա մայ, և այն բանը որ քերականական կանոնները ընել չէին կրնար՝ աշխարհաբար լեզուին յառաջագիւմութիւնը՝ գործածութիւնը ըրաւ և դեռ պիտի ընէ:

Այս՝ լրագրաց այս ծառայութիւնը ոչ դք չի կրնար ուրանալ. իրենք ազգին մեծ օգնութիւն ըրին և կ'ընեն, և այս օրուան Թիֆլիս նախանձելի օրինակ մը կ'ընծայէ ազգին եթէ խորհրդածենք թէ երեք չորս օրագիր՝ լրագիր կամ հանդէս որ կը հրատարակուին այս քաղքիս մէջ անձնութեան օրինակ մ'են խմբագրապետաց, անձամբ և 'ի մօտոյ զիրենք ճանաչելով տեսայ որ նիւթական և աննիւթական զոհողութիւն կ'ընեն շարունակ, իրենց պատերազմական արհեստին մէջ կը կռուին՝ կը զարնուին՝ կը հարուածեն՝ կը հարուածին, բայց անխոնջ միշտ՝ գաղափարաց այս պատերազմին մէջ կանգուն կը կենան ու տեղի չեն տար:

Այս նիւթին վրայ երկար թերեւ խօսեցայ, վասն զի երբեմն ճշմարտութիւն՝ շողոքորթութիւն կրնայ կարծուիլ, մանաւանդ երբ հասարակաց առջև ելած մարդ մը քննաբանութեան առարկայ է և պէտք է լինի: Բայց կ'ապահովեմ ամենքը թէ՛ ճշմարտութեան զինուոր, ճերմակ մօրուքս ստութեան սևով ներկել երբեք չեմ փափաքել:

Մանենք ուրեմն մեր խեղրոյն մէջ, ուսնինք Վիլիկիա. «Պորձի» վերջին թւոյն մէջ գեղեցիկ յօդուած մը կար՝ Նւրուպցի հեղինակի գրութիւն լաւ դատողութեամբ, լաւ տեղեկութիւնք տուել էր այս երկրին համար, բայց ուրիշ է բուն հայու մը՝ Վիլիկիոյ՝ վրայ աչք դարձնել, ուրիշ է օտարի մը ակնարկութիւն՝ որուն համար հին յիշատակ և հայրենակցաց արդի վիճակ կապ չունին ամենեւին: Այն քարին վրայ ուր Նւրուպցի ճամբորդը գրութիւն մը միայն կը տեսնէ, հայր յիշատակ մը՝ սիրտ մը կը դանէ: Հայուն համար երկրորդ հայրենիք է Վիլիկիա, ուր 300 տարի ինք տէր եղել է, երբ բուն մայրն

Հայաստան բարբարոսաց ոտքին տակ կը հեծէր: Եւ հիմա՝ այս օր այդ երկրին երբեմն տէր եղող բնակչաց զաւակներն դառն հալածանաց մատնեալ՝ հարստահարութեանց՝ յափշտակութեանց՝ բախտերու և մահուան վտանգի ենթակայ են: Սիս՝ արքայանիստ քաղաք երբեմն անշուք զիւղէ դարձել, կաթողիկոսական աթոռը աղտեղութեանց և զարշուծեանց վայր է դարձել, աստուածային իմաստութեան նուիրեալ մայր եկեղեցին, ուր Հայոց թագաւորք կը պսակուէին, կիսակործան թողուելէ անխնամ, և Տորոսի բարձանց վրայ հայուն ձեռքը ուր դեռ երեկ տուրն ու հրացան կը փայլէին՝ շղթայներ են փոխանակել:

Օտարը այս տեսարանին վրայ հարեանցի աչք մը կը ձգէ, իսկ հայ մարդ չի կրնար անտարբեր և անկարեկիր տեսնել այս վիճակը, ուր հարիւր հազարի մօտ իր եղբայրները անողորմ հալածանաց և թշուառութեանց ու ազիտութեան մէջ կը հեծեն: Այս է պատճառը որ ինձ համարձակութիւն կուտայ հոս ելնելու, և ձեզ՝ համբերութիւն և ներողամտութիւն ինձ լսելու՝ բարի գործ մը կատարելու նպատակաւ, օգնելու այդ եղբարց որ մեր արեւակիցք են, նոցա զաւկըներն են որ օտարացեալք ՚ի բնիկ հայրենեաց՝ երկրորդ Հայաստան մը և պատսպարան կանգնեցնեն Տորոսի ժայռերուն վրայ, և որ աւերակներ շէնցուցեր են, Հայկայ լեզուն՝ լուսաւորչայ կրօնքը և աթոռը փառաւոր ցըուցեր են անհաւատից և քրիստոնէից, և այդ օտար երկիրներուն ու բարբարոս ժամանակաց մէջ հայ զրականութեամբ՝ օրէնսդրութեամբք և վաճառականութեամբք Ֆրանսիայի՝ Իտալիայի և Գերմանիայի ծանօթացուցեր են՝ թէ կայ քրիստոնեայ Ասիացի միմիայն ազգ ընդունակ և յարմար քաղաքականութեան և որուն փոքրիկ ձեռնաւորութիւն մը կը բաւէ լինելու խաղաղ և խելօք զինուոր յառաջադիմութեան:

Ա.

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ.—ԳԼԽԱԻՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.—ԿԻԼԻԿԻԱ ՔԱՐԱՅԻՆ.—ԿԻԼԻԿԻԱ ԴԱՇՏԱՅԻՆ.—

Փոքր Ասիոյ հարաւային արեւելեան ծայրը, Միջերկրական ծովու ափանց վրայ, Կիպրոս կղզւոյն հանդէպ, դաշտավայր երկիր մը կայ ընդարձակ, շրջապատեալ Տօրոս լեռանց զօախներով իբրեւ թէ պարսպաւ, ահա այդ է Կիլիկիա: Այդ ընդարձակ դաշտին հիները «դաշտային Կիլիկիա» անուն են տուեր, երբ նորա արեւմտեան կողմը

զանուած լեռնոտ ափանց, ուր երբեմն հովիտներ, և ձորեր կան, Տօրոսի շարունակութեանց մէջ, «Քարային» կամ «Եայտային Վիլկիան» անուաներ են: Ուր Տօրոս իւր ժայռերով փոքր և խիստ ծովածոցներ կը շինէ, երբեմն կ'ընդարձակի՝ քաղաքաց ու գիւղերու հետքեր ցոյց կուտայ, երբեմն այնպէս կը նեղնայ որ ձիուն ոտքը ծովուն ալիքները կը թանան, և ճանապարհորդը վտանգ մը անցուցած լինելու իրաւունք ունի: Գետակներ՝ առուներ՝ փոքրիկ վտակներ անպակաս կը զանուին, և Տօրոս թէև ահաւոր՝ բայց ծառ և թուփ իւր ժայռերուն խառնելով կենդանութիւն կ'առնէ: Եթէ կարելի լինէր կենդանութեան նշան համարել քաղաքաց՝ բերդերու՝ գիւղերու աւերակները և գերեզմանաց անհատնում շարքը և վայրենացեալ ձիթենիներ: — Բայց ի՛նչպէս կարելի է տեսնել մարդու ձեռագործը՝ երեք չորս օր ճամբայ ընել և կենդանի մարդու կերպարանք չի տեսնել և տխրութեամբ չի համակիլ, տեսնել Սելեկիլոյ բերդը՝ Կորիկոսի բերդը իւր աշտարակներով՝ տեսնել Հեթումի անունը արձանագրեալ, և պարիսպներու ընդարձակութեան մէջ քարերու կոյտ միայն զանել, և տխրութեամբ չի համակիլ:

Այսպէս տեսայ ես այդ Քարային Վիլկիան, ուր բնակութիւն գրեթէ չէ մնացեր և ձմեռը լեռներէն կ'իջնեն թափառական ժողովուրդք և Ամերիկայի կարմիր մարդկանց պէս իրենց կենդանեաց հետ աւերակներու՝ ժառերու մէջ կը բնակին:

Իսկ Դաշտային Վիլկիան դաշտ մ'է որ կէս լուսինի ձևով Միջերկրականի եղբքէն կը տարածուի՝ ամեն կողմէն սահմանափակեալ Տօրոսի լեռներէն, ուր քաղաք անունի արժան միայն Ատանա է, իսկ միւսները Անարզատ՝ Մամեստիա՝ Այաս՝ նոյն ինքն Տարսոն՝ այսօր աւերակ աւաններ են, և ոմանք գիւղ: Շատ գիւղերու աւերակներ դաշտին տարածութեան մէջ կը տեսնուին, և ամբաւ հոյի տարածութիւն անմշակ ու լքեալ:

Բ.

ՎԻՒՄԱ. — ՋԵՐՄՈՒԹԻԻՆ ՕԴՈՑ. — ԱՊԱԿԱՆՈՒԵԱՆ ՊԱՏՃԱՌԻ. —

Լայնութեան 36—37 աստիճաններու տակ Վիլկիան աւելի բարեխառն կլիմայի կը վերաբերի քան թէ սաստիկ ջերմութեան. բնութիւնը տուեր է իրեն օդը զովացներու միջոցներ, ամառը կանոնաւոր հարաւային քամի մը, որ կէս օրին կը սկսի և արեւուն ճառագայթ-

ներուն խառութիւնը կը չափաւորէ. անտառային լեռներ ուր մարդս ինչ չափ ջանացեր է զանոնք փճացնել, դարձեալ չէ յաջողեր ըստպատշաճութեամբ ընել և հասցնել:

Չմեռը չորս ամիս անընդհատ անձրեւներ կուգան ու երկիրը կը կշտացնեն ջրով: Բնդհադառան, Վիպրոսի կղզին, որ քիչ մը հեռու է շատ անգամ ջուրի նեղութիւն կը քաշէ՝ երաշտութենէ կը տանջուի: — Այս երկիրը ուր ջուրն աւատ է Տօրոսի շնորհիւ, դարձեալ օդի վատաւոր լինելն յայտնի է՝ երբ բնակչաց դժգոյն կանաչ և բոսոր կը տեսնէ ուղեւորը, նոցա չոր նիհարութիւնը այն աստիճանի է որ մորթի տակ կարելի է ոսկորները համրել. փոքր երեխայք ահագին փոքր ունին և մանր ու վախտ անդամներ, դուխ մը փոքր ուր ցցուած ոսկորներ միայն կ'երեւան և մարած աչքեր: Մարդ չի կայ որ ջերմին եղբայր քոյր չլինի մինչև դերեզման՝ մանաւանդ վարի աստիճանի աղքատ դասուն մէջ:

Այս տեսարանը միայն բաւական է ցոյց տալու թէ վատաւորը և մարդասպան կլիմայի մէջ կը շարժի մարդ, և կեանքը շատ կարճ է այդ երկրին մէջ: Այս տեսարանը միւսնոյն է Վիպրոսի կղզւոյն մէջ, բայց դարձեալ Անգլիա այդ մահահոտ կղզին չի դանդաղեցուցաշիւղ. Օսմանեան տէրութենէն փոխարէն խոստանալով և երաշխաւորելով իրեն ապահովութիւն Ասիական ստացումաց: Բայց Անգլիա գիտէ ընելիքը, և ես առանց մարգարէ լինելու խօսք կուտամ թէ տասը տարի չեղած Վիպրոս անտառներով կը ծածկուի՝ ճահիճները կը չորնան, կ'անհետանան՝ բնակիչքը կ'առողջանան, կը շատնան և կը հարստանան, բնակութիւնքը կը բարձրանան և կը բարեձեւին, և անջուր երկիրը ջրաբեր կը լինի՝ աւագը հող կը լինի, և փոխանակ հուր շնչելու Վիպրացին զով օդ պիտի շնչէ: Անգլիացին միթէ հրաշք գործելու կարողութիւնն ունի՞ պիտի ըսեն, — հանձարիղ և իմաստուն կառավարութիւնք միշտ հրաշք գիտեն գործել, իրենց ձեռքին տակ անբան էակը բանական մարդ կը դառնայ, անապատք՝ շէն կը լինին, ճահիճներու վրայ փառաւոր քաղաքներ կը բարձրանան:

Եւ որովհետեւ կլիմայի վրայ կը խօսինք, բնութեան գեղձմունքը ինչպէս գիտէ մարդ բարեփոխել, նոյնպէս գիտէ նա այդ գեղձմունքը չարէի չարաւորոյն տանիլ: Զարմանալի օրինակ մը պատմեմ ձեզ անկանառես:

Երբ Տարսոն էի 1861, հոկտեմբեր ամսուն մէջ քանի մը ընկերներով քաղքին շրջակայքը պտոյտ ընելու ելանք, և անմիջապէս

քաղաքին քով մտանք ճախնային եղէգներու և անձոռնի խոտերու անտառ մը որ չորս հինգ ժամուան ճամբայ տարածութիւն ունէր, արդէն խեղճ գիւղեր կլլեր էր ճախինը և եզերքը կային զեռ որ մօտ էին կլլուելու, վասն զի օր աւուր ջուրը, ցելը կը տարածուէին և բնակիչք սովորած մեռնելու օղին ապականութենէն՝ այն ատեն պիտի հեռանային այդ երկրէն, երբ իրենց խրճիթներուն տակ ջուրը հասնէր և բնակութիւն անկարելի լինէր:

Չորս տարի ետքը ես գնացի էի Ռուսմուք, այնտեղ ծանօթացայ բրուսիացի վախման անուն ճանապարհորդի մը հետ, որ զնդապետի աստիճանն ունէր: Վախման պէյ ինք պատմեց թէ Տարսոնէ կը դառնար, ուր գնացի էր Ֆուատ փաշայի հրամանաւ: Ահա իր պատմութիւնը.

«Տարսոնի բնակիչք աղերսադիր մը տուեր էին Սատրաղամ Ֆուատ փաշային խնդրելով որ առանց կառավարութեան օգնութեան իրենց քաղաքը ճահիճը պիտի կոխէր, օղին ապականութիւնը վերջին աստիճանն գտել էր, և Ֆուատ ինձ հրամայեց որ երթամ քննեմ և ճար ընեմ: Ուստի զնացի. փաշան, միւշթիին (դատաւոր), քաղաքական և դատաստանական ժողովներն զիս մեծարանօք ընդունեցան և խոստացան տմեն օգնութիւն ինձ ընելու. և միւշթիին կանչել տուաւ իւր որդին և հրամայեց երկրորդ օրը ինձ համար ձիեր պատրաստել և տանել, պէտք եղած դիւրութիւններն ու տեղեկութիւնները տալ, որպէս զի քաղաքին վիճակը բարելաւի: Առաջ տուն քանի մը ձիաւորք կուգային միւշթիին որդւոյն հետ. կերթայինք ճահիճին ամեն կողմը կը շրջադայէինք. ես կը խնդրէի իրենցմէ ինձ խմացնել թէ ուսկից կուգայ ջուրը, իրենք միշտ «չենք գիտեր» կը պատասխանէին: Վերջապէս յուսահատելով և տեսնելով թէ անկարելի է այս մարդիկներէն բան իմանալ, յայտնեցի օր մը թէ ես վաղուին կուգէի հանգչել, և առաջօրուն շրջակայ գիւղերուն մէկը գնացի տեղեկութիւն առնելու թէ ճահիճին ջուրը ուստի կուգայ: Առաջ չգիտնուլ ձեացան, բայց վերջը քիչ մը սպառնալիք՝ քիչ մը համոզմունք, քիչ մը քաջալերութիւն իրենց սիրտ տուին, և աւրին զիս ցոյց տուին Նիւնոս գետէն բաժնուած մէկ վտակ մը, որ միւշթիին ինք բաժնել տուել էր՝ ջաղացք մը շինելով իրեն եկամուտ: Այնչ ծախքով (հազար բուպլի) վտակը գետին դարձուցի և ճահիճը չորցաւ:»

Ահա ջաղացքի մը եկամուտ որ զիւրեր կը կլլէ, հուշակաւոր

քաղքի մը օդը կ'ապականէ, և այն մարդուն ձեռք՝ որ այդ երկրին արդարութեան առաջին պաշտօնեայն է:

Մեր խնդիրէն դուրս ելնել չեմ համարիր այս զօշաքաղութեան պատմութիւնը, որ մարդկային կեանքին վնասակար լինելու փառաւոր օրինակն է. ուրիշ օրինակ մը նաեւ պէտք է յիշել որ Տարսոնի քաղքին ամեն օր և չափաւ թոյն կը մատուցակէ: — Կիւղնոս գետը, որ Տարսոնի քովէն կ'անցնի քաղքին միմիայն խմելիք ջուրն է. խմուած ժամանակը բաւական քաղցր է, բայց քիչ մը վերջ դառնութիւն կը ձգէ մարդուս կոկորդը և այնպիսի ջերմ կլիմայի մէջ զմարդ կը սլարտաւորէ անյադարար խմելու: Տարաւի ծարաւ կը յաջորդէ: Բնակիչք ամենքը կը զրուցեն աւանդութեամբ թէ այս ժամանակներէս 150 — 200 տարի առաջ Կիւղնոսի ջուրը քաղցր և առողջարար է եղել, բայց վերջը տպականներ է, որովհետեւ ազէս և յիմար մարդիկ երկաթի դուռ մը դտեր են Կիւղնոսի ափանց մօտ և կարծելով թէ դանձ կայ ետին, դուռը խորտակեր են և բանտալ գետակ մը եկեր խառնուեր է Կիւղնոսի: Եթէ այդ ազէս մարդիկ զխնային կարդալ յունարէն, կը տեսնէին թէ իրենց կարծեցեալ դանձը սխալ թունաւորէր Կիւղնոսի ջուրը. վասն զի արձանագիրը կ'ըսէ. «ի սլատիւ և ի շնորհակալիս (այս անուն ¹⁾) ճարտարապետին, որ կրցաւ սանձա հարել և խցել այս վնասակար ջուրը, այս արձան յիշատակի «կանգնեցին Տարսոնայիք»: Յոյնք՝ Արաբք՝ Հայք այս դուռը յարգել են և Սև ջուրը (ինչպէս կ'անուանեն զայն բնակիչք) իւր բանդին միթութեան մէջ մնացեր է անվնաս դարերով. բայց վերջապէս ի շնորհա տգիտութեան դարձեալ լոյս է տեսել դառնացնելու համար Կիւղնոսի քաղցր ջուրը:

Գ.

ՀՈՂԻ ԱՐԳԱՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿ

Կիլիկիոյ հողին արգասաւորութիւնը միշտ հռչակաւոր եղած է. և խորենացւոյն աշխարհագրութիւնը «ամենաբեր դրախտի» կը նմանցնէ Կիլիկիոյ երկիրն. այդ հողը որ շրջապատող Տօրոսի լեռներէն կ'իջնեն զանազան գետք՝ վտակք՝ և հեղհեղատք, և որ առաւօտեան

¹⁾ Անունը միտքս չէ:

ցօղը կը թանայ մասնաչափ, ըստ ոմանց Նզիպատոնի կը բաղդատուի: Յորենը՝ զարին՝ բամպակը՝ կնճիթը, ողորմելի մշակութեամբ նաև, զինք բաւականացնելէն վերջ, մօտակայ և հեռաւոր երկիրներ կը կշտացնեն: Փայտը, անգութ, սնկնայ և յիմար գործածութեամբ նաև դեռ նաւեր կը լեցնէ, երթալու շրջակայ և հեռաւոր երկիրներ: Սուէզի ջրանցքին շինութեան պէտք եղած փայտը մեծաւ մասամբ Տօրոսի լեռները մատակարարեցին: Պողատու ծառերու անտառներ նաև կան. երբեմն Նզիպատոսի Նպրահիմ փաշայի բանակէն 15,000 մարդ Մարաշու կողմերը ծիրանի ծառերու տակ բնակել էին: Խաղողի տեսակներ կան որ ուրիշ երկիրները զինի լինելով հարստութեան աղբիւր են, այս տեղ անարգ զինով կը ծախսուին և նոցա մշակութեան խնամք ամենեւին չի տարուիր: Ատանայի շրջակայք՝ Սարուս գետի եզերքը սեխն ու ձմերուկ և զանազան բանջարեղէնք արտաքոյ կարգի մեծութիւն և քաղցրութիւն ունին:

Երկրագործութեան արհեստը, ինչպէս բոլոր Տաճկական Ասիոյ մէջ, շատ յետամնաց դրութեան մէջ է, ի բաց տօեալ մէկ քանի երևելի ամենուտեարց ազարակներ, ուր ջանք կայ հօղի բնական արգասաւորութենէն օգուտ քաղելու, միւս արտերը հին և ողորմելի կերպիւ նաև մշակուելով՝ մէկին քսան, երեսուն փոխարէն շատ անգամ կ'աւելուն: Ամերիկայի պատերազմի պատճառաւ բամպակի մշակութիւն բաւական յառաջադիմութիւն ըրաւ, և Նիլիկիոյ բամպակը Նզիպատոսէ վերջ Տաճկաստանի ամենէն լաւ բամպակը կը համարուի:

Քարային Նիլիկիա որ երբեմն ձէթի մեծ առուտուր կ'ընէր և ձիթենի կը մշակէ եղեր՝ այսօր գրեթէ զուրկ ի բնակչաց մնալով, ձիթենիք նաև վայրենացեալ են, երբ թափառական ժողովուրդք չեն ջարդեր զանոնք վառելու համար:

Թէպէտ այսչափ յետամնաց է երկրագործութիւնը, բայց հունձքի ժամանակ մինչև ի խարբերդէ հայ մշակներ կ'իջնեն վարձքով աշխատելու և փող շահելու համար: Եւ այս՝ այն տարւոյն, այն եղանակին և այն ամիսներուն մէջ, որ ամենէն մահաբերը կրնայ համարուիլ: Այս նաև վկայ կրնայ լինիլ թէ ինչչափ շահաբեր է երկրագործութիւնը Նիլիկիա:

Աւերդդ կը համարիմ խօսիլ ընտանի կենդանեաց վրայ, որոնք առատաբար ունի Նիլիկիա:

Նոյնպէս դարձեալ հանքերու մասին, ինչպէս Նիլիկեան Նիրճերու մօտ ամեն աշխարհագրաց յիշած արծաթախտուն կա-

պարի հանքի վրայ, որ երբեմն սկսած են բանեցնել, բայց ինչպէս տոժորութիւն է, ճաճկաստանի ամեն այս տեսակ աշխատութեանց նման վնաս տեսնելով թողած են անխնամ: — Միայն յիշելու արժանի է Պուլլար լեռանց մօտ գտնուած հանքային ածուխի մէկ տեսակին զիւոր, որ հայ Սամուրքաշեան երեւելի վաճառական մը Ատանայի՝ շատ արգելքներու յաղթելով սկսեալ էր բանեցնել ութ տասը տարի առաջ և երկաթի ճանապարհ մը շինել անկից Ատանայի քաղաքը կը ջանար. մահը վրայ հասաւ և չգլխեմ թէ գործը առաջ գնաց թէ ոչ:

Դ.

ՋՈՒՐ. — ԳԵՏՏՔ. — ՃԱՆԱՊԱՐՀՔ ԵՒ ԳԵՏՈՑ ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Միայն պէտք է յիշատակել զլեւուոր գետերը որ Կիլիկիոյ երկիրը կ'առնեն:

Արևմուտքէն դէպ, արևելք Սելևկիոյ քովէն կ'անցնի Քալքիթնոս գետը, որ զերեզման եղած է հռչակաւոր Գերմանիոյ կայսեր Բարբարոսային. ես սոսկալով անցեր եմ իր մէկ հատիկ կամուրջին վրայէն որուն մէջտեղի կամարը փեր էր, և մէկ երկու փայտ դրած էին հաղորդակցութիւնը պահելու համար:

Թողլով Լամասի և Պոմպէուպոլսոյ գետակները, Տարսոնի գետը կայ Կիզնոս, և վերջը Սարուս, որ Ատանայի քաղքին քովէն կ'անցնի սքանչելի և բարեհամ ջրով. ես տեսած եմ այս Ատանայի առջև փոքր նաւեր Կիպրոսէ եկած, որ այս գետին մէջէն նաւարկելով վեր ելած էին նոյն քաղքին մօտ. այս կը նշանակէ թէ քիչ մը աշխատանքով կարելի է չափաւոր նաւերու նաւարկելի ընել Սարուս գետը: Բայց դժբաղդութիւնը այս քիչ մը աշխատանքը գտնելու վրայ է:

Չունինք նիւթ յիշելու Պիռամոս և Պինարէս գետերը:

Միայն այս առատութիւն գետոց կը զարմացնէ ամենայն ոք, երբ յիշէ թէ Փոքր Ասիոյ ամենէն մեծ պահասութեանց մինը գետոց սակաւութիւնն է բազմաամմը իւր ընդարձակութեան. նոյնպէս եթէ ոք բազմաաւ այս երկիրը հանդիպակաց Կիպրոսի կղզւոյն, որու աշխարհացոյց տախտակաց վրայ նշանակեալ մէկ հատիկ Բէպքան գետը նաև ամառուան երեք չորս ամիսը կը ցամքի բոլորովին, և իրաւացի է զնա հեղհեղառ անուանել քան թէ գետ:

Ամեն աշխարհագիրք հին ժամանակներէ մինչև հիմա միշտ կը նշանակեն Վիլիկիոյ մէջ այս գետերուն լեռներէն իջուցած հողով երկրին ընդարձակիլը. մինչև զրուցեր են իբրև զուշակ թէ օր մը Վիլիկիոյ դաշտավայրը ընդարձակելով պիտի հասնի և միանայ Վիպրոսի: Ո՛ր զիտէ այս զուշակութիւնը թերևս նշանակէ թէ ինչպէս Վիպրոսի տէր դարձան Անգղեացիք, նոյնպէս տէր լինելով Վիլիկիոյ՝ պիտի միացնեն այս երկու երկիրները իրենց իշխանութեան զաւաղանին ներքև:

Այն ժամանակ ոչ մէկ՝ այլ քանի մը նաւահանգիստ կրնայ ունենալ Վիլիկիա, ինչպէս Վիպրոսի համար Անգղիոյ նախարարը կը խոստանայ իւր ազգին՝ դալ տարի՝ այնպիսի նաւահանգիստ մը, որ Միջերկրականի բոլոր նաւատորմիլը կարենայ պատասխարել:

Ստոյգ է որ Մերսին նաւահանգիստ չէ, այլ նաւամատոյց, բայց Ալեքսանդրեթի համար նոյնը չի կրնար զրուցուիլ, վասն զի քիչ աշխատութեամբ փառաւոր և ընդարձակ նաւահանգիստ մը կրնայ լինիլ և Միջերկրականի բոլոր տէրութեանց նաւերը կարող է պատասխարել:

Բայց պէտք է յիշել թէ Մերսինէն մինչև վերջն արևելեան ծայրը Վիլիկիոյ բոլոր ծովեզրը ճահիճներ են կազմուած. գետերու բերած աւազը, ծովուն տեղատուութիւնը և պեկոծութիւնք վեր վայր չըջած են ամուսնքը. այս վիճակին դարման կարելի է ընել և օրինակներ կան, բայց ոչ Արևելք. արևմտեան աղղայ՝ Անգլեացի, Հոլանդիացի, Ֆրանսիացի ազգաց աշխատասիրութիւնը պէտք է այսպիսի դործոց համար:

Վիլիկիա չունի կառքի ճանապարհ, ուղտը՝ ձին ու ջորին կը ճանապարհորդեն ինչպէս կրնան, նոյնպէս մարդն էլ նոյա նման իյնելով՝ ելնելով աղմի մէջ խրելով կանցնի այս անցաւոր աշխարհիս մէջ. երկրին տեարքը Սողամնի պէս ըսեր են. Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ունայնութիւն է, նոյնպէս ճանապարհը ունայնութիւն են:

Ե.

ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒՅՍՏՐ

Վիլիկիոյ վաճառականութիւնը կը կայանայ զլիաւորապէս (exportation) արտաբերութեանց վրայ: Երկրադործական բերքերը՝ ցորենն ու գարին շրջակայ տեղուանք կ'ուղարկուին, զլիաւորապէս Աստ-

րիք: Իսկ բամպակը Անգլիա և Ֆրանսիա: Անձիթը զրեթէ բոլորովին Ֆրանսիա՝ որուն ձէթը հոտաւէտ ածառ և իւղեր շինելու կը դործածուի:

Ներքնաբերութեանց ապրանքները սովորական հասարակ տեսակ բամպակեղէն և բրդեղէն կտաններն են. երկաթեղէնք, պղնձեղէնք, ապակեղէնք և այլն, որ Աւստրիայէ և Անգլիայէ կուգան:

Վաճառականութիւնը մեծաւ մասամբ Հայոց, Յունաց և քանի մը Եւրոպացւոց ձեռքն է: Հայք՝ թէպէտ երկրին զլիաւոր կալուածատեղք և վաճառականք են, բայց դարձեալ միշտ Օսմանեան տէրութեան հպատակք են, ուստի զիւրաւ կ'ընկճին. մինչդեռ Յոյնք, որ սովորաբար Եւրոպական հովանաւորութեան տակ կը գտնուին, ազատ են ճնշումէ, և հիւպատոս մը կը գտնեն իրենց շահերը պաշտպանելու համար:

Փառիաքելի էր որ Կովկասային հայ վաճառականք՝ Ռուսիոյ տէրութեան հպատակք՝ Տաճկաստանի զանազան ծովեզրեայ քաղաքները տուններ հաստատէին. ինձ այնպէս կ'երևայ որ, թէ իրենց անձանց և թէ երկրի ազգայնոց օգտակար կը լինէին:

Իսկ արհեստներու մասին կրնայ զրուցուիլ թէ եղած արհեստները թէ և խեղճ վիճակի մէջ, կրպակները Ատանայի քաղքին մէջ զլիաւորաբար հայոց ձեռքն է. դարբնութիւն՝ ոսկերչութիւն՝ Կերձակութիւն, կօշկակարութիւն, հացագործութիւն ընդունելը բոլոր հայք են:

Զ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան կառավարութիւնը կուտակալի մը կը յանձնէ նահանգը որ վալի կ'ըսուի. իւր ձեռքին տակ կը կառավարէ զաւանները մ ու թ ս արը Ֆ ն ե ռ ո վ, որ զանազան փոքրիկ քաղաքներ կը նշտահին: Իսկ աւանները և զիւղերը կը կառավարուին ք ա յ մ ա ք ա յ մ ն ե ռ է և մ իւ տ իւ լ ը ն ե ռ է:

Թէ վալին՝ թէ մութասարըքը և թէ միւսները իրենց ժողովքներ ունին զլիաւոր պաշտօնատէրներէ և ժողովրդեան ընտրութեամբ անդամներէ բաղկացեալ: Կրօնական առաջնորդները ըստ իրաւանց անդամ են այս ժողովքներուն: Այս ժողովքներուն, որ Մ է ճ

լիսի—Ի տարէ կը դրուցուին, այսինքն Տնտեսականք ժողովք, անդամները ձրի՝ այսինքն անվարձ կը ծառայեն:

Այս ուրիշ ժողովք մը՝ Վատաստանական ժողովք, որուն նախագահը միւլթիին է, այսինքն կրօնական անձ մը, այս ժողովքին դատաւոր անդամները վճարուած են տէրութենէն, բայց դատաւորուն մէջ շատ քիչ է իրենց վճարմունքը, եւ զիտեմ դատաւորներ որ խոհարարի մը ամսական կ'առնուն, այդպիսի փափուկ պաշտօնի մը համար այդպիսի վճարմունքներ լաւ չի կրնար համարուիլ, եւ կը վախճուի որ արդարութեան պաշտօնեայք՝ արդարութեան վաճառականք դառնան. եւ այդ օգտակար չէ ժողովրդոց:

Մանթրօ կը յիշէ այնպիսի կուսակալ մը, որուն համար արտօրէ Պօլիս թողուլ եւ երթալ Ատանա բնակիլ. թշուառ մարդուն աչքը ճանապարհին վրայ է որ դարձին լուրը բերեն իրեն: Բայց կան այնպիսիներ որ կ'աշխատին եւ խելօք կը շարժին, որ երբ մայրաքաղաքը դառնան եւ անպաշտօն մնան կարենան անկարօտ ապրիլ: Սոցա մէջ կան՝ որ շատ օգտակար չեն լինիր ժողովրդոց, երբ անձնական օգուտը շատ եւ չափազանց սիրեն եւ մինչեւ թշուառութենէն մեծած մեծ օգուտներ քաղելու հնարքներ ստեղծեն:

Բայց երբ վարերը իջնենք՝ մութասարքներ կը գտնենք որ կարգալ դրել չեն զիտեր՝ նաեւ իրենց լեզուով, եւ որովհետեւ պահանջող չենք Եւրոպացի ճանապարհորդաց պէս, կ'ըսենք զխոթութեան տեղ սրամտութիւնը իրենց կատարելութիւնն է, կ'անցնինք եւ աւելի վար քայմաքամներու եւ միւսիրներու կ'իջնենք, որ երբեմն կը գտնենք զինեմը, տկար, խեղճ, տղէտ եւ յիմար մարդիկ, որ շատ անգամ բուն իրօք յետին ծառայութենէ եկած են, եւ միջնորդութեամբ՝ շնորհիւ պաշտօնի մը զուլի կ'անցնին եւ ժողովրդոց երջանկութեան ու սէտքերուն ծառայելէն շատ հեռու են: Օրինակի համար Մէրսին միւսիւր մը կար, որուն յանձնարարական թուղթ ունէի՝ եւ, այն անձէն որու խնդրանք ինք այդ պաշտօնին հասեր էր: Խեղճ երկատասարդը շփոթութեան եւ մտածութեան մէջ էր. վերջը իմացայ իւր զլիտն ցրուածութեան պատճառները: — Իշխանութեան հասնելով տիրաբար վարուելու փափաք զգացեր էր. ուստի նախ Զէրքէզ անգա խին գներ էր, բոլոր իւր ստացուածքը եւ խնայութիւնը գնա գնելու դահեր էր, ետքը նա զարդարելու սաստիկ փափաք զգալով 10,000 դուրուշի դահարեղէն պարզեւեր էր, ինք որ տարին ընդամենը 18,000 դուրուշ կ'առնէր տէրութենէն. վճարելու ժամանակը երբ հասեր էր

և մէկ փող չունէր տալու, յանկարծ լոյս մը ծագել էր մութին, մտածեր էր թէ անպիտան արհեստաւորք՝ չնչին կրպակաւոր նուարափառաք երբ նեղը մանէին ս'ն ա'ն կ ա ց ա'նք կ'ըսէին և պարտքէ կ'աղատէին, ուստի ինքն էլ երբ պարտատէրը եկաւ «Ես քեզի փող մը չեմ կրնար տալ վասն զի սնանկացայ» ըսաւ: Այդ որ իւր բարեկամներէն չէր կրցէր համոզել այս հնարագէտ միւտիւրը՝ թէ իւր մտածութիւնն անտեղի էր. «ի՞նչպէս» կ'ըսէր, ես որ այս երկրին իշխանն եմ, միթէ՞ յետին նախաւաճառի չափ արժէք չունիմ որ չի կարենամ սնանկանալ»:

Երբեմն բնակչաց ծերերը միշտ երախտագիտութեամբ կը յիշէին թէ, բուն իրենց երկրագործութեան ձեռնարկութիւնը եղած էր խորահիմ փաշայի հրամանը, երբ սա իւր հօրը անուամբ զրաւեր էր երկիրը: Այն ժամանակներէն առաջ ոչ ոք մշակութեան փոյթ չէր տաներ, և երկիրը անմշակ ու անապատ էր կ'ըսէին:

Է. — Ը:

ԲՆԱԿԻՉՔ. — ԱԶԳՈՒԹԻՒՆՔ. — ԼԵԶՈՒ. — ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂՍՔԻ ԵՒ ԱՒԱՆՔ

Կիլիկիոյ բնակչաց թիւը յայտնի է թէ սաստիկ նուազեալ է 500 տարիներէ ի վեր, այսինքն հայոց թագաւորութեան վերնալէն վերջ: Եւ ի՞նչ որ ճշմարիտ է Կիլիկիոյ համար անսխալ ճշմարտութիւն մի է բոլոր փոքր Ասիոյ և ընդհանուր Տաճկաստանի համար: Ի բաց առեալ Պօլիս՝ բնակչաց թիւն ամեն տեղ նուազել է. մայրաքաղաքը կ'ընդարձակի՝ իւր արուարձանները գիւղերու հետ խառնուած, որ աւուր ահագին տարածութիւն կը կազմէ, իսկ երկիրը՝ երբ ոք ուղևորի աւերակ կը տեսնէ և զերեզման:

Երեւելի պատմագիր և տնտեսագէտ մը կը զրուցէ. «Երբ տեսնէք թէ մայրաքաղաքի մը բնակիչք շատնան տարապայման, կրնաք ընդհանրապէս կարծիք հաստատել թէ դաւառները վատ և անխոհեմ կառավարութիւն մը կը տիրէ, վասն զի կեդրոնական կառավարութեան ներքեւ՝ անմիջապէս տիրոջը աչաց տակ միշտ բռնութիւն և հարստահարութիւնը նուազ աստիճանի կը լինին»:

Հետաքրքրական է երկրի մը բազմամարդութեան կամ բնակչաց նուազման խնդիրը, և դժուար է այդ նիւթին վրայ բանախօսել, վասն զի բազմակողմանի է խնդիրը:

Այսպիսի խնդրոյ մէջ պէտք է խորհրդածութեան առնուլ երկրին ընդարձակութիւնը և բարեբերութիւնը, կլիմայի բարեխառնութիւնը, ժողովրդոց բարքն ու սովորութիւնքը՝ կրօնքը և մտաւոր կարողութիւնքը, կառավարութեան ձևը:

Ուրեմն՝ եթէ երկիրը ընդարձակ է և բարեբեր, եթէ նոյն տեղ երբեմն բազմամարդութիւն եղած էր ժողովրդեան և արտաքոյ կարգի արգելք մը չի կար նորա յառաջադիմութեան և բարեբաղդութեան, այն ատեն բուն պատճառը պէտք է փնտռել. կան այսօր աշխարհքիս վրայ քաղաքներ որ իրենց բարձրութենէն ինկած են, և օր աւուր ինկնելու վրայ են: Եթէ Վենետիկի այսօրուան բնակչաց թիւը նուազեր է, եթէ իւր փառաւոր պալատներն օր աւուր կը կորուսնան իրենց փառք, եթէ իւր նաւահանգիստը ոչ պատերազմական և ոչ վաճառականական նաւեր կ'երևան, պատճառ կը ցցնեն իրաւամբ տնտեսագէտք թէ այդ քաղաքը որ երբեմն Միջերկրականի տէրն էր, Հնդկաստանի զրեթէ բոլոր առևտուրն իր ձեռքն էր, արաբաց նաւերուն և Ասիոյ կարաւանաց միջոցաւ Միջերկրականի և Արշիպելագոսի կղզիներն ի՞ ձեռին ունէր, Յունաստանի մէկ մասին կը տիրէր. իւր գլխաւոր անկման պատճառ Փորթուգալներու բարեյուսոյ գլխէն Հրնդկաստանի ճամբան զտնելն էր, որոնց հետեւեցան Անգլիացիք և Հոլանտացիք. նա Վենետիկի նուազման պատճառ եղաւ, նուազումն հարստութեան և բազմամարդութեան և վերջապէս անկման:

Եթէ Բալէննա, որ խալիոյ Հռոմէն վերջ երկրորդ քաղաքն էր, այսօր անապատ է, պատճառն այն է որ Արեւմտեան կայսերաց և Արևելեան կայսրութեան աթոռանիստ լինելէն վերջ՝ ծովը նաև իրեն քէն ըրաւ և թողուց իրմէ հեռացաւ:

Բայց այս խորհրդածութեանց հետ մի՞թէ կարելի է չտեսնել որ կառավարութիւնք իրենք առիթ են իրենց անկման, բնակչաց նուազել անկումն ըսել՝ երկրին անապատանալ և աղքատութեան վրայ հասնիլ ըսել է: Եթէ Սպանիա այսօր այն Սպանիան չէ ինչ որ էր 2 դար առաջ, մի՞թէ կրնանք զրուցել թէ կառավարութեան ձևը և իւր հաւատաքնութեան (ինքուիջիսիօնի) ատենանր անմեղ են, մի՞թէ Ամերիկայի հասարակապետութեան, որ Սպանիոյ զաղթականութիւն էր, մայր հայրենեացմէ օտարանալը իւրեանց խեղութեան պատճառէն առաջ եկած էր. ոչ երբէք: Պէտք է 'ի հաշիւ դնել Սպանիոյ կառավարութեան վատ տնտեսութիւնը:

Յրանսայի խելօք պատմաբանք և տնտեսագէտք, ինչչափ որ

Լուի Ժ.Վ.-ի յիմար պատերազմաց և շռայլութեանց վրայ կը գանդտեն, նոյնչափ և աւելի կը գանդալն Նանթի հրովարտակին յետո կոչման համար՝ որով միլիոնի չափ օգտակար՝ աշխատասէր՝ արուեստաւոր Բուօթէսթանթ ժողովուրդ հեռացուց երկրէն և ուսկից մեծ օգուտ քաղեցին Հոլանտա՝ Անգլիա և Գերմանիա:

Խեղօք կառավարութիւններ զիտեն իրենց և ուրիշներուն սխալներէն օգուտ քաղել, Անգլիա այսօր տեսէք որչափ հեռու է իւր գաղթականաց վերաբերմամբ այն ուղղութենէն, որով վարուեցաւ երբեմն Ամերիկայի Միացեալ — նահանգաց հետ. բաղդատեցէք իւր դար մը առաջ ըրած խիստ պահանջմունքները, և այսօրուան իրեն վերջին ծայր ներողամիտ վարմունքը Քանադայի և Ովկիանիայի գաղթականաց հետ:

Եթէ Տաճկաստան այսօր կը տեսնենք աղքատ, աւերակ՝ անմարդաբնակ՝ տժգոհ, ուժէ յանցանքը: Օսմանեան ինքնակալք և վէզիրք սուլթան Սէլիմէ սկսեալ մինչև անցեալ տարի երբ բարեփոխութեանց և վերանորոգմանց կ'ենէին հինգ կամ տասը տարին անգամ, անցեալ, հին, երեկուայ կառավարութեան մատակարարութեան դանդաւ և դատապարտութիւն տեղալու իրենք առաջին էին. նոքա կառավարողք, որ կամ իրենց նախորդները կամ իրենց անցեալին մասը կը դատապարտէին, արդեօք կառավարեալք բերան ունենային և ժողովուրդը ձայն ունենար, ի՞նչ պիտի զրուցէր:

Օսմանեան տէրութեան երկրին ընդարձակութիւնն յայտնի է. արդասաւորութիւնն դարձեալ յայտնի է. վասն զի այսօրուան անապատը անցեալ մը ունեցիր է ծաղկեալ և երջանիկ. առանց հայրական կառավարութիւն մը ունենալու վիենտկեցիք 750,000 բնակիչ թողեր են Վիպրոսի կղզին. այսօր եթէ 150,000 բնակիչ միայն կը գտնեն Անգլիացիք, մի՞թէ յանցանքը բնակչացն է որ չեն ամուսնացեր՝ չեն ծներ՝ զուտ չեն հասուցեր:

Յունաստան 'ի շնորհս երեք մեծ տէրութեանց ազատութիւն և անկախութիւն գտաւ 1830-ին, բայց երբ այդ ազատութիւնը գտաւ ի՞նչ վիճակի մէջ էր երկիրը. տրատմութիւնը կը զրուցէ թէ Նզկպասկան զօրք ծայրէ ծայր մաշեր էին երկիրը հրով և սրով. Յունաստան անկախ էր և ազատ՝ բայց դէզդէզ աւերակները կը մխային և աղքատութեան մէջ կը տատանէր կիսամեռ ժողովուրդ մը որ 5—600,000 մարդու կը հասնէր. այսօր կրկնապատկեալ է ժողովուրդը (Յոնիական կղզեաց բնակիչք դուրս հանելով) քաղաքները շէն են և

վայելուչ, մայրաքաղաքն Աթէնք երկրորդ կարգի Ներպական քաղաքաց զրեթէ հաւասարեալ, ժողովուրդն օր աւուր յառաջագէմ ուսմանց և զիտութեանց, վաճառականութիւն օր աւուր ընդարձակեալ: Այն վիճակէն այս վիճակ Օսմանեան տէրութիւնը իւր ո՞ր գաւառը կրնայ ցոյց տալ բաղդատելու համար Յունաստանի հետ:

Աւելորդ է յիշել Ռումանիա, Սերպիա, որ փոքր ինչ հեռու մնալով նոյն տէրութենէն, կրցան իրենց բնակչաց թիւը բազմացնել և երկիրը լցնել:

Եզիպտոս նաև, այն Եզիպտոս որ երբ Օսմանեան տէրութենէ ուղղակի կը կառավարուէր իրեն մէկ փաշային և Մէմլիքներուն ձեռօք և ոչինչ օգուտ չունէր կեդրոնական իշխանութեան, մէկ մեծ մարդու՝ Մէհմետ — Ալիի ձեռք անցնելով շէնցաւ՝ հարստացաւ, թէպէտ իւր կառավարութիւնը դարձեալ բուն քաղաքականութենէ շատ հեռի էր իւր մենավաճառութեամբ՝ իւր պատերազմական եռանդեամբ՝ իւր աշխարհակալութեան և ընդարձակելու փափաքներով: Բայց այդ բարբարոս Ալպանացին դարձեալ մեծ և հանճարի տէր մարդ էր, եթէ յիսուն տարի ևս կեանք ունենար ինքզինքը կ'ուղղէր և իւր գաւակաց և թոռներուն ըրած յիմարութիւնքը անշուշտ չէր ընէր. Նեղոսի տէր Եզիպտոս այսօր պարտական՝ անպատիւ չէր հեծեր օտար ազդեցութեանց և կեդրոնական հրովարտակին խաղալիք:

Օսմանեան պետութեան բոլոր թշուառութեանց, բնակչաց նուազման, երկրին աւերման, տարերց ապստամբութեան, վաճառականութեան և արուեստներու օր աւուր տկարութեան, ժողովրդոց իրարու դէմ ատելութեան բուն պատճառ կառավարութեան սխալ և թիւր վարմունքն է: Այս խօսքը մենք չենք զրուցողը՝ այլ ինչպէս վերը ըսինք՝ բուն ըսողներն են դարուս սկիզբէն մինչև այսօր, սուլթան Սէլիմ՝ սուլթան Մահմուտ՝ սուլթան Ապտիւլ Մէճիտ՝ սուլթան Ապտիւլ Ազիզ՝ սուլթան Մուրատ՝ սուլթան Ապտիւլ Համիտ, իրենց զանազան հրովարտակներով՝ զանազան ատենախօսութեամբք՝ զանազան սահմանադրութեամբք կը վկայեն բարձրաձայն. չենք ուզեր յիշել պայրաքողար Մուսթաֆա փաշա մեծ վէզիրէն սկսեալ մինչև Մահմուտ Նէաիմ և Միտհաթ փաշա սատրապամներու ըրած խիստ և ծանր զիտողութիւնքը, որ միշտ նախորդ կառավարութիւնքը և կառավարները դատաւարտած են առանց կարենալու վիճակին դարման ընել:

Ա. — Տէրութեան մը ելեմտական վիճակին անկարգութիւնը եր-

կիրը կը տկարացնէ և բնակիչքն անհետ կ'ընէ, յայտնի չէ բնական օրէնք է. Սամանեան պետութեան յայս վերջի քսան տարիներուն մէջ ըրած փոխառութիւնքը թէ երկրին մէջէն հարկաց զանազան պնուններով և թէ օտարներէն բարձր տոկոսեօք և չի կրնալ վճարելը, երբ փոխառութեանց դրամոց գործածութեան պէտքն ուր տեղը ցոյց տրուած և բողոքովին հակառակը գործուած են, միթէ բազմամարդութեան առիթ կրնա՞ր լինիլ: Երբ պետութիւնը յանկարծ օրաւ մը ելաւ 1875-ին և յայտնեց թէ ինք կարող չէ վճարել արժեթղթոց տոկոսները, երկաթուղեաց բաժնեգրաց երաշխաւորեալ տոկոսները, իւր թղթադրամին ինքն պարտաւորեալ նաև այսօր չընդունիլը միթէ ժողովուրդոց նուազման պատճառ է:

Բ. — Հարկահան կամ կապալառու երբ տէրութեան դրածէն վճարածէն սահմանածէն աւելի կ'առնուն և ժողովուրդեան բողոքը չի լսուիր այլ ընդհակառակն բանտի, տանջանաց, ծեծի պատճառով կը լինի, ժողովուրդը կրնայ բազմամարդանալ:

Գ. — Դատաւորը կամ ազահ կամ քիչ վճարուած երբ կաշառք տուողին, հարստին կողմն արդարութեան կշիռը ծանրացնէ, ժողովուրդը կրնայ բազմամարդանալ:

Դ. — Երբ կառավարութեան մը ներկայացուցիչը, հսկողը դարերով տարիներով հարկը կ'առնու լամեն խտրութեամբ ոչ ճամբայ կը շինէ, ոչ եղածը կը նորոգէ՝ ոչ նաւահանգիստները կը մաքրէ՝ ջրանցքի ինչ լինելը ամենեւին չգիտեր (Սուէզին ուրիշ խնդիր է)՝ կամուրջը չի նորոգեր, ճահիճները որ օդը կ'ապականեն չի չորցնէր, դետերը որ ընթացքնին կը փոխեն, կ'ողողեն չի տեսներ, սովը կը հասնի դաւառ մը ամբողջ գերեզման կը դարձնէ, օտարին օգնութիւնը, ողորմութիւնը ժողովուրդեան մը մնացորդը կ'ազատէ և ինք հազիւ թէ մատին ծայրով կաթիլ մը ջուր կը կարկառէ, անկարող շինելուն, հաւատալի է թէ այսպիսի երկրին ժողովուրդը կարենայ շատոնալ և աճիլ:

Ե. — Երբ «կրօնից տարբերութիւն չի» ճանաչէր մզկիթէն և եկեղեցիէն դուրս» կը զրուցէ՝ կը գոչէ՝ կը օտարագրէ՝ հրովարտակներ կը հանէ տէրութիւն մը, և իւր քաղաքական պաշտօնատանց մէջ տգէտ, անկիրթ և յիսար կրօնակիցը անբաղդատելի կերպով կը խճողէ, և խելօք՝ գիտուն կարող ոչ — կրօնակիցը կը թողու չի տեսներ և ամարդ չի կոչէ. իսկ ծովային և զինուորական գործերու կասկածոտ երկիւղիւ ամենեւին չի մերձեցներ, Դամասկոս և Լիբան

նան և բոլոր Ասորիք քրիստոնեայն կը ջարդուի, տունը կը հրդեհի. կառավարութեան կիսակատար արդարութիւնն ան ատեն կը շարժի երբ Գրանսիայէն նաւատորմիդ մը և բանակ ծովեզերք կը բռնեն. Զէյթունցի հայ ժողովրդեան դէմ կրօնական պատերազմ կը յայտարարէ յուղարկելով Ազնիվ փաշա և Քեամիլ փաշա մը. դեռ երէկ նոյն ժողովրդեան մէկ մասը բանտերու մէջ սինձանօթ հիւանդութեամբք անդին կ'ուղևորէ. վան քրիստոնէից կրօնականներն հրդեհը կը տոչորէ և կառավարութեան զինուորը սուին փէն և շիջուցանել կ'արգելէ և միւս կողմէն կը կողոպտէ. թափառական ժողովուրդք և նորեկ աւազակք, Քիւրտ, Աւշար, Թաթար և Զէրքէզ, դարերով բնակիալ հըւ հպատակ տէրութեան հարկատու ժողովրդոց վրայ նոր հարկ կը դնեն, ոչխարը կովը եզը արտը արօտատեղին կինը և զաւակը կը յափշտակեն՝ կրօնքը կը նախատեն՝ աղօթատունը կը պղծեն, և կարելի է յուսալ որ այդ երկրին մէջ մարդ բաղմամբդանայ:

Ահա մեզ համար Օսմանեան երկրին սակաւամարդութեան պատճառները. երկրորդական են վիժման սովորութիւնը, բազմակնութիւնը մահմէտականաց մէջ, նոյնպէս նաև գինւորագրութիւնը որ միայն մահմէտականին վրայ կը ծանրանայ, և այդ վասն զի կառավարութիւնը ինքն այնպէս կ'ուզէ:

Զ. — Զեմ ուզեր զըուցել թէ տան շինութեանց՝ ժողովրդոց մաքրութեան՝ ուսելեաց զգուշութեան և վերջապէս առողջապահական հսկողութեան պակասութիւնք կրնան կառավարութեան մը վերաբերիլ. չեմ խօսիր վարժարանաց վիճակի վրայ ուր տղիտութիւնն ուսմունք եղած և դասախօսութեան անցած է, չեմ խօսեր ամբաստանեալ և դատապարտեալ պաշտօնատեարց վրայ, որոնք մեծամեծ պատուհասներէ վերջ դարձեալ պաշտօններով փառաւորեալ են, այս ամենքը երկրի մը բազմամարդութիւն չեն բերեր:

Կիլիկիոյ 150,000 բնակիչ կը կարծէ Մանդուօ, կարծիք վասն զի վիճակագրութիւն (statistique) չի կայ Տաճկաստան: Երկիր մը ուր աւերակք աւերակաց վրայ կը տիրեն՝ ճանապարհորդ մարդ տեսնուած, գտնուած մարդուն վրայ էլ կը զարմանայ: Սեպտեմբերի ամիսէր երբ ես ելայ Մէրսինէ երթալու համար Սելևկիա երեք օրուան ճամբայ քաղաքի՝ զիւղերու բերդերու աւերակ միայն տեսայ և գերեզմանք. երկու ուղտ ընտանի կենդանի և մարդու մը դիակ կային՝ որ սպանուած ծովուն ափանց քով նետուած էր. երեք օրուան մի-

ջոցին ճանապարհորդ մը չի հանդիպեցայ և կենդանի մարդու կերպարանք չի տեսայ այդ Քարային Կիլիկիոյ մէջ: Եւ թերեւս բարեբաղդութիւն մի էր չի տեսնելս, վասն զի մարդկային կերպարանքով զազաններ կրնայի տեսնել որ իմ ուղևորութեանս ձանձրալի միակերպութեան տակէն անախորժ ձև մի տային:

Դաշտային մասին գիւղերու բնակիչ երկրագործք ընդհանրապէս Ասորի ազգանշանաւորք են որ Նասրանի կ'անուանին: Սոցա կրօնքը որուն մէջ առարտաքս մահմետականութիւն կայ, իսկ ներքինը զազոնիք կը համարուի: Հանելուկ կրնայ համարուիլ: Իրենք նողկանք կը պատճառեն մատնեալ լինելով ամենայն ախտից՝ աչքի հիւանդութեանց և աղտեղութեանց որ մարդկային գեղեցկութիւնը կ'ապականեն:

Քաղաքներու բնակիչք խառնուրդ են ամեն ազգաց. Թիւրք՝ Արաբք՝ Հայք՝ Յոյնք կը բնակին Ատանա որ միայն արժանի է քաղաք անուանելու և Տարսոն որ աւան եղած է, բայց իւր հին անուան շնորհիւք քաղաք անունը կը պահէ:

Տարսոն մոտոյ ուղևորին սիրտը ախրութեամբ կը լցուի, երբ նորա անցեալը յիշելով կը տեսնէ ողորմելի հողաշէն խրճիթներ և հիւղեր որ տուն կ'անուանին, որ 200-ի չափ կը կարծուին. Հայք եկեղեցի մը ունին նորաշէն: Հին շէնքերու մէջ Տաճկաց զխաւոր մզկիթը կայ Ուլու ճաւի անուանեալ, որու դրան ներսի դին կը տեսնուի թերեւս մինչև հիմա՝ Ռուբինեանց արձանագիր մը մարմար քարի վրայ՝ գեղեցիկ և որոշ տառերով, որ այսպէս կը սկսի.

Այս դուռն Տեառն է արդարոց
Եւ բնակարան է երկնայնոց,

Պահեալ զԱւշին արքայ Հայոց. և այլն և այլն.

Քանի մը Երոպացի վաճառականաց տուններ, հայ վաճառականի մը տուն ի բաց առեալ, միւս շէնքերը հողակոյտք են՝ որ մարդու բնակութիւն եղած են, վասն զի մարդ կը բնակի:

Ատանա քաղաքը հայոց երկու եկեղեցի ունի, 1,000-ի չափ հայու տուն, դպրոց մը ուր տղաք կարդալ՝ գրել և հաշուել կ'ուսնին: Բայց դաշտային Կիլիկիոյ մէջ հայ լեզուն բոլորովին կորած է. եկեղեցին միայն ազգութիւնը պահած է. թուրքերէն լեզուն Արաբերէնի հետ ընդհանուր է, և այն աստիճանի էր տգիտութիւնը որ երբ տղու մը հարցուցի թէ «դու կարդալ գրել գիտե՞ս» ինձ պատասխանեց, «Ոչ» ևս միայն «կեալութեամբ» կարդալ գրել գիտեմ: Իւր կեալութեամբ թեան վրայ համոզեալ տղայ մի էր:

Տուները մարդկային բնակարանի կերպարանք ունին, վիճակը բնական բարեկեցիկ է, հարուստ՝ սրամիտ փառաճատէրք և վաճառականք կան, որ իրենց ազարակներն չը մշակեն և լաւ կը մշակեն: Պէտք է աւելցնել նաեւ թէ մեծ մասը այս յառաջագէտ հայոց բուն կեսարացի են: Կը գտնուին քանի մը տուն կաթողիկ հայք որ եկեղեցի ունին: Բռնութեամբ թիւնը նոր սկներ էր ծաղկել 1861-ին:

Մէրսին գիւղ մը երբեմն աւանացեալ է հիմա, և քիչ ժամանակէն քաղաք մը պիտի ձևանայ, վասն զի գլխաւոր ծաւամատոյցն է Ալիկիոյ: Աւստրիական, Ֆրանսիական և Անգլիական շոգնաւք հոն կը մերձենան կանոնաւոր կերպով՝ վաճառք կ'առնուն և կ'ուտան: Այս տեղ ամեն ազգաց բաբելոնական խառնուրդը կատարեալ է: Հայք որ եկեղեցի մը կ'առուցին, վաճառականութեամբ և արհեստներով կը պարապին:

Սիս, երբեմն հայոց թագաւորութեան մայրաքաղաք, շատ թշուառ վիճակի մէջ կը գտնուի հիմա. արդէն ինկած, տասնհինգ քսան տարուէն է՝ ի վեր բոլորովին աւերակ կը դառնայ, քանի որ արդի կաթողիկոսն Անդէպ կը նստի, համարենք թէ ավտուը նաեւ հոն փոխադրած է: Կաթողիկոսարանը քանի մը սենեակ միայն կան կղզուած որ մարդկային բնութեան կերպարանք դեռ ունին. վանքը բոլորովին աւերակ, անշուք, աղտոյն, կործանելու վիճակի մէջ է: Սուրբ Յովիտ եկեղեցին չքեալ նորոգութեան կարօտ է որ չի կործանի: Վարդապետ մը և արեղայ մը միայն կը կազմեն բոլոր միաբանութիւնը, որ անշարդ, միայնակ եկեղեցւոյն և կաթողիկոսարանին պահապաններն են: Հարիւր և քանի մը տուն լեզուակորոյս բնակիչք. և ահա Սիս:

Այս դժբաղդ վիճակին պատճառ կրնայ համարուիլ Կիրակոս կաթողիկոսի մահը որ Աջապահաց վերջինն եղաւ: Աջապահք ցեղական կաթողիկոսք էին Ալիկիոյ, և իբրեւ հայրենի ժառանգութեամբ՝ ըստ կարի սէր ունէին ավտոյն և նախնի յիշատակաց վրայ. նոցա հետ զրեթէ վերջացաւ այդ ավտուը, որ եթէ լաւ մտածենք՝ թշուառութիւն մը կրնայ համարուիլ, միայն անոր համար որ անտէրունջ ազգին հեռաւոր պաշտպանութիւնք չեն հասնիր և բարբարոսաց վրայ ազդեցութիւն կ'ընէ պատրիարքական անունն ու պատիւը: Սոյ արդի Սրբազան կաթողիկոսի խօսակցութիւնը Հայկազ Քեամիլ փաշային հետ կարգացինք ամենքս. զոնէ այդ Սրբազանը վիճարանութիւն մ'ընելու համարձակեր էր պաշտպանելու համար իւր ժողովուրդը: Մի կարծէք թէ այդ Քեամիլ փաշան տղէտ և յիմար

անձ մի է. ընդհակառակն գիտնալու արժանի է որ Եգիպտոս բաւական ուսումն առնել վերջ՝ գնացած է Եւրոպա կատարելագործելու համար, կ'երևայ թէ այդ իմաստուն և կարճատես թուրքերէն է որ դրականապէս համոզուած են թէ՛ հայոց աղղը ջնջելով ճաճկաստանի ոգի պիտի տան:

Վերջապէս Միսիս, Անաւարզա, Սելէկիա, Սքանտարուն կամ Ալէքսանդրէթ մեծաւ մասամբ աւերակ 100, 150 շատ շատ 200 տուն բնակիչ կրնան ցոյց տալ և ողորմելի զիւղեր են:

Այս 150,000 բնակիչք Կիլիկիոյ, կ'ըսեն աշխարհագէտք, գրեթէ կիսով չափ հայ են:

Թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՄԱՍՆ ԿԻԼԻԿԻՈՅ. ՀԱՃԻՆ, ԶԷՅԹՈՒՆ, ԱՄԱՆՈՍ ԿԱՄ ՍԵԻ
ԼԵՌ, ԸՍՏ ՏԱՃԿԱՑ ԿԵԱՎՈՒՌ ՏԱՂԸ:

Բայց Հայք փոքր մաս են որ Դաշտային Կիլիկիա կը բնակին, իրենք Տօրոսի հիւսիսային կողմն են բնակեալ. զինաւորապէս Հաճին, Զէյթուն և մաս մ'էլ այդ արևելեան դատուոյն վրայ որ Ամանոս կ'անուանէին հինք, և հայք Սեաւ լեառն կոչեցին:

Հաճին խեղճուկ և աղքատին քաղաք մ'էլ գրեթէ 35,000 բնակիչ ունի՝ երկրագործք և այգեպանք մեծաւ մասամբ. իրենք երբեմն Ղոզանի պէյերու հպատակք էին, որ գրեթէ անկախ էին Օսմանեան կառավարութենէն, և այս վերջին տարիներս իրենց իշխանութիւնն վերցուելով՝ միաւիւր մը դնաց կառավարելու իրենց երկիրները: Հաճինցիք հայերէն լեզուն պահած են:

Զէյթունի բնակիչք 18,000-ի չափ հայ են, մեծ մասը երկաթի հանք մը բանեցնելով և փոքրիկ մաս մը երկրագործութեամբ կ'ապրէին: Իրենց երկաթը կը տանէին ծախելու Կեսարիա՝ Մարաշ և Ատանա. այս էր իրենց կեանքը: Գրեթէ անկախ՝ երբեմն փոքրիկ աուրք մը կ'ուսային Մարաշու կուսակալին, և խաղաղութեամբ կ'ապրէին՝ երբ մէկն իրենց վնաս չէր հասցներ, չորս իշխաններ ունէին, և ծերերու ժողովք մը՝ որ իրենց դատաստանական գործեր կը տեսնէին: Նահապետական կեանքով՝ լեռներու մէջ քաշուած փոքրիկ ժողովուրդ մը, պէտք չէր փուշ լինիլ մեծ կայսերութեան մը պաշտօնէից աչքին. բայց Ալի փաշա զըուցած էր 1861-էն առաջ Տօրոս Պառթ՝ հաշակաւոր Գերմանացի ճանապարհորդին, թէ՛ Եկի-

« լիկոյ լեռներուն մէջ կան քանի մը ապստամբ ժողովուրդք, յուսում թէ քիչ ատենէն զանոնք անհետ կ'անենք »: — Զէյթունցիք իրենց ազգային լեզուն պահած են, թէպէտ շատ աղաւաղալ դաւառական լեզուաց կարգ կրնայ համարուիլ իրենց խօսածը:

Ամանոսի լեռներուն մէջ կան ցիր ու ցան փոքրիկ հայ գիւղեր, որոնց ամենէն մեծն ջայ կ'անուանի. թերեւ հազար տուն էլ սորա կը լինին, որով 70,000-ի չափ հայք կրնան հաշուիլ Կիլիկիոյ մէջ, մնացորդք Ռուբինեան իշխանութեան ժամանակաց և որ այսօր դառն հալածանաց մէջ են, ինչպէս կ'իմանանք Պօլսոյ լրագիրներէ:

Ժ.

ՄԱՐԱՇ - ԱԶԻՋ ՓԱՇԱ ԵՒ ԶԵՅՐՈՒՆՑԻՔ 1862-ին:

Դամասկոսի քրիստոնէից կոտորածը կատարուելէն երկու տարի հազիւ անցած էր, երբ Ազիզ փաշա Մարաշու կուսակալ թուրք զիւղերու մէջ ծագած կռուէ մը առիթ առնելով, ուր Զէյթունցիք իբրեւ հաշտարար իրենց պատգամաւորաց սպանութեան վրէժ խնդրել էին, հրաւիրանաց հրամանագիր կը հանէր որ ամեն մահմետականք գէնք առնուն, միաբանին իւր զօրաց հետ՝ բնաջինջ ընելու Զէյթունի լեռնական ապստամբ քրիստոնեայք: Աւշար՝ Քիւրտ՝ Նուրայի թաթարք՝ թուրք միաբան զրեթէ 30,000-ի բանակ մը կազմելով, երեք ռմբաձիգ հրազէններով ելան Մարաշէ յարձակելու համար Զէյթունի վրայ: Այսպաշ գիւղը որ անձնատուր եղաւ Ազիզ փաշայի առաջին հրամանին, այս զինեալ խառնադանձին զոհ դրնաց. « արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, սուսները կողոպտեցան և ամբողջ գիւղը հրոյ ճարակ եղաւ: Արիւնը « փողոցներու մէջ կը վազէր, և հրդեհին մուխը սոսկում ու սարսափ կը ծաւալէր մերձակայ գիւղերը: Փաշան հրամայեց գիւղին « մօտակայ հայ վանքին դռները խորտակել, և այս արեան ծարաւի « մարդիկը կուսակալին աչաց առջև և նորա հրամանաւ վանահայրը « և միաբանքը փողոտեցին, և շուն մը սպանելով՝ սատակը Աստուծոյ « ծառայից անկենդան մարմիններուն վրայ նետեցին: Եւ նուիրական « սպաս՝ անօթ և զարդերը բաժանելէն վերջ իւր զօրաց՝ հրաման « յից փաշան վանքն էլ հրդեհել⁽¹⁾»:

1) Մենք այս տողերն հանեցինք Զէյթունցւոց առած ակնկազդէն վեց մեծ տէրութեանց դեռպաններուն:

Ամենքս ղիտենք և լսած ենք թէ այս կոտորածէն վերջ ինչպէս Ազնիւ փաշա 1,000 քսակ (այսինքն 5,000 ոսկի) և Զէյթունի զլիսաւորները կը պահանջէր Զէյթունցիներէն, որ երբ յանձն չ'առին, ինչպէս յարձակեցաւ նոցա վրայ և ինչպիսի ջարդ ուտելով փախաւ գնաց Մարաշ: Զէյթունցիք Նողայի թաթարաց պատերազմի մէջ սպանեալ զլիսաւորին ծոցէն գտած էին փաշայի թուղթը՝ որ օրերով առաջ խոստացեր էր թաթարներու շնորհել Զէյթուն, քրիստոնեայ ժողովուրդը բնաջինջ ընելէն վերջ:

ԺՅ.

ՖԻԱՆՍԱ ԵՒ ԿԱԹՈՒԿՈՒԹԻՒՆ:

Դուռը՝ Ազնիւ փաշայի պարտութեան վրէժը կը պատրաստուէր Հանեւ և երբ Ֆռանսա մէջ մտաւ և քննութեան տակ ձգեց խնդիրը, Զէյթունցիք պարտաւորուեցան միւտիւր մը ընդունիլ և հարկ վճարել. այս միջնորդութեան հետեանք եղաւ որ մզկիթ և կաթոլիկութեան քարոզութիւն մտաւ Զէյթուն:

Դժբաղդութիւն մի է և Ֆռանսայի ազատամիտ մասը՝ հայ լրագիրներէ առաջ կամ նոցա հաւասար սրտի ցաւ յայտնեց վերջերս հասունեան խնդրոյ մէջ իւր դեսպանին միջամուխ լինելը, այնպիսի խնդրոյ որ ազատամիտ սկզբմանց հակառակ է բոլորովին, ըստ նախապաշարմունք ուղղել շատ դժուար բան է, նա մանաւանդ ղիւանագիրութեան մէջ ուր կանխակալ կարծիք չկը տիրեն:

Եթէ ինձ ներէր ժամանակը և ձեր համբերութիւնը հիմա ամբողջ կը կարդայի ձեզ Ահն Մառ Ժիւարտէնի մէկ գրութիւնը Տէպա լրագրի մէջ, ուր նա դառնապէս կը գանգաթի Զէյթունի խնդիրը մէջ ղենելով Անդլիոյ ղիւանագրութեան դէմ, որ ինչպէս իւր սովորութիւնն է Օսմանեան կառավարութեան ամեն զեղծմանց և սխալմանց պաշտօնական հանդիսանալով, շատ կարելի է որ աւելի վընասակար եղած է իրեն քան թէ օգտակար:

Ահա այդ հռչակաւոր վարժապետին Տէպաի յօդուածը, որուն համար Պօլսոյ քանի մը ազգասէր օրիորդներ ՚ի նշան շնորհակալութեան ղեղեցիկ ծախոյ մը բաներ և յուզարկեր էին, և որ ինք մեծ հաճութեամբ կը ցցէր իւր այցելու հիւրերուն:

ՏԵՊՈՒ, 1862, հոկտեմբ. 3.

Արևելքի մէջ կոտորածները դադարած չեն՝ այլ միայն տեղափոխուած: Ցաւալի լուրեր կը հասնին Կիլիկիոյ Տաւրոսի լեռներէն: Մարաշի փաշան իր զօրքերով այս քաղաքին մօտ գտնուած հայու գիւղերը կոխեց, երկու հարիւր հոգի սպաննուեցան, եկեղեցին ու տուներն հրոյ ձարակ եղան: Գիւղերէն ետքը Ս. Փրկչի վանքին վրայ յարձակեցան, դռները կոտորեցին, երկու վարդապետ մեռուցին, փոքրաւոր մը խղդեցին, Ճերուռի կին մը կտոր կտոր յօշոտեցին, և իրենց զոհերը նախատելու համար վանքին շուրջ սպանեցին և զիակը քրիստոնէից մարմիններուն վրայ նետեցին: Յետոյ վանքը կողոպտեցին ու կրակի տուին:

Այս Կիլիկիոյ հայերը զորս բնաջինջ ընել չը ջանան թուրքերը՝ հայոց այն փոքր թագաւորութեան մնացորդներն են, որ այնքան հռչակաւոր եղաւ միջին դարուն, որուն պատմութիւնը խաչակրաց պատմութեան կը խառնուի, որ Փրանսիական ցեղ մը ունեցաւ իր աթոռին վրայ, լուսինեանք՝ որոնց վերջին թագաւորը լ. լ. 1374-ին իր զահը կորսնցնելով Եգիպտոսի սուլթանին ձեռք, եկաւ Փարիզ, մեռաւ 1393-ին և թաղուեցաւ Կեղեսոթինեանց վանքին մէջ: Այս հին յիշատակներն զարթուցանելուս սլաւաճուն այն չէ որ նոր իրաւունք մը տամ Տօրոսի հայոց մեր ղթութեան և մեր օգնութեան, նոցա տառապանքը իրենց համար իրաւունք են: Կուգեմ միայն ցոյց տալ թէ ի՞նչպէս Արևելքի մէջ, զորմենք կարծենք թէ բոլորովին թրքաց ստացուածքն է, ամեն տեղ քրիստոնեայ Արևելից մնացորդներ կը գտնուին: Խաչակրաց ժամանակ Արևելք՝ քրիստոնէից և թրքաց մէջ բաժնուելով՝ այս բաժանումը երկու դարէ աւելի տևեց: Ժ.Գ. դարու վերջին ժամանակներէն սիսեալ՝ Արևելեան քրիստոնեայք իրենց թշուառութեան խաւարին մէջ թաղուած մնացին: Մոռցաւ գանոնը Եւրոպայ, և հազիւ հազ երբեմն քանի մը ճանապարհորդք այցելեցին այն կողմերը:

Այս օրերս Փրանսիացի երիտասարդ գիտնականի մը՝ Տ. Վ. Լանկուլաի Կիլիկիոյ Տօրոս լեռներուն մէջ ըրած ճանապարհորդութեանց մին կը կարդայի, և կը վարմանայի թէ որայիս՝ եռանդով ու յաջողակութեամբ այս անձը ամեն ուրեք միջին դարու հետքեր և յիշատակներ գտնելու հետամուտ է: Թէև ճշշեալ և հարստահարեալ՝ այս Տօրոսի հայերը իրենց երկիրը չեն թողուցին:

Հայք անհանդարտ և աղմկայոյզ ժողովուրդ չեն — աշխատասէր՝ դործունեայ և մանաւանդ համբերող են. տաճկական դրութեան և խստութեան համակերպած են: Աշխատութիւն յանձն առնելով՝ Արեւելքի մէջ ուր որ ներելի եղած է իրենց բնակիլ՝ այն կողմերուն բարեկեցութեան պատճառ եղած են, բաղդատմամբ միւս մասերուն: Միանգամայն անյողդողդ սէր և յարում մը պահած են իրենց կրօնքին և ազգայնութեան, քրիստոնեայ և հայ միացած են: — Ուստի քանի որ Գուռը լաւ ներշնչեալ էր, և ժողովրդեան մոլեռանդութիւնն ու մեծերուն արծաթսիրութիւնը տաճկական կառավարութեան միակ շարժառիթներն չէին եղած, հայերը կրցան ապրիլ առանց ուրիշ դժբաղդութենէ և կործանմանքէ վախ ունենալու, բացի այն դժբաղդութեանց և կործանմանց որ անբաժան են Արեւելեան կենաց: Պոյսոյ մէջ Սահմանադրութիւն մը նաև կրցան ունենալ, որու վրայ պիտի խօսինք օր մը, և որ պատիւ կ'ընէ թէ անոնց որ զանի շինեցին, և թէ անոնց որ պիտի գործադրեն՝ եթէ ներելի լինի իրենց գործադրել: Թէ՛ թուրքերն ընկձին շուտով թէ տեւեն երկար ժամանակ մ' էլ, Արեւելքի քրիստոնէից մէջ հայք ունին այնպիսի ապաղայ մը՝ որ ամենէն նուազ փառասէրն է և ամենէն աւելի ապահով:

Այն կուրութիւնը որ կարծել կուտայ Օսմանեան Դրան թէ՛ քանի որ Անգլիոյ հաստատամիտ և անխտիր պաշտպանութիւնն ունի, ամեն բան ներելի է իրեն, այն կուրութիւնն է ահա, որ թուրք փաշաները կը մղէ այսպէս անողորմաբար հայերին հալածելու: Մոլեռանդութիւն և արծաթսիրութիւն երկիւղէ զատ սանձ մը չունին, և լորս Բալմէքսթընի պաշտօնէութիւնը թուրքերն ամեն երկիւղէ ազատած է. այնպէս որ հիմա փաշաներն աւելի յանդուգն են քան երբէք իրենց հարստահարութեանց մէջ, և զինուորներն աւելի մոլեռանդ իրենց անգթութեանց մէջ: Այս վերջին և ստորին կարգի մարդկանց երկու կիրքերն են որ կը դաւակցին այժմ Տօրոսի հայոց դէմ: Մեզ եկած լուրերէն կ'իմանամք որ Մարաշի կառավարիչ Ազիզ փաշան՝ Մարաշի շրջակայից գիւղերն հրոյ ճարակ և տմենը խեղդամահ ընելէ վերջ՝ Ս. Փրկչի վանքը կողոպտելէ վերջ, Զէյթունի հայկական քաղաքէն երկու ժամ հեռի կանգ առեր է, հրաման ղըկեր է այս քաղաքին որ 1,000 քսակ հատուցանեն իր զինուորներուն վճարքը տալու համար: Դարձեալ պահանջեր է որ Զէյթունի եկեղեցական և աշխարհական գլխաւոր անձինքն իր ձեռքը յանձ-

նեն, սպառնալով բնակչաց եթէ չի հնազանդին իրենց քաղաքն հրոսել, բոլոր ինչքերնէն գերենք մերկացնել և թրէ անցնել: Զէյթունի բնակիչները պատասխանեցին. — «Ուզած հազար քսակդ կուտամք. բայց ոչ երբէք քու ձեռքդ կը մատնեմք մեր քաղաքակիցները, որովհետեւ վստահութիւն չունինք վրադ: Իսկ թէ որ մեր վրայ յարձակին կրնամք մենք զմեզ պաշտպանել»: — Այս լուրերը կարդալով ես ինձ կը հարցնէի, թէ ի՞նչ պատճառաւ Մարաշի փաշան Զէյթունի դէմ անպատակ կը հանէ. Զէյթուն որ ես կը կարծէի թէ իր վաշայութեան քաղաքներէն մին է: Լանկլուայի ծանապարհորդութեան մէկ պարբերութիւնը չարդարացներ՝ բայց կը մեկնէ այս գազանական արշաւները:

— «Զէյթուն և Հաճին անկախ տէրութիւն մը կը կազմեն, որուն աւատապետն (suzerain) Քօզան Օղլուի Թիւրքմէն ցեղին գլուխն է. վասն զի՝ Դարամանեայի թուրք կառավարիչները չէին կրցած երբէք հարկադրել և հնազանդեցնել այս երկրին լեռնա-կանքը: Զէյթուն զիւղաքաղաք մ' է քան թէ քաղաք, չորս կողմէն շրջապատեալ բարձր լեռներով: Այս զիւղաքաղաքը 3,000 տունէ և 12 եկեղեցիէ կը բաղկանայ. գլխաւորն է Ս. Յովհաննու. անուան նուիրեալ եկեղեցին, զոր ժբ. դարու զաղթականութիւն մը շինած է: Եկեղեցւոյն մէջ ձեռագիր աւետարան մը կայ. պատկերաւորը՝ զոր անսաճութեամբ կը պահեն և կը կոչեն Աւետարան Ս. Բարսեղի: ... Տեղական վարչութիւնը Քօզան Օղլուի ցեղին զլիաւորին կողմէն չորս հայ աղաներու յանձնուած է, որ կը կառավարեն Զէյթունը իւր շրջակայիւք: Հարկ կ'առնուն՝ որուն մէկ մասը թիւրքմէն մեծաւորին կը արուի, և մնա մ' էլ Սիսի Հայոց Կաթողիկոսին որ նոյն երկրին հոգեւոր գլուխն է: — (Վ. Լանկլուա), «Ուղեւորութիւն ի Կիլիկիա»:

Այս սուրբէն մնա մ' էլ ինք առնելու համար, անտարակոյս Մարաշի փաշան արշաւանք ըրեր է Զէյթուն. ասկից զատ կը տեսնեմք որ Զէյթուն և Հաճին տեսակ մը անկախ վարչութիւն կը կազմեն ընդ աւատական իշխանութեամբ թիւրքմէն զլիաւորին: Արդ այս միջոցիս Տաճկաստան ամեն բան առ ինքն կեդրոնացնելու մոլութեամբ բռնուած է. Անդլոյ պաշտպանութեան շնորհիւ: Ամեն տեղ իր աւատական իշխանութիւն վեհապետութեան փոխել կը ջանայ: Աւելի ևս իրաւամբ կ'ուզէ հպատակեցնել անկախ վարչութիւնքը, Մօսթէնէկիօն մինչև մէկ աստիճան հպատակեցուց. Սեր-

արից վրայ էլ կը յարձակի, և Անգլիա կը սպառնայ Յոնիաստանի
 դէմ: Մարաշի փաշան էլ ուզեց ըստ իր շահին վերանորոգում մը
 ընել: ամօթ էր իրեն որ զԹուրքիա յուզող տաճիկական կալվանեան
 ցնցման մէջ ինքը ետ մնար: Պօլսէն գրուած ուրիշ համակ մը տարբեր կերպիւ կը մեկնէ
 Զէյթունի յարձակումները: Երկու թուրք զինուոր իրարու հետ կը
 կռուէին, Զէյթունի հայք իրենց միջնորդութիւնը մատուցին: Քիչ
 ժամանակէն թուրք զինուորը կը հաշտութիւն ու միջնորդներուն վրայ
 կ'իյնան, մէկ քանի հայ կը սպաննեն: անքա էլ թուրքերը կը գնա-
 նեն, այն ատեն Մարաշի փաշան զօրաց բանակով մը Զէյթունի դէմ
 կը քալէ: Բայց որովհետեւ իր զօրքը բազմաթիւ չէին, յայտարար-
 ութիւն մը կը հանէ և ի գէն կը հրաւիրէ «Սուրբ պատերազմ» է
 այս ըսելով, բոլոր պատարկագորտ և դատարկաձեռն թուրքերը:
 Այս անկանոն ու մոլեռանդ զօրքը ճամբուն վրայ դէպ ինչ հայ գտնե-
 ին՝ կը հալածէին, յայտնելով թէ Մարաշ դառնալուն թրեպիտի
 անցնեն բոլոր կեանքները: Փաշային բողոքեցին այս կեղեքմանց դէմ,
 փաշան չի զիտնալ ձեացուց, և բան մը չ'ըրաւ զանոնք դապնու
 համար: Նոյն նամակը կ'իմացնէ յետ գրութեան մէջ թէ Զէյթուն
 պաշարուեր է և փաշան անձամբ հոն պիտի երթայ: Միանպաճայն
 ամեն տեղ թուրքերն զբրիտանացիքը կը մերկայնեն, և ինչքերն ին
 կը յափշտակեն, այս ամենուն մէջ այնպիսի նմանութիւնք կան Գա-
 մակոսի տեսարանաց հետ որ կը սարսափեցնեն զմարդ: Տօրոսի քրիս-
 տոնեայք ահաբեկ աչքերն ին դէպ Արեւմուտք կը դարձնեն և քրիս-
 տոնեայ ազգաց օգնութիւն կը խնդրեն: Ինչ պիտի ըսէ և ինչ
 պիտի ընէ Անգլիա: Պէտք է գիտնայ թէ ասկից վերջ ինքն է պաշ-
 տասխանատու Արեւելի մէջ եղածներուն:

Սէն Մառ Ժիւաքտէն:

Ինչպէս յայտնի կը տեսնուի՝ Սէն Մառ Ժիւաքտէն Անգլիոյ վրայ
 կը թողու ամեն պատասխանատուութիւն և իրօք Անգլիոյ երեսփո-
 խանը Գամակոսի կոտորածներուն քննութեան խնդրոյն մէջ ոչ զո-
 հերուն պաշտպան հանդիսացել էր՝ այլ զոհողներուն: Այս Զէյ-
 թունի խնդրոյն մէջ նաև իւր Կոստանդնուպօլսոյ զեմպան Արեւելե-
 ուի Պուլլեռ Զէյթունցւոյ վերոյիշեալ աղերսագիրը իրեն մատուցա-
 նողը շատ դաժան և արհամարհող կերպով ընդունիր էր, և աչք
 մը ձգելէն վերջ ըսեր էր զայրագին:

— Բայց դուք պէտք է դիտեաք թէ այդ ձեր անզգամ Ձէյ-
թունցիք, այդ անպակները՝ շատ վատ գործողութիւն ըրեր են, և
Ազիզ փաշան խորտակեր ու փախուցեր են. ինչպէս կը համարձա-
կիք հիմա իրենց կողմէն ինձ աղերսագիր բերել:

— Սակայն Ձեր վսեմութեան յայտնի է թէ՛ իրենց ամեն ա-
ղաչանք և պաղատանք չեն լսուիր, կ'երևայ թէ բռնադատուած՝ ի-
րենց կենաց՝ պատուոյ և ընչեց պաշտպանութեան համար միայն զէնք
առած՝ չէին կրնար վեղերնին որոյն երկնցնել և ըսել Ազիզ փա-
շային թէ եկ և զմեզ մորթէ:

Դեսպանն այս խօսքերն ըսելէն՝ քիչ մը դադրելէն և աղերսա-
գրին վրայ դարձեալ աչք մը պատցնելէն վերջ ըսել էր պատգա-
մաւորին.

— Այս թուղթէն ուրիշ օրինակ տաբիք միւս դեսպանաց:

— Նախ Ձեր վսեմութեան բերինք, և բնական է թէ այդ
մարդիկը որ թաքթաբուր կը պտտին Պօլիս և օգնութիւն կը խընդ-
րեն, ամեն դուռ պիտի պարնեն որ իրենց խեղճ վեճակին դարման
մը գտնեն:

— Խորհուրդ տուէք այդ մարդկանց որ ուրիշ դեսպանաց չի
դիմեն, եւ իրենց դործը կը հոգամ:

Եւ այսպէս այցելութեան վերջը քիչ աւելի կակուղ կերպով
վարուած էր իրեն դիմողն հետ:

Դորա ընդ հակառակն, պարոն Բօօքէշ, Աւստրիոյ դեսպանը,
շատ մարդասիրաբար և քաղցրութեամբ ընդունել էր իրեն դիմողնե-
րը, և հարցուցեր էր թէ. «Անգլիոյ դեսպանին տարիք այս խնդիրը»,
իսկ նոքա երբ խմացուցեր էին թէ շփոթած այդ մասին՝ ինչ ընե-
լիքնին չէին դիտեր, աւելցուց. «պէտք է տանել վասն զի նա մեր
ամենէն զօրաւորն է:»

ԺԲ.

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՊԱԳԱՅՆ. — ԵՐԿԱԹՈՒՂԻՔ ԵՒ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏՔ:

Հիմայ որ Կիլիկիոյ երկրին ազգայնոց վրայ փոքր տեղեկութիւն
տուինք, զրուցենք նաև թէ ինչ կը կարծէ Եւրոպա նորա ապա-
գայի համար:

Իբաց առեալ այդ ընդհանուր կարծիքը որ Անգլիա կը փա-
փազի երկաթուղի մը շինել Միջերկրանի ափանց վրայէն մինչև Պարս-

կային ծոցը, երկաթէ, նոր կապերով կապելու համար Հնդկաստան. ի բայ առեալ որ Ֆռանսիական՝ գերմանական՝ իտալական օրագիրներ հաստատեցին թէ ինք առաջարկել էր Բ. Պրան գրամական օգնութեանց փոխարէն ստանալ Մէրսին և Աքանտարուն, (Ալէքսանտրէթ) որ Դուռը մերժել էր և անգլիական պաշտօնական օրագիրը սուտ հանել էին, — կարելի չէ ուրանալ որ Անգլիոյ պէս հեռատես պետութիւն որ 1,000 տարի վերջ ապագան կը մտածէ, և կը սարսափի երկրաբանից այն գուշակութեան վերայ որ կը կասկածի թէ տասը դար ետքը Անգլիոյ հանքային ածուխը գուցէ ուլաւի, այդպիսի պետութիւն մը Կիպրոսի հանդէպ բնական բերդ մը ինչպէս է Կիլիկիա չուզէ՝ զրաւել, և որ իրեն Ասիական ձիաբալդար մը կրնայ դառնալ, բայց ձիաբալդար բարեբեր, հարուստ, զրախտ մը վերջապէս բոլորովին աննման այդ ցուրտ ժայռին, որ Սպանիոյ ծայրէն Միջերկրականի մուտքին կը տիրէ:

ԺԳ.

ԿԻՊՐՈՍԻ ՆՈՐ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿԻՂԻԿԻՈՅ ՎՐԱՑ.

Եթէ այդպէս նաև չլինի, դարձեալ հանդիպակաց Կիպրոսի վիճակը՝ իւր վերակենդանութիւնը՝ մեծ ազդեցութիւն պիտի բնեն Կիլիկիոյ վրայ:

Կիպրոս ազատ և ներողամիտ կառավարութեան մը ներքև, ևս այնպէս կարծեմ թէ քիչ ազդեցութիւն պիտի չունենայ բոլոր Տուրք կառավարի և մասնաւորապէս Կիլիկիոյ վրայ. այդ Կիպրոսի քսան և քսանհինգ տուն հայերը պիտի շատնան և բռնութեան տակ ձրնշեալ ժողովուրդ մը աւետեաց երկիր մը պիտի համարի Կիպրոս, որուն դէմ այնչափ գոռացին և գրեցին Պիքօնաֆիլտի հակառակորդ օրագիրը և ատենաբանք:

Եթէ տպագրութեան ազատութենէ, ուսմանց յառաջադիմութեան գիւրութենէ օգուտ չի քաղէ հայ ազգը Կիպրոս, ազգին ընդհանրութեան ոչինչ օգուտ չունենար, իսկ եթէ ընդհակառակն, յունական յամառութիւն ցցնէ իւր կրօնքին և իւր սոցիալութեան համար, ընդհանուրին մեծ օգուտ կրնայ բերել և իւր կիլիկեցի եղբարց լուսաւորութեան օգնել, մնացած յետին ապագան Աստուծոյ յանձնելով:

բայ Դ. մասնաւորէն պահանջ ուղծուի ԺԴ. քրտոյ գոմ Լեւոնից Կրտն միտոյ
 առաստի՝ զմեզիքսնք մտնայտոյ մտնամենցմք մտնայտոյ մտն
 քնանելոմք մտնան ԿԻԼԻԿԵԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ:

Իսկ այսօր՝ երբ բազմաչարչար մեր Հայաստանի որդիք ցրուեալ
 եղբարց կը շինեն օգնութեան, Կիլիկիոյ Հայուն վրայ նաեւ երբ կը
 ծանրանայ բռնութեան ձեռքը, ընկերութիւն մը կը կազմուի Պօլս
 Կիլիկիոյ Հայոց դատարարութեան օգնելու համար: Մեզ ուրիշ
 բան չի մնար ընել՝ եթէ ոչ զոհանալ Աստուծոյ որ նոյն վիճակին
 չենք մատուցած և վերջը օգնել անոնց որ անտանելի բաղդի են
 ենթարկուած, Հայոց ազգը՝ մեր եղբարքը ազատել տղիտութենէ,
 լուսաւորել իւր բնական սուր միտքը, զիտութեամբ միմիայն ճանա-
 պարհ մեզի միացած է յարգել տալու համար հայ անունը և զինք
 կապելու համար ազգութեան հետ, վասն զի Հայ ազգը որ հայրենի
 եկեղեցին ունի սիւն հաստատութեան, հիմա պէտք է զիտութեան
 սիւնն ևս աւելցնէ ազգային ամբողջութեան:

Ի վերջ բանիս, խնդրեմ ընդունիլ ոչ իմ, այլ Տօրոսի բար-
 ձանց վրայ նստող բազմաչարչար բնակչաց շնորհակալութիւնքը: որ
 կարօտ են նիւթական և բարոյական օգնութեան, և որ դուք չի զը-
 լացաք համբերող ունկնդրութիւն մատուցանելով այս իմ դատաւսո-
 սութեան յօգուտ նոյն լուսաւորութեան:

ԾԵՐԵՆՑ:

Անդրի 1879 29 Տփիսի: Երբ մեզի տղերքս զից ինչ նմանք սխալ-
 մ մասց փողոյմի քառ լայն լոգիմիք սխալութեամբ մ փնտաւ
 մզն քառ մամեկունց մ մամաւ փոքր յղծիւք մաս բնիմաւ
 առաջմի փանաւ փոքր զից ինչ ընտանա զն բզաւորուն լուծ
 յղծիս աւանք փողիմանցիմ միքիք մ միքաւոր փաշիս ներ մաւ
 : քնաղաւմա մ զղիքաւ

մեզի քաւաւս լուծաւ քննաւ քննեկտաւս մամեկտղաւս ինչ
 քնն միքաւս առաջմի զղիս լաւ իրաւ և առաւ ինչեկտղաւս մամեկ
 լուծաւս լաւ ինչ լաւ լուծաւս առաւ լուծ մամեկտղաւս
 աւ մամեկտղաւս զաւ մ միքիք զաւ ինչ մամեկտղաւս մաւաւս
 զղաւս լուծիմի զաւ մ լուծի լուծի առաւ լուծ միքաւս լուծ լուծ
 լուծաւս լուծաւս մաւաւս միքիք լուծաւս մամեկտղաւս

« այժմեան մանուկների և երիտասարդների հազար տեսակ արուեստական
 « և երեսակայական կարիքները. բայց ոչինչ անմեղ ուրախութիւն, ոչինչ
 « գեղեցիկ զբօսանք մեր ծնողքը խնայել չեն մեզանից, մանաւանդ հանդի-
 « սաւոր և արձակ օրերում: Երեխայքը յառաջ ձգած, կը սիրէր հայրս
 « ման առնուլ նոցա հետ սար ու ձոր և դաշտ, և այդպիսի զբօսանքներ,
 « զուարթ խօսակցութեամբ համեմուած, մի կատարեալ հարսանիք էին
 « երեխաներիս համար: Երանելի օրեր մանկութեան, երբ տակաւին կեան-
 « քի ցաւերը և հոգսերը լցուել չէին կուրծքը:

« Իմ հայրս (Տէր Եսային) մի շատ բարեսիրտ, ազնուասիրտ, ցածուն
 « հոգով մարդ էր և այս մասին գովասանութեամբ վկայուած իւր մեծա-
 « ւորներէից: Շատ որդեւէր հայր էր, բայց և շատ խիստ դէպի իւր զաւակ-
 « ները: Եբրեւ ասիական դպրոցի աշակերտ, նա գիտէր միայն դաստիարա-
 « կել երեխայքը ցաւեցուցիչ սաստողական հնարներով, գաւազանով և
 « ապտակով Հայրս չունէր գիտնական կրթութիւն, ինչպէս մինչև
 « այժմ ևս, ասիական տխուր հանգամանքի մէջ, չունի ոչ մի հայ քահա-
 « նայ. բայց իմ հայրս ունէր մի տեսակ վերին կրթութիւն, իւր անձական
 « աշխատասիրութեամբ ստացած, օր ու դիշեր տարածուած խմորատալս-
 « տակի (խօնչայ) վրայ — այն ժամանակ չունէին գրասեղաններ — օրինա-
 « կելով գրչագիր ու տպագիր գործեր և շատ պարզ գեղեցիկ գրչով. նա
 « գրում էր բաւական ընտիր հին հայկաբանութեամբ, որ նորա ժամանա-
 « կի միակ գիտութիւնն էր, և այնպիսի գաղափարներով, որ սեփական
 « են այն ժամանակի և այժմուս հոգևոր կրթութեանը Հայերի մէջ:

« Իմ հօր ամուսնական ընթացքը մօրս հետ մեղմ և քաղցր էր առ-
 « հասարակ: Հրամայողութիւն և հնազանդութիւն, տէր ու աղախին, այդ-
 « պիսի բաներ նկատել չեն իմ աչքը — և երեխաների աչքը շատ քաջ հսկող
 « և նուրբ նկատող են: Մայրս միշտ ունեցել է մի մեծարական աղնա-
 « ծութիւն իւր ամուսնակից տղամարդից և դորանով ամենայն գայթակ-
 « ղութեան քար հեռի է պահել իւր զաւակներից: Երեխայքս միշտ իմա-
 « ցել ենք, որ մեր հօր ու մօր կամքը մի է, և հնազանդել ենք նոցա ա-
 « ռանց հակաճառութեան և դիմադարձութեան: Մայրս իբրև վաղ ժամա-
 « նակների ասիական կին, ստացել չէր ոչինչ գրագիտական կրթութիւն,
 « բայց իբնէ խելացի և հանճարեղ կին էր, կարող ըմբռնել և յարգել ա-
 « մենայն բանաւոր խօսք և դատողութիւն: Ինչ ինչ դիպուածներում աւե-
 « լի հեռատես և պայծառահայեաց էր մայրս, քան թէ իւր փորձառու,
 « բայց փոքր ինչ կրթող ամուսնակից տղամարդը: Հօրս կենդանութեան
 « վերջին տարիներում պատահեցաւ մեր ընտանիքի մէջ մի խնդիր, որոյ
 « վերայ տարաձայնելով նարժիքները, հանդէս տուեցին տհաճութեան և
 « երկպառակութեան երկուսի մէջ: Սխալուածը, ցաւալի է ասել, մեծապէս
 « սխալուածը հարս էր, ինչպէս տառաջանալով գործով, իսկ իրաւը և ար-
 « դարը, բայց անարժանապէս վշտացուցածը իմ մայրս: Անուամենայնիւ
 « մայրս, իբրև խելացի և ազնիւ կին, միշտ պիտի է և յարգել է իւր զա-

« Լակների հայրը, և անմխիթար տրտում էր, երբ ինքը հիւանդութեան
 « մահճի մէջ դրած, զրկուեցաւ իւր ամուսնակցից, որոյ յիշատակը երկար
 « ու ձիգ տարիներ յետոյ ևս մեծարական սիրով պատուել և յարգել է
 « նա, և նոյնը ուսուցել է իւր որբացած զաւակներին: Մայրս, հափից
 « զուրս, ինչպէս բոլոր ասիական մայրերը, ախտաբարձը սիրով կը սի-
 « րէր իւր զաւակները. մի քանի օր, ինչ եւս ատում, մի քանի ժամ բա-
 « ցակայութիւնը նորանից, կարող էր ձգել նորան մի հալոյ ու մաշող մի-
 « տատանջութեան մէջ. բայց թէ կրկին տեսնութեան ժամերը — մանաւանդ
 « մի անողական բացակայութեան յետոյ, որպիսի տարածայման չարժո-
 « ղութիւնը սովոր էին յարուցանել նորա մէջ, դժուար է ինձ նկարագրել
 « . . . Նազարեանց տիկինը (մայրս) եղել է մի քարեպաշտ քրմե-
 « ռանդ և ժամասէր կին: Նորա բոլոր կեանքը եղած է մի երկիւղածու-
 « թեան, աստուածսիրութեան, բարեգործութեան և առաքինութեան հան-
 « դէս: Ոչ մի կարօտեալ դատարկածեւն հեռացել չէ նորա տան շեմքից.
 « ոչ մի աւաքատ զուրկ չէ մնացել նորա հացից, ու սեղանից, ոչ մի օտա-
 « րական և պանդուխտ նորա քրիստոնէական հիւրասիրութիւնից: Նա
 « ապրել է պարկեշտութեամբ և պատուով և վախճանել է արժանաւորա-
 « պէս . . . նա հասել է մի օրհնեալ ծերութեան¹⁾ ոչ թէ լոկ հաւակի
 « շատ տարիներով, այլ որ լցուցել է իւր լիահասակ կեանքը երկիւղած և
 « և աստուածասէր վարքով, իբրեւ ազնիւ մայր, իբրեւ սիրող ամուսին, իբ-
 « րեւ աշխատաւոր և անարար տանտիկին »:

« Իմ նախակրթական ուսումս, շարունակում է հանգուցեալ Ստեփան-
 « նոսը, մի թշուառ և աղքատին բան էր, համեմատելով այժմեան մանուկ-
 « ների բաղմամբանեայ ուսանելի նիւթերին. մի փոքր ընթերցանութիւն
 « զրոյց լեզուով զրքերի, լոկ հայերէն և այն իսկ անհասկանալի հին հայե-
 « րէն, որ չունէր ոչինչ անուցիչ նիւթ իմ երեխայական հոգուս համար:
 « Իմ առաջին կրօնական դաստիարակութիւնս ստացել եմ Նոր Կտակա-
 « կարանի պատմութիւնից, որ տպած էր Պետերբուրգում Յովսէփ Արզու-
 « թեան վիճակաւոր առաջնորդի օրերում, պատկերազարդ: Ընտրութիւնը
 « վատ չէր, միայն թէ անգիր սերտել սրբազան պատմութիւնքը, մանա-
 « լանդ կիսով չափ հասկացած, ինչպէս պահանջում էր հայրս, վնասակար:
 « Ես շատ խաղասէր մանուկ էի. հօրս ցերեկով հանգստութեան ժամերը
 « ինձ նպաստ առնելով, կը թողուի ուսումս և կը թռչէի տանիքը — փռու-
 « ռան արձակելը մի առանձին հաճութիւն էր ինձ — բայց քնից վեր կա-
 « ցած, հայրս չտեսնելով ինձ ուսման վրայ, կը սրմէր, կը դռնէր ինձ,
 « կը կապէր և կը պատմէր փառաւորապէս: Քնքուշ սիրով սիրող մայրս,
 « այդպիսի դիպուածներում, շատ անգամ մէջ ընկնելով, կը պահպանէր
 « մանուկները հօր պատժողական հարուածներէն:

¹⁾ Նազարեանցի մայր Մանուշակը վախճանեցաւ Թիֆլիզում 1864 թ. մայիսի 2-ին մօտ 84 տարեկան:

Այն պարոնները, որոնք անց են կացրել իւրեանց մանուկութեան օրերը հանդուցեալ Նաղարեանցի հետ, պատմում են, որ փոքրիկ Ստեփաննոսը շատ հանդարտ և խելօք երեխայ է եղած, և միանշանայն աշխատասէր: Բոլոր խաղերից նա սիրում է եղել միմիայն փռան շենքը և սորա բարձր արձակելու արհեստով հռչակաւոր է եղած իւր ընկերակիցների մէջ: Մինչ Ստեփանը, ինչպէս սովորաբար կոչում էին նորան այն ժամանակ այդպէս անհոգ և զուարճ անց էր կացնում իւր օրերը, նորա հայր Տէր Նսային ուրախ էր, որ պիտի կարողանայ իւր որդեոց ցանկացած ուսումնաւորել Ներսէս Աշտարակցի առաջնորդի ձեռքով կառուցուած հռչակաւոր ուսումնարանի մէջ, որի շինութիւնը հաղիւ աւարտուեցաւ 1824 թւին: Տասն և չորս տարեկան էր Ստեփաննոսը, երբ իւր մեծ եղբոր Մարտիրոսի հետ, հօր ձեռքով յանձնուեցաւ այն ժամանակները մեծ համբաւ ունեցող Պօղոս վարդապետին, որ զպրոցի բացուելուց առաջ քաղաքիս յւանքի եկեղեցւոյ բակում մի խուցի մէջ քանի մի երեխայից հայկաբանութիւն էր դաս տալիս: Եւնձ երէց եղբորս հետ միասին, գրում է « Նաղարեանցը, յանձնեց հայրս մեծ քերական Ղարաբաղցի Պօղոս վարդապետին, որ մեզ խելք և իմաստութիւն ուսուցանէ: Չամչեանի քերական կանութեան վրայ, որոյ մի օրինակը, վարժապետի սեպհականութիւն, և գնեց մեզ հայրս 10 մանէթ արծաթով: Եւ կրթութիւն և լուսաւորութիւն կարող էր մեր հայրը այն տղայական և չքաւոր ժամանակներում և հասուցանել մեզ, հոգացել է նա. բայց իմ գլխաւոր ստացուածը և օգուտը և եղել է միշտ իմ հօր յատուկ զրասիրութեան և ուսումնասիրութեան օրինակը, նորա կենդանի խօսքը և խրատները ինձ: »

Բ.

1824 թւին աւարտեցաւ քաղաքիս Ներսիսեան դպրոցի շինութիւնը և բացաւ ուսումն: Հիմնադիր Ներսէսը այժմ հոգ էր տանում ժողովել իւր ստեղծած առճարում ավետախայրուն աստղերը, որոնք որ միայն երևում էին հայերից զիտութեան հորիզոնում:

Ղարաբաղցի Պօղոս վարդապետը, որի զիտութեան մասին Նաղարեանցը երգիծաբար է խօսում, նշանաւոր էր այն ժամանակը իւր զբաւար լեզուի զիտութիւնով: Սորա դասատուութիւնը Ներսիսեան ուսումնարանում շատերի համար արդիւնաւոր է եղած: Հայկաբանութեան երկրորդ վարժապետը եղած է այստեղ պ. Սաքել Սրարատեանը, որ վերջիշեալ ժամանակներում նմանապէս ուսումնական

երկտասարդներից էր համարվում: Կրօնի դասատուութեան համար հրաւիրուած էր Յարութիւն քահանայ (վերջը վարդապետ) Ալամգարեանը: որ անմիջապէս հոգ տարաւ ուսերէնից թարգմանել և տըպագրել իւր աշակերտների համար քրիստոնէական վարդապետութեան մի ձեռնարկ: Այնուհետև Փարիզից եկաւ զաղղիներէն լեզուի դասատուութեան համար նշանաւոր Շահան Զրայետեանը: Ուսերէնի դասատուն էր Յղիա Բէժանրէկեանը, աշխարհագրութեան — Իշխան Յովհաննէս Արղութեանը և այլն և այլն: Գոնէ սոցանից ընտիրներին այն ժամանակ գտնել կարելի չէր:

Ուսման ընթացքը բաժանուած էր վեց դաստան: Լեզուներից աւանդվում էին հայերէնը և ուսերէնը բաւականին հիմնաւոր կերպիւ, պարսկերէնը (մի մօլլայի ձեռքով) բաւականին ընդարձակ, իսկ ամենից թոյլ կերպիւ ուսուցանվում էր զաղղիներէնը, որի դասերը քիչ էին, դասադրքերը հազուադիւրս, այդ լեզուն միմիայն վերջի բարձրագոյն դասատանց մէջ էր աւանդվում:

Ստեփաննոս Նազարեանցը այն աշակերտներից մէկն էր, որոնք յիշեալ ուսումնարանը հէնց բացուելու օրից մտնելով՝ առաջի աւարտողները պիտի լինէին: Սորան աշակերտակից էր և հանգուցեալ Խաչատուր Արտվեանցը: Ամէն տարի հանդիսաւոր հարցաքննութիւններ էին լինում, ուր Ներսէսը խրախուսում էր իւր առաջի սանիկներին և ողբորում էր հանդիսաւոր ժողովողին: Այդ հանգէսներում Ներսէսը սովորաբար այս կամ այն մեծատանը ընծայում էր իւր սանիկների նկարչական պատկերները, որ այնուհետև երկար ժամանակ զարդարում էին Թիֆլիսի դահլիճների պատերը: Նկարչութեան մէջ ամենայառաջագէմ աշակերտը եղած է Նազարեանցը, որի ընդունակութեան վրայ ուշադրութիւն դարձնելով Գէորգ աղայ Արծրունին, տուեց նորան օրինակելու արտասահմանից բերած քանի մի գեղեցիկ պատկերներ:

Ներսէսի գլխաւոր նպատակն էր իւր ստեղծած դպրոցից որքան կարելի է շատ ուսուցիչներ պատրաստել ազգի մանուկներին կրթելու. այդ պատճառով յիշեալ դպրոցի մէջ աւարտողները պարտաւոր էին զոնէ կէս տարի վարժապետութիւն անել նոյն շինութեան մէջ: Ներսէսը արդէն Թիֆլիսումը չէր, երբ 1830 թւին յառաջագէմ կերպիւ աւարտեց այս դպրոցի մէջ իւր ուսումը Նազարեանցը և անմիջապէս ուսուցչութեան պաշտօնի մէջ կարգուեցաւ: Նորաւարտ երիտասարդը Յարութիւն քահանայ Ալամգարեանի ձեռքով պատ-

րաստուած էր նմանապէս քարոզչութեան) հովուական վտանգաշար-
տօնին: Սովորաբար բարձր դաստիարակեց աշակերտներին Եփրատի
լամբարտները, նախապէս պատրաստելուց յիշտոյն տեղաբնակ էր ձեռ-
րակի օրերը քաղաքի մայր և այն եկեղեցիքը, ուր նորա քարոզչին
խօսում ժողովելու: Շատերը յիշում են Նազարեանց խորամ յաջո-
ղութիւնը: այս ապաւորի ձեռք: Պատմում են, որ միանգամ Նա-
զարեանցի քարոզչին Հաւաքարու Զորաբան ի եկեղեցում մեծաբազ-
մութիւն էր հաւաքուել չաւաքարոյի եկեղեցին տեսնելու թէ ին-
քեանց Տէր Եսայու որդին ի՞նչպէս պիտի քարոզ խօսի: Եւսեմ ոճով
և ձևերով աստեաբանում էր Սանվաննոսը աստուծոյ աշտուժութեան
վրայ, օրինակ տալով հայերին պարզանայն հասկանալութիւնը: Երբ
քարոզչի ճառի մէջ քանի մի անգամ կրկնուեց թէ աջ քա-
ջ երբ քառը, մի Սօսի անունով չաւաքարոյին շանաւոր մեծատուն,
որ այն թաղի իշխանն էր համարուում, այլ եւ զգիարողացում համ-
բերել և կանգնացրեց քարոզչին բարձր գոռալով յայՏէր Եսայու
և աղայ, դու թէ կարա՞ն հոգուց խօսիր, թէ չէ: այս սուրբ եկեղեցիւ մէջ,
և հեռի մեղանց, քաջին ու ղեկին թիւ բան ունին:

Կը մտածէր Նազարեանցը որ մի քան երեսուն տարի յետոյ
քարոզած զաղափարները շատերից նոյն տեսակ ծուռ մեկնութիւն
պիտի ստանան...

Գ.

Դեռ ևս Պօղոս վաղապէս խցի մէջ, ակա Ներսիսեան ու-
սումնարանում մտերմացած էր Նազարեանցին նորա աշակերտակից
Խաչատուր Աբովեանը, որ առաջինից քանի մի տարով մեծ էր: «Ա-
բովեանը, գրում է Նազարեանցը, ուսանելով այստեղ (Ներսիսեան ու-
սումնարանում) մինչև 1828 թ. և լինելով չափազանց աշակերտներից
միւնը, դուցէ և աւելի մտախոհ իւր ընկերների մէջ, նշանաւոր էր մա-
նաւանդ թէ իւր շատ գօրաւոր յիշողութեամբ: Աբովեանը մի մեծ ուսու-
մըն դուրս չը տարաւ Ներսիսեան ուսումնարանից (ինչպէս ոչ որ մեղա-
նից), և անկարելի էր այդ բանը այն վայր ի վերոյ, չբաւոր ուսումնա-
տուութեան մէջ. բայց պիտոյ է ասել արդարութեամբ, որ մի քանի կեն-
դանի սերմեր, մի աղնիւ ձգտողութիւն դէպի ուսումն յառաջացան այդ
ուսումնարանից մի քանի մասնաւորների մէջ: Եւ Աբովեանը Երաժար-
վելով Թիֆլիզից դէպի Եջմիածին, տարաւ իւր սրտի մէջ մի վառ ու-
սումնասիրութեան կրակ. . . . Աբովեանը քնած չը մնաց, երբ որ բազ-
մազ իկել էր զարկելու նորա դուռը: Դօրպատեան համալսարանի ուսուցչ-

« Հայերէս Պարբօտի զաշուտը Հայաստան, 1829 թուականին, բացի նո-
 « յիս քանդակաւն ճանապարհորդութեան նպատակից . . . չառ արժա-
 « նացիւտակ իրողութիւն էր, եթէ միտ դնենք զորա հետեանքներին մեր
 « Հայոց լուսաւորութեան համար: Պարբօտը լինելով էջմիածնի հոգի
 « վրայ, ծանօթանում է Աբովեանի հետ և նկատելով նրա խոհականու-
 « թիւնը, ընտրում է նորան որպէս հայ տեղացի իւր դէպի Մասիս սարի
 « կատարը բարձրանալու ճանապարհորդակից: Աբովեանը յայտնում է
 « Պարբօտին, թէ կամի աշակերտիլ եւրոպական ուսման, բայց չունի զո-
 « րա ճարկաւոր նիւթական ճանապարհը: Օտարական Պարբօտը, բայց
 « մարդկութեան ընտանի և բարեկամ Պարբօտը, յանձնառու է լինում հո-
 « գալ Աբովեանի դաստիարակութեան ծախքը Գորպատի մէջ և վերա-
 « դառնալով Պետերբուրգ, բարեկից է լինում լուսաւորութեան նա-
 « խարար պայծառապնայ Ղլվինի առաջ և Աբովեանի համար, և թագաւո-
 « լութեան գանձարանից ստանում է Աբովեանը երեք տարուայ անդուստ
 « և ճանապարհի ծախք, որ իւր ուսման Գորպատումը և վերադառնայ
 « դէպի իւր հայրենիքը: Ճամարիտ, Աբովեանի ուսումնառութեան հատկը
 « անդամ էր և զծովար էր նորան ամենեկին փոխարինել իւր կօրուտը,
 « բայց պիտոյ է ասել թէ նորա երեք տարուայ կեցութիւնը, ուսումը և
 « նկատողութիւնը Գորպատեան գիտուն և բարեմիտ մարդերի մէջ, մի
 « նոր խնայական միջոցութեան աւագան զարձաւ նորա հոգու համար և
 « վերստին ծնաւ նորան »:

Ինչպէս երևում է, Պարբօտի պաշտպանութեամբ և օգնութեամբ
 Աբովեանի Գորպատ գնալը մի բարի նախանձ է ճնեցրել նորա մտե-
 լիմ ընկերակից Նազարեանի մէջ: Վերջինիս հակառակորդներին մէկը
 աղնարկում է այն իրողութեան վրայ, որ Աբովեանցի և Նազարեանցի
 մէջ մի սերտ բարեկամական դրազրութիւն է եղած բոլոր ժամանակ,
 մինչև որ առաջինին յաջողել է իբրև թէ, Նազարեանցին ևս տա-
 նել Գորպատ: Սակայն Ստեփաննոսը Գորպատ հասնելուց առաջ,
 կարծում են ոմանք թէ մանկ է Մոսկուայի Լազարեանց ճեմարանը,
 ուր քիչ ժամանակ է մնացել: Այս բանի ապացոյց կարող է համա-
 բուիլ և այն, որ յիշեալ ճեմարանի աշակերտաց ընդհանուր ցու-
 ցակի մէջ կայ ¹⁾ և «Ստեփան Նազարեանց» ազգանունը: Իսկ հան-
 ղուցեալը ինքը այսպէս է պատմում իւր Թիֆլիսից երթալու մասին.
 «մի գլղղեցուցիչ տեսարանի տկանատես վկայ եմ եղել . . . այն բո-
 «ւաներին, երբ պարտ էր ինձ հրաժարական ողջոյն առլ մօրս և նորա
 «մայրական օրհնութիւնը ուղեկից աւելու իմ ճանապարհորդութեան»

¹⁾ Յիշատակարան Լազարեան տոհմի. Մ. Մսերեանց-Մոսկուա, 1856
 «մասն Դ. եր.» 42.

«դէպի Գորպատ 1832 թուականին: Մինչև այժմ անջնջելի դրոշմած «կայ իմ յիշողութեան տախտակի վերայ, երբ մայրս հրաժարման օրովէին համբուրելով ինձ — ամենեւին զուժ դարձած, ամենեւին «սէր և քնքշութիւն, մերկայնումէ կանացի ստիկքը և տարածանում «է գետնի վերայ, երգփնեցնելով ինձ, որ չմոռանամ նորա մայրական «սէրը, իմ որդիական պարտքը դէպի նա:

Թողնում ենք հանգուցելոյ կենաց հետ աւելի մօտիկ ծանօթ ներին պարզել, թէ արդեօք ի՞նչ միջոցներով և ո՞ւմ օգնութեամբ զնաց Նազարեանցը բարձր ուսում ստանալու և կամ նշան է նա Լազարեան ճեմարանում և Ռբան ժամանակ: Նմանապէս անյայտ են մեզ նորա Գորպատում անցուցած կենաց մանրամասնութիւնները, երևում է միայն, որ տարիքը առած և եւրոպական լեզուներին անծանօթ երիտասարդ Նազարեանցը շատ աշխատութիւն է գործ դրած մինչև որ կարողացել է աւարտել իւր ուսումը: Տասն և չորս տարի շարունակ ուսել է Նազարեանցը մինչև որ 1846 թւին յաջողեց նորան ներկայացնել Ղազանի համալսարանին իւր աշխատութիւնը Արևելեան լեզուագիտութեան դոկտորի դիտնական տիտղոսը ձեռք բերելու համար: Այս գրուածքը ուսեւերէն է այսպիսի վերադառնութեամբ — «Обозрѣніе исторіи Гайканской письменности въ по-«вѣйшія времена. Разсужденіе.... Степана Назаріянца, Казань. «1846 г. 8^о»:

Այնուհետև Նազարեանցի մեզ յայտնի գրաւոր աշխատութիւնները տպագրուած են հետևեալ կարգով:

2) Абдуль Касемъ Фердуси Тусскій, тварецъ книги Царей, известной подъ названіемъ Шейхъ- намэ. Съ присовокупленіемъ краткаго обзора исторіи персидской поэзіи до исхода XV ст. по Р. X. С. Назаріянца. Казань. 1849. (Աբդուլ Կասըմ Գերդուսի՝ յօրինող թագաւորաց զբքի որ յայտնի է Շահնամէ անուամբ: Սորան կից մի համառոտ տեսութիւն պարսկական բանաստեղծութեան մինչ XV դարու վերջերը 3, Բ: Ս. Նազարեանցի. Ղազան, 1849:)

Այս զբքի մասին մի քննութիւն է գրած նոյն Ղազանի համալսարանի դասատու պ. Ի. Բէրէզկեմը «Москвитянинъ» օրադրի մէջ (1850 թ. գիրք I, եր. 169—174.)

3) Նոյն գիրքը քանի մի փոփոխութիւններով՝ Абдуль Касемъ Фердауси Тусскій և այլն. Москва. 1851.

Այս տպագրութեան մասին ևս դարձեալ նոյն պ. Ի. Բէրէզկեմը

- մի քննութիւն՝ զրկեց Պурн. Мин. Нар. Просв. 1852 (т. 73, стр. 148—153.) Գր. ցանկումս ցիւ մ. ցիւմիցի անունը մեծ վերջապէս բոլորովն չի տրուած։
- 4.) Ստեփաննոսի Նազարեանց վարդապետի արեւելեան լեզուաւորութեան, յաղագիւս փորձա կաւն հոգեբանութեան ճանաչման Մոսկւա. 1851, քաղաքացիական միջնակարգական դպրոցի 5.) Ստեփաննոսի Նազարեանց վարդապետ արեւելաբօնի համարակց հայախօսութեանը, Մոսկւայի մէջ, 1853. 6.) Սաաջին Հոգեղէն Կերակուր հայապիւծ արեւելեան համար Ստեփաննոսի Նազարեանց վարդապետի աշխատասիրութիւն, Մոսկւա քաղաքի մէջ, 1853. 7.) Саади-Муслахеддинъ Шейха Розовый Кустарникъ, славный подвизами Гудистана. Переводъ съ персидскаго С. Назарьянцъ, доктора Восточной словесности. Москва, 1857. (Սաադի-Մուսլիհէդդին Շէյխի վարդի հոշակուած «Գիւլիստան» անունով։ Թարգմ. պարսկերէնից Ս. Նազարեանցի, դոկտորի Արեւելեան գրականութեան, Մոսկւա 1857.) 8.) Հանդէս նոր հայախօսութեան, աշխատասիրութիւն Ստեփաննոս վարդապետի Նազարեանց հատոր ա. Մոսկւայի մէջ, 1857. 9.) Հանդէս նոր հայախօսութեան հատոր բ. Մոսկւա 1858. 10.) Պաւլոս Լ. վիրդինիա հանդերձ, Հնդկական խրճիթով, Թարգ. Բրանսիական բնագրից։ Մոսկւա. 1858. 11.) Ռուսերէն լեզուաւոր քննութիւն 1864 թ. ին Մոսկւա տպած պ. Լազարեվի տաճկ. — Թաթար. — ռուս. բառարանի մասին։ Այս քննութիւնը տպագրուեցաւ Современ. Лѣтопись շարա-Թաթերթի մէջ 1864. № 14. 12.) Պատմութիւն Պեղադոզիկայի (Թարգ. գերմանականից) Լերիու հստ ճառեր տպագր. Ներսիսեան դպրոցի տարեկան համարատուութեան տետրակում 1870 թ. ին։ 13.) Տեսական և գործնական առաջնորդ ռուս լեզուի, գործ Ստեփաննոսի Նազարեանց. Տիֆլիս. 1871. եր. 317. in. 8°. Վերջապէս ճշիւ և փառաւոր ամսագիրը 1858, 1859, 1860, 1861, 1862, և 1864 թուականներին։ Նորա Երոզական լեզուներով գրուածքները, եթէ միայն կան, մեղ յայտնի չեն։ Դ. Վերին ատլանտի հետաքրքրական է ուսանիլ ներկայ դարու մեր հայոց մտաւոր զարգացման պատմութիւնը։

Աւենեք, Եօրինակ, ուրևաց Խիրապետութեան տակ գտնուող հայոց տպագրութեան պատմութիւնը, և կը տեսնենք որ դեռ ևս անցեալ տարուէ կիսումէ Էջմիածնի, Երեւանի, Նախիջևանի, Շաքիու Շիրվանի, Վրաստանի և ընդհանուր Ռուսաստանի հայք ոչ տպարան ունին, ոչ տպագրութիւն և ոչ հասարակաց գպրոց: Եղին իսկ Տրճկաստանի և Երկրագնդիս այլ և այլ տեղերի հայոց մէջ էլ շատ մեծ է տպագրական գործունէութիւնը: Վենետիկն է միմիայն, որ ամէն տարի քանի մի հատ զիրք է ընծայում, իսկ Պօլսում երկու երեք տարին հազիւ թէ մի գիրք է լոյս տեսնում: Բայց վենետիկցւոց տպագրութեան մէջ արդէն կաթողիկական լրարութիւն և ճշտակ է երևում, որ Պօլսոյ հայ ղիտնականաց մէջ բողոք է բարձրացնել տալիս: Այդ բողոքը արտայայտվում է Տաթևացւոյ, Սարգիս Շնորհալոյ, Պօղոս Տարոնացւոյ և այլոց գրքերի տպագրութեան մէջ: Սիւս կողմից սկսում է մաքառել կաթողիկոսութեան դէմ: Կ. Պօլսոյ նշանաւոր Պօղոս պատրիարքը՝ հրատարակելով՝ ձրագ. Ճշմարտութեան, Զէն հոգևոր, Գանձարան ծանուցմանց և այլն: Այդ բարոյական և կրօնական պատերազմը կասեա թէ վերջանում է 1760 թւին և ահա ամբողջ տասը տարի, այն է մինչև 1770 թիւը թէ վենետիկի և թէ Պօլսոյ հայ տպարանները միապեսակ լուում են, ոչ մի գիրք չհրատարակելով այդ միջոցին: Այդ լուութիւնը խանգարվում է մի նոր գործունէութիւնով ոչ միայն վենետիկի և Պօլսոյ մէջ, այլ միւսնոյն 1772 թւին բացւում են հայ տպարաններ՝ Էջմիածին և Հնդկաստանի Մադրասի մէջ: Էջմիածնի տպարանը երջանկալիշատակ Սիմէօն կաթողիկոսի աշխատութեամբ միանգամայն հոգ է տանում այնպիսի տպագրութեանց, որոնց միտքն է ազատ պահել հայոց եկեղեցին որ և իցէ նորամուտ և մանաւանդ կաթողիկական ծէսերից կամ սովորութիւններից, իսկ Մադրասի տպարանը, Յակոբ Շամիրեանի ձեռքով, ոչ միայն ցանկանում է ծանօթացնել հայերին իւրեանց նախնեաց քաջագործութեանց հետ, այլ հայոց պատմութիւնը ուսուցանելով, միտք ունի ոգևորել իւր ազգայնոց որ և իցէ միջոցաւ թոթափել իւրեանցից մահմետական բռնաւորութեան լուծը: Գիտաղգաբար ոչ Էջմիածնի և ոչ Մադրասի մամուլը երկար չէ գործում: Սիմէօն կաթողիկոսի և Շամիրեանի մահուամբ փակւում են նոցա տպարանները և դարձեալ բեմի վրայ մնում են Պօլսը և վենետիկ թրիէստը: Յանկարծ տպագրական մի նոր գործունէութիւն է բացւում Ս. Պետերբուրգի մէջ 1785 թւին

այստեղ հոգևոր բովանդակութեամբ երկուն գիրք են լայն ընծայվում և հետագայ տարիները աւելի ևս առաջ է գնում: Պետերբուրգի հայ տպարանի գործունէութիւնը 1790 թուականին այդ տպարանը անցնում է Նոր-Նախիջևանի ուր հոգևոր գրքերի հետ միասին տպւում են քանի մի հաա զիտութեանց վերաբերեալ գրքեր: Այս քաղաքից յիշեալ տպարանը 1796 թւին անցնում է Ասորախանի ուր Արղութեանց Յովսէփ կաթողիկոսի մահուանից յետոյ բոլորովին գնցւում է: Բանի մի տարուանից յետոյ, այն է 1812 թւին նորից բացվում է հայ տպարանը: Պետերբուրգի մէջ, ուր խօջենց Մարգարը տպւում է բանասիրական մի գիրք՝ Բարադ աւանդի մասնով թիւ 4-ը: Ի դիմաց վարդապետ Լուսինեայի: Նոյն միջոցներին հայերէն տառեր է ձեռք բերում Պետերբուրգի իւր իւր բլեթա կաշի ընկերութիւնը, որ աժանագին Աստուածաշունչ (և Նոր կտակարան է տպագրում: Գործանքն անցնում են քանի մի տարիք և ահա տեսնում ենք որ 1819 թւին խօջենց Մարգարը իւր տնտեսով պատնարուել է Մոսկովայի մէջ մի գերմանացւոյ տպարանում և հայերէն տառերով, բայց թուրքերէն լեզուաւ (որ այն ժամանակը գործածական էր Ռուսիայի հայոց մէջ) Նոր կտակարան է տպւում: Սորան իբրեւ թէ օգնութիւն է գալիս: Արեւելե գիտնական վարդապետը՝ նոյն 1819 թւին և նոյն տպարանում պատկերելով Մաղիկի գիտութեան ցաւակերան վարդգիւրքը, որի մէջ նաեւ զիտութեանց վրայ կարճատև տեղեկութիւններ կան:

Մոսկվան առ ժամանակ բաւականանում է այդ երկու գրքի տպագրութիւնով, բայց հետևեալ 1820 թւից, զլիսաւորապէս երկու սարկաւազներ, Աբրահամ Աստուածատրեանը և Գաբրիէլ Պատկանեանը (այժմ ծերունի աւագ քահանայ Պետերբուրգում) ջանք են անում Ասորախանի հայ հոգևոր տպարանը վերականգնացնելու: Մէկը տպւում է հայերէն — ռուսերէն լեզուները խօսակցութեան ձևով ուսանելու մի ձեռնարկ, միւսը մի քրիստոնէական: Աբրահամ սարկաւազը շուտով վերափոխում է իւր տպագրական գործունէութիւնը Մոսկվա նոյն տեսակ լեզուազիտութեան վերաբերեալ ձեռնարկ տպելով, իսկ Պատկանեանը շարունակում է Ասորախանի մէջ Աղէքսանդր Մակեդոնացւոյ պատմութիւնը տպագրելով: Սակայն այս վերջի գրքի տպագրութիւնը վկայում է, որ Ասորախանի տպարանը կամ վերանորոգուելու է կամ բոլորովին դոցուելու տառերի սպասիկ մաշուելու պատճառաւ:

1829 թին Մոսկվայի մէջ Լազարեանց ձեռքով բացուեցաւ մի ճոխ տպարան՝ որոյ հարստութիւնը ցոյց տալու համար Շնորհալոյ Հաւատով խոստովանի մը լոյս ընծայուեցաւ տասն և երկու լեզուներով տպագրուած:

Եթէ այսուհետեւ մի կողմը թողնենք Ռուսաստանից դուրս ելած տպագրութիւնները և ռուսահայտակ հայոց վարդապետն մասին ցանկանայինք դադարիար կազմել այդ տէրութեան սահմաններում տպող հայերէն գրքերով, այն ժամանակ հետեւեալ պատկերը կրներկայանայ մեզ: Ներսիսեան դպրոցը իւր չորս տարեկան հասակում տպագրում է՝ Երեւանի քանոնով աշխատութիւնը, որից Լազարեան ճեմարանը յետ մնալ չուղենալով, հետեւեալ 1829 թին լոյս է ընծայում Մուշաթ Արարատեան անունով աշակերտաց աշխատութեանց ժողովածուն: Այլտեղ կայ ուսանաւոր և արձակ գրութիւններ, իհարկէ՝ գրաբառ լեզուաւ, հայր Սալանթիանի խմբագրութեամբ և աւելի վերջինիս հայկաբանութիւնը ցոյց տալու համար գրած, քան թէ աշակերտաց վարդապետն չափը ցոյց տալու համար: Սակայն ընթերցանութեան գրքի պահանջը երևի թէ շատ զգալի էր, որ նոյն 1829 թին Թիֆլիզի մէջ Դէորդ աղա Արծրունին այդ պակասութիւնը լրացնելու մտքով «Գարատան խրատույ» գիրքն է տպում, իսկ իՇուշի Արադաղցի Պողոս վարդապետը «Ընթերցուածք Ս. Գրոց Հին Կտակարանի: Ժողովածուն է տպագրում հետն էլ մի համառօտ քերականութիւն»:

1830 թից Մոսկվայի մէջ առաջի անգամ փորձեր են լինում աշխարհաբառ լեզուաւ տպագրութեանց: Այստեղ լոյս են ընծայվում Մատթէոսի Ս. Աւետարանը աշխարհաբառ թարգմանութիւնով, Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոյ և Մահմետական կրօնի միմիայն աշխարհաբառ, Միարաբ ծառայի պատմութիւնը (թարգմանութիւն), իսկ 1834 թին ամբողջ Նոր Կտակարանը աշխարհաբառով հանդերձ, որ յետոյ երկար ժամանակ գործ էր ածում իբրեւ ձեռնարկ գրաբառը սովորելու: Այս աշխարհաբառ գրողը նոյն Հ. Միքայէլ Սալանթիանն էր, որ որքան աշխատած էր մաքրել իւր լեզուն դաւառական բարբառների ազդեցութիւնից և իբրեւ թէ Հայաստանի սրտի մէջ (Էջմիածնայ մէջ) խօսած լեզուովը դրել, այնուամենայնիւ իւր հայրենիքի ճաճ կաստանի ոճերը և բայերի խոնարհմունքները ամբողջութեամբ ընդունած էր, որ բնականապէս խորթ էր թւում կով-

կատարեալներին: Սալանթեանի այս աշխարհաբառը, քանի մի վո-
վոխութիւն կրելով, հիմը դրեց այն լեզուին, որ երկար ժամանակ
գործածական էր Մոսկվայի և Թիֆլիզի զարգացած հայոց մէջ՝ յայտնի
լինելով իբր Աստրախանի բարբառ, յետոյ մեր ներկայ գրականու-
թեան լեզուն դարձաւ: Պէտք է գիտենալ որ շատ ի գուր է ըն-
ծայուած այդ աշխարհաբառի պատիւը Աստրախանի հայերին, որոնց
խօսեցած բարբառը մինչև հիմայ էլ շատ գուհի է և օտար ազգի
ոճերով և անթիւ բառերով լիքը: Ինքն ըստ ինքեան, վերև յիշած
աշխարհաբառը ոչ էլ Սալանթեանի հեղինակութիւնն էր այլ ինչ-
պէս երևում է, դա բաւականին հին ժամանակներից գործածական
է եղել հայոց մէջ և լեզուի կանոնների կողմից շատ պարզացած ու
մշակուած է եղած. այստեղ Սալանթեանի արժանաւորութիւնը
միայն այն է, որ դա առաջինը Ռուսաստանի մէջ տպագրութեամբ
հանդէս է դուրս բերում ծածկուած դանձր: Յաւելով որ Հայտի
կարողանալէ այստեղ այդ մասին աւելի մանրամասնօրէն խօսելու,
առաջինը տանում մեր տեսութիւնը Ռուսաստանի հայոց գրականու-
թեան զարգացման մասին:

Հ. Միք. Սալանթեանը օրէցօր ընդարձակում էր Մոսկվայի մէջ
իւր գործունէութիւնը: 1831 թւին տպագրեց ընդարձակ իր օրնա-
գիրն ու թիւնը, ապա Լազարեանց ցանկութեանը՝ Ն. Կարապետի
գաղթականութեան Պարսկահայոց (1832 թ.). Միք-
բունք քրիստոնէական վարդապետութեան (1833
թ.) և վերջապէս Հրահանգ ճարտասանութեան (1836):
Այդ միջոցին Ռուսաստանի միւս հայ տպարանները քնած են և նո-
րից կենդանութիւն են ստանում միմիայն 1838 թւին, երբ Պետեր-
բուրգի մէջ տպուած է նոր հանդէս դուրս եկող՝ Ալէքսանդր Խո-
ւարաշեանցի յօրինած Գիրք նախադրութեան հայկա-
զեան լեզուի, իսկ Մոսկվայում նորա Հայ-ռուս բառա-
րանը և Կարապետ Պոպովի Նախադրութեան վարժութեան:
Նոյն միջոցում լոյս են տեսնում Էջմիածնայ մէջ Խոսհակ ա. ք.
Սահառուկայ Հարիւր ու Հորս սուրբ պատմութիւնքը,
Թիֆլիսի մէջ Գարաստան անունով թարգմանութիւնը:

1839 թւին, բացի Շուշի տպած Աղուանից պատմութեան
թիւնը և Սալանթեանի քերականութեան համառօտութիւնը,
Մոսկվայում ի լոյս են ընծայվում Գ. Սուքիասեանի Ռուսաց իչ-
Ռուսաց և Հայոց լեզուաց և Ս. Աղայեանցի քերական-
ութիւնը:

1840 թւին Շուշի տպումեն Սալտիթեանի կրօնադիտութեան համառօտութիւնը, իսկ Մոսկվա քանի մի տետրակներ են դուրս դալի աշխարհարաւ լեզուով ժողովրդի մէջ կրօնական և բարոյական մտքեր տարածելու դիտաւորութեամբ: Աւելի նշանաւոր է նոյն ժամանակ Մոսկվայի մէջ տպած Կայսր Կոնստանտին Նաւալովի համառօտ պատմութիւնը թարգմանութիւն Թովմաս քահանայ Նազարեանցի ձեռքով:

1841 թւին Յակոբ Կարինեանցը Թիֆլիզում տպում է Պրիշի խաչելութեան մասին զրաժ ճառը, իսկ Մոսկվա՝ իւր Եղեբեղ-գոլթի իւնքը առաջինը կիսագրքաբառ է և կիսաաշխարհարաւ այժմեան ընթերցողի վրայ անդուրեկան տպաւորութիւն է գործում լեզուի կողմից, իսկ երկրորդ զրութիւնը՝ փորձ է թէ մի թատերական ձևով բանաստեղծութեան և թէ հեղինակի զրաբառ լեզուի քաջ դիտութեան:

Հետեւեալ 1842 թւին Էմիլիանայ մէջ տպում է Հ. Յ. Շահ-խաթունեան եպիսկոպոսի Էմիլիանայ և Արարատայ երկու հատոր ստորագրութիւնը, իսկ Թիֆլիզում Հ. Սարգիս Զալալեանի հնախօսական ճանապարհորդութիւնը՝ Մեծն Հայաստան հատոր ա.:

1843 թւին նշանաւոր է Մոսկվա տպագրուած Համազասպեանցի ձեռքով ուսւ բանաստեղծների (Ժուկովսկի, Պուշկին և այլոց) արձակ ոտանաւոր թարգմանութիւնը: Այնուհետև 1844 և 1845 թւերին հայ տպարանները լրած են: 1846 թւին Մոսկվա լոյս է տեսնում պ. Էմիլի քերականութիւնը, իսկ 1847 և 1848 թւերին նորից լոութիւն: 1849 թւին դարձեալ պ. Էմիլը Մոսկվայում տպագրում է իւր «Ընտիր հատուածքը»:

Քառասուն թուականների այս մտաւոր մեռելութիւնը Ռուսաստանի հայոց մէջ արդարանալիք չունէր, եթէ 1847 և 1848 թուականներին չլինէր հրատարակում Թիֆլիսի մէջ Յ. Կարինեանցի և Մ. Պատկանեանի ձեռքով «Կովկաս» լրագիրը (զրաբառ):

1850 թւին Մոսկվայի մէջ լոյս են տեսնում պ. Էմիլի Վէպը Հնոյն Հայաստանի և Մսեր Մսերեանի Հրահանգ քրիստոնէական հաւատոյ: Այդ միջոցին Թիֆլիսում սկսում Արարատ շաբաթաթերթը Հ. Գաբ. Պատկանեանի խմբագրութեամբ աշխարհաբառ լեզուաւ, բայց տարին չը վերջացրած դադարում է:

Հետեւեալ 1851 թւին Մոսկվայում լոյս է տեսնում Ստեփան-

նոս Նազարեանի առաջին աշխատութիւնը հայերէն լեզուով՝ Յաղագս փորձն ահան չոգեբանութեան գրաբառ լեզունով մի ճառ:

Այստեղ դադարացնում ենք Ռուսաստանի մեր հայ տպարանների գործունէութեան տեսութիւնը: Մեր նպատակն էր ցոյց տալ թէ՛ գրականական զարգացման որ աստիճանի մէջ կարող էին լինել 1850 թւին ապրիլ Ռուսիոյ հպատակ այն հայերը, որոնք միայն մայրենի լեզուին տեղեակ լինելով, բաւականացած էին Ռուսաստանի մէջ տպագրած հայ գրքերով:

Ե.

Ահա ինչպէս է ներկայանում մեզ 1850 թւին ռուսիոյ հպատակ հայերի մտաւոր զարգացման պատկերը: Չորս տեղ ուշադրութեան արժանի դպրոց ունին այն ժամանակուայ հայերը. նշանաւորը Մոսկվայի Նազարեան ճեմարանն է, ապա Թիֆլիսում Ներսիսեան դպրոցը, Աստրախանում՝ Աղաբաբեանը և կամ հոգևոր դպրոցը և Շուշի քաղաքում հոգևոր դպրոցը: Սոցա ամէն մէկի մէջ հարկաւոր տղայք սկսում են ուսումը այր, Ժէ, Ճէ, և այլ ուղիներով են մի կանոն և ութ կանոն սաղմոսին, ապա Նոր կտակարանին, յետոյ քերականութեանը, իսկ շատ սովանները արժանանում են ճարտասանութեանը. տրամաբանութիւնը գերբնական մի գիտութիւն է համարվում և ոչ ամենքին մատչելի, կրօնի դասատուութիւնը սկսում է Ադամի և Եւայի պատմութիւններից, լրանում է նոր կտակարանով և վերջանում է Սալանթեանի կամ որևիցէ մի այլ կրօնադիտութեան ձեռնարկով: Ազգային պատմութիւնը սկսում էր՝ Ո՞վ էր Հայկը հարցով և վերջանում էր Ղևոն Թադաւորով: Հայաստանի աշխարհադրութիւնը չէր աւանդուում: Բացի Նազարեան ճեմարանը, ուր ծնորդների լեզուների և առ հասարակ գիտութեանց դասատուութիւնը աւելի կանոնաւոր էր, միւս դպրոցներում այնքան չնչին էին գիտութիւնների և լեզուների մէջ եղած յանաջադիմութիւնը, որ դոյա բարձրագոյն դասատուներից դուրս եկողները արքունի ուսումնարանների ստորին դասատանց մէջ հազիւ էին ընդունվում: Այդ հայ դպրոցների աշակերտները այդ ու բնն սովորելուց յետոյ մեծ մասամբ շտապում էին թողնել իւրեանց ուսումը և կեանքի մէջ մտնել: Բարձրագոյն դասատանց հասնողները կամ քաջանաց ու էին կամ չինովնիկացու: Վերջիններս սկսում էին իւրեանց գործունէութիւնը 6 կամ 8 ուրբա ամսականով, քանի մի տարի լոկ թղթեր արտա-

գրելով էին անցկացնում կեանքը պաշտօնատներում և եթէ կան այլ ձևով յառաջացածներ— դժբա միմիայն իւրեանց բնածին խելքին և չափազանց աշխատասիրութեանն են պարտական: Արքունի ուսումնարանների մէջ սովորողները միանգամայն զուրկ էին մնում մայրենի լիզուլց, բայց կարողանում էին, և այն շատ քիչ թւով, հասնել համալսարանին, ուր հայերի սչրածը՝ բժշկական գիտութիւններն էին: Իօր Կատը գրաւում էր դէպի իրան միջոց ունեցող հայ երիտասարդներին, երկրորդ տեղը բռնած ունէր Մոսկվան և երկու տեղն էլ մտաւոր զարգացման հետ միասին ծագում էր նոցա մէջ սէր դէպի իւրեանց հայրենիքը, կրօնը, լեզուն, պատմութիւնը: Նոքա վերադառնում էին իւրեանց տուն հոգևով հայ դարձած, թէև շատ քիչ ծանօթ ազգային պատմութեան, լեզուի, և եկեղեցւոյ պատմութեան հետ: Համալսարանի մէջ ձեռք բերածը, բացի գիտութիւնները, յիշում էր հայերէն աշխարհաբար լեզուն, որ ուսանում էին միմիանց հետ տեսնուելով և խօսելով, և ոչ թէ որևիցէ կանոնաւոր կերպով: Սակայն այդ աշխարհաբարը նոքա աշխատում էին որքան կարելի է մտքերէլ օտար բառերից, թէև մի և նոյն ժամանակը եսթափայ էին օտար ոճերին: Գալով զիտութեանցը, պէտք է յիշել, որ Ռուսաստանի այն ժամանակուայ համալսարանները ըստ մեծի մասին շատ քիչ էին ընդունակ մասնագիտութեանց համար գիտնականներ պատրաստելու, և այլ է պատճառը որ մինչև 1845 թուականը ըստ ցի բժշկները հայերից ոչ զք էր հանդիսացած իբրև մասնագէտ:

Այս լինչ էին անում նոքա, որոնք զուրկ էին համալսարանի շեմքը տեսնելուց և բաւականանում էին հայերէն լեզուի գիտութեամբ: Նոքա, եթէ միայն ցանկութիւն ունէին զարգանալու և ինքնակրթութեան գիմեղու, պէտք է աչքերը դարձնէին Մխիթարեանց աշխատութեանց վրայ և ամենատուր գնով ձեռք բերէին նոցա տպագրութիւնները: Միրվում, յարգվում և պաշտվում էին վենետիկի հրատարակութիւնները, որոնց կազմի զոյնը մինչև անգամ հանրածանօթ էր հայերին: Մխիթարեանները ամենագիտնական, ամենախելօք և միանգամայն անսխալ ուսումնականներ էին համարվում ազգիս աչքում: Մանաւանդ նոցա լեզուի քաղցրութիւնը, հայկաբանութեան վսեմութիւնը գրաւում էին այն հայոց ուշադրութիւնը և սէրը, որոնք իրանք էլ փոքր ի շատէ վարժ էին գրաբառի մէջ: Եւ ահա՝ վենետիկոյ գրքերով ինքնակրթութիւն ստացող անձանց թիւը բաւականին շատ էր քառասնական թուականն-

րի վերջերում և օրէ ցօր շատանալու վրայ էր. Դաքա մի դաս էին կազմու մ, որոնց ղ ի տն ա կ ա ն, հայկաբան կամ վարժ ա պ ե տ պատուանուններ էին տալիս ուսմիկները: Ավ դոցանից ունէր Կոմիւնու փիլիսոփայութեան չորս հատօրը — նա փիլիսոփայ էր ժողովրդի աչքում: ով ունէր Ռէսթիկենի բժշկականութիւնը — նա ճանաչում էր ամէնայն հիւանդութիւն և ամէն ցաւի դեղէր տալիս. ում մօտ գրտնափում էր Թէսաւրօսը — նա խելօք և բարոյական մարդ էր, իսկ Ռօլէնի հիսթօսութեան հատորները ընտիր գիտնականների բաժին էին: Ռուսիայի հայոց մէջ յիսուն թուականին հազիւ թէ մի 20 կամ 30 անձ լինէր համալսարանական գիտութեամբ հայկաբան — ղետնականներ թիւը գուցէ հասնէր հարիւրի, բայց դոցա մէջ յայտնի նշանաւորները հինգ վեց հատ էին. մի հարիւր անձը համարելու էր այն հայերի թիւը, որ շատ քիչ փող ծախսելով պատարատ են երբեմն երբեմն հայերէն զիրք առնելու, մի երկու այդքան էլ կը լինէին, որոնք ուրիշներից զբքեր փոխառնելով կարգալու վարժուած էին: Այսքան էր մօտաւորապէս այն ժամանակուայ կարգալու ընդունակութիւն ունեցող հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում: Իսկ մնացած կէս միլլիօնից աւելի հայ հասարակութիւնը այբուբենից անգամ զուրկ ընկղմած էր խորը անգիտութեան մէջ:

Այսպէս էր հայոց դրութիւնը, երբ 6 տարի Ներսիսեան ուսումնարանում, 16 տարի Դորպատում և Ստարի Ղազան քաղաքում աշխատած գիտութեան համար և ամենաբարձր գիտնական աստիճանի հասած Ստեփաննոս Նազարեանցը, իւր մօտ 40 տարեկան հասակում, հանդէս է դուրս գալիս օգնելու իւր ջերմ սրտով սիրած ազգին: Նա առաջինն է հայերից այդ բարձր գիտութեանը հասած, և այս քիչ փառք չէ մասնաւոր անհատի համար: Այս է պատճառը, որ գիտութեամբ ամենահարուստ Նազարեանցի վրայ բարոյական և ծանր, մեծախորհուրդ պարտականութիւն կար ոչ միայն օգնել իւր սիրած ազգի լուսաւորութեանը, այլ և գլխաւոր և աւագ ղեկավարն լինել հայոց զարգացման գործի մէջ: Երբ ուշի ուշով կարդաք Նազարեանցի բոլոր սովորութիւնները և մօտիկ ծանօթանաք իւր մասնաւոր կեանքի հետ, կը տեսնէք և կը հաւատաք որ այդ պատրաստութիւնը աղբին ծառայելու ոչ միայն կայ այս մարդու մէջ, այլև սաստիկ ջերմ է սորա կուրծքի մէջ բաբախուող ազգասիրական կրակը, թէև միւս կողմից դա զուրկ է գիտնալուց, թէ ի՞նչպէս սկսելու է, ինչպէս ընթանալու և ի՞նչպէս հասնելու իւր և մեր ցանկացած նպատակին: Հաստատենք մեր ասածը իրողութիւններով:

Մենք աշխատեցինք ցոյց տալ թէ ինչպէս խեղճ էր Ռուսաստանի հայոց բարոյական դրութիւնը 1850 թուին: Հիմա՝ եթէ դուք զիտութեանց դօքտորի ամենաբարձր աստիճանով կամենայիք հանդէս գալ օգնելու ձեր սիրած, բայց վերջին աստիճանի տգէտ ազգին՝ և եթէ ձեր օգնութիւնը դրականութեան, հեղինակութեան միջոցաւ պիտի լինէր՝ առաջ առաջ ինչ կրայիք դուք ուսման և զիտութեան համը չառած, քաղցած ու սոված ժողովրդին՝ այրբեւնարան (ի հարկէ՝ ոչ ա ժ ճ ո ո վ, այլ ձեր զիտութեան համեմատ շինած), թէ՛ աստղաբաշխական մի վերացական շարադրութիւն: Նազարեանցը, իւր առաջուայ քսան տարին տգէտ ժողովրդի մէջ անցկացրած Նազարեանցը, որ աչքով տեսած էր նորա հարկաւորութիւնները, ազգի վրայ ցաւելով և մրմնջալով, հէնց առաջի քայլը անելով անհրաժեշտ պէտք համարեց նորա մերձիմահ հիւանդութիւնը բժշկել Հոգեբանութեան վրայ մի ճառ տալով հայերին և այն ևս գրաբառ լեզուաւ:

Մեզ շատ հետաքրքրած է իմանալ, թէ ի՞նչ է եղել պատճառը, որ մի արեւելադէտ և միանգամայն լեզուադիտութեամբ պարտող, համալսարանական դասատու մի անձ — տգէտ ժողովրդի առաջ հանդէս դուրս գալու համար ընտրած է անսխառն հոգեբանութեան նման վերացական մի նիւթ, մանաւանդ որ այդ նիւթը թէ՛ դուրս էր իւր մասնադիտութիւնից և թէ՛ իւր անձնական քրնութեան և խուզարկութեան նիւթ չէ, այլ լոկ թարգմանութիւն, որ կարող էր անել և զիմնազիտնի մի բարձր դաստիարակ աշակերտ:

Նազարեանցը պատասխանում է մեզ իւր «Հոգեբանութեան յառաջաբանի մէջ թէ՛ ճանաչել և սիրել ազգը այն է՝ «խուզողաւ «կան մոօք քննելով զպիտոյս իւրոյ ազգի և փութոյ սկսութեամբ «դարման նմին մատուցանելով» — այսպիսի ազգասիրութիւն չկայ այնժամանակուայ Ռուսաստանի հայոց մէջ, որոնք միմիայն իւրեանց անձնի մարմնեղէն պիտոյքն են հոգում: Իբրեւ ասիացոյց այս բանի, հեղինակը ցոյց է տալիս «մերոյ հայկական դաւակայ յոխուր՝ և ա՛ «մենավարան վիճակ՝ մինչև այբբենարանս անգամ չունիլ սոցա յուս «սումն դպրութեան լեզուին...»: Իսկ մինչև անգամ այբբենարան չունեցող ազգը բնականապէս դիմում է օտարին և մոռացման է տալիս իւր մայրենի լեզուն, որից յառաջանում է ազգի կործանումը: Այս «ահաւոր ճշմարտութիւնը յանդիման կացուցանելով» ազգիս մէջ զեռ ևս խելքը գլխին մնացած մարդկանց, Նազարեանցը ա՛

սում է «Ոչինչ հարկ և արժան դատելով անդէն ՚ի սկզբանն առաջի
« Դնել հայազգի ուսումնասիրին մատեան երկայնախօս զիմաստասիրա-
« կան խնդրոց՝ շատ համարեցաք զզլիաւորսն, վարդապետութեանց
« հոգեբանութեան աւանդել նմա՝ ոչ կարի խորութեամբ և ոչ
« կարի յայտնութեամբ, այլ միջակ ուսմամբ տալով զծանօթութիւն
« զհետեւեացն.... »:

Նազարեանցի այս բացատրութիւնը վերին աստիճանի պարմանք
է բերում մեզ վրայ. ազգը այբբենարանի անգամ կարօտ է, և այդ
կարօտը ճանաչող գիտնականը նորան հոգեբանութիւն է տալիս ձեռք.
դուք քաղցած էք՝ մի կտոր հացի կարօտ, ձեզ առաջարկում են
խաղաղական հրաժշտութիւն լսել....

Մեր զարմանքը աւելի կրկնապատկւում է, երբ տեսնում ենք որ
Նազարեանցի «Հոգեբանութիւն» անունանա՞ծ ճառը զուրկ է մի որ և
իցէ գիտնական արժանաւորութիւնից. զա թարգմանութիւն է մի հը-
նացած և շատ կարճաօտ դասաղբի, որի նմանները հազարաւոր են
օտար ազգաց մէջ: Թարգմանութիւնը բռնի է, անդադար բառա-
բանների դիմած, խրթին է և մութը իմաստի կողմից: Աւելացնենք
սորան որ թարգմանութիւնը հայացրած չէ, ոճերը և դարձուած-
ները օտարի են և խորթ, լեզուն քերականական կանոնների դէմ
մեղանչում է շատ անգամ. գրուածքը առարկայի վսեմութեան վա-
յել քաղցր և սահուն չէ: Ինչո՞ւ ուրեմն Նազարեանցը այս իւր աշ-
խատութիւնը զրաբառ լեզուաւ է արել, քանի որ ինքն էլ բաւակա-
նին վարժ չէր զրաբառին: Այս հարցը Նազարեանցը ինքն էլ է ա-
ռաջարկում իրան. «Բեր այժմ, ասում է նա, բանազիտաց աղղիս
« հատուցուեք զվասն էրն մերոյ երկասիրութեան ոչ ՚ի բարբառ
« աշխարհիկ և իմանալի առ հասարակ, այլ ՚ի հին բարբառ զրոյց՝
« անհասկանալի, ուրեմն և անօգուտ իսկ յաւէտ
« մեծ ի մասին հայրենակցաց մերոց:»

Ահա և իւր պատասխանը. «Գիտնական(?)» վաստակ մեր այս
« առաջին գորով ՚ի լեզու հայ, ՚ի դէպ ելանէր մեզ զէթ սակաւութ
« ցնդել և փարատել զտարակոյս կասկածամիտ արանց ոմանց՝ որք
« չեւ ևս զիտեն թէ և մեր ուսեալ է փոքր ի շատ է
« պաշտել զդպրութիւնն ՚ի ժանգոտեալն աննորո-
« զելի հնութեամբ լեզու առաջնոց հայկազանց»:

Ուրեմն Նազարեանցը իւր աշխատութիւնը անհասկանալի և
անօգուտ է կացուցանում ազգին, միայն նստատեղ ունենալով հաս-

տատել մի քանի թերահաւատ մարդկանց թէ ինքն էլ զիտէ զբա-
բառը: Բայց արի տես բազդի բերմունքին՝ որ ոչ միայն թերահաւատ-
ները, այլ և հաւատաւոր մարդիկ այդ Հոգեբանութիւնը կարգալուց
յետոյ անհերքելի կերպիւ համոզվում են, որ Նազարեանցը զբաբառի
մէջ բոկոտն է:

Հիմա անսնեք թէ ի՞նչ տպաւորութիւն գործեց այդ զիրքը
Ռուսաստանի հայ հասարակութեան վրայ: Պէտք է զիտենալ, որ
դեռ մինչև Ղազան հասնելը, Նազարեանցը, ինչպէս մեզ յայտնի է,
իւր նամակադրութեանց մէջ խիստ լեզուով կշտամբած էր տգէտ
և հնամուժ կոչելով քանի մի այնպիսի անձանց, որոնք իւրեանց
շրջանում զիտնականի և վարժապետի պատիւ էին ստացած: Այս
վերաւորուած մարդիկը հեռուից հսկում էին Նազարեանցի գործու-
նէութեան վերայ: Թէև այն ժամանակները պարբերական հրատարա-
րակութիւններ չունէինք, բայց միմեանց նամակների կամ որ և իցէ
գրուածների օրինակիլը և պատճէնները այս կողմ այն կողմ ցրուիլը՝
շատ մի սովորական բան էր դարձել Ռուսիաբնակ հայոց մէջ: Երբ
1846 թւին դուրս եկաւ ռուսերէն լեզուաւ Նազարեանցի առաջին
աշխատութիւնը՝ «Տեսութիւն հայ գրականութեան», որի մէջ արդէն
հրապարակաւ տգէտ, հնամուժ ու խաւարապաշտ են անուանուած
նոյն ժամանակուայ հայկաբան կոչուած հայ զիտնականները,
սոցա զայրոյթը աւելացաւ և թէև բաւականին գիտութիւն չունենա-
ու պատճառով ոչ 'ոք չհամարձակեցաւ պատասխանել, մանաւանդ
որ այդ պատասխանը պատշաճ էր ռուսերէն գրել, բայց մասնաւոր
նամակադրութեանց մէջ ավելցիկեղ ածականներ շատ են տըր-
ուած սոցա տգէտ կոչողին: Իւրեան Նազարեանցին հասած է վե-
րոյիշեալ վարժապետների այն զրոյցը, թէ ի՞նչ իրաւունքով է դա
հայ զիտնականներին տգէտ կոչում, քանի որ նոքա քաջ հայկա-
բաններ են, մինչև անգամ քերականութիւններ ունին շինած, այն
ինչ ինքը՝ Նազարեանցը և ոչ գրաբաւ լեզուն զիտէ: Այս կասկածը
վերցնելու խորհուրդը այն պատճառաւ աւելի ծանրակշիւ էր թւում
իւրեան, որ վերաւորուած հայկաբաններից մէկը՝ Նազարեանցի մա-
սին Թիֆլիսից և ուրիշ տեղերից գրած նամակները մեծ փոյթով
տարածում էր Նազարեան Ճեմարանի մէջ, 'ուր Նազարեանցն էլ նոր
կարգուած էր արեւելեան լեզուների դասատու: Իւր մասին եղած այս սխալ
կարծիքը վերցնելու մօքով է որ Նազարեանցը, ինչպէս ինքն էլ խոս-
տովանում է, Հոգեբանութիւնը գրեց զբաբառ: Բայց արդէն, ինչպէս

ասացինք, Հոգեբանութեան աշխատասիրողի դէմ մի կուսակցութիւն կար թէև իրաւ սոգէտ, բայց շատ բամբասաւէր անձինքներից բաղկացած: Դժբաղդաբար, Նազարեանցի այդ առաջի հայ գրքոյկն էլ անխորհուրդ անհամեստութեամբ լի էր: Հակառակորդները գրքի ճակատից էին սկսում իւրեանց քննութիւնը և, քան մեզ մասամբ իրաւունք ունէին: Օրինակ՝ գրքի ճակատը այսպէս է գրողած. «Ստեփաննոսի Նազարեանց Վարդապետի Արևելեան Եկեղեցւոյ Գիտութեան յաղագս փորձնական հոգեբանութեան ճառ»: Յայտնի է որ գրականութիւնը համեստութեան խնայմաններ ունի, որոնց պահպանելը Նազարեանցից աւելի նշանաւոր եւրոպացի գիտնականները միշտ սրբազան պարագէ են համարած և ընդունված է իւրեան աշխատութեան ճակատին նախ իւր տխրոյնները շարեւ պահակա հեղինակութեան անունը տալ: Միւս կողմից՝ յայտնի է ի հարկէ, որ վարդապետ բառը կը նշանակէ ուսուցիչ, գիտուն, ինչպէս որ Որկիշը ինքն էլ գործ է ածած. մեր եկեղեցական սահմանադրութեամբ վարդապետ կոչումն էլ այդ նշանակութեամբ է տրվում, թէև այդ անուն կրողները ազգիս անյաջող ժամանակներում կոտորեցին իւրեանց բարձր կոչման վարկը: Ինչ և իցէ՝ քրիստոնէութեան օրից սովորութիւն է դարձել ազգիս մէջ այդ կոչումը տալ կրօնաւորների մի դասին և մեր պատմական մատենագրութեան մէջ ոչ մի աշխարհական, թէ և շատ գիտնական անձ, վարդապետ է կոչուած: Նոյնը տեսնում ենք Օրթոդոքս եկեղեցու մէջ, որ նմանապէս ունի վարդապետ կրօնաւորների դաս: Յանկարծ, հիմնուելով այն բանի վրայ որ վարդապետ բառը բառական նշանակութեամբ եւրոպացի լեզուների մէջ թարգմանւում է դօքտոր, իսկ դօքտոր գիտնական կոչումը հայերէնում համանշան բառ չունի, Նազարեանցը անուանում է իւրեան վարդապետ, որովհետև Ղազանի համալսարանը իւրեան դօքտորի կոչումն է տուած: «Ինչպէս՝ կարող ես ընել «դու վարդապետ, ձայն են բարձրացնում հակառակորդները, քանի որ դու վեղար չունիս և ամուսնացած ես, ինչպէս կարող է համալսարանը քեզ վարդապետի կոչում տալ, քանի որ այդ մէջ «միաձնայ իրաւունքն է: Անվեղար դու վարդապետ, ինքնակող վարդապետ» ծաղրում էին նոքա:

Բացի այդ՝ իւր Հոգեբանութեան յառաջաբանի մէջ բողոքովն անտեղի, անխնայ և միանգամայն իւր գիտութեան անվայելուչ կերպիւ յարձակվում է Նազարեանցը ամբողջ ազգի հոգեւորականների,

Հարուստների, վարժապետների և մանաւանդ գրաբառ լեզուի վրայ, որի վէճն ու կռիւն անց է կացնում յետոյ «Հիւսիսափայլի» մէջ: Կրկնութիւններից փախչելու դիտաւորութեամբ, մենք այդ բոլորի վրայ միասին կը խօսենք «Հիւսիսափայլին» հասած ժամանակ:

2.

«Հոգեբանութեան» յառաջաքանի մէջ գրաբառի վրայ յարձակուելուց յետոյ Նազարեանցը խոստացած էր շուտով հասկանալի աշխարհագրաւ լեզուով գրուածներ լոյս ընծայել. և ահա 1853 թ. ապրիլի մի գրքով Վարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ: Նոյն տարին, վերջապէս, լոյս ընծայեց Առաջին Հոգեղէն Կերականութեան հայագիտական երեւոյթի համար անունով մի այբբենարան, որի մէջ, ինչպէս Նազարեանցն էլ խոստովանում է, այնքան պէտք էր զգում ազգը: Ցուելով պիտի ասենք, որ այս աշխատութիւնը, իբրեւ այբբենարան, մանկավարժի աչքում ոչինչ արժանաւորութիւն չունի և զուրկ է մինչև անգամ այն հեշտ ձևերից, որոնք արդէն գործածական էին ուսաց մէջ յիսունական թուականների սկզբում:

Այս գրքովներից յետոյ Նազարեանցը ամիջապէս ձեռք է առնում Հանդէս Նոր Հայախօսութեան անունով առկա մեծ հատորների աշխատութիւնը, իբրեւ «մի յարմարաւոր ընթերցանութեան գիրք ազգի համար, թէ արժանանալ ժամանակ «անցուցանելու և թէ իւրեանց միտքը ճոխացնելու այնպիսի ծառայութեանը, որ հարկաւոր էին մեր ժամանակի փոքրիշառակ կրթեալ հայ մարդուն» (յառաջ. հատ. ա. եր. գ.):

Եթէ ուշադրութիւն դարձնենք 1851-ից մինչև 1856 թուականների միջոցին, կրթեսնենք որ Ռուսաստանի հայոց մէջ այդ ժամանակում ոչինչ մի նշանաւոր փոփոխութիւն չէ եղած. գրականութիւնը և դպրոցները նոյն գրութեամբ են, ինչպէս որ կային: Բայց Նազարեանցը, որ իւր առաջուայ գրութեաներում միշտ յարձակում էր հայ ազգի վրայ, կոչելով նորան մեռած և յետադէմ, յանկարծ, առանց մի շոշափելի պատճառի, զոյլում է այդ ազգին «Հանդէսի» յառաջաքանի մէջ: «Մի սնպատմելի սերտութիւն է գալիս իմ սրտի վերայ, ասում է նա, որ այսօր պատճառ(?) ունիմ բարձրացնել իմ ձայնը և քարոզել հրապարակաւ թէ Հայոց բանական հոգին, որ այդ-

« քան երկար ու ձիգ դարեր մահանման քնի մէջ թմրած ու կապած մնա-
 « ցել էր, ահա սկսում է զարթնուլ և նայել յետ և յառաջ, հասկանալ իւր
 « տխուր անցեալը, հասկանալ իւր տղեղ ներկան որպէս անցածի հարկա-
 « ւորապէս հետևանքը, և ներկայումս հոգաբարձու լինիլ ապագային. . . »
 « Մի անպատմելի ուրախութեան մէջ է իմ հոգին, որ կարող եմ արձակ
 « համարձակ ասել այստեղ, թէ Հայոց ազգը Ռուսաստանի մէջ սկսել է
 « արդէն ճանաչել իւր արդարացի իրաւունքը, սկսել է վերահասու լինիլ այն
 « խորհրդին, թէ իւր լուսաւորութիւնը պիտոյ է լինի իւր յատուկ ձեռքի
 « վաստակած վաստակը... Մեր ասածներին հաստատութիւն է տալիս նոյն
 « իսկ փորձը, նոյն իսկ կենդանախօս գործը(1)։ Եւ ռուսիաքնակ հայկազունը՝
 « եթէ միտ դնէինք նոցա դրութեան և կեանքի պայմաններին, յետ չեն
 « մնում(?) իւրեանց յառաջագէտ հայրենակիցներից Տաճկաստանի մէջ, Այս,
 « Ռուսաստանի Հայքը չունին դեռ ևս ազգային ուսումնարաններ տղա-
 « ների և աղջիկների համար, չունին ոչ մի օրագիր կամ լրագիր, որ իւ-
 « րեանց մէջ և իւրեան ձեռքով հրատարակվէին, բայց այդ չունենալու
 « պատճառը մի այլ(?) աղբիւր ունէր, քան թէ նոցա բոլորովին անփոյթու-
 « թիւնը և անհոգութիւնը »:

Զարմացք է բերում մարդուս, թէ ի՞նչ է պատահել այդ քանի
 մի տարուայ մէջ, ի՞նչ մի մխիթարական երևոյթ է նկատել Հայոց
 կեանքի մէջ մեր զիտնական Նազարեանցը, որ յանկարծ այդպիսի
 լեզու է զործածում: « Ահա փոքր ժամանակի միջոցում, մեկնում է հե-
 « ղինակը, Հայոց հայրենասէրքը բաշխել են իւրեանց ազգին երկու հա-
 « տոր աշխարհաբառ լեզուով պրած մատեանք (Հանդէս Նոր Հայախօսու-
 « թեան), որոնց օգուտը խոստովանում է(?) ամենայն խեղացի և առող-
 « ջադատ հայ, որ գիտէ թէ ինչ ասել է լեզու, և թէ ինչ խորհուրդ ունի
 « կենդանի մարդու հետ կենդանի լեզուով բարրառելը»: Ո՛րքեմ՝ հա-
 յոց այդ մխիթարական յառաջադիմութիւնը կայանում է նորա
 մէջ, որ ինքը Նազարեանցը երկու հատոր «Հանդէս Նոր Հայախօ-
 սութեան» է պատրաստել: Թէ որքան համեստ է և քաղաքավարու-
 թեան պտահանքներին համապատասխան՝ զովել իւր զործը իւր գրը-
 չով և այդ գործին ազգը վերականգնեցնող մի մեծ նշանակութիւն
 տալ — թողնում ենք մի կողմը: Բայց ի՞նչպէս հաշտուի՞ր հեռեկալ տու-
 դիրի հետ: « Եւ այս գործը, շարունակում է նա, որի առաջի հատորը այ-
 « ժըմ նուիրում ենք ազգի դաստիարակութեանը, նոյն ազգասէր հայերի
 « վեհանձն օգնականութեան և առատաձեռնութեան չնորձն է. և քաղցր
 « էր ինձ այս տեղ ոչ թէ միայն գովել նոցա գովասանութեան արժանա-
 « ւոր(?) գնացքը, այլև աղօթել զոցա վերայ, որ դուրս միշտ այդպիսի(?)
 « գնացք ունենային: Բայց թէ ով էին յառկապէս այդ ազգամիտ հո-
 « գաբարձուքը(2) ազգային օգտի, վերջումը մի ըստ միջէ՞ կը տեսնեն

« մեր ընթերցողքը. միայն թէ մեր վրայ մի անժխտելի հարկ կայ այստեղ
 « առանձին կերպով ջատագովել ազգի առաջն քանի մի պատուական և
 « սրտացաւ պարոններ, որոնց ժրագլուխ ջանակցութենով և բարեխրախոյս
 « յորդորանքով միայն հաւաքած էր մեր գործի տպագրութեան հարկաւոր
 « ծախքը»:

Եւ մինչդեռ համեստութիւնը չէ թոյլ տալիս մեզ, առանց
 նոցա պատուին դիպած լինելու, յառաջ բերել այդ «ազգասէր»
 և «ազգային օգտի ազնուամիտ հոգաբարձուաց գեղեցիկ» անունները,
 Նազարեանցը պահանջում է իւր հայրենակիցներէ զրել դոցա
 իւրեանց «սրտի տախտակի վրայ», վասն զի «այս արժանաւոր պարոն-
 ները... կրկնապատիկ և չորեքպատիկ արդիւնաւոր և ազգի շնորհակալու-
 « թեանը (?) արժանաւոր են կացուցել իւրեանց անձը, բացի նիւթապէս
 « նուիրագործութենից, ամենայն կերպ հոգաբարձու լինելով քաջալերել,
 « յորդորել և իւրեանց համազգի ընկերքը դէպի մասնակցութիւն այս գոր-
 « ծի տպագրութեան ծախքին: Հայոց ազգը թող ճանաչէ իւր բարերար-
 « քը (?), թող մխիթարվի տեսնելով, թէ և իւր հասարակութեան մէջ
 « կայ առաքինութիւն, կայ պատրաստակա՞նութիւն ընծայաբեր լինել մարդ-
 « կութեան հոգեղէն օգտի համար: Թող քաղցրանայ նորա (ազգի) սիրտը,
 « տեսնելով քանի մի վարդեր (') և մանուշակներ կանաչած այն հողի
 « վերայ, ուր մինչև այժմ բուսանում էին փուշ և տատասկ...»

Մենք ապշած ենք մնացել չգիտենալով թէ ինչպէս մեկնել
 «Հիւսիսափայլ» մէջ անիրաւ մամոնան արհամարհող Նազարեանցի
 այսպիսի վարմունքը. ստորագրութեամբ քանի մի հարիւր ուրբի հա-
 լաքելու համար, «Հանդէսի» հեղինակը այդպէս ազատօրէն ամէն
 կերպ խօսնկ է ծխում այդ պարոններին. այդ բաւական չէ, պա-
 հանջում է ազգից, որ սա դոցա իւրեան բարերար համարէ և
 այն և այլն: Ահամայ եզրակացնում է ընթերցողը, որ Նազարեանցի
 գրականական խանութում «ազգասէր», «ազգի բարերար», «ազգային
 օգտի հոգաբարձու» և կամ սոցա նման տիտղոսները վաճառվում են
 շատ աժան գնով: Եւ ահա այստեղից է գուցէ սկսում «աժան ազ-
 դասիրութիւնը» որ մեր ժամանակներում շատերը իւրեանք իւրեանց
 են տալիս ստորագրուելով յօգուտ որեւիցէ «Արարատեան ըն-
 կերութեան» ազգասէր ու ման ու լ ի ը ի ը — 50 կոպէկ:

«Հանդէսի (ա. հատոր) յառաջաբանի մէջ, Նազարեանցը ա-
 սում է, որ իւր նպատակն է եղել՝ «տալ ազգին մի բազմօրինա-
 կաբար դաստիարակիչ և առաջնորդող գիրք, որ
 լցուցանէր նորս իմացական և հոգևոր պիտոյքը» և այլն: Այս
 դաստիարակիչ և առաջնորդող գիրքի առաջին հատորը իւր բովան-

գահութեամբ, ոչ այլ ինչ է եթէ ոչ մի այնպիսի ժողովածու, որի մէջ ամէն բան կայ և միւսոյն ժամանակ ոչինչ չկայ նպատակին յարմար: Նախ, չնայելով Հեղինակի տուած բացատրութեանցը, զԺուարանում ենք հասկանալ թէ որ հասակի և որ կարգի մարդ կանց համար է այդ աշխատասիրութիւնը: Քանի մի տեղ Հեղինակը դառնում է դէպի մանուկները ասելով՝ «այժմ պատմեմ ձեզ, սիրելի երեխայք» և այլն, որից եզրակացնում ենք, որ զիրքը զխաւորապէս այդ քնքուշ հասակի համար է գրուած: Այս կէտից նայելով, Հանդէսը զուրկ է մանկավարժական որակից պահանջներից: Երեխայի ձեռքն է տալիս Նազարեանցը մի հաստափոր, մօտ 510 երեսից զոյացած քառածալ և մանրատիպ մի զիրք, որ 12 կամ 13 տարեկան սոյալն սնգամ կարող է հազիւ երկու երեք տարուայ մէջ կարգալով վերջոյցնել: Ահա ում է դա «Հաւն Ծաւ եղ ա ս ա ց ու ա ծ ք» զրից, որի լեզուի և բովանդակութեան մասին ճաշակ տալու համար յառաջ բերենք երկու «Հանձարեղ» կտոր. «Ասիաբնակ յոյնք, ինչպէս որ սովորութիւն էր, մեծ ասելով Պարսից Թագաւորին, այսպէս խօսեց Ագեղի. «Լայոս լակեղեմնացին, միթէ ինձանից մեծ մարդ է նա. եթէ չէ աւելի արդարադատ և չափաւոր».— «Ատտալոս փիլիսոփոսը ասում էր յաճախ. «Աւելի քաղցր է բարեկամ գրաւել (?) քան թէ ունենալ»:

«Հանձարեղներին» հետևում են «Զօր աւ որ ասաց ու ա ծ ն երբ», օրինակի համար «Մի զինուորական տրիբունոս աւելի պատանի «հասակում հարցնելով Մետելլոսից, թէ այս ինչ մասին (?) սրպէս կը վարվէիր դու, պատասխանեց Մետելլոսը. «Եթէ իմանայի թէ այս բանին (?) համախոհ էր իմ չապիկս (?)», կը հանէի նորան և կրակի մէջ կը ձգէի»: Այս գործուորներէն զօրութիւնը. «Հասակացած, երեխայները սիրտի կարգան յետոյ «Քաջն սիրտ խօսու ա ծ քն երբ», օրինակ՝ «Երբ որ Թեբացի զօրականներից մինը տեսնելով որ լակեղեմնացիք սարերի նեղ ճանապարհով մօտենում էին նոցա, ասաց Պելոպիդասին. «ահա յարձակվում ենք թշնամիների վրայ, պատասխանեց Պելոպիդասը. «Ասա մանաւանդ թէ նորա յարձակվում են մեր վերայ»: Սրանից յետոյ երեխայն պիտի անցնի «Պատշաճաւ որ խօսք երին», օրինակ՝ «Մի մարդ պարծենալով թէ շատ է խմում, բայց՝ արբենում չէ, ասաց նորան Արիստիպիդոսը. Այդ կարող է և ջորին»:

Այլքան տեսնի տեսնի խօսք ու զրոյցի մէջ դաստիարակելուց յետոյ, Նազարեանցը կամենում է գաղափար տալ երեխային «Զօր աւ որ ասաց ու ա ծ ն երբ» խօսքի մասին, որին պատկանում է և հետեւեալը. «Լէպիդոս հռոմայեցին, երբ որ նորա ընկերքը զաշտումը վաճառում էին «Իւրեանց մարմինը, հանգստացաւ կանաչ խոտի վերայ և ասում էր. Ե-

րանի թէ այս լինէր աշխատանք ասած բանը». Սորանից յետոյ Նազարեանցը յառաջ է բերում «Ս ր ա մ ի տ խ օ ս ու ա ծ ք ն ե ր ը», «Ա ղ ա տ օ ր է ն խ օ ս ու ա ծ ք ն ե ր ը» և ապա «Ջանազան ասացուածքնե-րը»: Մօտ 21 մանրատիպ երես են բռնում այդ տեսակ տեսակ բա-ժանմունքների խօսուածքները, թէ և ինքնըստինքեան շատ անգամ մեզ անհասկանալի է տարբերութիւնը «զ օ ր աւ ո ր և ք ա ջ ա ս ի ր տ» կամ «Պ ա տ շ ա ճ աւ ո ր և ս ր ա մ ի տ» պատմութեանց մէջ: Ով քաջ տեղեակ չէ Տիեզերական և Հին ազգութեանց պատմու-թեանը, նոցա դիւցաբանութեան, գրականութեան և փիլիսոփայու-թեան հետ — նա կամ ոչինչ չի հասկանայ այդ բոլոր խօսք ու զրոյցից, կամ էապէս չէ կարող ըմբռնել նոցա իսկական միտքը և փիլիսոփայութիւնը մանաւանդ վերոյբերած դժուարամարս լեզուով գրուածքը կարդալով: Թէ ի՞նչ խորհուրդ կայ լցնել երե-խայի զլուխը մօտ 3 կամ 4 հարիւր յունաց և հռովմայեցոյ պատմական անուններով, միայն նորա համար, որ իմանայ դա թէ Սոկրատէսը ինչպիսի սրամիտ էր, Արիստոտելը — ինչպիսի մտածող — մենք չենք հասկանում:

Հազիւ վերջանում է վերև յիշածների բովանդակութիւնը, «Հանդէսի» մէջ սկսւում է ահա մի նոր գլուխ՝ «Ջուարձալի զրոյց-ներ» անունով: Վերնազրից երևում է, որ այդ զրոյցները դ ա տ տ ի աւ ր ա կ ե ց ու ց ի չ նպատակ ունին երեխային զուարճացնելու. առաջի զուարձալի զրոյցը (եր. 21) այս է՝ «Մի մարդ հարցնում էր մի աղ-քաս մուրացիանից, ի՞նչով ես ապրում: Աղքատը պատասխանեց, «Եթէ դու հարցրած լինէիր թէ ի՞նչով եմ մեռանում, կը պատաս-խանէի քեզ թէ մեռաւ ու մեմ ս ո վ ի ց»: Դաստիարակ Նա-զարեանցը կամենում է որ երեխայն, այս սրտաճմլիկ զրոյցը կարդա-լով, զուարճութիւն չգտայ և ոչ թէ արտասուի: Նոյն տեսակ դաս-տիարակեցուցիչ ազդեցութիւն պիտի ունենան երեխայի վրայ մնա-ցած 35 զրոյցները, որոնց մեծ մասը վերաբերում են զինովցած, զող և խարդախ մարդկանց արարքներին:

Գրքի երրորդ գլուխը բովանդակում է «յ ի շ ա տ ա կ ի ա ր ժ ա ն ի (?) վ ի ո ք ր ի կ պ ա տ մ ու լ թ իւ ն ք», իսկ չորրորդը՝ «Բ ա ր ք ու վ ա ր ք պ ա տ կ ե ր ա ց ն ո ղ կ ա ր ճ պ ա տ մ ու լ թ իւ ն ք»: Այս-տեղ պարձեալ դեր են խաղում մեծ մասամբ յունաց և հռովմայեց-ոյ հերոսները իւրեանց զործքերով, որոնց մասին խօսելը աւերորդ համարելով, անցնինք հետևեալ գլխին, որոյ վերնագիրն է՝ «Չ ա

ն ա զ ա ն խ ո Ր Հ Ր Գ ա ւ ո Ր պ ա տ մ ու թ իւ ն ք, Առաջի խորհրդաւոր պատմութիւնը, «Հաւատարմութիւնը վարձատրւում է» անունը կրելով, պատկանում է մահմեդականաց առասպելներին. դորա դաստիարակեցուցիչ նշանակութիւնը ցոյց տալու համար կարճ խօսքերով յառաջ ենք բերում բովանդակութիւնը: Երբեմն թիֆլիսում բնակւում էր մի աղքատ աղը Քերիք անունով, որ սաստիկ սիրում էր նոյն քաղաքում բնակող հարուստ մեծատուն տաճկի աղջկանը — Մահուլ Մեհերին. աղջկը նմանապէս սիրում էր աշղլին, բայց նորա հայրը իւրեան փեսայացու էր ընտրել մի այլ հարուստ բէգի: Մի գաղտնի տեսութեան ժամանակ աղըը խօսք է առնում օրիորդից, որ սա սչոքի հետ չի ամուսնանալ եօթը տարւայ ընթացքում, մինչև որ ինքը աղըը երթայ օտար աշխարհքներ և հարստութիւն ձեռք բերէ ու վերադառանալով ամուսնանայ իւր սիրելոյն հետ: Օրիորդը խոստանում է և աղըը ճանապարհ ընկնում հասնում մինչև Խալաֆի, ուր աղըը թեամբ շատ փող է ձեռք բերում, բայց և ահա պայմանադրած եօթը տարին լրանում է, երբ օր է փնացել, իսկ նա դեռ Խալաֆի է: Յուսահատութեան է հասնում աղըը երբ հասնում է Երզնկայի մօտ. այն օրը լրանում է եօթը տարին, իսկ դեռ փնացած կայ մօտ 2 ամսուայ ճանապարհ: Այստեղ օգնութիւն է հասնում նորան սուրբ Գէորգը իւր սպիտակ ձիով, նստացնում է իւր ետեւից, հրամայում է խփել աչքերը և ահա մի րոպէի մէջ թռչում հասնում են նոքա Արզրում. աղըը դարձեալ խփում է աչքերը, նոքա արդէն Կարս են, վերջապէս նոյն հրաշքով աղըը երեկոյեան հասնում է թիֆլիս, շնորհակալութիւն է անում Ս. Գէորգից, առնում է նորա սպիտակ ձիու ոտի փոշիից, որով կոյրերի պիտի բժշկէ և մտնում է իւրեանց տուն: Արտասունքից կուրացած մայրը պատմում է իւր աղը որդուն, որ նոյն գիշերը իւր սիրած օրիորդը ամուսնանում է վերոյիշեալ բէգի հետ: Աղըը, իւր նուագարանը առնելով, իսկոյն գնում է հարսանեաց տուն և սիրած օրիորդին խլում է բէգի ձեռքից, ապա սպիտակ ձիու ոտաց փոշիով առողջացնում է իւր կուրացած մօր աչքերը: Այս է այն պատմութիւնը, որի վերնագիրն է «Վարձատրութիւն հաւատարմութեան (!)»: Երեխայն հասկանում է այստեղից թէ ինչ պօրաւոր բան է մի օրիորդ սիրելը, թէ ինչպիսի հրաշքներ է գործում Ս. Գէորգի ձին մի օրուայ մէջ Երզնկայից թիֆլիս թռցնելով աշղլին և ոտաց փոշով եօթը տարուայ կոյրերին աչք տալով: Երեխայն մօքում պէտք

է հաստատ պահէ և այս խրատը, որ ճանապարհին տալիս է աշուղը Ս. Գէորգին՝ «դու գիտես, ասում է նա, որ եթէ մի մարդ մաքուցւումը դրած է խաբել առաւօտից, նա պիտոյ է սուտ ասէ մինչև օրի վերջը» (եր.՝ 115):

Բաւական է. շատ կը լինէր մէկ առ մէկ խօսել զրբի միւս յօդուածների բովանդակութեանց մասին, որովհետև մասամբ, յուսամբ, թէ իմացուեցաւ աշխատասիրութեան հոգին և ուղղութիւնը, և մասամբ, որ մեր գրականութեան հետ ծանօթ անձինք տեսած և կարգացած են այդ զիրքը:

Նազարեանցի այս աշխատութիւնը, որքան յիշում ենք մեր մանկութեան օրերից, 1857-ին զարդարում էր նոյն ժամանակուայ զարգացած հայոց պրասիկանը. նորա միջի արաբական առասպելները ուրախութեամբ կարդում էին և այնպիսի մարդիկ, որոնք իւրեանց կրթութեամբ այլ դէպքերում երբէք չէին նուաստացնիլ իւրեանց հեքիաթներով զըսողացնելու՝ այժմ ներդաճառաբար էին նա-յում, որովհետև Նազարեանցի գրչի տակից էին դուրս եկած: Գու-վում էին այդ զիրքը նոքա, որոնք կարդում էին և ոչինչ անգամ չէին հասկանում, գովում էին և նոքա, որոնք չէին կարդում երբէք: Բայց այդ գովողները սակաւաթիւ էին: Աւելի մեծ էր հակառակորդ-ների թիւը. ոմանք սրանցից վշտացած էին Նազարեանցի աշխատա-սիրութեանց յառաջաբանների մէջ եղած հայհոյանքներից, ոմանք նորա լեզուի անճոռնութիւնից և մտքած աղաւաղութիւնից, ոմանք չար նախանձից նորա գտած ընդունելութեան պատճառաւ և ոմանք, վերջապէս, իբրև կոյր ամբոխ՝ ուրիշների ասածին և խօսա-ծին հետևելով: Գրաբառ լեզու գիտացողները կամ որոնք իւրեանց գիտացող էին համարում, չէին կարող տանել սառնասրտութեամբ այն նախատինքը, որ գործ էր զնում Նազարեանցը հայոց միայնակ լեզու ճանաչուած գրաբառի դէմ, ոչ միայն իւր յառաջաբանների մէջ դորան հայհոյելով (ինչպէս թւում էր պաշտպաններին), այլ և գործնապէս աղաւաղելով նոյն իսկ աշխարհաբառի վերաբերութեամբ իւր գրուածների մէջ: Նւահա, ինչպէս Նազարեանցը իւր գրուած-քը տպելու համար ուրբիներ տուող և անմահ արձանների արժանի ազգասէրներ է գտնում, հայ լեզուի պաշտպան և ակոյիտան Առաքել (Վարժապետ) Արարեսեանն էլ զանում է թիֆլիսում մի այլ ազ-գասէր, որ յանձն է առնում մօտ 110 երես ունեցող մի գրքոյի տպադրութիւնը հարիւր ուրբից, զուցէ, պակաս ծախս անելով և

ամէն տարի նորանոր պարբերական հրատարակութիւններ են սկսում, բայց և այնքան էլ արագ հանգչում: Սարսափելի կամակորուժեամբ պատերազմում է հնութիւնը նորութեան հետ. այդ պատերազմը գրիչներից անցնում է ընտանեկան կենաց մէջ և հայրը որդւոյ հետ, եղբայրը եղբօր հետ՝ վիճում, կռւում են... Երկու կողմն էլ չափազանցութեան և ծայրայեղութեան են հասնում:

Ժամանակի խիստ պահանջը միայն կարող է մեկնիչ լինել այն իրողութեանը, որ յանկարծ՝ մեր Ռուսիաբնակ հայերիս երկու մշտաւոր կեդրոնում, մի և նոյն 1858 թուականի սկզբում երկու պարբերական հրատարակութիւններ են սկսում — «Հիւսիսափայլը» Մոսկվայում և «Երկու Հայաստանի» Քիֆլիսում: Չէ անցնում կարճ միջոց և ահա Քիֆլիսում հանդէս է դուս գալիս «Գուռնկը», Մոսկվայում՝ «Ճռաքաղը» և «Համբաւաբերը», Պետերբուրգում «Հիւսիսը» և «Թէոլոսիայում», «Մասեաց Աղաւնին», թէ և ոչ մէկը դոցանից իւրեանց ստեղծող խմբագիրների ձեռքում յարատեւ կեանք չունեցան:

Մենք հաւատացած ենք, որ զլիաւորապէս ժամանակի պահանջից դուրս և իւր սիրած ազգին թմրութիւնից դէպի նոր կեանք հրաւիրելու մտքով, Նազարեանցը ձեռնամուխ եղաւ 1858 թւին «Հիւսիսափայլ» հրատարակութեանը: Նիւթական շահ և օգուտ հայ թերթից, ինչպէս և մինչև հիմայ, սպասել անկարելի էր, ուր մնաց որ նաև մեծ զոհաբերութեան էր կարօտ գործը: Բայց վստահ իւր ուժի վրայ, քաջալերուած զանազան տեղերի բարեկամների նաւակադրութիւններից, Նազարեանցը հանդէս դուրս եկաւ. նա կարծում էր, որ իւր առաջուայ աշխատասիրութիւնների և մանաւանդ «Հանդէսի» առաջին հատորի շնորհիւ իւր անունը ոչ միայն հանրածանօթ է ամեն տեղի հայերին, այլ և որ ինքը մեծ կուսակցութիւն ունի: Այսպէս ամէն նախատես պատրաստութիւնները նա վերջացած էր համարում ընթերցող հասարակութեան վերաբերութեամբ, երբէք ուշ չածելով, որ գուցէ ինքը պատրաստ չէ այդ գործին: Այբուբենի վրայ խօսած կլինինք, եթէ ճիշդ թափեմք ապացուցանելու թէ ինչպէս ամէն սպայ զօրաց ընդհանուր հրամանատար լինել չի կարող, այնպէս էլ ամէն պիանական, ամէն հեղինակ, ամէն մատենագիր պարբերական հանդիսի խմբագիր լինել չի կարող: Վերջինս՝ զօրաց հրամանատարի նման առանձին յատկութեանց տէր պիտի լինի, որից շատ անգամ պուրկ են սպայք զօրաց մէջ. իսկ

զիտնականները խմբադրութեան մէջ : Ոչ միայն հարկ չը կայ զօրաց
 հրամանատարին պատերազմի մէջ անձամբ մասնակցելու, այլ և շատ
 անգամ այդ արգելուած է նորան. բայց հրամանատարից պահանջ-
 ւում է, որնա զիտենայ երկրի տեղագրութիւնը, թշնամոյ և իւր զօրաց
 տրամադրութիւնը և ոյժը, լինի սառնասիրտ, խիստ և բարի, զի-
 տենայ ժամանակից օգուտ քաղել և այլն և այլն : Այնպէս և խում-
 բազիրը. հարկ չը կայ որ դա ինքը անձամբ յօդուածներ պատրաստէ,
 բայց դա պիտի ունենայ խմբադրական Ծառի, ընտրող լինի
 նիւթերի, ուղղութիւն տուող լինի — որովհետեւ իւր թերթի պա-
 տասխանատուն ինքն է միայն հասարակութեան և պատմութեան
 առաջ : Խմբազիրը ինքը պիտի գտնէ իւր համար օգնականներ, ինքը
 պիտի պատուիրէ այս և այն խնդրի վերաբերութեամբ յօդուածների
 պատրաստութիւնը, ինքը պիտի զիտենայ ում ինչ տալ գրելու, ում
 նից ինչ սպասել, ո՞ր խնդիրը և ե՞րբ յարուցանել և այլն : Հարկ
 կայ միթէ ապացուցանելու և այն, որ խմբազիրը բազմակողմանի
 զարգացման տէր պիտի լինի, քաջ ծանօթ օտարազգի և իւր հրա-
 տարակութեան լեզուի զրականութեան հետ, իւր ընտրած հասարա-
 կութեան զարգացման, բարքի ու վարքի, պատմութեան, աշխարհա-
 գրութեան հետ, նորա տրամադրութեան և պահանջներին և այլն
 և այլն : Հասարակական (ոչ մասնագիտական) մի պարբերական հան-
 դէսի խմբազիրը այս խիստ պահանջմունքներին լիովին բաւականու-
 թիւն չէ կարող տալ, եթէ պատրաստած չէ իւրեան կեանքի մէջ :
 Խմբադրական յատկութիւնները չի կարելի ձեռք բերել համայնաբա-
 նական մասնագիտութեամբ և ոչ ուսումնական տիպոգոսներով . դա
 առանձին ընդունակութեան գործ է, որ յարակցած է անձնական
 ջանքի և փորձառութեան հետ : Թէ որ աստիճանի ընդունակ խում-
 բազիր էր Նազարեանցը — կը ցոյց տանք իւր տեղը :

Նազարեանցը, որ դեռ 14 տարեկան հասակում հեռացել
 էր իւր հօր ընտանիքից և բնակուել քաղաքիս վանքի եկեղեցւոյ
 բակում գտնուող խցի մէջ, այնուհետեւ անցկացնելով իւր կեանքը
 նախ Գորպատ, ապա Ղազան և Մոսկուա, ամուսնացած գերմա-
 նուհւոյ հետ, զբաղուած իւր մասնագիտութեամբ և զիտնականի
 վայել ճգնողական յետ քաշուած կեանք վարելով, — այդ Նազա-
 րեանցը բնականապէս չպիտի բաւականաչափ ճանաչէր հայ ընտա-
 նեկան կեանքը, նորա ոգին, նորա լեզուն, նորա արժանաւորութիւն-
 ները և պահատութիւնները : Եւ իւր «շխմիստիայի» մէջ, ինչպէս

մէկ առ մէկ կ'աշխատենք ասացուցանել հիմա, Նազարեանցը ցոյց տուեց, որ նա չէ ճանաչում հայ ընտանիքը, նա ծանօթ չէ Հայաստանի կենդանի ժողովրդի հետ, սրա բարբ ու վարքի, կենաց և պահանջների հետ:

Ը.

Հաղիւ թէ վեց ամիս կայ Նազարեանցի վախճանելու օրից և դեռ չէ անցած ու շուտ չէ անցելու այդ կորուստի ընդհանուրիս պատճառած ցաւը, դեռ հայոց հիկեղեցիներում կատարուէ նորահոգեհանգիստը ու վառ է նորա խուռնի ու մոմը և ահա մենք վրստահանում ենք ամենայն խստութեամբ և անաչառութեամբ քննութեան տակ ձգել հանգուցելոյ զրականական բոլոր գործունէութիւնը: Ոչ որ, կարծում ենք, իրաւունք ունի վշտանալու մեր ասելիքից, յիշելով նախ՝ որ Նազարեանցի գործունէութիւնը այժմ պատմութեան սեպհականութիւն է, իսկ պատմութիւնը առանց խնայելու պատրաստ է տալու «որում զհարկս՝ հարկս, որում զպատիւ՝ պատիւ...», երկրորդ՝ որ մեր ասելիքը հիմնուած է լինելու փաստերի վրայ:

Դեռ ևս պատմանելութեան հասակի մէջ էինք մենք և պատրաստ շուտ և չափազանց ոգևորուելու ամէն մի մխիթարական երևոյթից, երբ 1858 թւի յունվարին հասաւ Թիֆլիզ «Հիւսիսափայլ» առաջին տարուայ առաջին համարը: Այս ամսատետրը, որ կոչվում էր «Օրագիր ընդհանուր ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան», ճակատի վրայ կրում էր մի պատկեր կործանուած և ժայռերի վրայ դուրս ընկած նաւի, որ մնացել է անդեկավար և առանց նաւաստեաց. հեռու՝ ծովի այն կողմը, մութ ամպերի ետեւից երևում է հիւսիսայգի լոյսը: «Այս նաւը, ասում էինք մենք, Հայաստանն է կործանուած, անդեկ և անդեկավար, իսկ հեռուից ծագող լոյսը — գիտութեան լոյսն է»: Այստեղից սկսվում էր մեր վէճը մեր ծնողաց հետ, որոնք Հայաստանի դրութիւնը կործանեալ նաւի հետ համեմատել չէին կամենում և ոչ հեռու ծագող լոյսին այն փրկարար նշանակութիւն էին տալի, որ մենք տալիս էինք: Ամսատետրի կազմի վրայ Նազարեանցը յառաջ էր բերում յետագայ սեպհական դատաւճիւրը՝ «Այսուհետեւ(?)» ոչինչ Եզիպոսեան խորամանկ քուրճակներ(?)», որ կամէին լինել գիտութեան միակ պահապաններ. այսուհետ հետեւ ոչինչ ջինէական պարիսպ(?), որ պիտոյ է փակէր լուսաւոր

« զաղափարների մուտքը ազգերի մէջ : Այսուհետեւ լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խառարի բաբիոնեան գերութիւնից : Թէ մենք, թէ մեր ծնողները միատեսակ էինք մեկնում որ վերոյիշեալ քուրմերը պէտք է մեր հոգևորականները լինէին, բայց դժուարանում էինք հասկանալ թէ ի՞նչու դոքա խորամանկ են կոչուած, քանի որ ամենևին խորամանկ չեն, ինչո՞ւ գիտութեան միայնակ պահապանք են անուանուած, քանի որ մեր հոգևորականները մեծ մասամբ հռչակուած են տգիտութեամբ, ի՞նչ չինէական պարկապ է, որ փակուած լուսաւորութեան մուտքը : Աւերի դժուար էր մեկնել, թէ երէկ ու այսօր ի՞նչ պատահեց, որ յանկարծ « այս օր հետեւ ոչ եզրուական քուրմեր պիտի լինին, ոչ չինական պարիսպ » : Անցնենք ամսագրի առաջի տարուայ բովանդակութեանը :

Ընդհանուր սովորութեամբ՝ Նազարեանցը իւր ամսագրի առաջի տողերը նուիրում է իւր զաղափարների արտայայտելուն՝ թէ ինչպէս է նայում նա հայ ազգի անցեալի, ներկայի և ապագայի վրայ : Յօդուածի (Հայկական լեզուի խորհուրդը) սկզբում Նազարեանցը արդէն ստեղծում է երևակայութեան մէջ « ազգի թշնամիք » որոնց հետ սաստիկ պատերազմում է՝ ամենայն ածականների տալով դոցապնուհետեւ խոստովանելով՝ « որ հայ մարդերի կեանքը, ինչքան ևս « չքաւոր լինէր առաքինի գործերով, այնու ամենայնիւ բոլորովին « զուրկ չէ զոցանից » : ազգի դաստիարակութեան անհոգութիւնը հեղինակը տալիս է « Հայոց աբեղայոց և նոցա հետ միասին աբեղայամիտ(?) շատ մարդկանց » : « Հայոց ազգի տուէնը պիտոյ է և կարող է միայն շինվել նորա լեզուի շինութեամբ » : ասում է Նազարեանցը : Հայոց լեզու ասելով, նա հասկանում է « կենդանի աշխարհաբառ » և ոչ « մեռած, ուսումնական գրոց լեզուն » : Այնուհետեւ մի շատ թեթեւ խոսութիւն է անում հայոց լեզուի պատմութեան վրայ : Պետերմանի քննութեան վրայ հիմնուելով և մեր լեզուն Սանսկրիտի ճիւղ ընդունելուց յետոյ, Նազարեանցը ընդունում է Հայկի և Արամի գոյութիւնը և այս անձանց ամենևին առասպելական չէ համարում, նա ընդունում է, որ սկզբում մի ընդհանուր բարբառ է եղել, որով խօսում էին Հայկը և իւր որդիքը, բայց Արամի աշխարհաւարութիւնից յետոյ յառաջանում են զաւառական բարբառները : Այստեղ յառաջ է բերում Նազարեանցը հին յունական և ուրիշ ազգերի բարբառների պատ-

մութիւնը և յետոյ նորից շարունակում գրաբառի պատմութիւնը և հաննում է ներկայ բարբառներին: Հեղինակը ընդունում է երկու ճիւղ բարբառներին՝ Ռուսաստանի և Տաճկաստանի և թոյլ է տալիս որ դոքա միմեանցից անկախ մշակուին, «ի՞նչ փնտա կայ, ասում է նա, որ մի ծաղիկի տեղ երկու ծաղիկ ունենանք» ազդի մէջ: Պարզ իւր լեզուին, Նազարեանցը ասում է, որ ընտրած է մի ընդհանուր լեզու, որպէս զորով մշակութեան տակ ընկած, որ ամէն է ինչ հասկանալի լինի: Վերջ ամենայնի, դառնում է Հեղինակը իւր օրագրին, և խոստանում է որ դա «պիտոյ է լինի մի եղբայր օրէն ուսուցիչ, դաստիարակիչ և առաջնորդող բարեկամ» Հայոց ծնողներին և մարդերին տան մէջ: Մենք, ի հարկէ, ամենակարճ կերպիւ բացատրեցինք Նազարեանցի առաջի յօդուածի բովանդակութիւնը, և այն ևս միայն այն պատճառաւ, որ ցոյց տայինք թէ նորա կարծիքով առաջի անհրաժեշտ պէտքը Հայոց համար — աշխարհաբան լեզուի խնդիրն է:

Եթէ մի կողմը թողնենք երկու թարգմանութիւններ, մինը բանասիրական, միւսը բնագիտական, այն ժամանակ այս առաջի ամսատետրի մէջ կը մնայ Մ. Նալբանդեանցի «Հեղինակած կրիտիկան Նազարեանցի «Հանդէս Նոր հայաստանութեան» առաջի հատորի վերաբերութեամբ: Մենք բաւականին խօսեցանք յիշեալ զբքի վերաբերութեամբ: Այժմ ձեր ուշադրութիւնը դարձնում ենք այն իրողութեան վրայ, որ «Հիւսիսասիայի» գլխաւոր աշխատակից Նալբանդեանը քննութեան տակ է ձգում խմբագրի աշխատասիրութիւնը և արպում է նոյն օրագրում, որով ընթերցողին իրաւունք է տալիս կասկածելու այդ քննութեան անաչառութեան մասին: Գժեղաբար արդ կասկածը պիտի արդարանայ, երբ քննութեան տակ ձգենք նոյն իսկ Նալբանդեանցի քննութիւնը, որի մէջ առատապէս խուսի է ծխում Նազարեանցին: Նալբանդեանցը սկսում է իւր խօսքը բացատրելով թէ ինչ է կրիտիկան, ինչպէս պիտի լինի դա և այլն: Անցնելով «Հանդէսին» կրիտիկոսը ասում է, որ դա է մի «ընտիր, պատուական զիրք ընթերցանութեան ազգի փոքր իշատէ գրագէտ բազմութեան և զարգացած մանուկների համար»: «Ընթերցողը, շարունակում է նա, կարող էր քաղել այդ զբքից օգտաւէտ ուսումն և «քաղըր, ազնիւ գրօսանք»: Հայոց ազգը ոչ մի զբքի մէջ կարող էր «տեսանել մի այդպիսի տեսակ տեսակ վայելքներով ճոխապէս զարգարած հոգւոր սեղան»: «Հանդէսը» անուանում է մի «մեծ աշխա-

« տուժեան և բանազէտ զործակատարութեան վաստակ... մի յա-
 « ւիտենական գեղեցիկ արձան, որ ով պիտոյ է ան-
 « մահանայ նորա (Նազարեանցի) միշտ գեղեցիկ ա-
 « նուէր: Կարծում ենք, որ վերջի տողերը բաւական են զաղափար
 կազմելու, թէ որ տեսակ կրիտիկոսներին է պատկանում Նալբան-
 դեանցի քննութիւնը, և «անմահ արձանից» յետոյ էլ հարկ չը
 կայ առաջ բերել այստեղ նորա շաշլաժ միւս ածականները: Մենք
 հաստատ ենք մնում մեր ասածի վրայ, թէ Նազարեանցի «Հանդէսը»
 ոչինչ մի դաստիարակիչ և մանկավարժական նպատակի չէ հասած,
 այլ թէ մի խառնափնթոր ժողովածու է: Մեր ասածը ապացուցա-
 նում է և Նալբանդեանցը՝ անդգուշաբար փախցնելով բերանից յետա-
 գայ երկու տողը «օգտաւէտ ուսումնի և քաղցր ազնիւ զբօսանք տա-
 « լու տալու խորհրդով տպած եւրոպական գրքերից ոչ մի-
 « նի մէջ չեն գտանվում այդպէս մի տեղ ամփոփուած այդ-
 « քան բնաիր և գեղեցիկ նիւթեր ընթերցանութեան համար, որքան
 « այդ գրքի (Հանդէսի) մէջ»: Ուրեմն, ոչ մի եւրոպական գիրք նման
 չէ Նազարեանցի ժողովածուին, որովհետեւ այդպիսի մի աննպատակ
 և խառնափնթոր աշխատութիւն առանց դատապարտուելու չէր մնալ
 Եւրոպայի մէջ, ուր անմահ արձանները աւելի սուղ են, քան թէ
 մեր մէջ: Բայց, ասենք թէ Նալբանդեանցը երգիծաբանութեամբ կամ
 կամ թէ ուղիղ համոզմամբ արժանի դատեց Նազարեանցի «անմա-
 հանաւու միշտ գեղեցիկ անուանը կանգնեցնել յա-
 « ւիտենական գեղեցիկ արձանը», ի՞նչպէս հաշտուեց ինքը՝
 Նազարեանցը՝ այդ շողագործութեան հետ և տեղ տուեց իւր օրա-
 գրի հէնց առաջին համարի մէջ, ոտի տակ տալով զրականական
 համեստութեան կանոնները: Փոքր ինչ յետոյ կը տեսնենք, որ Նա-
 զարեանցը պարտքի տակ չէ մնում և շուտով նոյն արծաթով է
 փճարում Նալբանդեանցին, կրիտիկայի ենթարկելով վերջինիս «Փա-
 փառական հրէայն» և նոյն տեսակ ածականներ շաշլելով նորան:
 Եւ այսպէս՝ խմբագիրը և գլխաւոր աշխատակիցը իւրեանց օրագրի
 մէջ միմեանց անմահական են անուանում և արձաններ կանդ-
 նեցնում, օգուտ քաղելով միայն այն բանից, որ դեռ այն ժամա-
 նակ հասարակական կարծիքը սկիզբ չէր ստացել մեր մէջ:
 Այդ ուղղութեան հետեողներից մինը մեր օրերում, յայտնի է, որ
 կորցրեց իւր վարկը հասարակութեան առաջ և ծաղրելի եղաւ...

Այսքան է 1858 թ. № 1 չխախտափայլի բովանդակութիւնը:

Թ.

Մենք, ի հարկէ, հետեւեալ համարները մէկ առ մէկ չենք քննի, այլ ուշադրութիւն կը դարձնենք միայն Նազարեանցի այն յօդուածների վրայ, որոնք հայոց կենացն են վերաբերում, մի կողմը թողնելով նորա բոլոր թարգմանական գրութիւնները:

«Բնագիտութիւն» անունով յօդուածի մէջ (№ 2 1858 թ.) Նազարեանցը ցաւակցութեամբ ասում է, որ «անցած ժամանակների «դիշերը (խաւարը) դեռ ևս տարածանում է երկար ու ձիգ ստուեր» ներ շատ ազգերի վրայ, նոցա վաստակարարութեան, նոցա իմացականութեան, բարք ու վարքի և հաւատի վերայ: Այդպիսի «ազգերի կարգումն են և Հայք...» Ապա Հայոց յետադէմ դրութեան վրայ խօսելով, Նազարեանցը եզրակացնում է որ «մեռել է հայերի մէջ ամենայն իմացական և ազնիւ պիտոյքը և արմատացել է նոցա մէջ մի հոգեսպան նիւթապաշտութիւն, մի կոսիտ և սոպու արծաթասիրութիւն, որի առաջև լռութիւն և սասանված կայ ամենայն մարդավայելուչ զգացողութիւն: Հնարը դարձել է նրա պատակ. ինչոր արծաթ է, կամ թէ արծաթ վաստացելու ճանապարհ, ոչինչ է հայ աչքումը...»: Եւ այսպէս այն բոլոր արատները, որ մեզ չըճանաչող քանի մի թեթեւամիտ օտարազգիք տուել են մասնաւոր անհատների պակասութիւնը ընդհանուր ազգին, Նազարեանցը առանց կարմեղու կրկնում է Հայոց ընդհանրութեանը և ազգութեանը վերաբերելով:

Ճանաչելով Մոսկուայի մէջ քանի մի հայ գերդաստաններ և ամէն տարի տեսնելով, զուցէ քանի մի հայ կովկասաբնակ վաճառականներ, որոնք Մակարիայի տեճավաճառին այցելելու են եկած, Նազարեանցը դադափար է կազմել, որ հայք պարապած են միայն սոպու արծաթասիրութեամբ, ամենայն ցածութեամբ և կեղտոտութեամբ հանդերձ: Բայց Նազարեանցը չգիտէ, չէ ճանաչում բնիկ հայ ժողովրդին. նա չէ տեսած, թէ ինչպէս ամառուայ տօթերին հայ զիւղացին հնձում է իւր արաքը ցորենը իւր քրտինքովը թրչելով. նա չէ տեսած հայ կնոջ, թէ ինչպէս եօթը ութ ամիս թին և աւելը ձեռքին գոմերը մաքրում է իւր կովերի, եղների և զոմեշների աղբից. նա չգիտէ որ տասը տարեկան հայ մանուկը մառախլապատ և բքաբեր զիշերը դաշտում է անցնում, իւր տաւարին և ոչխարին հովիւ հանդիսանալով. նա չգիտէ, չէ ճանաչում ոչ հայ երկրա-

գործին, ոչ այդեպանին, ոչ տնտեսին, ոչ արհեստաւորին. նա տեսել է Մոսկվայի մէջ քանի մի հայ և այնպէս է երևակայեցնում իւրեան ընդհանուր ազգը: Նազարեանցը չգիտէ մինչև անգամ, որ ամբողջ Ասիայի մէջ Հայքն են միայն, որ համեմատաբար աւելի շատ ձգտումն ունին դէպի զիտութիւն և լուսաւորութիւն. Հայքն են միայն, որ քանի մի տարի շարունակ անդորրութիւնից գուրկ, դարձեալ մասնակցել են ընդհանուր մարդկութեան պատմութեան: Նազարեանցը տեղեկութիւն չունի հայոց վիճակագրութիւնից, հայոց ներկայ դրութիւնից, նա ծանօթ չէ մինչև անգամ Ռուսաց կովկասեան տպագրութեան. նա չգիտէ որ Հայոց մեծամասնութիւնը և նոյն իսկ ազգութիւն կազմողները ոչ Մակարեա այցելող վաճառականներն են, այլ հայ երկրագործները և մասամբ հայ արհեստաւորները, որոնք իւրեանց ձեռք բերած հացի վրայ արին քրտինք են թափում և երկինքը օրհնում է դոցա արդար հացը:

Եւ այսպէս իւր ազգը չճանաչող Նազարեանցը, բնականապէս չգիտէ և ազգի վշտերը, նորա պահանջները: Բնագիտութեան ճառի հեղինակը ցաւում է որ հայերից գուցէ ոչ ոք չգիտէ իւր երկրի «վա» դաժամանակեայ դրութիւնը, այն հողի տեսակ տեսակ յեղափոխութիւնները» և այլն: Մենք շուտով կը տեսնենք որ Նազարեանցը ինքը հասկացողութիւն չունի Հայաստանի երկրաբանութեան, հանքաբանութեան և ընդհանրապէս տեղագրութեան վերաբերութեամբ, իսկ այստեղ միայն յիշելու ենք, որ ազգը և ժողովուրդը չճանաչելուց է միայն, որ սորա ուղղակի ցաւերը թողած, քուրդին, թուրքին և քաղաքական հարստահարիչներին թողած — Նազարեանցը հայոց ազգի ներկայ թշուառութիւնը այն քանի մէջ է տեսնում, որ ազգիս բարք ու վարքը և հաւատը անցած ժամանակների խաւարով ծածկուած է:

Վերև ասացինք, որ Նազարեանցը ինքը հասկացողութիւն չունէր Հայաստանի աշխարհագրութեան և տեղագրութեան վերաբերութեամբ: «Հիւսիսասիայի» (1858 թ.) երրորդ տետրակում սկսվում է մի յօդուած «Հայաստան (երկրագրական և բնագիտական ներածութիւն), գործ Ս. Նազարեանցի»: Այս յօդուածը չէ վերջացած և թէև խոստացած է շարունակութիւնը յետագայ տետրակներում, բայց այդ խոստմունքը վեց տարուայ ընթացքում չէ կատարած, որովհետև Նազարեանցի համար իրաւ որ դժուար էր դորա վերջացնելը: Յայտնի է, որ Խրազական լեզուներով հրատարակուած ուսամական

և աշխարհագրական կամ թէ լոկ Էնցիկլոպէդիական բառարաններին մէջ «Հայաստան (Արմէնիա)» բառին բառականին ընդարձակ տեղ է տուած: Եւրոպացի գիտնական ճանապարհորդների տուած տեղեկութիւններից քաղելով, սովորաբար սկսում է ճառը Հայաստանի տեղագրութիւնից, ապա անցնում է պատմութեանը, եկեղեցւոյ և պրականութեան պատմութեանը և վերջանում է երկրիս ներկայ բաժանմունքով: Այսպիսի յօդուածները թէև լինում են ամփոփ, բայց և այնքան կարճ, որքան պէտք է Եւրոպացի բանասէրի համար, որ կամենում է մի թեթև գաղափար կազմել մեր հայրենաց և ազգութեան մասին: Երբ յիտունական թուականների Արեւելեան պատերազմի ժամանակ Հայաստանը գլխաւոր պատերազմական բեմը եղաւ և դարգացիալ հասարակութեանց բերանից անդադար լսվում էր Արմէնիա բառը, օտարազգի պարբերական հրատարակութիւնները, յիշեալ բառարաններից քաղելով իւրեանց տեղեկութիւնները, շտապեցին ընթերցողների հետաքրքրութիւնը բառականացնել քանի մի պատմական և աշխարհագրական յօդուածներ տալով Հայաստանի մասին: Մի այդպիսի յօդուած Арменія վերնագրով և ոմն Н. Туруновъ ստորագրութեամբ երևեցաւ ռուսաց ամսագրի մէջ Библиотека для чтения 1855 года № 12: Երևակայեցէք, որ մեր գիտնական Նազարեանցը վեր է առել յիշեալ ռուսերէն յօդուածը և բառ առ բառ թարգմանել է հայերէն, աղաւաղել է ոճը և դուրս ձգել քանի մի իւր չհասկացած կամ թարգմանութեան համար դժուար երևցած մտքերը ու դրել հայոց առաջ իբրև իւր աշխատութիւն, ամենեւին չը յիշելով պ. Туруновъ-ի անունը:

Որպէս զի մեր ասածը անհիմն չթուի, փոքր ինչ բաղդատենք այստեղ ռուսերէն գրուածը հայերէնի հետ:

Բնական տեսութիւնը
Հայաստանի: Հիւսիսային լայնութեան 37 և 42 աստիճանների, այլ և արևելեան երկայնութեան 50 և 65 աստիճանների մէջ, հաշուելով Ֆերրօ կղզու մերիդիանից (այստեղ քանի մի խօսք թէ ինչ է մերիդիանը և իւր հաշիւը), փոքր Ասիայի մակերևոյթը բարձրանում է հսկայածե ուռուցքով, որ կերպաւորէ մի լեռնա-

Арменія

Естественное свойство страны.

Между 37° и 42° ширин. и 50°—65° вост. длин. по меридиану остр. Ферро, поверхность западной Азии возвыщается огромною выпуклостью, образуя горный островъ, служащий природною стѣною между Малою-

կղզի, որ սահմանված էր լինելու միջին յոգը փոքր Ասիայի և Իրանի միջև: Այս լեռնադաշտակը ձևացնում է մի հռանկիւնի, որի հիմքը նշանակվում է այն դժով... և այլն (Հիւսիսասիայի 1858 № 3 եր. 220):

Յեառյ՝

« Հայաստանի լեռնադաշտակը դէպի ամենայն կողմ հակվում է ձևակերպելով ցած հողեր: Ա. Հիւսիսասիայից արևելեան և հիւսիսային կողմ Հայաստանի այն տեղից, ուր Արաքսէս (Արաք) գետը դուրս է երևում... և այլն. (եր. 121).

Յեառյ՝

« Հայաստանի լեռնադաշտակի ձևակերպութիւնը ամենևին յառաջացել է փոքրանական պատճառներից, արևմտեան հրաբուխ սարերի զորութեամբ եղած փոփոխութիւններից: Յառաջ քան թէ դուրս էին երևած հողեղէն նիւթերը, հաւանական է թէ Հայաստանի տեղը ցուցանում էր մի ծովապատ դաշտ... և այլն (եր. 223).

Կամ՝

« Այս բնական սահմանները Հայոց լեռնաշխարհի յայտնի են դեռ ևս շատ անկատար կերպով: Եզերական սարերի ցած սահմանները պատած են մշտականա՝ ծառերով և այլն. (եր. 228).

Բայց անշուշտ հետաքրքիր տեղ, ուր Նազարեանցը՝ չկարողանալով թարգմանել՝ դուրս է ձգում արուշների և բոյսերի անունները:

« Աւելի վերին սահմանները գետտաւորութեան թուփերով և ալպիան բուսականները:

Азією и Ираномъ. Эта горная страна имѣетъ видъ треугольни-ка, которому основаніемъ служить линія... и т... д. (Биб. для чтенія 1855 № 12, стр.91).

Склоны армянской горной страны спускаются по всѣмъ направлѣніямъ къ глубже лежащимъ мѣстностямъ. А) Сѣверо-восточный и сѣверный склонъ, отъ прорыва Аракса... и т. д. (стр. 43).

Наружный видъ Арменіи сви-дѣтельствуетъ ясно, что эта гор-ная страна есть произведение вулканическихъ переворотовъ. Прежде нежели были выдвинуты массы горъ, Арменія представ-ляла вѣроятно плоскую возвы-шенность и. т. д. (стр. 93).

Дикорастущія растенія. Рас-тительное Царство Арменіи не изслѣдованно еще вполне. Нижнія полосы горныхъ склоновъ пок-рыты вѣчно зелеными деревьями и т. д. (стр. 101).

Возвышенныя полосы, изоби-луютъ кустарниками и альпійс-кою растительностью, вообще

րով, որ ընդհանրապէս հաւատարէն Պիրինէյեան և Շվեյցիայի (Չուեցերիայի) Ալպեան սարերի բուսականներին: Կերաստիոնը (Cerastium) սպէտմէնից առաւել բարձրադիր աճեցականը, որ ծաղկում է Արարատի ուղեով (?). (Եր. 228).

такими же, как и свойственны Пиренеям и Швейцарским Альпам; сюда принадлежат: малинник, смородина, кружовник, оршаник, ясмин, кизиль, барбарис, боярышник, ежевика, терн, шиповник, бузина, камперсовые кусты, которыми богата с особею Русская Армения. Во многих местах подается дикорастущая роза. Роговики (cerastium) есть самое высокое цветущее растение на Арарате. (стр. 110.)

Ոչ պակաս խաղ է խաղացել Լորութիւն գլուխը Թարգմանելի, Թողիլ դա Կощениль, тарантула, фаланга, саранча, кузнечики, травянки, кобылки և այլն: Ձկները առաջ սկսել է ուղղակի ուսման են անունները գրել՝ Օսետրինա, Սելոիւզա, բայց անյարմարութիւնը զգալով, աշխատել է հայացնել: Թռչունների անունները դալով, Նազարեանցը դիմում է օտար լեզուներին և «իւր ասիացի տգէտ եղբայրակիցներին» սովորացնում է որ Հայաստանի մէջ կան «Թռչուններ Արդէա, Օթիս, Թարիւս, Սիօլայացիէք կամ Բէքասք» (Եր. 229):

Նազարեանցը «չնչական Թագապետիկ օրինակի համար, բաց է

Այսքանը, կարծում ենք, բաւական է ցոյց տալու համար թէ որքան է Նազարեանցի գիտութիւնը իւր հայրենիքի վերաբերութեամբ և որ աստիճանի հմուտ է նա Թարգմանութեան գործի մէջ: Հասկանալի է նմանապէս որ Նազարեանցը ամօթ է համարել յայտնելու թէ Հայաստանի վերաբերեալ այդ կցկուր տեղեկութիւնները անգամ ոչ թէ իւր անձնական գիտութեան պատուէն են, այլ մի ուրիշ անյայտ հեղինակի թելադրութեամբ կարճ յառաջաբանից առնուած: Սենք ի հարկէ չենք ներկել մեզ ասելու թէ «հայի աշխարհումը հնարը դարձել է նպատակ», թէ և դարձեալ կրպճիչ չենք որ այս վարմունքը Նազարեանցին վայելուչ չէ:

Քանի մի ամիս ինքնուրոյն ոչինչ գործ չներկայացնելուց յետոյ, Նազարեանցը «չիւսիսափայլ» տաճարորդ տեսարանում (1858 թ.) երկու յօդուած է տալիս, որոնց վրայ պիտի դարձնենք ընթերցողի

ուշադրութիւնը: Առաջինը կրում է այսպիսի անուն՝ «Երկու խօսք բուն հայկական եկեղեցւոյ մէջ երգեհոն գործածելու մասին»: Սա գրուած է Մանեայ Աղաւնայ մէջ տպած երգեհոնի գործածութեան առաջարկութեան պատճառաւ և շատ ողևորուած կերպիւ հերքում է արտաքին ձևերի և ծէսերի նորաձևութեանց մուտքը. «նախ և առաջ, ասում է հեղինակը, փոխանակ... անբան լարերի ձայներ հնչեցուցանելու եկեղեցւոյ կամարների տակ, հնչեցնել անստուածային «բանի քարոզութիւնը լուսաւոր քահանաների և քարոզիչների բնաբանով և այլն»: Քանի մի տողից յետոյ շարունակում է՝ «միտքիս թուութեան ամպ տարածվում է մեր հոգու վերայ, մինչ ամենայն քայլ լափոխի մէջ հանդիպում էինք այնպիսի մարդերի, որ չգիտէին ընտրել, թէ ո՞րն է ազգային կարիքն երից, ամենամեծը և ամենահարկաւորը...» Հեղինակի կարծիքով «ազգի սոցիալական կարծեցած յառաջագիւծութիւնը կախած է կենդանից, որ թող հոգևորականութիւնը դուրս գայ իւր միջին դարերի կապանքից, թող բացվի նորա բերանը... և կենդանացնէ Աստուծոյ բանը մեր ժողովուրդի մէջ, այնուհետեւ ինչ փնաս, թող և երգեհոն լինի և այլն և այլն»: Վերջ ամենայնի նազարեանցը հրաւիրում է Եմիանին ուշադրութիւն դարձնել փարիզի հայոց մատուռի մէջ գործ գրուած այս նորաձևութեան վրայ, «խելք հասկացնել նորա սիրութեան ոգով անստացած պարոններին և յիս պահել նորանց այդպիսի բաներից...»:

Միւս յօդուածը կրում է վերնագիր «Երիտիկա» եւ ժէն Սիւրի «Թափառական Հրէայ» հեղինակութեան պատճառաւ, որի մի հատորը ի լոյս էր ընծայել Մ. Նաբանդեանը: Նազարեանցը այս անգամ գրած է իւր քննութեան առաջի յօդուածը, խոստանալով ապա շարունակութիւնը, թէ և այդ խօսքը յետագայ տարիքը այլ ևս չէ կատարած: Երիտիկոսը սկսում է ուրախութիւնից, որ մեր «կենդանի լեզուի գանձը օրէ օր ճոխանում է նորանոր օգտակար գրուածներով», թէ և ընթերցողները քիչ են: Յանկարծ հեղինակը յարձակվում է աշխարհաբառ լեզուն չճատագոյնների վրայ, որոնք «ամենայն տեսակ յիմար կարծիքներ են տարածում նոր հայախօսութեան և դուրս հեղինակն երի վրայ» թէ և մէկ առ մէկ չեն յիշուած այդ յիմար կարծիքներ տարածողները, բայց այդ անյայտ թշնամիների դէմ գործածած լեզուն անվայել է թուում մեզ մի գիտնական գրչի համար, նազարեանցը այն անձանց, որոնք լեզուի վերաբերութեամբ

Համաձայն չեն նոր հայախօսութեան հեղինակներին, այսինքն իւր և՛
Նալբանդեանցին, կարծեաց հետ, կոչում է այստեղ «վատթար» հո-
«ղիներ, օրհասական առջերի պէս կատաղած, բերանները թշնա-
«մանքով ու հայհոյանքով լի տկարամիտներ, աննշան անձինք,
«արհամարհելի թգուկներ, բարոյական հրէշներ, եղկելի անձինք»
«տգէտ և յիմար համբակք» և այլն և այլն: Կէս երեսի մէջ այդքան
պատուանուններ ծախսելով, Նազարեանցը ասում է: «մեք մեր կող-
«մից ուրախ ենք որ այն Երազմէ կայազգի մէջ, որով
«հետև պատերազմով միայն կարող են առաքինիքը յաղթութեան
«պատկը դրաւել:» այդ առաքինի, հոգիացած մարդերից
«մինն է և պարոն Նալբանդեանցը» և այլն: Յետոյ՝ շարունակում է:
«Դու՞ն մնալ մի հեղինակի աշխատութեան մասին, որ ազգը չիմա-
«նայ» դորա ոչ լաւը և ոչ վատը, կամ թէ՛ չնոստովանել օտարի
«արժանաւորութիւնը, գուցէ թէ՛ և դերադանցութիւնը, կասկածելով
«մի գուցէ թէ մեր յատուկ արժանաւորութիւնը նուազէր ժողո-
«վուրդի առաջը, վատթար գործ է:» մի արժանաւոր հեղի-
«նակ միայն կարողէ պատուել միայլ հեղինակի արժանաւորու-
«կի արժանաւորութիւնը»:

II. յաքանից, կարծեմ, կը հասկացուի, որ հիմա Նազարեանցին
հերթն է առաքինի և հոգիացած Նալբանդեանցին խունկ
ծխելու, որովհետև ասում է նա «մի արժանաւոր հեղինակ
միայն կարող է պատուել միայլ հեղինակի արժանաւորու-
թիւնը:» Ուր արժանաւոր հեղինակ ասելով՝ Նազարեանցը իրան է
հասկանում: Մեզ անկարելի է ի հարկէ, քայլ առ քայլ հետևիլ
Նազարեանցի այս քննութեանը, քայց և չենք կարող չասել, որ
եթէ այս գրութից դուրս ձգուին տեղի և անտեղի «գործածած» ա-
ծականները և յիշոյները, այն ժամանակ մնացածը ուրախութեամբ
կարելի է կարդալ, որովհետև Նազարեանցը, հիմնուելով Նալբան-
դեանցի աշխատասիրութեան յառաջաբանի վրայ, յայտնում է այս-
տեղ քանի մի բարի ցանկութիւններ ազգին, որոնց հետ ծանօ-
թանքներ պարտք ենք համարում: Նազարեանցը ցանկանում է՝

1). «Որ մի հայաբնակ քաղաքի մէջ մի ընդհանուր անգլային դպրոց
«հիմնարկուի, որ պարտաստէր ազգի մանուկները մեր այժմեան ժա-
«մանակի համար, բուն հայկական բառով արմատացնելով նորա
«(մանուկի) մէջ եւրոպական լուսաւորութեան սկզբունքը»:

2). «Թարգմանել աշխարհաբան մեր նախնեաց գրութիւնները:

3.) Համազգի եղբարքը քաջալերեն գրաւոր աշխատութիւնները տպագրելով, ծախելով և այլն:

4.) Բանալ հայ գրավաճառանոցներ թիֆլիսում, Նոր-Նախիջևանում և Հաշտարխանում նաև տարածել Ռուսաստանի մէջ տպած հայերէն գրքերը ճաճկաստանում և այլն:

Այսքան են ընդամենը Նազարեանցի անձնական հեղինակութիւնները «Հիւսիսափայլի» առաջի (1858 թ.) ընթացքում:

Ժ.

«Հիւսիսափայլի» երկրորդ շրջանը (1859 թ.ի № 1.) սկսում է Նազարեանցի յօդուածով «Հայերի կոչումը մարդկութեան մէջ», որ հեղինակի ամենաընտիր գրութեանցից մէկն է: «Գիտեմ, ասում է «Նազարեանցը, որ մեր սիրելի հայ եղբայրքը մի փոքր ծոյլ են մտածութեան մէջ», այնուամենայնիւ հրաւիրում է դոցա մտածել թէ «ուստի՞ է մեր դպրւստը և ո՞ւր է մեր երթը»: Յունաց և հռովմայեցւոց կատարած դերը յառաջ բերելուց յետոյ, հեղինակը անցնում է հայոց պատմական դրութեանը և հետեւալ մաքերն է յայտնում: Հայոց քաղաքական կենաց ժամանակ ազգը միշտ ունեցել է «քաջ տղամարդեր», բայց անմիաբանութիւնը և բազմաթիւ նախարարութիւնները թուլացրել են հայոց թագաւորութեան զօրութիւնը: Գալով քրիստոնէական դարերին, երբ հայք երկու ահեղ և անհաշտ դրացի ունեցան՝ «հալածասէր և քրիստոնեաց պարսիկներին և ֆառատիկոս դաւաճան բիւզանդիացւոց», երբ ուրեմն հայք իւրեանց ազգի պահպանութեան համար մէկնումէկի հետ պիտի դաշնակցէին, Նազարեանցը կարծում է որ պէտք էր այդ դաշնակցութիւնը կապել բիւզանդացւոց հետ և իրեն քրիստոնեայք հաւատարիմ մնայինք այդ դաշին, «վեհանձնութեամբ տանելով յունաց կրօնական նեղսրտութեանը»: Բայց «հայոց պօլիտիկան այդպէս չէ եղել» ասում է նա: Հայք հաւատի համար նահատակուել են պարսից ձեռքով, փոխանակ «պահպանելու իւրեանց կեանքը իւրեանց հայրենիքի պահ» «պանութեան համար: Կրօնը ազգի համար էր և ոչ թէ ազգը կրօնի համար. պահպանելով ազգը, կը պահպանվէր ու կը պաշտպանվէր և կրօնը»: Ոչ մի ազգ, ասում է հեղինակը, միմիայն կրօնի զօրութեամբ, առանց քաղաքական կեանքի և մեծութեան, չէ կարող հասնել որևիցէ ազդաշնութեան բարեկարգութեան և ազդային պարծանքի մարդկութեան ազդերի մէջ: Պարսիկները և տաճիկները, մեղանից ամենկերպ ստոր, այսօր մեղանից աւելի յարգանք և պատիւ ունին

իւրեանց քաղաքական կենաց պատճառաւ, թէև մեր քրիստոնէութիւնը աւելի ուղղափառ է և աւելի պատուական: Անցնելով ապա մեր ազգի ներկայ դրութեանը, «Հայոց ազգը, ասում է նա, կորած «չէ. նա ունի աշխարհի հրապարակի մէջ կատարելու մի օր մի «մեծ և գեղեցիկ խորհուրդ»: Հայոց ազգը, շարունակում է նա, իբրև «մի վաղաժամանակեայ ազգ, պատուական արիւնից և այնպիսի ականաւոր բնատուր ձիրքով թէ մարմնաւոր և թէ իմացական մա-
 «սին, որի նման շատ քիչ ազգեր կան Ասիայումը, միշտ ունեցել է
 «և ունի այժմ ևս մի անդգրելի սէր դէպի իւր հայրենիքը, դէպի
 «իւր լեզուն, իւր սովորութիւնքը, դէպի քրիստոնէութիւնը և նորա
 «եկեղեցական և ազգային կերպարանագործութիւնը: Հայոց ազգը,
 «վերաբերութեամբ դէպի Ասիա, ունի մի մեծ և հոյակապ կոչումն.
 «նորան կարելի է համարել այն խմորը, որ դրած է Ասիայի եռա-
 «ցող նիւթերի մէջ, որ հողեղէն կեանքի համարեա թէ մեռած
 «ծիլերը միւս անգամ վարթեցնէ և կենագործէ. և այդ բանի մէջ,
 «կարելի է ուրանալ, թէ հայոց դրութիւնը իւր եկեղեցական կեդ-
 «րոնովը շատ մօտ հաղորդակից լինելով միմեանց հետ ազգաբար,
 «ցուցանում է անչափ շատ յարմարութիւնք, և երաշխաւոր է հայե-
 «րի յառաջադիմութեան համար: Եթէ Ռուսաստանը իւր համաշ-
 «խարհական մարդկութեան մէջ կատարելի կոչումը ուղիղ հասկացել է,
 «ապա վեհանաճութեամբ շնորհելու է հայերին այն բանը, որ հայոց
 «ազգի բարեմիտ մասը միշտ ցանկացել է կարօտով և փափաղով, այսինքն
 «իմացական կրթութիւն. . . . Եւ Ռուսաստանը, մեր բարեմիտ
 «Ռուսաստանը և մեր բարի թագաւորը, որի բերանից դուրս են եկել այս
 «մեծ խորհրդաւոր խօսքերը թէ՛ «Թող ամենայն տեղ և նոր զօրու-
 «թեամբ աճէ ու զօրանայ ձգտողութիւնը դէպի լուսաւորութիւն»,
 «մի՞թէ կամենալու էր փակել մեր ազատ, իմացական կրթութեան
 «ճանապարհը. և ոչ երբէք»: Բայց հայերը, շարունակում է նա,
 «կարօտ են մի այնպիսի կրթութեան, որ իւրեանց միջեց, արմատից
 «դէպի վեր և ազգային հիմքից դոյանար ու յառաջ գնար. և այս
 «գործը պարտական է կատարել հայոց ազգ ամենեւին ինքնիշխան,
 «իւր յատուկ ձեռքի վաստակով, առանց նիւթական օգնութիւն
 «ինչորեւ տէրութիւնից»: Այս նպատակին հասնելու համար Նազա-
 «րեանցի կարծիքով պէտք է մի «օրինաւոր ազգային զարոյց բանալ»,
 «և ապա աւարտող աշակերտները թող հինգ վեց տարի անցուցանեն
 «Գերմանիայի համալսարաններում, որտեղից վերադառնան հայրենիքը
 «վարժապետութեան պաշտօնով և այլն և այլն:

Մենք յառաջ բերինք այս յօդուածի բովանդակութիւնը, որովհետեւ, կրկնում ենք, այդ Նազարեանցի ամենաընտիր գրութիւններից մէկն է, թէ՛ զորա շատ և շատ կէտերի հետ անկարելի է համաձայնել: Այստեղ աւելորդ չենք համարում յառաջ բերել յիշեալ գրութիւնից մի կէտ, որ ցոյց է տալիս, թէ Նազարեանցը Մոսկվայի մի քանի հայ զերդաստանների մէջ օտար լեզուով դաստիարակող երեսայք տեսնելով՝ կարծում է թէ ամբողջ Հայաստանում հայ տղայքը զուրկ են մայրենի լեզուի գիտութիւնից և ահա զայրացած հեղինակը բացազանչում է՝ «ոչ մի հայ մանուկ մեր ազգի մէջ ոչինչ բանի վրայ կարող չէ հայերէն մտածել և հայերէն խօսել» (Հիւս. «1859. № 1. եր.» 13):

Նազարեանցի հետեւեալ յօդուածը, որ տպած է նոյն համարի մէջ, գրուած է թատրոնի պատճառաւ այսպիսի վերնագրով՝ «Նկատողութիւնք. թէ ի՞նչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թատրոն»: Հեղինակը սկսում է ընդհանուր նկատողութիւններից թէ ինչ է թատրոնը և ապա անցնում է թատրոնի հարկաւորութեանը հայերի կրթութեան համար: Եթէ համեմատելու լինենք այս գրուածքը վերելք յառաջ բերած յօդուածի հետ, կը տեսնենք որ դոցա մէջ այնպիսի տարբերութիւն կայ, որ կ'ասես թէ մի և նոյն գրչի պտուղ չլինին դոքա: Առաջինի մէջ մտքերը ծագում են միմիանցից լոգիկաբար և հասկանալի են ընթերցողի համար, ոճը և լեզուն պարզ և փոքր ի շատէ հայերէն է, իսկ այս թատրոնի վերաբերեալ գրուածքը խառնուրդ թոր, մտքերը այստեղից այնտեղ թռչող, ոճը և լեզուն օտար, որ միանգամայն ցոյց է տալիս թէ դա մի ինքնուրոյն մտածողութեան պտուղ չէ, այլ մի բռնաբարուած թարգմանութիւն, տեղ կարծացրած, տեղ աւելացած, մանաւանդ որ շատ տեղեր թարգմանիչը ինքն էլ չէ ըմբռնած գրուածքի միտքը: Առհասարակ Նազարեանցի ամէն թարգմանութեանց մէջ (մանաւանդ գիտնական գրուածքների) նկատվում է այս պակասութիւնը, ինչպէս որ դեռ քանի մի անգամ պիտի ապացուցանենք: Այս անգամ ընթերցողի ուշադրութիւնը կը դարձնենք միայն այն կտորի վրայ, ուր խօսում է հեղինակը թատրոնի մասին հայոց վերաբերութեամբ: «Ոչ «մի գործ, ասում է Նազարեանցը, մանաւանդ մեր հայերի մէջ «այնքան անտես արած չէ, որքան դաստիարակութեան խնդիրը» այնուհետեւ հեղինակը առաջարկում է մի հարց, թէ կարող են հայքը իւրեանց այժմեան (յիսունական թուականների վերջը) ունենալ

մի ազգային թատրոնական բեմ՝ «Հայոց ազգը, ասում է նա, չունի ընկերական կեանք... «Հայոց ազգը համարեա (?) թէ բոլորովին վաճառական է, ունի միայն նիւթաւոր առևտրական կապակցութիւն օտարի կամ իւր ընկերի հետ. մի այլ «հաղորդակցութիւն, իմացական առևտուր չգիտեն հայք, որովհետեւ ուն բոլոր խօսելիքը այդ ազգի մէջ լոկ արծաթի և շահաստացութեան վրայ է և այլն» Այսպէս դատելուց յետոյ հեղինակը այն եզրակացութեան է գալիս, որ «մի հայկական թատրոնաբեմ չառաւ հարկաւոր է մեզ հայերիս՝ որպէս ազգու ներգործող խրատ, որպէս պատիժ և քաջալերութիւն, որպէս հայելի պատկեր մեր հայկական կեանքին, որպէս մի մեծ դաստիարակիչ դպրոց մեծ ու «փոքրի, կնամարդի և տղամարդի համար: Հայոց թէատրոնական բեմը ազգային ընկեր համար, պիտոյ է ազգային պատմութիւնից «այնպիսի ժամանակներ վեր առնու և հանդէս բերէ ժողովուրդի ուսանել, որ կարող էին դաստիարակել ժողովուրդը դէպի ազգասիրութիւն, դէպի մի առողջամիտ հայասիրութիւն:» Այդ համար, ասում է նա, կարօտ կայ թատրոնական բանաստեղծների: Բացի այդ՝ հեղինակը խորհուրդ է տալիս եւրոպական ազգերի թատրոնական գրուածքները «ընտրովի մշակել առանձնապէս և յարմարել հայոց «խոյն համար»: Խորհուրդ է տալի նիւթերը, գէօթէն և Նեքալիրը թարգմանել և այլն:

Նազարեանցը անձամբ շտապել է իրագործել իւր վերջին խորհուրդը, թարգմանելով նիւթերի Թուրանդօթ եղբերգական կատակերգութիւնը: Թէ որ աստիճանի յաջող թարգմանութիւններ են այդ Թուրանդօթը, ապա Ն. Լամբրոնացույ Տարսոնի ժողովն մէջ խօսած ճառը, կամ թէ սորա նամակը դէպի Ղևոն թաղաւորը — մենք չենք ուզում քննութեան տակ առնել, որովհետեւ մեր միտքն է խօսել Նազարեանցի միմիայն ինքնուրոյն գրուածքների վրայ, որոնցից պիտի երևայ նորա հայադիտութիւնը:

1859 թւի ամսուր գալիս է Պօլսից Եջմիածին նորընտիր Մատթէոս կաթողիկոսը հայրապետական զահի վրայ բազմելու: Այս բանը, ի հարկէ, մեր ազգային կեանքի մէջ այնպիսի մի խոշոր իրողութիւն էր, որի վերաբերութեամբ այն ժամանակուայ պարբերական թերթերը լուռ մնալ չէին կարող, մանաւանդ որ Մատթէոսի վրայ շատ և շատ բարի յոյսեր կային դրած: Նազարեանցն էլ իւր Հիւսիսափայլը (1859 № 7) մէջ այս իրողութեանը մի յօդուած նուիրեց այս

վերնադրով՝ «Միմաժող հայերի յոյսերը և արդարացի ակնկալութիւնքը ներկայումս»։ Ս. յս գրութեան մէջ, կարծես յանաջաբանից յոյսերով, հեղինակը իւր ուշադրութիւնը դարձնում է մի ուսաստանի՝ հայոց հոգեւորականութեան վրայ և ասում է, որ «հոգեւորական դասը, որ պիտոյ է լինէր համեմիչ աղ ժողովրդի համար, անարժան և առաջնորդների անհոգութեամբ անհամացել է և կորուսել ժողովրդի աչքում (իւր պատիւը...)»։ Հեղինակը յոյս ունի, որ «մեծ քառ հանայ Մատթէոսը... կը սկսանէ իւր անգլանիրական մեծ վաստակը և ազգի և եկեղեցու անպարիզելի մէջ, շրջանկատախորհրդակցութեամբ, Հայոց արդար ամիտ բանագէտներին, այսինքն Երբոս Գրիգորի և Կանկրութեան պարագլուխ առաջնորդը, կրթութիւնը և բարոյականութիւնը համաձայն պիտի լինին միմեանց, բարոյականութիւնը և զիտութիւնը պիտի ազնուագործեն մարդկութիւնը մինը եկեղեցւոյ հոգաբարձութեան գործէ, միւսը՝ դպրոցի, բայց պիտի ներդաշնակ գործեն դժբախտ եկեղեցին ոչ թէ միայն չպէտք է վախենայ, այլ ուրախանայ ամենայն իմացական յառաջադիմութեան վրայ»։ Ազգի բարեմիտները այսպէս են ըմբռնում հարազատ քրիստոնէական եկեղեցւոյ դաշտաւարը ասում է նա, և հոգով չափեցանում են որ այդ գաղափարը հայերի մէջ բոլորովին նսեմացած է (?)։ Եկեղեցին կարօտ է գիտուն և առաքինի պաշտօնեաների, չարունակում է նազարեանցը, ժողովուրդը և նորա մատաղահաս սերունդը կարօտ է քրիստոնէական դաստիարակութեան և աշխարհական դրարոցների, կրթութեան և զիտութեան։ Հայոց ազգը կարօտ է ժողովրդական հասարակաց մատենագրութեան, այսինքն յստակ և մաքուր աշխարհաբառ լեզուով գրուածների։ Հայոց ազգը կարօտ է քառաշախիւթութեան (?) և յորդորանքի դէպի ընթերցասիրութիւն։ Հայոց ազգը կարօտ է վերջապէս ուսումնական ընկերութիւնների, որ հարստացնէին հայոց նոր մատենադրութիւնը ընտիր ընտիր թարգմանութիւններով եւրոպական լեզուներից։ Հայքը, հեղինակի կարծիքով,

կողմն ունին ձեռք բերել եւրոպական լուսաւորութիւնը և տարածել զորան ասիական «մարդկութեան մէջ»։ Ահա այն մեծ և հոյաւոր (2) խորհուրդները, վերջացնում է իւր խօսքը Նազարեանցը, որոնց պիտոյ է պատասաւորէ մի խոհական, վսեմամիտ, բարձրահայեաց «Հայրնայեալ լուսաւորչեան թողիւն»։

Հիւսիսափայլի երկրորդ տարւայ ընթացքում վերջն ինքնուրոյն յօդուածը Նազարեանցի է մի նոսրակ (1859, № 11.) դէպի մի անշայտ պարն, որի մէջ հեղինակը վճռում է, որ հայքը ընթերցասէր չեն, որ «խմաստութեան անսիրելիութիւնը մի չար անէծք է (?)» «Հայոց ազգի վերայ» սկսեալ հին ժամանակներից մինչև մեր օրերը։ Հայոց անընթերցասիրութեան պատճառները մեկնում է նա հետեւեալ պատմաբանական պատճառներով։ Հայոց ազգի դաստիարակութեան դպրոցները, ասում է նա, եղած են քրիստոնէական վանքերը, որոնք սկզբում ծաղկած են եղել ուսմամբ և գիտութիւնով, բայց յետոյ բոլորովին ընկել են. իսկ աշխարհական դպրոցներ ժողովուրդի դաստիարակութեան համար երբէք չեն եղած Հայաստանում։ Ահա այս է, ասում է նա, ազգի սնունդութեան պատճառը դէպի իմաստասիրութիւնը, Գալով մեր ժամանակներին, Նազարեանցը յառաջ է բերում հետեւեալ պատճառները, որոնք իբրև թէ արգելք են լինում հայերի լուսաւորութեանը՝ 1) «Հայոց աշխարհային զրութիւնը, որ մի «անանձնացած և իւր մէջ փակած զրութիւն է այնպիսի քաղաքների մէջ, ուր անկարելի է հաղորդակցութիւն լուսաւոր ազգերի հետ, 2.) մեր հայերի ընկերական զրութիւնը Ռուսաստանի աւելի «լուսաւոր քաղաքների մէջ» սոքա «իբրև անլուսաւոր վաճառական ազգ, զորք ունեւով միայն ուսաց ազգի ցած և անկիրթ վաճառականների հետ, ի հարկէ կարող էին միայն ուսանել դոցանից մի քանի վաճառական յաջողակութիւնը, արտաքին քաղաքավարութեան ձևեր և կարգեր, բայց ոչ մի ազնիւ մտաւորական շարժողութիւն դէպի յառաջ»։ Իւրեանց անկրթութեան պատճառաւ, հայք եւրոպացի վաճառականների հետ մտաւոր յարակցութիւն ունենալ չէին կարող. բայց թողնենք եւրոպացւոց, շարունակում է հեղինակը, նորիս իսկ ուսաց վաճառականը վերջին ժամանակներս բաւականին կրթուել է և Ռուսաստանի ժողովուրդի համար անթիւ գրքեր են տպւում ու ոչ մի ուսու հեղինակ կամ գրավաճառ դասաւարտը չէ որ նորա գրքերը չեն տարածւում. իսկ հայ վաճառականը գրքից հեռի է փախչում։ Այս խօսքերս, ասում է Նազարեան-

յը, կը հաստատեն իւրեանց յատուկ փորձով թէ հեղինակներ թէ «այլ պարոններ, որ մեծ աշխատութեամբ և բաւական ծախքով» «հայերէն գրեանք տպեցին նորերում»։ Հեղինակի կարծիքով հայն վճռել է լաւ ուտել, լաւ խմել, փառաւոր ապրել և միշտ ազէտ մնալ։ Հայերի մէջ շատ ծաղկած է թղթախաղը. ամէն տեղ քնած է ազգի հողին. «ագնիւ, ականաւոր մարդկութեան դադափար» «չկայ հայոց համար.... ոչինչ ապիւ պատուասիրութիւն, ոչինչ անձնաւորութիւն չունի հայն. գուցէ թէ երբեք մտածել ևս ու» «օած չէ թէ ինչ գանազանութիւն կար մի շնչաւոր և մի հոգեւոր» «էակի մէջ և այլն»։

Թողնելով մի կողմը թէ որքան համապատասխան է Նազարեանցի այս տխուր նկարագիրը Հայոց ազգի, նոյն խօսքի վեր «Հանդէս Նոր հայախօսութեան», յառաջաբանի հետ, ուր դեռ երկու երեք տարի առաջ հեղինակը մեծ ուրախութիւն է զգում ազգիս արած յառաջադիմութեան պատճառաւ — մենք անցնենք այն տեղերին, որոնցով կարծում է նա բռնկել ազգիս այդ ընդհանուր հիւանդութիւնը։ «Հին Արաբացւոց մէջ, ասում է նա, եղած է մի բարոյական կարգ, որի հիման վրայ երիտասարդները պարտական էին կրթութիւն ստանալ զեղեցիկ հմտութիւնների մէջ, ճարտարապէս խօսել և զեղեցիկ գրել, ապա թէ ոչ, նոցա տալու էին իրաւունք ամուսնանալու, ինչ ունենալու»։ Այս ինչ և այն ինչ երոպական տէրութեանց մէջ պարտականութիւն է դրած ուղարկել իւրեանց զաւակներին ուսումնարան։ «Ամենայն տեղ և ամենայն ազգի մէջ մի յառաջադիմութիւն կեանքի ասպարիզումը յառաջացնելու համար, հարկաւոր է եղած միշտ մի նիւթական կամ բարոյական բռնադատութիւն, մի փայտեայ կամ հոգեւոր դաւազան»։ Այնուհետև հեղինակը յառաջ է բերում Մեծն Պետրոսի գործ դրած բուն միջոցները իւր ազգի մէջ լուսաւորութիւն տարածելու, բայց «հայոց ազգը չունի թագաւորութիւն, ուրեմն և մի Պետրոս Մեծ կարող չէ վեր կենալ նորա մէջ և իշխանական գաւազանը ձեռքին հրաժարելով յառաջ մղել ազգաշինութեան գործը. հայոց դրութիւնը այլ է»։ հայոց կարող մարդիկը, մանաւանդ թէ ազգի հոգեւոր գլուխը պարտական է գործ դնել մի բարոյական դաւազան.... ինքը «ժողովուրդը պարտական է վեր կենալ և գործ դնել իւր վերայ մի բարոյական դաւազանի զօրութիւն, ինքը պիտոյ է լինի իւր իմաստուն սնաստող և պատժող և խրատող դաստիարակիւր, ինքը պար-

« տական է հոգալ իւր միջին իւր ուսուցիչքը և ղարոցքը ինքը
 « պիտոյ է ընի իւր համար և ուսուցիչ և աշակերտ...: Լսում եմ(?!)
 « հայոց ազգը մի քանքարաւոր, կրթութեան և լուսաւորութեան
 « շատ ընդունակ ազգ է. կրկնապատիկ ցաւայի, որ այդ գեղեցիկ աս-
 « տուածատուր քանքարը անգործ և անմշակ թաղած են հողի տակ
 « և այլն»: Այնուհետեւ Նազարեանցը պնդում է, որ բաւական չէ
 հայերին միայն նիւթական հարստութիւնը, այլ և պէտք է կրթու-
 թիւն, ուսումն, գիտութիւն: Ահա Ռուսաց գիւղացի տղայքը անգամ
 կարդալ են սովորում, իսկ հայքը ոչ: Ամաչեկով ցաւում եմ, ասում
 « է նա, որ մեր ներկայ օրերումն ստիպուած ենք զանգատիլ, թէ
 « հայքը անգրասէր են, անընթերցասէր և անիմաստ բարք ունին,
 « և թէ դժուարին էր տարածել հայերի մէջ այն սակաւաւոր գրե-
 « ուածքն ևս, որ մի քանի(?) մատենագիրք Ռուսաստանի մէջ լոյս
 « էին ընծայում հայերի դաստիարակութեան համար»:

Կարծում ենք, բաւականի պարզ է այստեղ որ Նազարեանցը
 իւր «Հանդէսի» և կամ Նալբանդեանցի «Թափառական Հրէայի» տա-
 րածուելու քանակութեամբն է չափում հայոց ընթերցասիրութեան
 չափը: Եւ ահա այդ հաստատիոր գրքերի հազարաւոր օրինակները
 իւր տանը դարսած, զայրանում է Նազարեանցը հայ ազգի վրայ.
 « մի խնդիր կամենում եմ առաջարկել այստեղ... եթէ ասէինք ձեր
 « (դառնում է առ պարոնը, որին ուղղած է նամակը) երկրացի հա-
 « յերին, որոնց անընթերցասէր և գրատեսց բարքը պատճառ է
 « տուել ձեր գանգատագին նամակին, եթէ ասէինք թէ դոքա մար-
 « դիկ չեն, այլ միայն ուտող խմող անբան արարածք, առանց որ և
 « իցէ իրաւունքի մարդ ասվելու կամ պատիւ պահանջելու մեղանից,
 « կարծեմ, դոքա մեծապէս բարկանալու էին մեր վերայ, այն մեզ
 « կըքարկոծէին ևս, եթէ կարողանային. բայց ի՞նչու այդպէս»:

Որովհետեւ, կըպատասխանենք մենք, ոչ ոք իրաւունք ունի այդ-
 պիսի կոշտ խօսքերով դիպել որ և իցէ անհատի պատուին, և դիպած
 ժամանակ միշտ իրաւունք ունի սպասել աւելի շոշափելի վարձատրու-
 թիւն: Վերջացնում է Նազարեանցը իւր նամակը այսպիսի խօսքե-
 րով՝ « ոչինչ հնար փրկութեան չկայ մեզ այստեղ, ոչինչ ճար ու
 « ճանապարհ չեմ տեսնում այստեղ բացի այն մի հատից, որ աս-
 « տուածեղէն խօսքի ամենակարող զօրութիւնը սրտի վկայութեամբ
 « գործ դնելով և մուրձ շինելով մեր ձեռքին զարկէինք

et litteraire անուն հրատարակութեան մէջ, կամ մի առանձին գործի մէջ որ հարկաւ ձեզանից շատերին սնմատնելի է, բայց չափազանց հեաքբքրական է, նորա վերնադիրն է յառն հաստատած ներդիցաբանութեան և լեզուագիտութեան վրայ:

Պ. Միշէլ Բրէալը փարիզեց բացակայ լինելով, նորա տեղ Գանձնաժողովի և պ. նախարարի հրաւերքն ընդունելու պատիւը ևս ունեցայ: Երկու բան միայն արժանի են անում ինձ ձեր ներողամիտ ունկնդրութեանը. առաջինն այն է որ երեսուն տարուց աւելի է որ ևս պարսպում եմ այս խնդրով. երկրորդն այն որ խորին կերպով համոզուած եմ թէ մայրենի լեզուի ուսումը մեր սկզբնական կրթութեան հիմնաքարը պիտի լինի:

Յրանսերէն լեզուի, մայրենի բարբառի ուսման այս հաստատուն հիման վրայ պիտի կրթնի ընդհանրապէս ամբողջ կրթութիւնը: (Ծափահարութիւն):

Մայրենի լեզուի ուսման կարեւորութիւնը կարող է հաստատուել երկու տեսակէտից:

Նախ նիւթական օգտակարութեան տեսակէտից, այն մարդ որ լեզուն հաղորդակցութեան գլխաւոր միջոցն է մեր նմանների հետ, մայրենի լեզուով մենք յայտնում ենք մեր մտքերը և ուրիշներինը ընդունում: Այլ որ չի հասկանում իւր երկրի լեզուն, ով որ չէ կարող հեշտութեամբ և ուղիղ խօսել նոյն լեզուով, նա իւր հայրենիքում օտարի պէս է: Ուրեմն անհրաժեշտ է ամէն մարդու համար, ինչ վիճակի մէջ էլ լինի, որքան էլ սահմանափակ լինեն նորա յարաբերութիւնները, որ զիտենայ անարգ կերպով միտքը բացատրել իւր երկրի լեզուով և կարողանայ հասկանալ այն մարդկանց լեզուն որոնց կենակից և վիճակակից է:

Բնյոց կայ և մի ուրիշ պատճառ, մի պատճառ արժանի մանաւանդ զատկարակների մտադրութեանը, որոնք նոյն իսկ իրանց պաշտօնով ստիպուած են ուշադրութեամբ ու լսելամոլութեամբ քննել մանուկների զարգացման ընթացքը, այն է որ մայրենի լեզուի կանոնաւոր ուսումնառութեամբ նոքա ներգործում են իրանց խնամքին յանձնուած մատաղ մտքերի բոլոր կարողութիւնները վրայ:

Նոյա ծրագրերի մէջ կան այնպիսի անարկաներ որոնցից մանք զարգացնում են զխաւորապէս դատողութիւնը, ուրիշները զգայարանը, ներքին զգացողութիւնը, նկատողութիւնը, ուրիշները վերջապէս երեւակայութիւնը: Իսկ մայրենի լեզուի ուսումը այն յատկութիւնն ունի

որ զարգացնում է բոլոր հոգեկան կարողութիւնները, որոնց վրայ անխտիր կրթողական ազդեցութիւն ունի: Այլապէս չէ կը կարող լինել, վասն զի ի՞նչ է լեզուն եթէ ոչ մի ազգի բոլոր մտքերի շտեմարանը, նորա մէջ ամբարուած են այն բոլոր մարդկանց զայափարները որոնք մեր նախնիքն են եղել. և երբ կամենում ենք զիտենալ թէ ինչ գգացմունքներ ու խորհուրդներ են ունեցել նոքա, և մինչև անդամ թէ ինչ կարգով են զարգացել այդ խորհուրդները, պէտք է լեզուն ղեմենք:

Այս պատճառով, նիւթական օգտակարութեան տեսակէտից լինի, թէ մանկավարժական սկզբունքների տեսակէտից, կարծեմ կը համաձայնիք ինձ հետ թէ սկզբնական կրթութիւնը պիտի հիմնուի մայրենի լեզուի օրինաւոր ուսումնատուութեան վրայ:

Բայց երբ է այդ ուսումնատուութեան նպատակը: Բաւական է արդեօք ուսուցանել երեխային իւր լեզունով կարգաւ մի դրբից, քիչ շատ հասկանալի կերպով բառերը միմեանց հետ կապակցել, և վերջապէս թելադրուած բանը ուղեղ գրել: Ոչ, չկարծեմ թէ միայն այդ լինի: Մայրենի լեզուի դասատուութեան նպատակն է երեխաներին այն վիճակին հասցնել որ նոքա պարզ ու դիւրին կերպով բացատրեն իրանց մտքերը, յատուկ ասացուածներ գործ դնեն, հասկանալի խօսքեր կազմեն: Երեխան իւր լեզուն չգիտէ, երբ չէ կարող գործ ածել նորան կեանքի բոլոր պիտոյքների մէջ:

Բերանացի պարապմունքը այստեղ հարկաւ գրաւոր պարապմունքից աւաջ պիտի անցնի: Ինքը նպատակը ցոյց է տալիս թէ ինչ եղանակ պէտք է գործ դնել. եթէ կամենում ենք երեխային այն կէտին հասցնել որ իւր միտքը բացատրէ, պէտք է խօսեցնենք նորան: Դուք զիտէք որ իրաւամբ մեղադրել են մեր դպրոցներին թէ բաւական չեն խօսեցնում երեխաներին. նոքա սովորաբար շատ են լսում, կրաւորական դեր են կատարում. նոքա բաւական չեն արտադրում, և մենք բաւական չենք յորդորում նոցա մտածել և իրանց միտքը արտայայտել:

Ահներև ապացոյցներ շատ ունենք այս բանը հաստատելու:

Այստեղ, պարոններ, ես դիմում եմ մանաւանդ ուսուցչական դպրոցների վերատեսուչներին և իմ պատուելի ընկերներին, սկզբնական դպրոցների տեսուչներին: Նոքա ամենայն տարի, ուսուցչական դպրոցը մանող աշակերտներին քննելու ժամանակ, միջոյ ունին տեսնելու թէ ինչ արդիւնքներ է տալիս Ֆրանսերէն լեզուի ուսումը:

տարրական դպրոցների մէջ. նոցա առաջ բերում են մեր ուսումնա-
րանների ամենալաւ աշակերտները, 16-ից մինչև 17 տարեկան պա-
տանիներ, և այս աշակերտները ենթարկվում են 1867-ի դեկտեմբերի
31-ի կանոնադրութեան սահմանած հարցաքննութեանը:

Յիշեալ կանոնադրութեան մէջ ասած է.

«Ընթերցանութիւն Ֆրանսերէն լեզուով. բացատրել բառերի
նշանակութիւնը, նախադասութիւնների և ամբողջ հատուածի իմաստը:

«Քննիչները մեկնել կը տան մի ֆրանսերէն բնագիր աշակերտ-
ների զարգացման աստիճանը գնահատելու համար:» (Յօդ. 5 և 6):

Արդ, պարոններ, վկայեմ բերում ձեր յիշողութիւնը, ձեր
անհողմասիրութիւնը և հարցնում եմ. մինչև որ աստիճան յաջո-
ղում է այդ քննութիւնը: Մինչև որ աստիճան մի կարդացուած ե-
րես, — կէս երես, եթէ կամենում էք, — լաւ է բացատրվում, այնպէս
որ երևայ թէ աշակերտը իւր կարդացածը հասկացել է, թէ նա
ըմբռնել է հեղինակի զաղափարները: Հասկանում է բառերի իմաստը:
Նս ինքս այդ տեսակ քննութիւններ արել եմ. բայց անկեղծօրէն
խոստովանում եմ որ քննողների երկու երրորդ մասի, եթէ ոչ երեք
քառորդի համար փորձը համարեա բոլորովին ապարդիւն անցաւ: Նոքա
անտարակոյս ուղիղ են կարդում, և բառ բառից յետոյ արտասա-
նում են՝ ամենամեծ ճշտութեամբ կապելով նոցա միմեանց հետ, —
մինչև անգամ այն ժամանակ երբ այդ կապակցութիւնը միշտ հար-
կաւոր չէ. — բայց եթէ կանգնեցնես նոցա փոքր ինչ երկար խօսքից
յետոյ, և պահանջես որ իրանց կարդացածը համառօտելով պատ-
մեն կամ այս ու այն բառի իմաստը բացատրեն, նոքա համր են
մնում: Ախր եւ է ուրեմն թէ նոքա բաւական ծանօթ չեն լեզուին,
թէ կարդացածները հիմնաւորապէս չեն հասկանում, թէ շատ ա-
նորոշ զաղափարներ ունին իրանց անցկացած դասերի վրայ որոնց
մասին չեն կտրող մի հաշիւ տալ: Եթէ դասատուութիւնը այսօր
այս արդիւնքն է տալիս, պէտք է վերանորոգել նորան, պէտք է ուրիշ
ճանապարհ ընտրել:

Երբ է սկսում մայրենի լեզուի ուսումը: Է՛, պարոններ,
մայրենի լեզուի ուսումը սկսում է այն օրից, երբ մանու-
կը սկսում է խօսել, իսկ ձեզ ուսուցիչներիդ համար, երբ մա-
նուկը ուսումնարան է մտնում կարգալ սովորելու համար: Այդ
օրից սկսած ձեր պարտաւորութիւնն է, անպակի կամ ձեռագիր ձեռ-
նարկի վրայ կարգալ ուսուցանելիս, այնպիսի բառեր կապել տալ

երեխային և տալաւորել նորա մաքում որոնց խնայող նա հասկա-
նում է: Անցան այն ժամանակները երբ երեխաները ձեռքերը մի մի
հեգեբէն նստում էին դասարանի պատերի բոլորը, և երեք ժամ շա-
րունակ գրքերը շուռ ու մուռ էին տալիս մինչև որ կանչում էին ու-
սուցչի առաջ հինգ կամ վեց վայրկենի մէջ մի քանի տառ ար-
տասանելու կամ մի քանի վանկ հեգելու համար: Կարծեմ թէ
չկայ այսօր մի ուսումնարան ուր իրերը այսպիսի ընթացք ունենան:
Գուք ամէնքդ աշխատում էք, հէնց որ մի մանուկ ձեր ուսումնա-
րանը մտնում է, մատակարարել նորան սկզբնական կրթութեան բո-
լոր ճիւղերը: Գուք ուսուցանում էք նորան ոչ միայն կարգալ, այլ
և գրել, և միևնոյն ժամանակ հաշուել: Սակայն մայրենի լեզուի
ուսումը փոքր ինչ անխնամ է թողած: Որովհետև մանուկը սկզբում
բառերը դժուարութեամբ է արտաբերում, աւելորդ են համարում
կարդացածի խնայող պահանջները նորանից, ուստի և նա լոկ հնչիւն-
ներ է արտասանում, որոնք ոչինչ միտք չունին իւր համար: Այս
դէպքում առաջին պարտաւորութիւնը պիտի լինէր միայն հասկա-
նալի բառեր կարգալ տալ երեխային, այնպիսի առարկաների անուն-
ներ որոնց նա նկատել է իւր շուրջը և որոնք իւր հետաքրքրութիւնը
շարժում են:

Այս է նպարոններ, բնական եղանակը, այս է դարձեալ այն եղա-
նակը՝ որ ամենալաւ արդիւնքներն է տալիս, մէնք փորձել ենք նորան
և ես շատ ուրախ եմ յիշելով ձեզ այս իրողութիւնը որ պատկէ
բերում Օդէոյի ուսուցչանոցին: Այնտեղ փորձեցին հեռեկալ եղա-
նակը որ ամենից աւելի զոհացուցիչ արդիւնքները տուաւ. երեխային
գրել են տալիս մի տառ որ ձևակերպում է իւր նոր արտասանած
հնչիւնը, յետոյ կարգացնում են նորան փոքրիկ բառեր որոնց մէջ
յիշեալ տառը մտնում է: Այս եղանակի գործադրութիւնը քննելու
նպատակով՝ պ. Փոլս — Բեկտորը մի յանձնաժողով էր կազմել, որ
հաստատեց թէ կանոնաւոր կերպով ուսումնարան երթեկող փոք-
րիկ մանուկները չորս ամսում այն կէտին էին հասել որ գրելի վրայ
վարժ կարդում և կարգացածները թեղադրութեամբ գրում էին: Պէտք
է ուրեմն, պարոններ, լեզուի ուսումը սկսել ընթացանութեան ա-
ռաջին դասերի հետ: Աւելի երկար չեմ կանդնիլ այս կէտիս վրայ
որ յատկապէս իմ նիւթին չէ վերաբերում, և դառնում եմ լինդրի
էական մասի վրայ խօսելու:

Եթէ մայրենի լեզուի ուսումը գրավարժութեամբ պիտի սկսի,

ամէնից առաջ հետեւեալ պայմանի վրայ ուշադրութիւն դարձնելու է. պէտք է լաւ ընտրութիւն անել ընթերցանութեան գրքերի մէջ, և այնպիսի գրքեր տալ երեխայի ձեռքը որոնք գիւրդմունքի ոճով են դրած և ծանօթ առարկաների վրայ են խօսում:

Երկար ժամանակ տրաւ հակառակ ընթացքն ենք բռնել: Հազիւ սկսում ենք մի կողմ դնել այն ընթերցանութեան գրքերը որոնք մանուկների հասկացողութիւնից բարձր ոճով են գրած:

Այն գրքերը որ մենք նոցա ձեռքն ենք դնում միշտ նոցա համար գրած չեն: Անցեալներս, փարիզի մի ուսումնարանում, տարրական դասարանի մի ընթերցանութեան դասի ներկայ էի. զիրքը ընտիր էր իւր նիւթերի կողմից. բաւական էր ցանկը աչքէ անցկացնել որ բոլորովին յարմար համարէիր նորան տարրական դասարանի համար: Սակայն դանազան հատուածների մէջ կար և մի փոքրիկ պատմութիւն մի ասորձագործի ազնուութեան վրայ, որ իւր նորոգած հին կարասիի մէջ գտած ոսկի գումարը չկամեցաւ իւր համար պահել. հատուածի մէջ գտնվում էին հետեւեալ բառերը. «Նա շէտացաւ իւր գանձով»: Կամեցայ իմանալ թէ մինչև որ աստիճան այս շէտացաւ և գանձ բառերը հասկանալի էին երեխաներին. տեսայ որ նոքա ոչինչ զաղափար չունէին յիշեալ բառերի վրայ, և սակայն մեր փոքրիկ փարիզեցի մանուկները շատ արթուն են: Շէտացաւ ոչինչ նշանակութիւն չունէր նոցա համար, նոյնպէս և գանձ, կամ այն մի քանի պատասխանները որ ստացայ նոցանից. երկրորդ բառի վրայ այնպիսի անորոշ իմաստ ունէին որ պարզ երեւում էր թէ երեխաները լաւ չեն ըմբռնում նոյն բառի նշանակութիւնը: Այս օրինակը յիշում եմ ցոյց տալու ձեզ թէ որքան դժուար է, նոյն իսկ այսօր, երեխաների հասկացողութեան յարմար գրքեր գտնել:

Ներկայումս կարծեմ թէ դասական գրքերի հրատարակիչների ուշադրութիւնը դարձած է այս կէտին վրայ: Մենք տեսնում ենք որ ժամանակ առ ժամանակ երևում են այնպիսի աշխատութիւններ, որոնք կարող են, կարծեմ, լաւ ընդունելութիւն գտնել ուսուցիչների կողմից. բայց կրկնում եմ, այդ տեսակ աշխատութիւնները պէտք է զուգուրէս են:

Նոյնը չէ կարելի ասել ուրիշ երկրների համար: Սորանից երկու տարի առաջ, ինչպէս զիտէք, ես պատիւ ունեցայ Միացեալ Նահանգները ուղարկուելու, որպէս զի Ֆելադեյթիայի աշխարհապետ մ. դպրոցական գործի յաւաքադիմութիւնը ուսումնասիրեմ:

Այնտեղ տեսայ ընթերցանութեան գրքերի մի ժողովածու որ փափաքում էի և զեռ փափաքում եմ մեր երկրում տեսնել:

Սախ տպագրական պայմանները անթերի են. տառերը շատ ուրոշ և հատուածները շատ կարճ են. առաջին ընթերցանութեան գրքերում իւրաքանչիւր հատուածի մէջ երկու, շատ շատ երեք տող կայ, և երբեմն այս երկու կամ երեք տողերը երեք խօսք են կազմում, սորանով ու զոււմ եմ ասել թէ սկզբում լոկ պարզ գաղափարներ են տալիս երեսային: Գրքոյկները զարդարուած են զեղեցիկ պատկերներով որոնք ներկայացնում են երեսային հաճելի առարկաներ: Նա այնպիսի պատկերներ է գտնում որ սովոր է տեսնել իւր զերդաստանի մէջ, դաշտերում, քաղաքի փողոցներում, և այս պատկերները պանազան խօսակցութիւնների առիթ են տալիս: Ընթերցանութեան մէջ այնպիսի բաներ են մտնում որոնք պատկերի մէջ նկարուած առարկաներն են: յիշեցնում, և բաւական է մի քանի հարցեր տալ փոքրահասակ երեսային որ նա կարողանայ լուծել այն պատկերը և նորա ներկայացրած տեսարանը նկարագրել: Մենք տեսանք հիսնայի փոքրիկ պատմութիւններ որ 7-ից 9ը տարեկան երեսաները մատիտով գծել էին թղթի վրայ: Այսպէս, օրինակի համար, մանուկն ասում էր թէ պատկերը ներկայացնում է մի ուլ, կողքին մի փոքրիկ աղջիկ նստարանի վրայ նստած. թէ այդ փոքրիկ աղջիկը մի ծառի ընկ մօտ է, որի ստուերը տարածվում է զետնի վրայ. թէ ամառային ժամանակ է, վասն զի փոքրիկ աղջկան բազուկները մերկ են, և այլն:

Այս բոլոր բաների վրայ մանուկը գրում, շարադրում է. նա իւր լիզուն զործածութեամբ է ուսանում: Եւ եթէ այս կրթութիւնները վեց կամ եօթը տարեկանից մինչև տասներկու կամ տասներեք տարեկան հասակը շարունակէ, ապահով եղէք որ մեր ուսումնարաններն ից դուրս եկած երեսաների մեծ մասին նման չի դժուարանալ մի հասարակ նամակ գրելու: Գործնական կրթութիւնների այս պակասութիւնը լեզուի ուսման մէջ մեր տարրական կրթութեան թոյլ կողմն է, և մենք յաճախ լսել ենք մեր գերդաստանների մեղադրանքները այդ մասին: Գերդաստանի հայրեր անդադար զալիս ասում են մեզ. «իմ որդին վեց տարի ուսումնարան է ման եկել. ես նորան պատուիրեցի մի նամակ գրել իւր հօրեղբօրը, մօրաքրոջը, հօրեղբօրորդուն մի շատ հասարակ գործի համար. նա երբեք չկարողացաւ գրել, կամ անհասկանալի կերպով գրեց»:

Երեսայի այս դժուարութիւնը շատ դիւրին է բացատրել: Նա

երբէք սովորութիւն չէ արեւ իւր միտքը արտայայտել գործնական բաների վերայ, այլ միայն ուրիշների խօսքերն է կրկնել. միտքը չէ ծնել իւր մէջ, ուստի և բառեր չէ գտնում նորան արտայայտելու համար:

Ահա մի կարեւոր կէտ որ ամէնից առաջ հաստատեցինք. ընտիր ընթերցանութեան գրքեր, խօսակցութիւններ կարդացուած հատուածներէ վրայ, և հէնց որ հնարաւոր լինի՝ փոքրիկ զրաւոր աշխատութիւններ:

Եւ չկարծէք, պարոններ, թէ այդ միայն միջին բաժանման մէջ պիտի սկսի: Ոչ, այս եղանակը դործ պիտի դրուի նոյն իսկ տարրական բաժանման մէջ, այն օրից երբ մանուկը կարդանում է իւր փոքրիկ մատներով այբուբենը գծել և տառերը միասին բերել ամբողջ բառեր կազմելու համար: Բանն այն է միայն որ բառերը պէտք է այնքան պարզ և իմաստները այնքան ղիւրիմաց լինին որ երեխան գիտաւորութիւն չկրէ նոցա հասկանալու:

Բայց կայ մի ուրիշ բան էլ որ այս տեսակ զբաղարժութեան հետ ընտանաբար զուգընթաց պիտի գնայ. խօսքը առարկայական դասերի վրայ է, Object lessons, ինչպէս որ ասում են Միացեալ-Նաւ հանգներում: Չպէտք է կարծէք թէ Ամերիկան դարձեալ օրինակ բերելով, դիտաւորութիւնս լինի Նոր-Աշխարհի ուսումնարանները մեր բերկց բարձր համարել: Ոչ, նոքա էլ ունին իրանց թշուառ, թիւր ու թերի կողմերը. միայն եթէ մի լաւ բան եմ գտնում այնտեղ, պարտք եմ համարում ասել ձեզ, և կարծեմ թէ դուք պէտք է դո՛հ լինիք այդ մասին: Հանգիստ եղէք, ես ձեզ կը յիշեմ նոյնպէս նոցա թոյլ կողմերը, և այն շատ շուտով:

Առարկայական դասերը լեզու ուսանելու ընտիր միջոց են. նոքա երեխային ստիպում են բառեր գտնել իւր զգայարանքների վրայ ազդածը ասելու համար: Դուք ձեռքերդ առնում էք մի որ և իցէ առարկայ, ձեր կաւիճի կտորը, օրինակի համար, որի վրայ երեխան մի քանի կարճիկ խօսքեր կը գրէ: Դուք կը հարցնէք նորան նախ թէ ինչ զոյն ունի կաւիճը. պատասխանը շատ ղիւրիմ է նորա համար. կաւիճը սպիտակ է: Յետոյ կը հարցնէք թէ ինչ ձև ունի այդ կաւիճի կտորը. — կաւիճի կտորը երկար է և քառակուսի: Արող էք նոյնպէս հարցնել թէ քանի անկիւն է նրա մարում կաւիճի վրայ. դժուար չի լինիլ նորան ասել թէ չորս անկիւն է տեսնում: Ապա կ'անցնիք կաւիճի դործարժութեանը, և եթէ

նորա միսքն արդէն բաւական բացուած է, կը հարցնէք թէ որտեղից են հանում կաւիձը: Այսպիսով նա մի շար փոքրիկ խօսքեր կը կազմէ որոնք օգտակար վարժութիւն կը լինին լեզուի ուսման համար. նա հետզհետէ պէտք եղած բառերը կը գտնէ իւր մտքերը արտայայտելու համար: Յետոյ նա կը կարողանայ իւր դաղավարները կապակցել և չորս կամ հինգ նախադասութիւնից մի ամբողջ խօսք կազմել: Ահա այսպէս կը սովորի նա խօսքեր կազմել և կը սկսի բաղդասութիւնը ուսանիլ:

Սի քանի ժամանակ կայ որ սովորութիւն արին փոքրիկ երեխաներին շատ կըթուլթիւններ օրինակել տալ: Շատ քերականութիւնների մէջ գտնուում ենք այնպիսի գրաւոր կըթուլթիւններ ուր երեսային մնում է միայն մի քանի բառ լրացնել կամ շատ բառերից մէկն ընտրել: Երբեմն նա պէտք է մի և աւելացնէ յոգնակի թիւը կազմելու, կամ մի անձայն օ իզական սեռը կազմելու համար, և այլն: Զը կարծեմ թէ այս տեսակ կըթուլթիւնները օգտակար լինին, մանաւանդ տարրական դասընթացի մէջ:

Նախ, երեսան դեռ բաւական վատ է կարդում. դժուար թէ նա կարողանայ բոլոր արտագրած բաները վարժ կարդալ. յետոյ, վերջապէս, երբ արտագրում է, նա մտածում է լոկ տառ առ տառ օրինակել գրքի մէջ տեսած բառը, հետեւապէս և չէ հասկանում թէ ինչ է արտագրել, վասն զի բառը չէ հնչում նորա ականջին: Հարկաւոր է որ նախ ուսուցիչը որոշ կերպով արտասանէ բառերը և յետոյ ինքը զրի անցնէ նոցա. այսպէսով նա որոշում է վանկերը և մի առ մի լուծում է բոլոր հնչիւնները:

Դուք կ'ասէք ինձ. «բայց այդ օրինակած բառը նա յետոյ կը կարդայ»: Այդ ամենն ինչ մի և նոյն բանը չէ. երբ երեսան օրինակում է ուսուցչի արտասանած բառը, նա աշխատում է արտանայտել իւր լսած հնչիւնները, միմեանց հետ կապակցել. հարկաւոր տառերը, իսկ երբ օրինակում է, նա չէ մտածում թէ ինչ հնչիւններից է բաղկացած բառը: Ես կարծում եմ որ երբեմն թէ տարրական դասընթացի մէջ, կամ եթէ միայն մի դասարան կայ, երրորդ բաժանման մէջ, հարկաւոր է սկսել զլիաւորապէս շատ կարճ թեւադրուած թիւններից, որոնք ամենապարզ միավանկ կամ երկավանկ բառերից կազմուած լինին, իւրաքանչիւր վանկն էլ երկու կամ շատ շատ երեք վանկից բաղկացած: Ահա այսպէս երեսաները կ'ըմբռնեն նախ բառերի նշանակութիւնը և ապա նոցա ուղղագրութիւնը:

Չեմ կարող երկար կանգնել իւրաքանչիւր դասընթացի վրայ, վասն զի չեմ կամենում նշանակած ժամից աւելի երկարաձգել այս դասախօսութիւնը:

Եթէ անցնենք միջին դասընթացին, կամ դպրոցի երկրորդ բաժանմանը, մենք ստիպուած կը լինինք հարկաւ թելադրութիւնների վրայ խօսելու: Ընդհանրապէս Ֆրանսիայում շատ թելադրութիւններ են անել տալիս երեխաներին, և իրաւունք ունին. բանն այն է միայն որ այդ թելադրութիւնները յաճախ չափազանց երկար են լինում, կամ լաւ չեն ընտրվում: Բայց և այնպէս այս նկատմամբ մենք Ամերիկացիներից լաւ ընթացք ենք բռնում. Նոքա սովորութիւն ունին յաճախ spellings ասած կրթութիւնները անել, այսինքն առանձին բառերի թելադրութիւններ, որոնք շատ անգամ երեխաների համար անհասկանալի են մնում: Ուսուցիչը, աշակերտների կրթութեան տարիձանին նայելով, կազմում է մի ցանկ քիչ շատ երկար ու դժուար բառերից, որոնք յաճախ ոչինչ կապ չունին միմեանց մէջ. այլ ընդհանրապէս սովորական ասացումներից ղիտնական ասացումներն են անցնում, նիւթական նշանակութիւն ունեցող բառից վերացական մտքով վարուող բառին: Աշակերտը այս բոլոր անկապ բառերը գրելուց յետոյ, հեղել են օտար նորան նոյն բառերը: Բայց ի՞նչ կարող է նա այնպէսով ուսանիլ: Իսկապէս միայն բառի կերպական կազմութիւնը, և ոչ նորա պարունակած իմաստը, նորա գործածութիւնը: Եթէ գոնեա պահանջէին նորանից որ բառերը գրելուց յետոյ ինքը յետոյ առանձին խօսքեր կապէր նոցանից, այն ժամանակ կը կարողանար նոցա իմաստը լմբռնել: Բայց ամերիկացի ուսուցիչները այդ չեն անում, կամ այնպէս տակաւ են անում որ ես չտեսայ: Ես տեսայ միայն թէ ինչպէս 12-ից 14 տարեկան երեխաներ իրանց քարէտախճակների վրայ գրում էին վերոյիշեալ բառերից բաղկացած չոր ու ցամաք թելադրութիւնները, և այդ քարէտախճակի վրայ գրելու սովորութիւնը այնպիսի կարծրութիւն է տալիս երեխայի մտններին որ նա այնուհետեւ երկար ժամանակ պահպանում է: Այս է պատճառը որ ամերիկական գրութիւնը Ֆրանսիականից ստոր է:

Տեսնում էք որ չեմ դանդաղում կարծիքս յայտնել երբ հարկաւոր եմ համարում Ամերիկացւոց մեղադրել:

Փոքր ինչ առաջ ասում էի թէ մեզանում խիստ երկար թելադրութիւններ են անում: Ընդհանրապէս միջին բաժանման համար մօտ տասնութիւնը անոնց բաղկացած նիւթ են վերցնում: Հա-

մարեա միշտ տեսնում էմ փարիզի ուսումնարանների անտրասկներում որ եթէ ոչ մի ամբողջ երես, զոնեա երեսի երեք քառորդը լցնում են: Այդ արդէն խիստ շատ է. ուսուցիչը ստիպուած արագութեամբ թելադրել, կամ թելադրելուց առաջ չէ կարողում հատուածը և չէ մեկնում այն բառերը որոնք կարող են անծանօթ լինել աշակերտներին, և կամ վերջապէս այն ձևով է ուղղել տալիս թելադրութիւնը որ բանի նման չէ. նա մէկ մէկ ասել է տալիս բառի տառերը, բայց դորանով երեխան ոչ բառի մասին է տեղեկանում, ոչ նորա բնութեան ու պաշտօնին:

Թելադրութիւնների համար, պարոններ, շատ յաճախ անյաջող ընտրութիւններ են անում: Նորերում իմ ներկայութեանը հետեւալ հատուածն էին թելադրում ինը տարեկան մանուկներին.

«Տխուր ձմեռը, այս մահուան եղանակը, — ձեզ յայտնի է այս հատուածը, — բնութեան քնոյ կամ աւելի ուղիղ ասենք՝ թմրութեան ժամանակն է. անկենդան միջատները, անշարժ սողունները, տերեւազուրկ բոյսերը որոնք էլ չեն աճում, բոլոր օդային բնակիչները ոչնչացած կամ հալածուած, ջրայինները սառուցէ բանդերի մէջ փակուած և կենդանիների մեծ մասը քարայրերի ու որջերի մէջ ծածկուած, այս բոլորը ներկայացնում է մեզ արտմութեան ու անմարդութեան պատկերը»:

Ահներև է որ այս խիստ դժուար է: Անհնարին է որ ինը տարեկան երեխան այս բոլոր գուրցուածների իմաստն ըմբռնէ, և խօսքի խրթին կազմութիւնը նորա կարողութիւնից բարձր է: Տուէք նորան, ի սէր Աստուծոյ, այնպիսի բառեր որ կարողանայ հասկանալ և այնպիսի զիւրակազմ խօսքեր որ կարողանայ նոցա հետևողութեամբ ինքն էլ գրել: Չէք կարող պահանջել ինը տարեկան երեխայից որ սորա նման զիտնական պարբերութիւն կազմէ, այն պարբերութիւններից մէկը որ Բիւֆոնը այնքան արուեստով է կազմել: Յետոյ, տեսէք այս բառերը. «Տխուր ձմեռը, այս մահուան եղանակը»... այս այնպիսի մի փոխակերպութիւն է որ երեխայի ըմբռնողութիւնից բարձր է: — Բնութեան թմրութիւնը... ի՞նչ պէս էք կամենում որ երեխան հասկանայ թէ ի՞նչ է թմրութիւնը կամ նոյն իսկ բնութիւնը: Մտքա չափազանց վերացական գուրցուածներ են:

Առաջ անցնենք. «Տերեւազուրկ բոյսերը որոնք էլ չեն աճում»: Այս աճել բառը երեխայի համար շատ խրթին է.

նա գիտէ թէ ինչ է նշանակում մեծանալ, իսկ բուսնիլ (croître) բառը ծանր է հնչում նորա ականջին և աճիլ (accroître) աւելի ևս ծանր:

Ահա դարձեալ օգտյին բնակիչները... փոխանակ ասելու թռչունները. յետոյ՝ ոչնչացած կամ հալածուած: Այս հալածուած (relégués) բառը չէ կարող հասկանալի լինիլ ինը տարեկան երեխային:

Տեսնում էք որ թելադրութիւնների ընտրութիւնը միշտ յաջողակ է լինում: Ուսուցիչը մի հատուած գեղեցիկ է գտնում, նա նորա մէջ պատահում է բազմաթիւ գոյականանների որ երեխայքը պէտք է յոգնակի թուով գրեն, և այս միակ պատճառով նա նոյն հատուածն է առնում: Բայց չպէտք է լոկ բնագիրը աչքի առաջ ունենալ, այլ և աշակերտների զարգացման աստիճանը:

Թելադրութիւնների հետ ուսումնարաններում գործ են ածում նաև ուրիշ տեսակ գրաւոր կրթութիւններ, որոնք չատանգամ դատապարտութեան են ենթարկուել, չնայելով վարչութեան բացարձակ պատուէրներին,⁽¹⁾ չնայելով նոյն իսկ ուսուցիչների վկայութեանը՝ որոնք խոստովանում են նոցա տաղտկալի ու անօգուտ լինելը, բայց և այնպէս շարունակում են գործ դնել նոցա, խօսքս բայերի խոնարհման վրայ է սկզբից մինչև վերջը, քերականական լուծումների վրայ, որոնք նախադասութեան և ոչ մի բառը աչքից չեն թողնում: յետոյ մի տեսակ տրամաբանական լուծումների վրայ, որոնք երբեք միջին դասընթացից են սկսում: Այս վերջինների վրայ միայն հարեանցօրէն կը խօսիմ, որովհետև պարզ է որ նոցա տեղը այստեղ չէ: Բայց խօսինք խոնարհումների վրայ: Պէտք է խոստովանիլ որ նոքա ոչինչ չեն ուսուցանում երեխային, և ոչ մինչև անգամ բայի դէմքերի վերջաւորութիւնները: Գուցէ դուք կարծում էիք թէ ժամանակները շարունակ գրելով, երեխայի մտքում վերջի վերջոյ կը տպաւորուին նոցա վերջաւորութիւնները. բայց եթէ նեղութիւն քաշէք կարդալու նորա գրած բայերը, կը համոզուիք որ ձեր կարծիքը սխալ է եղիւ. դուք կը տեսնէք թէ ինչ սխալներ կան նորա տետրակի մէջ և թէ յիսուն կամ վաթսուն բայ խոնարհելուց յետոյ առաջին լծորդութիւնից, որի վերջաւորութիւնների մէջ անկանո-

1) 1857-ի օգոստոսի 20-ի և 1866-ի հոգտեմբերի 7-ին նախարարութեան ջրջաբերակաները:

նութիւններ չկան, նա դեռ կողիտ սխալներ է անում անցեալից անհատար, անցեալը կատարեալ, արարունի ժամանակներում, և մինչև անգամ բաղադրեալ ժամանակներում: Բայց սորանից, նա չէ կարող զանազանել թէ որ ժամանակը համապատասխանում է իւր մշտքի արտայայտութեանը:

Բանն այն է որ ամէն հնար գործ դրին ուսուցիչներին այս շաղկին մէջ պահելու: Մտածեցին այնպիսի տեսարաններ պատրաստել բայերի համար որ բոլոր ժամանակները նշանակուած լինին. մինչև անգամ դերանուան առաջին տառը կամ ամբողջ դերանունը դրին միով բանիւ մեքենականութիւնն այստեղ իւր վերջին սահմանին հասցրին: Նրբ սկզբնական կրթութիւնը այս կէտի վրայ է կանգնած, նա մի նոր գործանոցի կերպարանք է ընդունում, ինչպէս որ ասում էր Վիլմէնը իւր Հայր Ժիրարի մեթոդի վրայ գրած տեղեկագրի մէջ. մի գործանոցի որ բաց էք անում երեխաների համար, իբրեւ թէ կամենայիք վերադնշել նոցա փոքրիկ փայտի կտորներ ճեղքելու կամ քարտոնէ արկղիկների մէջ լուցկիներ դնելու. եւ ուրիշ բան էլ չէ. վասն զի այդ ճանապարհով նոցա միտքը ամեն նեւին չէ մշակվում: Իսկ Սատուծոյ, խափանները գրաւոր խոնարհումները, կամ եթէ չխափաններ, գոնեա խելացի և օգտակար ուղղութիւն տանք նոցա:

Հարկաւ շատ լաւ է որ երեխան բայի այլ և այլ ժամանակները խոնարհել չիտանայ, բայց մի տաք նորան տաանվեց կամ տաանները ժամանակները միանգամից. ամուէք նորան սահմանական ներկան, ոչ մի միայն բայի, այլ բերք կամ չորս բայերի որոնք արտայայտում են այնպիսի գործողութիւններ որ ինքը սովորութիւն ունի կատարելու. կամ որոնց կատարումը տեսնում է իւր շուրջը. և այն ժամանակ նա կաշխատի օրինակ որ կերպով գրել:

Պէտք է անել որ ուսուցիչների մեծ մասը արդէն այս ճանապարհով են գնում: Բայց որովհետեւ ես զանգառում եմ որ գրաւոր խոնարհումները գեւ չարունակվում են, արդարութիւնը պահանջում է որ այս էլ խոնարհութիւն թէ յիշեալ կրթութիւնները ամէն տեղ մի և նոյն հին ձևով չեն կատարվում. փարիզում, օրինակի համար, նոքա կամայ կամայ անյայտանում են:

Ի՞նչ ասեմ գրաւոր լուծումների վրայ: Նրկար չեմ կանգնիլ այս խնդրի վրայ, վասն զի դուք ինքներդ էլ պիտի խոստովանիք թէ կրկնել տալ երեխային և բառից յետոյ, «պարզ յօդ» եղանկի արա-

կան, այդ ոչինչ էլ ուսուցանում նորան. ասել տուէք նորան նոյնը, նշանակել տուէք, եթէ կամենաք, մի առանձին նշանով բառի բնութիւնը, բայց մի գրել տաք այդ բոլորը: Յիրաւի, երբ տեսնում ես որ այդ տեսակ կրթութիւններ դեռ չարունակվում են, այնպէս է թվում որ իբրեւ թէ խիստ շատ ժամանակ ունինք երեխաներին մատակարարելու իրանց հարկաւոր ուսումը, և թէ մենք ստիպուած ենք դատարկ ու աննպատակ բաներով զբաղեցնելու նոցա: (Ծափահարութիւն):

Ասացի թէ տարրական դասընթացի մէջ ընթերցանութեան կրթութիւնները լեզուի ուսման հիմք պիտի լինին, բայց այս շատ աւելի ճշմարիտ է միջին դասընթացի, կամ ուսումնարանի երկրորդ բաժանման համար: Այնտեղ յաղթելէք ընթերցանութեան մեքենական զգեստութիւններին. երեխան համարձակ կարդում է նախադասութիւնը, առանց կանգնելու. դուք այլ ևս հարկադրուած չէք, ինչպէս տարրական դասընթացի մէջ, երկու կամ երեք անգամ կրկնել տալ նորան մի և նոյն բառը մինչև որ ուղիղ արտասանէ: Լաւ ուրեմն, այժմ որ նա նախադասութիւնը ուղիղ է կարդում, հարցրէք նորան թէ ինչ միտք են պարունակում բառերը, ինչ զաղափարներ են զարթեցնում իւր մտքում, և թէ նախադասութիւնը այնպիսի դիւրին կազմութիւն ունի որ երեխան կարող է սեպհակալել նորան, կազմել տուէք նորան երկու կամ երեք նման նախադասութիւններ. նիւթի ընտրութիւնը իրան թողէք, պահանջեցէք միայն որ խօսքի կազմութիւնը կանոնաւոր լինի և բառերի դրոժածութիւնը ճիշտ:

Դիտել տուէք նորան նախադասութեան ենթակայից յետոյ մի ներգործական բայ իւր ուղղակի խնդրով, անուղղակի խնդրով, մէկ կամ երկու պարագայական խնդիրներով. միայն աշխատեցէք զգուշութեամբ միմեանց վրայ չբարդել. մանրամասնութիւնները կամաց կամաց աւելացրէք և ցոյց տուէք թէ ինչ կարգով պէտք է դասաւորէ նոցա:

Ամենից աւելի միտ դարձնելու է որ նա հարկաւոր բառերը գտնէ և կանոնաւոր խօսք կազմէ, — նախ բերանացի, ապա զրաւոր կերպով:

Այս կրթութիւնները որ սկսուեցան, ինչպէս ասանք, առարկայական դասերով, պատկերների վրայ արուած պատմութիւններով, այստեղ փոքր ինչ աւելի բարձր բնաւորութիւն պիտի ստանան: Պահանջեցէք աշակերտից, օրինակի համար, որ մի կարդացած հատուած համառօտէ, մի ոտանաւոր առակ արձակի փոխէ, մի առած ընդարձակէ:

Ես ինքս փորձել եմ, պարոններ, ձեզ առաջարկած ընթացքս, և կարծեմ թէ կարող էք վստահութեամբ հետևել նորան:

Նորերումս նոյնը ցոյց էի տալիս փարիզի ուսումնարաններից մէկի մէջ, ձեզ քաջ ծանօթ Ֆրանկէինի սուղիչ հատուածի վրայ: Նախ ես ինքս հատուածը կարդացի ծանր կերպով աշակերտներին. յետոյ նոյնը կարդալ տուի դասատան երեք ամենալաւ կարդացողներին և ապա պահանջեցի կարդացածները պատմեն, հարկաւ ազատ թողնելով երեսմաներին բառերի ընտրութեան և դասաւորութեան մէջ: Գուցէ կարծում էք թէ նոքա լաւ պատմելին: Ոչ, առաջ երեսայքը խօսելու վարժուած չլինելով չզիտէին թէ որ տեղից սկսեն:

Նոքա լաւ էին տեսնում թէ ինչ խաբեբայութեան զոհ էր եղել Ֆրանկլինը, բայց բոլոր մանրամասն պարագաները միասին էին գալիս նոցա մտքում: Նոքա հասնում էին Ֆրանկլինի զայրոյթին առանց ասելու թէ ինչպէս եղաւ որ նա խաբուած լինելը իմացաւ: Միով բանիւ, նոքա չզիտէին առաջարկուած նիւթը կարգով պատմել:

Եթէ ես առաջարկում եմ կարդացածը պատմել, աւելի ևս կ'առաջարկէի նոյնը զրել տալ ուսուցչի պատմածից յետոյ, վստահ բերանացի պատմութիւնը շատ աւելի կենդանի կը լինի քան զբքի ընթերցումը: (Ծափահարութիւն:)

Այժմ, պարոններ, կայ մի տեսակ կրթութիւն որի կիրառութիւնը տեսել եմ երբեմն և որ ես օգտակար եմ համարում: Են է անգիր գրել տալ բերան արած հատուածը: Այսպէս բերան անել տուէք Աղուէսի ու Ադուաի առակը, և երբ երեսման առակը սերտել ու անսխալ ասել է, պահանջէք որ նոյնը բառ առ բառ գրէ կամ իւր բառերով պատմէ: Գուցէ դուք կարծում էք թէ որովհետեւ նա շատ անգամ է կարդացել և անգիր զիտէ առակը, անշուշտ անսխալ էլ կը գրէ նորան. և թէ այդպէս է՝ սխալվում էք. փորձը ցոյց կը տայ ձեզ թէ շատ սխալներ կը լինին ոչ միայն քերականական ուղղագրութեան կողմից, այլ և բառերի կազմութեան մէջ. կը լինին պակաս վանկեր, սխալ արտայայտած հնչիւններ: Այս կրթութիւնը ստէպ չալիտի գործ դրուի, այլ միայն ժամանակ առ ժամանակ, որով և մէկ կողմից դպրոցական կրթութիւնների մէջ փոփոխութիւն կը մտցնէ, իսկ միւս կողմից կը ծառայէ իմանալու թէ երեսման, մի հատուած բերան սերտելուց յետոյ, մինչև որ աստիճան նորա բառերը և բառերի մէջ եղած յարաբերութիւնները տպաւորել է իւր մտքում:

Բայց ես տեսնում եմ, պարոններ, որ դեռ ոչինչ չեմ ասել ձեզ քերականութեան վրայ:

Գուցէ զարմանալի թուի ձեզ որ Ֆրանսերէն լեզուի ուսման վրայ եմ խօսում առանց միանգամ քերականութեան անունը տալու: Բայց եթէ դեռ քերականութեան վրայ չեմ խօսել, պատճառն այն է որ քերականական ուսումը այն ժամանակ պիտի գայ երբ մանուկն արդէն անցել է ուղղագրութեան և բառերի համաձայնութեան առաջին դժուարութիւնները: Նա պիտի երևայ միայն միջին բաժանման մէջ, երբէք տարրական դասընթացի մէջ: Մինչև այդ ժամանակ ամբողջ քերականական գիտութիւնը պիտի կայանայ մի քանի կարճիկ կանոնների մէջ, որոնք հանուելու են դասատւան տախտակի վրայ գրուած ու մեկնուած ընտիր օրինակներից:

Եւ որովհետեւ խօսքը քերականական աշխատութիւնների վրայ է, ասենք անկեղծ օրէնք մեր կարծիքը նոցա օգտակարութեան վրայ: Ես Ֆրանսերէն լեզուն ուսել եմ Նօէլ և Շապալի վրայ և կարծեմ թէ իմ ունկնդիրներից շատերը նոյնպէս այն գրքի վրայ են ուսել: Երբ որ ուսուցիչ դարձայ և պէտք եղաւ ինձ Ֆրանսերէն լեզուն ուսուցանել, դարձեալ նոյն գիրքը ձեռքս առի, թէև բոլորովին անամայ, որովհետեւ չէի կարող հաշտուել երկու կամ երեք կանոնի հետ որ եօթը ութ տարեկան հասակից սկսած կրկնել էի և տաանութեամբ տաանիւնը տարեկան հասակումս դեռ լաւ չէի հասկացել:

Այդ կանոնները վերաբերում էին գոյական անունն և յօդին. դուք յիշում էք անշուշտ թէ մինչև որ աստիճան վերացական են նոքա և ես անտարակոյս միակ անձը չեմ որ դժուարութիւններ եմ դտել նոցա մէջ: Պէտք է որ խելքը բոլորովին հասուն լինի որ կարողանայ հասկանալ թէ ինչ է ս ե ու ը, տ ե ս ա կ ը, ա ն հ ա տ ը, և այս բոլորը մտնում էր յօդի մեկնութեան մէջ:

Փորձեցի ուրիշ քերականութիւններ, բայց դարձեալ յաջողութիւն չունեցայ: Երեկոյքը մեծ դժուարութիւն էին կրում ուսանել մի դաս որ մի շաբաթ յետոյ մոռանում էին: Այն ժամանակ ինձ ու ինձ մտածեցի, դասատուութեան եղանակը վատ է. երեկոյքը այսպէսով լեզու չեն ուսանիլ: Նոյն ժամանակներն էր որ ծանօթացայ Հայր Թիրարի եղանակին, որ, ինչպէս զիտէք, հռչակաւոր պ. Վիլմէնի առաջարկութեան վրայ 1844-ին ինստիտուտի մրցականին արժանացաւ: Բայց ես կուրօրէն չհետևեցայ Հայր Թիրարի աշխատու-

թեանք, որ չորս հատորից է բաղկացած և որնոր շատ ընդարձակ էր սկզբնակին ուսումնարանի համար. այլ միայն նորա ձևը ընդունելով, սկսաւ նախ մի նախադասութիւն գնել աշակերտների առաջ, այսինքն մի խօսք՝ որ ամբողջ իմաստ է պարունակում: Շուտով նըշմարեցի որ այս միջոցը նպաստում էր աշակերտների ուշադրութիւնը գրգռելու և թէ կարելի էր սպասել որ նոքա բերում ծօրինակների համեմատ խօսքեր կազմեն, և հետևաբար ուղղագրութեան դժուարութիւններին յաղթեն:

Ահա իրտեսչեց սկսեցի: Բայց ես իմ դասնապետութեան եղանակի մէջ շատ փոփոխութիւններ մտցրի, և խիղճս տախտակէ՝ ինձ ասել թէ Զուեցերիայի երկու գրքերի եմ պարտական լեզուի դասատուութեան վրայ կազմած ուղիղ գաղափարներս: Փոքր ինչ առաջ յիշեցի Հայր Թիրարի աշխատութիւնը. նորա վրայ կ'աւելացնեմ, մեր գրականութեան դասատուութեան համար, Վինէի եռահատոր Մադհաք ա զը որ մի հռչակաւոր կրիտիկոսի՝ Սէնտ Բեօլի վկայութեամբ ականաւոր մարդու գործ է: Այս երեք հատորները լեզուի դասատուութեան վրայ նոր հորիզոն բացին իմ առաջ որ յետոյ աւելի տարածուեցաւ, երբ տեղեկացայ Պ. Բրաշէի աշխատութիւններին և լեզուաբանութեան նոր դպրոցին:

Վինէի Մադհաք ա զը կարող էք տեսնել աշխարհահայտի Զուեցերիայի բաժնում, Վօդ և Ժնէվ կանտոնների գրքերի մէջ: Առաջարկում եմ ձեզ, եթէ մի բանի վայրկեան ժամանակ ունիք թերթէլ միայն առաջին հատորը, որի վերնագիրն է՝ Մանկական գրականութիւն, և կը տեսնէք թէ որպիսի խնամքով մեր լեզուն քննվում է այնտեղ, ոչ միայն ուղղագրութեան, լեզուի մեքենական մասի նկատմամբ, այլև բառերի ներքին նշանակութեան, իմաստների վերաբերմամբ: Նրկնում եմ, ես այդ գրքի մէջ շատ օգտակար բաներ գտայ սկզբնական դասատուութեան համար:

Աւելորդ չհամարեցի յիշել ձեզ իմ անձնական փորձը, վասն զի մեր ամէնի աշխատութիւնը պիտի լինի աւելի գործնական ուղղութիւն տալ քերականութեան դասատուութեանը:

Արդէն սկսան վերանորոգութիւններ մտցնել. ես գիտեմ որ շատ վարժապետանոցներ կան ուր հետևում են Հայր Թիրարի եղանակին, բայց հարկաւոր չէ ամբողջապէս սեպհականել նոյն եղանակը: Քերականութեան կանոնները պէտք է հանդէս բերուին առանձին խօսքերի մէջ որ ուսուցիչը գրում է նախ տախտակի վրայ և որքան կա-

րելի է նաև ինքն է շարադրում. աշակերտը այդ խօսքերը լուծելով պէտք է ցոյց տայ բառերի մէջ եղած յարաբերութիւնները և դուրս բերէ նոցանից լեզուի կանոնները:

Մէկ էլ որ մեր քերականութիւնները չափազանց ծանրաբեռնուած են ամէն տեսակ աւելորդ բաներով որոնցից պէտք է թիթեւացնել նոցա: Կան օրինակի համար, շատ ծանօթութիւններ որոնք ոչինչ նշանակութիւն չունին: Ինչ օգուտ կայ եթէ հինգ տող շարէք երեխային ասելու համար թէ չպէտք է իրարու հետ շփոթել a) avoir բայի սահմանական ներկայի եզակի երրորդ դէմքը, և a նախադրութիւնը. կամ դարձեալ մօ նախդիրը և մօ անցեալդերբայը: Հարկաւ չպէտք է շփոթել այս բառերը. բայց դուք չէք ասում նորան թէ ինչ պէտք է անէ որ չշփոթէ նոցա: Դորա համար միայն մի ճանապարհ կայ, այն է հասկանալ նախադասութիւնը, լմբռնել իւրաքանչիւր բառի ճիշտ իմաստը:

Կան դարձեալ մի տեսակ մեքենական պարապմունքներ որոնք թիւր զաղափարներ են տալիս աշակերտներին: Նորերումս փարիզի մի սկզբնական ուսումնարանում ներկայ զտնուեցայ աշակերտների վերջնական քննութեանը: Այսպիսի դէպքում երեխաներին սովորաբար քերականութիւնից հարցեր են առաջարկում, և մեծ մասամբ Լաֆոնդէնի առակներն են ընտրվում քերականական վերլուծութիւնների համար:

Կամենում էմ մի օրինակ բերել ձեզ որ տեսնէք թէ ինչպէս է գործադրում աշակերտը իւր քերականութեան դասերը:

«Ամենայն ինչ քեզ համար խստաշունչ քամի է, ամենայն ինչ ինձ զեփիւռ է թվում»:

Ք եր ա կ ա ն ա կ ա ն Լ ու ծ ու մ

(խստաշունչ) ք ամի հասարակ անուն, եզակի արական, ուղղակի խնդիր է բայի:

Ջ ե փ ի լ ու. հասարակ անուն, եզակի արական, ուղղակի խնդիր թվում է բայի:

Եւ այս շատ ղիւրին է բացատրել. աշակերտին ասել էին թէ ուղղակի (հայցական) խնդիրը պատասխանում է ի՞նչ հարցմանը:

Ամենայն ինչ քեզ համար է ի՞նչ — (խստաշունչ) քամի:

Ամենայն ինչ ինձ թվում է ի՞նչ — զեփիւռ:

(Ծիծաղ և ծափահարութիւն):

Աշակերտը ստիկորէն հետեւել էր գրքից ուսած մեքենական կանոնին, և ուսուցիչը կրկնել էր տուել նորան նոյնը առանց որ և է մեկնութեան:

Տեսնում էք թէ որքան հարկաւոր է լուսաբանել լեզուի ուսումը, ազատել նորան ամէն տեսակ անորոշ ձևերից, մեքենականութիւնից, կարճ ասեմ այն բոլոր բաներից որ միայն ըստ երևութին պարզ են, և աշխատել որ երեխան բառերի իմաստն ըմբռնէ, և հետեւապէս ճիշտ գաղափարներ ձեռք բերէ:

Թոյլ տուէք ինձ այս առիթով առաջ բերել Ֆենելոնի մի վկայութիւնը:

«Գիտնական քերականը չափազանց հետաքրքրական և չափափազանց շատ կանոններով լին քերականութիւն գրելու փառնդի մէջ է»:

Այստեղ ևս Ֆենելոնի կարծիքին համաձայն չեմ. ոչ թէ գիտնական քերականը չափազանց շատ կանոններով լին քերականութիւն կը յօրինէ, այլ ընդհակառակն քիչ գիտութիւն ունեցող քերականը, որ լոկ արտաքինն է տեսնում և իրերի խորը չէ թափանցում:

Բայց Ֆենելոնը այս էլ է աւելացնում շատ իրաւացի կերպով. «Ինձ թվում է թէ պէտք է բաւականա՛յալ կարճ ու զիւրին եղանակով: Տուէ՛ք նախ ընդհանուր կանոնները, բացառութիւնները յետոյ կը գան: Գլխաւոր բանն այն է որ մէկին որքան կարելի է շուտով այն կէտին հասցնէք որ իւր ուսած կանոնները զգալի կերպով դործ դնէ յաճախակի կիրառութեամբ. յետոյ նա ինքը զուարճութիւն կը զգայ նկատելու մանրամասնութիւնները որոնց վրայ սկզբում ուշադրութիւն չէ դարձրել»⁽¹⁾:

Ինչպէս տեսնում էք, այս հատուածը բոլորովին համաձայն է այն կարծիքին որ պատիւ ունեցայ յայտնել ձեզ: Արդ, Ֆենելոնը այս սողերը գրել է 1713-ին. ուրեմն մեծ յառաջադիմութիւն չենք արել այն օրից, գոնեա քերականական ուսման մէջ:

Ներկայումս ամէն տեղ խօսվում է քերականութեան դասատուութեան մէջ մոցնելու փոփոխութիւնների վրայ: Եթէ չվախենայի թէ դասախօսութիւնս շատ կ'երկարանայ, որ առանց այն էլ երկար տևեց, առաջ կը բերէի այստեղ մի քանի ամբերկացի դաստիարակ-

(1) Թուղթ Ֆրանսիական Ակադեմիայի պարապմունքների վրայ:

ների այս մասին յայտնած կարծիքները: Բայց ես այդ կարծիքները ամփոփել եմ Ֆիլադելֆիայի աշխարհահանդէսի վրայ ներկայացրած Տեղեկագրիս մէջ, և ով որ ձեզանից ձեռքի տակ ունի այդ տեղեկագիրը, տարրական դպրոցների տեսուչները և վարժապետանոցների վերատեսուչները, կարող էք քրքրել նորան: Ես կը խօսեմ միայն մի աշխատութեան վրայ, որ հրատարակել է մի բելգիացի ուսուցիչ, պ. Լէյ: Հեղինակը սկսում է 1876-ի սեպտեմբեր ամսին Գան քաղաքում արտասանած ճառով, որ պարունակում է համարեա այն բոլոր գաղափարները որ այսօր յայտնեցի ձեզ:

Պ. Լէյ բերում է այնտեղ մի քանի եզրակացութիւններ որ բելգիացի ուսուցիչների ժողովը ամբողջապէս ընդունել է, բացի մէկից որ փոփոխութիւնների է ենթարկուել:

Ահա նորա առաջարկած վերանորոգութիւնները.

«Ա. Առարկայական դասեր, որոնց ժամանակ առականները ղըրուելու են աշակերտների աչքերի առաջ: Այս դասերի հետ կապակցութիւն ունին զանազան տեղերի այցելութիւններ, զբօսանքների շրջակայքում, խօսակցութիւններ, մանր պատմութիւններ և այլն:

«Բ. Չտալ աշակերտների ձեռքը քերականութեան գիրք»:

Ժողովը այս որոշումը մեղադրել է ասելով. բացի վերին բաժանման աշակերտներից, և ես ժողովի կարծիքին համաձայն եմ:

«Գ. Կրթութիւններ և թեյադրութիւններ որ ինքը վարժապետն է զրել տալիս: Ես կ'աւելացնեմ միայն չպէտք է զրքից օրինակել տալ կամ գոնեա որքան կարելի է քիչ անել այդ տեսակ կրթութիւններ:

«Դ. Ընտրութիւն այնպիսի ընթերցանութեան զրքի, որ զիտնական տեղեկութիւններ է պարունակում»:

Այստեղ, պարոններ, ես բաժանում եմ Պ. Լէյից: Ես չեմ ընդունում այնպիսի զրքեր որոնք միայն զիտնական տեղեկութիւններ են հաղորդում, այլ պահանջում եմ այնպիսի ընթերցանութեան զրքեր. որոնք ընդհանուր տեղեկութիւններ են տալիս, այնպիսի գիտելիքներ որոնք նպաստում են երեխայի միտքը զարգացնելու: Մեր կեանքը շրջապատած է միայն զիտնական իրողութիւններով, կան բարոյական կարգի իրողութիւններ որ չպէտք է զանցառութեան տալ և որոնք պէտք է ցոյց տրուին երեխային: Եթէ մենք միայն զիտ-

նական իրողութիւնների վրայ խօսելինք նորա հետ, լեզուի բառերի կէսը անձանօթ կը մնային նորան:

Ե. Հատընտիր հատուածների ընթերցանութիւն նախ ուսուցչի և ապա աշակերտների կողմից:

Զ. Բերանացի կամ գրաւոր հաշուետուութիւն բոլոր անց կացած նիւթերի վրայ:

Տեսնում էք, պարոններ, որ բեղիւյիւմ այնպէս են մտածում ինչպէս և Ամերիկայում և թէ ամէնքը խոստովանում են թէ մեծ կարիք կայ մայրենի լեզուի ուսման մէջ վերանորոգութիւններ անել:

Այո, պարոններ, մինչև այժմ դործ դրուած քերականութեան եղանակը շատ սքողաստիքական եղանակ է: Իրաւամբ ասացին թէ սքողաստիքական վարդապետութիւնը լայնատան է գտել քերականութեան մէջ, և իրօք նա ապաւինել է այնտեղ տրամաբանական վերլուծութեան ձևով: Ահ, այստեղ չարիքը մեծ է եղել, մենք ունեցանք առանձին գրքեր տրամաբանական վերլուծութեան վրայ, մասնաւորապէս ընդունելութիւնների վրայ, և այն մեծահատոր գրքեր որոնք երկու և մինչև երեք հարիւր երեսից են բաղկացած:

Այս բոլոր բաներից պէտք է ազատել լեզուի դասատուութիւնը և մի կողմը թողնել ամէն տեսակ խորութիւնները որ անում են նախադասութիւնների մէջ. պէտք է զէն ձգել բաղահիւսական ու ներհակական անունները որ տրվում են անկախ նախադասութիւններին և ընդունելութիւն, աներևոյթ, յարաբերական, հարցական անունները որ տալիս են երկրորդական նախադասութիւններին: Ահ թողնենք և այն դասաւորութիւնը որով նախադասութիւններին տալիս են ամբողջ կամ կատարեալ, կիճատ, յորդ, անկատար և սոցա նման ուրիշ անուններ: (Մափահարութիւն և ծիծաղ):

Մի երեսայ, որ իւր խելքը այսպիսի բաների է տալիս, նման է այն խեղճ ողորմելի քաղցածին որին քար կը տային ուտելու: (Մափահարութիւն):

Վախում եմ թէ շատ երկար կանգնեցայ այս նիւթի վրայ, վասն զի նշանակած ժամը անցել է և ես դեռ բոլորը չեմ ասել:

Ահա հասանք վերջապէս վերին բաժանմանը: Այստեղ, պարոններ, քերականութիւնը հարկաւոր է, բայց որքան կարելի է պարզ

ու կանոնաւոր քերականութիւն որ աչքի առաջ ունի միայն լեզուի աներկբայելի իրողութիւնները: Համառօտենք այդ իրողութիւնները որքան հնար է կարճառօտ ձեռով: Թողնենք, 'իսէր Աստուծոյ, այն հինգ կանոնները բաղադրեալ գոյականների յոգնականի համար, որ դուք մոտաբերում էք. անշուշտ: Այդ հոգնակաւոր կանոնները մեծ չարչարանք պատճառեցին ինձ իմ մանկութեան օրերում և ես չեմ կարող ներել նօէլ և Շուպսալին նոցա վրայ կորցրած ժամանակս: Եւ սակայն խօսքը շատ պարզ բանի վրայ էր. բաղադրեալ անունների մէջ յոգնականացուցիչ նշանը ընդունում են գոյականները և ածականները, որոնք իմաստին նայելով յոգնակի են վարվում. համ եզակի, մենք գրում ենք *des coupe-gorge* առանց *gorge* բառից յետոյ *s* դնելու, բայց *un porte-mouchettes* *s* տառը աւելացնելով *mouchettes* բառից յետոյ: Դիտելու է որ այս բաղադրեալ բառերը շուտով պարզ բառերի ձև են ընդունում և յոգնականի վերաբերմամբ ընդհանուր կանոնին են հետևում. այսպէս դուք գրում էիք երբեմն *des pour-boire* (պարգէլներ) երկու բառով առանց *s*-ի. բաց արէք այժմ Ակադեմիայի բառգրքի 1878-ի հրատարակութիւնը, և կը գտնէք *des pourboires* *s*-ով, ինչպէս նաև *des pourparlers*. Ճշմարիտ է որ պարգէլները այսօր այնպէս տարածուած են, որ գուցէ այս է եղել պատճառը որ այս բառը ընդհանուր կանոնին է ենթարկուել: (Ծիծաղ և ծափահարութիւն:)

Այժմ մի բառ էլ մնաց ասելու ընթերցանութեան կարևորութեան վրայ վերին բաժանման մէջ: Մեր ուսուցիչները բաւական չեն կարգում ուսումնարաններում: Պաշտօնական հրահանգները շատ անգամ են պատուիրել որ ուսուցիչը աշակերտներին կարդացնելուց առաջ ինքը կարդայ: Արդեօք այս պատուէրը միշտ լսւ է կատարվում: Ես դժուարանում եմ այդ բանը հաստատել. չգիտեմ թէ իմ յարգելի պաշտօնակիցները ինչ կ'ասեն, բայց ինձ թվում է թէ մեր ուսուցիչները առողջանութեան պահանջած կանոնների համաձայն ընթերցումներ շատ սակաւ են անում: Ալա միտ դրէք որ խօսքն այստեղ լոկ սովորական ընթերցանութեան դասի վրայ չէ, այլ հատընտիր ընթերցումների վրայ որ աշակերտները լսում են զաղափարները ժողովելու և ասլա ինքնուրոյնաբար արտայայտելու համար: Ահա, պարոններ, մի զօրաւոր միջոց դաստիարակութեան. մի միջոց դար-

ձեալ մատաղ մտքերում տպաւորելու այն ամէն օգտակար գիտելիքները որ անդադար պահանջվում է ձեզանից հաղորդել նոցա:

Այսպէս, այսօր, կամենում են որ երեխան ուսումնարանում ձեռք բերէ մի քանի սովորական գիտելիքներ. կամենում են որ նա մասամբ գիտենայ թէ ինչ է արտադրում իւր երկիրը, իմանայ թէ ինչ կազմակերպութիւն ունի Ֆրանսիայի կառավարութիւնը. պահանջում են որ նա քիչ շատ տեղեկութիւններ ունենայ առողջապահութեան վրայ, մանաւանդ գործնական առողջապահութեան վրայ՝ այնքան որքան գերդաստանի համար հարկաւոր է: Խելացի և հատընտիր ընթերցումներով, որոնցից յետոյ երեխաներից պիտի պահանջէք ձեր կարդացածը բերանացի կամ գրաւոր կերպով համառօտելով կրկնել: Այս էլ կայ, պարոններ, որ ընթերցմամբ կը ծանօթութացնէք աշակերտներին մեր գրականութեան փառաւոր արդիւնքները: Երէկ ինչպէս դուք, նոյնպէս և ես, հիացանք, կարող եմ ասել յափշտակուեցանք Կորնէյլի ոտանաւորներով: Արդ ի՞նչպէս սիրել պիտի տաք ձեր աշակերտներին Կորնէյլի այդ սքանչելի բանաստեղծութիւնը, եթէ ոչ ժամանակ առ ժամանակ մի մի հատուած կարդալով նորանից և աշխատելով այն ազդու ձեով կարգաւ որ այնպէս յուզելէ մեզ (ծափահարութիւն) կամ գոնեա աշխատելով որքան կարելի է աւելի մօտեցալ նոյն ազդուութեանը: Աս վստահ եմ, պարոններ, թէ անօգուտ կերպով չի անցնիլ այն առիթը որ արուեստական ձեզ ջինքա ողբերգութիւնը Ֆրանսիական թատրոնում լսելու. նորա յիշատակը կ'ոգևորէ ձեզ այն սերտողութիւնների մէջ որ անել կը տաք ձեր աշակերտներին: Այստեղ դարձեալ ստիպվում եմ ասել թէ Ամերիկացիք մեզանից շատ աւելի խոհական մարդիկ են: Ամերիկայում ընդհանրապէս շատ ընթերցումներ, շատ բերանացի սերտողութիւններ են անում: Ընթերցանութեան երեք վերջին դրբերը, երկու վերջինները մանաւանդ, լի են ընտիր հատուածներով: Երեխան մասամբ անգիր է սերտում նոցա. նա ստիպուած է ատենաբանի նման կանգնած արտասանել նոցա, և ոչ նստած, ինչպէս որ շատ յաճախ պատահում է մեր ուսումնարաններում: Իւր ատենախօսութեան ժամանակ նա զանազան շարժումներ է անում, և վերոյիշեալ հատորների մէջ մինչև անգամ առանձին կանոններ ենք գտնում առուգանութեան ու շարժումների վրայ: Այս բացատրվում է այն քաղաքական կարգերով որոնց հովանաւորութեան տակ ապրում են Միացեալ-Նահանգների բնակիչները:

Ֆենելոնը, որից փոքր ինչ առաջ մի հատուած բերի Ֆրանսիական Ակադեմիայի քարտուղարին զրաժ նամակից, ասում էր այնտեղ խօսելով հրապարակաստանն արուեստի վրայ. «Ֆրանսիայում պերճախօսութեան արուեստը երևում է միայն եկեղեցում և դատարանում, և այս հասկանալի է. երկրի գործերը քննվում, կարգի են դրվում թաղաւորի առանձնասենեակում, կամ մասնաւոր բանագնացու թիւնների մէջ»: Այո՛, պարոններ, այդ ուղիղ էր Լուդովիկոս ԺԳ.ի ժամանակի համար, բայց ոչ այսօրուան համար. մենք այնպիսի ժամանակ ենք ապրում երբ բոլոր Ֆրանսիացի քաղաքացիք հասարակաց գործերին մասնակից են (ծափահարութիւն). երբ ամենաանծանօթ քաղաքացին կարող է օրինաւորապէս ձգտիլ իւր համայնքի թաղական խորհրդի անդամ դառնալ, գոտտական խորհուրդի անդամ, ընդհանուր խորհուրդի անդամ, գուցէ նաև երեսփոխան: (Ծափահարութիւն և ծիծաղ:) Եւ այս բոլոր հրապարական կեանքի համար, պարոններ, պէտք է խօսել կարողանալ. պէտք է կարողանալ հրապարակաւ իւր միտքը արտայայտել, պէտք է կարողանալ ուրիշներին հաղորդել իւր սեպհական համոզմունքները:

Այս բոլորի համար հարկաւոր է քիչ շատ խօսելու վարժութիւն ունենալ: Եթէ այսօր չէ կարելի ասել, ինչպէս Ֆենելոնի օրով, թէ ճարտարախօսութեան արուեստը լոկ եկեղեցական ամբիոնում ու դատարաններում է երևում, եթէ ճարտարախօսութիւնը հարկաւոր բան է համարվում շատ անձանց իրանց կարծիքներն ու զգացմունքները հայրենակիցներին ընդունել տալու համար, կրթենք մեր աշակերտներին հրապարակաւ խօսելու, նախ կրկնելով իրանց սերտած ու հասկացած հատուածները, ապա ազատօրէն իրանց մտքերը յայտնելով մի որ և է մատչելի նիւթի վրայ:

Երբ այդ կ'անէք, երբ կ'ուսուցանէք երեխային օգտակար կերպով կարդալ և իւր մտքերը խելացի կերպով արտայայտել, ապահով եղէք որ շատ բան արած կը լինիք երկրի կրթութեան համար: Այս նկատմամբ թոյլ տուէք ինձ, խնդրեմ, առաջ բերել ձեզ մի հատուած այն ճառից որ նորերումս արդարութեան նախարարի օգնականը արտասանել է Տուլուզի մի ուսումնարանի պարգևաբաշխութեան հանդիսի ժամանակ:

« Չվախենանք, ասում է պ. Սալարին, թէ շատ բան ենք պահանջում ուսումնարանից: Նորա կոչումը լոկ կարդալ, գրել ու հա-

շուեւ ուսուցանել չէ. բաւական չէ, որ նա երեսանների ձեռքը դնէ այդ գործիքը որի գործածութիւնը նոքա շատ շուտ կը մոռանային, եթէ զարթեցնելով նոցա հետաքրքրութիւնը և զարգացնելով նոցա միտքը, մի և նոյն ժամանակ այդ գործիքից օգուտ քաղելու ճաշակն ու սովորութիւնը տուած չլինէր նոցա:

« Ուսումնարանի ճշմարիտ կոչումն է ընթերցասիրութեան տւումը և զանազան ճաշակը տալ իւր պատերի մէջ կրթութեանը և յորդորել նոցա իրանց ազատ ժամերը արդիւնաւոր կերպով նորան նուիրելու. և եթէ դպրոցը այս հետեւանքին հասել է, իւր նպատակը կատարել է. որովհետեւ նա ամենաչքաւորներին միջոց է տալիս յետոյ ձեռք բերել այն տեղեկութիւնները որ իրանց ժամանակին չեն կարողացել ստանալ. և եթէ ուրիշ աղբիւրներ չկան, ընտիր գրադարանը զըսորոյցից յետոյ, կրթութեան պակասը լրացնելու ամենալաւ միջոցը կը լինի: »

Հասնումեմ դասաստութեան վերջին:

Թող տուէք ինձ խօսքս աւարտել մի ուրիշ վկայութեամբ: Այս վկայութիւնը հանումեմ մի գրքից որի վրայ դարձնումեմ ուսուցիչների բոլոր ուշադրութիւնը, և որ, ինչպէս կարծումեմ, զանազան է ձեր գրադարաններից շատերի մէջ. այդ գիրքը պ. Էրնէստ Լըգուվէի ընթերցանութեան արուեստն է:

Պ. Լըգուվէի իւր տուած խորհուրդները այս խորհրդածութեամբ է աւարտում.

« Ի՞նչ զօրաւոր և նոր միջոց ուսուցչի համար ժողովրդական և գիւղական դասերի վրայ ներգործելու, եթէ ընթերցանութեան շնորհով կարող է կամաց կամաց, թէև անկատար կերպով, ըմբռնել տալ նոցա մեր գրականութեան մի քանի ընտիր արդիւնքները: Միթէ Ֆրանսիայի պատմութեան դաս տալ չէ՞ նշանակում եթէ Ֆրանսիայի հանձարի վրայ ենք խօսում: Միթէ մեր պարտաւորութիւնը չէ՞ ամէն կերպով բազմացնել ամբարաններ այն կապերը որոնք ժողովրդին կապում են հայրենիքի մտաւորական փառքերի հետ: »

Այո, պարոններ, այն ծափահարութիւնները որով ընդունում էիք երէկ Կորնէյլի ու Մոլէրի գործերը, երաշխաւորում են որ մեր դասական ընտիր գրականութեան ճաշակը տարածելու, նորա փառաւոր արդիւնքները ժողովրդացնելու համար՝ ամէնը կ'անէք ինչ որ ձեր հայրենասիրութիւնը կը ներշնչէ ձեզ: Յիշեցէ՛ք որ մեր գրականութիւնը այս բոլորիս ամբողջ աշխարհի աչքին մեր ամէնից հաս-

տատուն ժառանգութիւնն է: Մեր զինուորական փառքը մնասուել է, իսկ զրական փառքը անարատ է մնացել. նա առաջուանից էլ աւելի փառաւոր ու զեղեցիկ ճառագայթներով է շողշողում: Ինձ ներելի է այս խօսքն ասել այն օրը որ Մակոնում Լամարտինի արձանը կանգնեցաւ: (Բուռն ծափահարութիւններ):

Ահա մի ատղ որ կարդում էի երէկ պ. Նիպարի Ֆրանսիական զբախնութեան վրայ յօրինած զեղեցիկ աշխատութեան մէջ:

«Այն օրը որ մեծ Կորնէյը կը կորցնէր իւր ժողովրդականութիւնը մեր թատրոնում, այն օրը մենք կը կորցնէինք մեր նշանակութիւնը, կը դադարէինք մեծ ազգ լինելը:

Պարոններ, այդ օրը մօտիկ է, վասն զի դուք Ֆրանսիայի տարրական դպրոցների ուսուցիչներդ, բուռն ծափահարութիւններով ընդունեցիք մեծ Կորնէյը ռաւանաւորներ: (Երկար ծափահարութիւններ):

Եւ այն օրը որ մեծ Կորնէյը կը կորցնէր իւր ժողովրդականութիւնը մեր թատրոնում, այն օրը մենք կը կորցնէինք մեր նշանակութիւնը, կը դադարէինք մեծ ազգ լինելը:

Պարոններ, այն օրը մօտիկ է, վասն զի դուք Ֆրանսիայի տարրական դպրոցների ուսուցիչներդ, բուռն ծափահարութիւններով ընդունեցիք մեծ Կորնէյը ռաւանաւորներ: (Երկար ծափահարութիւններ):

Եւ այն օրը որ մեծ Կորնէյը կը կորցնէր իւր ժողովրդականութիւնը մեր թատրոնում, այն օրը մենք կը կորցնէինք մեր նշանակութիւնը, կը դադարէինք մեծ ազգ լինելը:

Պարոններ, այն օրը մօտիկ է, վասն զի դուք Ֆրանսիայի տարրական դպրոցների ուսուցիչներդ, բուռն ծափահարութիւններով ընդունեցիք մեծ Կորնէյը ռաւանաւորներ: (Երկար ծափահարութիւններ):

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ ¹⁾

(Շ ա Ր Դ Լ Ն Ի Վ Դ Ի Թ Ի Լ Ն ²⁾)

Ութ օր Թիֆլիս մնալէս յետ, իմ բարեկամ Աբգար Յովհաննիսեանը հրաւիրեց ինձ իւր հօր դաստակերտը, որ գտնվում է Բօրժօմ ասուած տեղում, մօտ 100 վերսթա հեռաւորութեամբ Թիֆլիսից, ուր պիտի երթալ 80 վերսթա երկաթուղիով, իսկ մնացածը կառքով:

Շաբաթ օր ծանապարհ ընկանք և նոյն օրուայ երեկոյեան ժամը 9-ին հասանք տեղ:

Ես ընթերցողին իսկոյն կը ծանօթացնէի թէ Բօրժօմի գեղեցիկ դիրքի, թէ ինձ հիւրասիրող բարեկամիս ընտանիքի և թէ նոցա մէջ հինգ օր ուրախ և երջանիկ անցուցած ժամանակիս հետ, եթէ ծանապարհումը չի հանդիպէի մի փոքրիկ միջնավիպի, որի մասին կամենում եմ փոքր ինչ զեղու քորել՝ պատուական ընթերցողներիս հետ:

Պարոններ, մարդկային կեանքումը կայ հանդամանք, ուր այնքան շատ յարմար չէ այս կամ այն մարդու անունը յիշելը... Ուրեմն թողք որ ես հաստ քօղ ձգեմ իմ հերոսուհիի երեսին, որ ոչոք ձեզանից չի կարողանայ նորան ճանաչելու. բանը մարդու անունի

¹⁾ Թիֆլիսին վերաբերեալ նախընթաց նամակը դժբաղդաբար դեռ ևս մեր ձեռքը չի հասել:

²⁾ Տես «Փորձի» նախընթաց համար:

վրայ չէ. եթէ ինձ կը հաւատաք, մինչեւ անգամ քանը մարդուս լաւ կամ վատ գործի վրայ եւ չէ. քանը այն պարագայի վրայ է, ուր շրջում է խեղճ մարդկութիւնը: Վաղուցուայ յայտնի, թէ ե ոչ շատերէն խոստովանած, ճշմարտութիւն է՝ որ «մարդս աղատ կամք չունի»:

Կարծեմ որ այս խօսքերովս ես իմ հերոսուհիին արդէն այնքան պաշտպանեցի, որքան եւ ամենաճարտար եւ իւր արուեստին հմուտ փաստաբանը, որն ունի հազուադիւտ քանքար, իւր լեզուի կախարդութեամբ, Սիբիր քշելու մարդուն անմեղ քաղաքացիի պատուաւոր անունը եւ պատիւը վերադարձնելու:

Որքո՞ն յայտնի չէ, որ Ռուսաստանի մոռւոր յառաջագիմութիւնը եւ յետադիմութիւնը սաստիկ ազդում է հայերուս վրայ. ուսաց գրականութիւնը տալիս է հայի ոչ միայն գրականութեան, այլ եւ նորա բարոյական ուղղութեան հզօր գարկեր, թերեւ աւելի հզօր, քան թէ նոյն իսկ ուս ազդին: Ռուսաց օրագիրների եւ լրագիրների մէջ արտայայտած միտքը մենք ոչ միայն 'ի նկատի ենք առնում այլ եւ ամբողջապէս կուլ ենք տալիս: Ռուսի կենցաղը մեզ համար օրինակ է. ուսի միտքը մեզ համար քարոզ է, որ մոռում է մեր կեանքի ամէն մանուածքի մէջ. ինչ որ անում է ուսը նոյնը մեզ համար օրինակելի դադափար է, ինչ որ ասում է ուսը՝ մեզ համար օրէնք է: Ես տակաւին չեմ ճանաչում մի ազգ, որ այնքան սիրահարուած լինէր ուսի վրայ, որքան որ հայը:

Ափսոս որ ուսը ոչ դիտէ այդ քանը եւ ոչ իմանալ աշխատում է. եթէ իմանար, նա կը տեսնէր, որ հայից աւելի մտերիմ, անխարդախ, հաւատարիմ բարեկամ չունի, բարեկամ, կրկնում եմ, ցվերջին կաթիլ արեան, ցվերջին շունչ կեանքի: Եթէ իմանար այդ, շատ կ'արելի է որ «Արեւելեան հարցը» այդպէս կ'որստական չէր լինիլ հայոց համար եւ սակաւ արդիւնաբեր ուսաց համար: Ափսոս:

Վաթսուն թուականների քարոզած մտքերը — որոնցմէ, թերեւ, ինքեանք ուսերը այժմ հրաժարուելով հրաժարուել են — խորունկ տպաւորուել էին մեր երիտասարդութեան եւ մանաւանդ մեր այն ժամանակուայ լուսաւորեալ օրիորդներու մէջ: Սխալ հայեացքը ամուսական կեանքի եւ այրուկնոջ փոխադարձ սիրոյ վրայ բերեց բաւական շատ զոհեր: Շատ հայ կնանիք առաւել պահանջներ ունեցան իրանց երիտասարդ ամուսիններէն, քան որքան նոցա մայրերը ունեցել էին. այդ պահանջները այնքան այլանդակ էին երևում նո-

ցա, այն ինչ ասիական խանձարուքէն դուրս եկած ամուսիններուն, որ ոչ միայն բարի հետեանքի չե հասուցին, այլ ընդհակառակն, պատճառ եղան ընտանեկան երկպառակութեան: Հայ կիներ կամեցաւ ազատուելու, և փոխանակ ստանալով օրինաւոր ամուսնից իւր ըղձացած ազատութիւնը, իւր ապօրինի սիրահարի ստրկութեանը մէջ ընկաւ: Հայ կիներ արհամարհեց իւր պարկեշտ և պատուաւոր «խաթունութիւնը» և եղաւ արծաթագին սեղեխ. թքեց իւր ամուսնի ընկերութեանը վրայ և եղաւ օտարի *dame aux camélios*: Ահա ինչ կը նշանակէ պապենական աւանդութիւնների (ադաթ) արհամարհելը:

Բօրժօմի ճանապարհին շոգեկառքի մէջ, պ. Աբգարը և ես, ցաւով սրտի, ականատես եղանք միայն զոհին, որ հայ ազգը տակաւին տալիս է, սխալ հասկանալով դաստիարակութիւնը և լուսաւորութիւնը: Այն սիրուն բանը, որ մի հայ ընտանիքի ամենադեղեցիկ զարդը պիտի լինէր, այժմ տեսնում էինք խոզերի ոտքի կոխանը դարձած: Ճմրած սրտով նայում էինք խեղճ մատաղահաս կնկայ վրայ, որի ամենանուրբ զաղղիւհի նմանիլն անգամ — երեւի շատ խմսոտ — սիրել է թշուառականը այդ ապարդիւն արուեստը — չէր փրկանաւարում նորա խորին անկումը: Մակնաս: Զգուանքով դարցուցի աչքերս այդ զարշեւի պատկերէն:

Գիշերուայ ժամը 9-ն էր, որ հասանք Բօրժօմ: Բժշկապետ Յովհաննիսեանը և նորա ագնիւ ընտանիքը ընդունեցին ինձ եղբայրական զրկի մէջ, թէ և մեր մէջ մինչև անգամ ամենահեռաւոր ազգակցութիւն չի կար:

Պարոն Յովհաննիսեանը ունի Բօրժօմում մի սիրուն երկյարկեայ քարաշէն դաստակերտ, ուր երջանիկ և անդորր անցնում է պրեթէ ամբողջ ութ ամիս՝ մարտէն բռնած մինչև նոյեմբեր, տան շուրջը ունի — իւր ձեռքով տնկած — մի փոքրիկ, բայց սիրուն ծառախիտ պարտէզ, որ զարդարել է զանազան ծառերով և ծաղիկներով: Ես մի նկատելիք ունիմ՝ նորան անելու — որովհետեւ ես ինքս էլ սաստիկ պարտիզասէր և ծաղկասէր եմ — ինչու նա իւր ծաղկոցի մէջ չի ժողովում Հայաստանի ֆլօրան. ինչու նա ճաղկաձորից, Ղարսի ու Անիի շրջակայքից բերել չէ տալիս այն անհամար և գեղեցիկ ծաղիկները, որոնք պարծանքն են Հայաստանին և որոնց նմանը ոչ մի խորշը երկրագնդի չի ներկայացնում մեզ. և ընդհակառակն, նա զարդարում է իւր ծաղկոցը մի քանի ցիւրիաներով, գէօռգիւններով և մախմուր — ծաղիկներով, որն

մեր տեղի ամէն մառ ու շքն ունի: Հայաստանը որ կայ՝ մի ահազին ծաղկոց է. գնա՛ նորա դաշտերը, հովիտները ու ձորերը, հաւաքէ ծաղկի սերմերը ու արմատները և բեր ցանէ՛ ու տնկէ՛ պարտիզիդ մէջ. էլ ուր էք Մօսկովի ու խաբքովի չօփերը ներս մտցնում:

Բօրժօմ որ կանեն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նեղ և երկայն կիրճ, մի աննշան գետակի (Բօրժօմ — գետ) երկու փիւն, կրճի, ուրեմն և քաղաքի լայնութիւնը հազիւ քառորդ վերսթա կը լինի, աները մի կողմից կպած են աջ ու ձախ դիզ — բարձրացող ժայռոտ սարերին, իսկ միւս կողմից շարուած են ընդ երկայնութիւն գետակի քանի մի կանգուն հեռաւորութեամբ: Սաստիկ նեղուածք է: Դուրս է Բօրժօմի առողջարար օդը, հանքային ջրերը և անտառների խտութիւնը: Թէ ինձ հարցնէք, ես մի առանձին գեղեցիկութիւն չեմ գտայ Բօրժօմի մէջ. ոչ միայն մեր Սուրբ — Խաչը նորանից լաւ է, այլ Հայաստանի ամէն մի հովիտը (որոնց թիւը հազարներով պէտք է համարել), ձորը ու կիրճը, եթէ նոցա վրայ մի փոքր աշխատանք դնես և քանի մի դռն փող մխես, հազարապատիկ աւելի գեղեցիկ կը լինէին և կենալու համար բերկրալի: Բօրժօմի վրայ շատ փող մտնած է, շատ էլ պիտի մխեն, բայց ի՞նչ օգուտ: Կերակրող պաշարը թանգ — կրակ է, բնակարանների վարձը (քրհհհ) այնքան բարձր է, որ այդ գնովն Հայաստանի մէջ ոչ միայն տուն կը շինուէր, այլ և տեղը կարելի է սեփականութիւն դարձնել: Զարմանալի կուրութիւն: Առաջին նուազ ես հաւանեցայ Բօրժօմի մեծ, խոշոր և թաւախիտ անտառներուն (մէրի). բայց երբ որ Դիլիջանի ձորը (Հայաստանումը) տեսայ, Բօրժօմի տալանորութիւնը բոլորովին ցնդեցաւ մտքէս. բայց նորա յիշատակը միշտ թարմ կը մնայ իմ սրտի մէջ. ես երբէք չեմ մոռանալ այն բարեկամական անկեղծ և առ ի սրտէ ընդունելութիւնը, որ ցոյց տուեց ինձ բժշկապետը, և այն զրաւիչ խօսակցութիւնները, որն ունեցայ օրիորդ Գայիանէի հետ:

Այցելելով պ. Շահպարտեանին, ես ունեցայ այն ուշադրութեան արժանի խօսակցութիւնը, որոյ պատճառաւ այցելութիւն արի «Մարիամեան օրիորդաց դպրոցին» և երկարօրէն խօսեցի արուեստների մասին: Ես յուսով եմ, որ պ. Շահպարտեանը ի բոլոր սրտէ կը ներէ ինձ. իսկ միւս անգամ որ իրար հանդիպինք՝ մէկմէկու եղբայրաբար կ'ողջունենք և կը զրկուինք: Ամուր է այն բարեկամութիւնը, որ փոխադարձ կասկածով և կռով է սկսվում: Առաւել լաւ է համոզուելը, քան թէ կոյր հաւատալը:

Հինգ օր Բօրժօմ մնալով, վերջապէս ժամանա կը հասաւ մնաս բարեաւ տսելու, որ կատարեցի ոչ առանց սրտի փղծուիլի և թեթև արտասուների: 'Ի բոլոր սրտէ սիրեցի ես բժշկապետ Յովհաննիստեանցին և նորա մաքուր գերդաստանը. յուսամ որ նոքա էլ ինձ մի փոքրիկ բարեկամական խորշ տուին իրանց սրտերի մէջ:

Վերադառնալու ժամանակ ուղեկիցս (անունը չեմ տալ) չդիտեմ սրտեղից ճարեց պատուական «կախեթու», որից այնքան առատ ներքսահեղութիւն արինք, որ ամենեւին միտս չէ թէ ի՞նչպէս անցաւ ժամակէսը, ի՞նչպէս շոգեկառքի մէջ նստայ, ի՞նչպէս կառքերը տեղերէն շարժեցան, և այլն և այլն. մինէլ աչքս բանամ տեսնեմ որ՝ արդէն Թիֆլիսին մօտեցել ենք: Ի՛նչ կուզէ լինի, բայց այն դիշերը վոքսհալումը լաւ քէփ քաշեցինք պ. պ. Ա. Յոսեփ, Օոսեփ և ես. ափսոս որ զուռնա ու նաղարա չի կար, զուցէ մի փոքր էլ պար կուգայինք:

Չարմանալի քէֆի մարդիկ են Թիֆլիսցիները. հաւատաս խոտաճարակ ճգնաւորին էլ կըխմցնեն ու կը պարացնեն: Թիֆլիսցին շատ զօր չի անում, թէ խմի՞ր. բայց ինքը այնպիսի ակտիվութեամբ խմում է, որ մարդուս մէջ ակամայ կերպով դարձեցնում է խմելու ակտիվութիւն: Այն էլ պէտք է տսել, որ հայերը թէև խմում են, բայց շատ սակաւ հարբում են. իսկ գինեճանութիւնը ամենեւին անյայտ է Հայաստանի հայերի մէջ:

Բօրժօմումը կայ մի նորաչէն հայ եկեղեցի, որի պահպանութիւնը և բարեկարգ դրութիւնը շնորհապարտ է բժշ. Յովհաննիստեանին: Եկեղեցին բաւականին սիրուն է, բայց նա առաւել սիրուն կը լինէր, եթէ նորա կաթողիկէն չի ցածացվէր:

Քանի մի օրից օրիորդ Գայիանէի և պ. Կամսարականի հետ միասին գնացի Կօճօր՝ Գէորգ Եւանգուլեանին տեսութեան, որն իւր պաշտօնի պատճառաւ կենում էր այնտեղ: Կօճօր մօտ 15 վերսթա հեռի է Թիֆլիսէն. ճանապարհը անցնում է սարերու մէջէ, որոնք այնքան բարձր դիրք ունին, որ ջերմաչափը մի կարճ միջոցում շատ ցածանում է: Նոյն օրը, որ Թիֆլիսից դուրս եկանք, ջերմաչափը ցոյց էր տալիս + 35, իսկ կէս ժամից սարերի մէջ այնքան ցուրտ էր (յուլիսի վերջերը) որ ստիպուած էի վրաս փէղ ձգելու: Կօճօր որ հասանք, իջնանումը տեսայ Եւանգուլեանին, Պ. Սիմէօնեանին, որոնց

հետ զնացինք մինչև վերը, ուր կան ամարանոցի տները և մի հայոց եկեղեցի, որն, ինչպես լսեցի, շինել է պ. Թայիրեանը մասամբ իւր փողով և մեծ մասամբ ժողովրդի ջերմեռանդ տուրքով, որի համար մոքումն շատ «չէն կ'նաս» ասացի յիշեալ պարոնին: Կօճօրումն կային ուրիշ իմ հին ծանօթները՝ բժշկապետ Ռոտինեանը, աստիճանաւոր Քիշմիշեանը և այլք, որոնց դեռ ևս տեսած չէի և նոցա տեսութիւնը ինձ շատ ուրախացուց. բայց շատ ավտոս, որ չի գտայ Ալէքսանդր Ռոտինեանին: Նկատելի է, որ 1873-ին, որ Թիֆլիս էի եկել, դարձել ճառ բացակայ էր, ինչպէս և այս անգամն՝ տէրութեան պաշտօնի պատճառաւ: Մենք իջանք պ. Ղամբարեանի տուն, ուր այն օր կնքելու էին նորա նորածին զաւակին:

1873 թուականին, երբ որ ես վերադառնում էի Թիֆլիսից դէպի Նոր-Նախիջևան, Գոթիի երկաթուղով գնալիս, շոգեկառքի մէջ մի անախորժ դէպքի հանդիպեցայ: (Ինձ այսպէս էր թուում որ) բարձրաձայն աղմուկներով ներս մտան երկու կին և մի երիտասարդ. երեսներից երևում էր, որ հայեր պիտի լինէին, բայց ոչ մի խօսք հայերէն չիսուեցան. խօսակցութեան մէջ երբեմն ի դէպ ու անդէպ Ֆրանսի խօսքեր էին բաց թողնում, իսկ մեծաւ մասամբ ռուսերէն էին խօսում. աղջիկներից մին, որ իմ վրայ աւելի անախորժ տպաւորութիւն արաւ, մինչև անգամ հպարտ հպարտ նայում էր վրաս՝ աչքի կոպերը սեղմելով (յետոյ, բայց շատ յետոյ իմացայ, որ նա կարճատես է եղել): Ես սոցա մոքիս մէջ զրի 'ի շարս այն թշուառականներին, որոնք իրանց անձին փառք են համարում հայութիւն ուրանալն: Այդ համոզմունքով մնացի ուղիղ վեց տարի, և եթէ չեմ սխալում, այս դէպքը շատերին պատմեցի ևս: Հարեաններիցս իմացայ, որ իշխան և իշխանուհի Բ. եանքն էին. իսկ երկրորդ կնկայ ա՜նունը ոչ այն ժամանակ իմացայ և ոչ այժմ. նորա համար ասում էին, թէ մի օտարի հետ ամուսնացած է: Այս անգամն, որ եկայ Թիֆլիս, ծանօթանալով իշխան Մ. Բ. հետ, խօսքի մէջ հարցուցի «Ազգական չե՞ն արդեօք նորան այս ինչ ու այն ինչ անձինք», և մանրամասնաբար պատմեցի շոգեկառքի մէջ պատահած անցքը: Ո՛րքան մեծ էր իմ զարմանքը, երբ որ լսեցի որ մինը նորա հարազատ եղբայրն էր, իսկ միւսը քոյրը, այժմ մեզ հիւրասիրող տանտիկինը, որպէս ինձ հպարտ երևեցած իշխանուհին, որին յընթացս վեց տարուան զրեւէի 'ի շարս ազգուրացների: Ի՛նչ ասել կուզէ, որ այն բոպէին իմ ամենամեծ երջանկութիւնը կը լինէր «գետինը

անցնիլը: Ահա քեզ տիները օրինակ, թէ որքան սխալական է լինում արտաքին ձևը: Աթէ կը զոնուի հայի մէջ քաղաքավարի, ազնիւ, խոհեմ, հայասէր և շատ հազուագիւտ առաքինութիւններով վարդարուած կին, հաւատացէք որ այդպիսիների մէջ պատուաւոր տեղը պիտի բռնէ տիկին Նունէ (Նինո) Ղամբարեանը, որ երբեմն իշխանուհի Բեհբութեան էր: Բերումեմ, թէն մի փոքր առնազան, իմ անկեղծ ստորջանքը, և յուսամ որ իմ սրտաբաց խոստովանութեանը հաւատալով, տիկին Ղամբարեանը մեծահոգի կը լինի իմ ակամայ մոլորութեանը: Ինչ ասել կուզէ, որ այսուհետեւ նա իմ մէջ կը գտնէ իւր բարեկամներից ամենայարգողը և իւր արժանաւորութեանց ամենազնահատողը: Կարծումեմ, որ անդէպ չի լինիլ, եթէ այս ամենի վրայ աւելցնեմ, որ տիկին Ղամբարեանը երեւելի երաժշտուհի է:

Կնունքից յետոյ Պարոն և Տիկին Ղամբարեանքը հրաւիրեցին մեզ հացկերութիւն մօտակայ անտառումը, ուր ահագին բազմութիւն բարեկամների ճաշի նստան՝ ումանք սեղանի առջև և ուրիշները, տեղական սովորութեամբ դետնին փռած գորգի (խալիչայի) վրայ «ծալ պուտակ»: Ճաշը բաղկացած էր միայն ասիական կերակուրների՝ եախնի, զուրգեալ, փլաւ, տօլմա, և շատ ուրիշներ, որոց անունը թէև հարցուցի, բայց այժմ մոքիցս ելել են: Աւելորդ է ասել, որ երբ ճաշը աւարտեցինք, իմ բանն «թութուր էր», վասն զի պ. Քիչմիշեանը, որ ընդհանուր հաւանութեամբ «սօլուբաշի» էր ընտրած, ոչմի բազմականի չթողուց, որ նորա կենաց բաժակ չի խմուէր. և որովհետև ամէնքս թուով մօտ 40 հոգի էինք և որովհետև ամէն մինն այդքան «կենաց» խմեցինք, ուրեմն, առանց բացառութեան, ուրախութիւնը համատարած էր: Պարոն Քիչմիշեանին ես միշտ ճանաչել եմ ինչպէս քանքարաւոր երիտասարդ. բայց նորա «սօլուբաշութեան» քանքարին միայն այն օրը համոզուեցայ. նա այնպիսի անուշ և յարմար խօսքեր ասել գիտէ, որ մարդ ակամայ դատարկում է գաւաթը. ծիծաղելին այն է, որ նա շուտ շուտ և շատ շատ զրաբառ յանկարծախօսութիւններ է անում, որ լսելով, մարդ թուլանում է ծիծաղից: Այնօրուայ քէֆը երբէք մոիցս չի ելլել. մանաւանդ նորա համար, որ մեզ սեղանակից էին շատ լուսաւորեալ հայ կնանիք. նոցանից մինը (Տիկին Խատիսեանը) մինչև անդամ յայտնի է ինչպէս հեղինակ, և որ ինձ ընծայեց իւր զեղեցիկ երկասիրութիւնը (Славяне Балканскаго полуострова и Восточный вопрос), որ իմ մատենա-

դարանի զարդը կը լինի: Այս առաջին անգամն էր, որ ասիական խնձոյքի մէջ տեսայ կանանց, որ հաւասարապէս մասնակից և ուրախակից էին աղամարդոց: Ամէնքս միապէս ուրախ և զուարթ էինք. արդէն «սխալի սուփրան» փռվելու վրայ էր, և խաղաղ ու աստեղազարդ երեկոն խոստանում էր երկարատև շարունակութիւն սկսած խնձոյքին և անվերջանալի կոնծաբանութիւն... յանկարծ լուր տարածուեցաւ Թիֆլիսումը թէ հրդեհուել է այն լումայատուներ (բանկը), ուր կոչնատէր Ղամբարեանը կառավարիչէր: «Քէփը խարաբ էլաւ», ամէնքը շփոթուեցան, վասն զի այս վատ լուրը «խշիկի» նման թափուեցաւ մեր գլխուն. ա. Ղամբարեանը շտապով նստաւ կառք ու ղրնաց, մենք էլ որս այս և որս այն կողմը ցրուեցանք. ու փոքր ինչ ժամանակից յետ մենք էլ մեր կառքը նստանք և մթով հասանք Թիֆլիս, ուր, ճշմարիտ որ, այրվում էին տներ շատ մօտիկ լումայատուներէն. բայց բարեբաղդաբար լումայատուներ հրդեհէն անվնաս մնաց:

Թիֆլիս մնացի ուղիղ քսանմէկ օր, և բոլոր այդ ժամանակը շատ ուրախ անցուցի. երկու անգամ ճաշի հրաւիրեց ինձ պ. Երիցեանը. երկու անգամ Ա. Բովհաննիսեանի հետ գնացի քլուբ, ուր տեսայ վրացի կանանց երեւելի պէզզուհի պարելը և տաճիկ երգչի հայերէն «Անի քաղաք» երգելը. մի անգամ հրաւիրեց ինձ պ. Արծրունին մեծածախ ընթրիքի, որ նա տուել էր ի պատիւ հայ թատրոնասէրներին. պատահեցայ երիտասարդ Տէր Գրիգորեանի («Մշակի» աշխատակցի) և քանքարաւոր օրիորդ Փաշայեանցի համեստ հարսանիքին. իսկ մնա՞ծ ժամանակը փոխ առ փոխ անցնում էի Պետրոս Սիմէօնեանի, Գրիգոր Արծրունիի և Աբգար Բովհաննիսեանի տանը: Գրեթէ ամէն երեկոյ գնում էի քաղաքական պարտէզ և այնտեղ Շէնինզի մօտ, պողաջուր, հանքաջուր, սուրճ կամ թէյ էի խմում այս կամ այն բարեկամիս հետ: Այդ միջոցին չի ճանաչած երիտասարդ հայ հեղինակների հետ յիմօտոյ ծանօթացայ, ինչպէս պ. պ. Տէր Գրիգորեանցին, Սպանդարեանցին (Իւնիւս), Մարկոսեանցին և այլն. ամենքին էլ անկեղծ սիրեցի, ամէնքն էլ բարի և ազնիւ երիտասարդներ են, թէև ոչ սակաւ կրթոտ և դէպի ուրիշ պակասութիւնը աններողաւիտ... Շատ լաւ կը լինէր, եթէ այդ պարոնները վաղօրօք իրար հասկանային, իրար գնահատէին և փոխադարձաբար ներէին... բայց

կուգայ ժամանակը հանգամանքը նոցա քթերը մի փոքր կը արորէ, խելքերը զլուխները կուգայ, և ականաց կ'անեն այն, ինչ որ կամաւոր պարտաւոր էին անելու: «Անգուզութիւն է մայր չարեաց», կը յիշեն իրանց սիրած հեղինակի առածը:

Այս անգամն, չզիտեմ ինչ պատճառաւ, պ. Սունդուկեանցի (ականաւոր թատերաբեմական հեղինակի) հետ մօտիկ յարաբերութիւն չունեցայ. վեց տարի առաջ այդպէս չէր. այն ժամանակ մենք մէկգմէկու աւելի սիրում էինք... գուցէ ինձ միայն այդպէս երևաց, գուցէ այդ մի պատահմունք էր, գուցէ, գուցէ... բայց, ինչ սուտ ասեմ, իմ սիրտը «խօր մնաց»:

Հա, քիչ մնաց, պիտի մոռանայի, այս էլ ասեմ ու պրծնեմ: Մի անգամ խնդրեցի մի բարեկամի, որ ինձ «բաղումը» օղի մէջ, թիֆլիսցիի սիրած քէփը շանց տայ: Հետեւ էր պ. Նրիցեանցը և, չզիտեմ, էլ որոնք կային: Նախ՝ զնացինք մէկ պարտէզ (կարծեմ Կուկիայումն էր այդ), չի հաւանեցանք ու դուրս եկանք, յետոյ զնացինք ուրիշ պարտէզ, էլ չհաւանեցանք. զնացինք երրորդը, զնացինք չորրորդը, ամէն էլ չի հաւանեցանք. վերջապէս մտանք der erste beste պարտէզը և իբր թէ հաւանեցանք ու մնացինք: Սաստիկ մութ գիշեր էր. օդը բաւականին ցուրտ, ես էլ որովհետեւ թեթեւ հագուած էի, երկիւղ կրեցինք ծառերի տակ մնալը, մտանք մի կեղտոտ սենեակ, որ ամենեւին չէր տարբերվում միտոտ ու միւկոտ դուխանից: Ինչևիցէ. տեղաւորուեցանք: Կոչնատէրերը ապսպարեցին «Թազա օրագու», լուրաքաբար և չզիտեմ էլ ինչ: Գինին էլ առատ էր, ամէն բանն էլ առատ էր. բայց ափսոս որ միայն ուրախութիւնն էր պահաս: Քէֆ որ կասեն, մի ասիլ որ, ապսպրանքով ու հրամանով չի լինում, քէֆը անակնկալ և յանպատրաստից պիտի լինի, որ լաւ լինի: Ամէնքս էլ նկատեցինք, որ անհամ բան դուրս եկաւ, բայց լուռ կեցանք, իրարու բան չասինք, գուցէ միտք անում էինք, կամաց կամաց ուրախ տրամադրութիւնը ինքն իրան կուգայ մեր վրայ: Այդ պատճառով սկսեցինք գինին զօր տալու, Նարառի—Խօջայի «ուտիսուց» մասսալները պատմելու, սուտ սուտ ծիծաղելու, իբրթէ շատ ուրախ ենք, բայց 'ի դուր, այն անգամ քէֆը շատ հեռու էր փախել մեզանից: Փող շատ միսուեցաւ, բայց ես Թիֆլիսի գոված քէֆը չի տեսայ այն օր: Ամէնքս քիթերս կախած մեր տեղը զնացինք: Քէֆը ստեղծել չէ՛ կարելի. նա ինչպէս ներշնչութիւն բանաստեղծական, անհրաւէր է գալիս. և շատ ատում է բռնաբարութիւն:

Չգիտեմ ճիշդը, բայց կարծում եմ, որ Թիֆլիսի մէջ քանից աւելի հայոց եկեղեցի կայ, և Ստամբուլէն յետ Թիֆլիսը հայերով բազմամարդ քաղաքն է աշխարհիս երեսին: Թող թէ Թիֆլիսի բոլոր վաճառականները, աննշան բացառութեամբ, հայեր են, բայց և նկատելի է, որ զրեթէ բոլոր արուեստների վարպետները հայեր են. այս կողմանէ ևս Թիֆլիս ամէն հայաբնակ քաղաքների մէջ նշանաւոր է: Ասում են թէ՛ Թիֆլիսի մէջ մօտաւորապէս հազար հոգի վերին ուսումնարաններում ուսումն աւարտած մարդիկ կան. և այս օրս աւելի քան թէ հազար երկու հարիւր հոգի միջնակարգ ուսումնարանների մէջ հայ պատանիներ և նոյնքան էլ աղջիկներ կան: Կուգայ ժամանակ երբ Թիֆլիսի հայ տարրը կը թազաւորէ ամէն հայաբնակ քաղաքներումը իւր բարոյական ազդեցութիւնով: Աստուած տայ, որ այդպէս էլ լինի, ոչոք իրաւունք չունի նախանձելու, վասն զի Թիֆլիսը իւր զաւակներին կը թերու և հայի պատիւը պահպանելու համար միշտ իւր ուժէն վեր գոհեր բերել է: Թիֆլիսի երիտասարդութիւնը յոյսն ու պարծանքն է Հայաստանի:

Խօսքս վերջացուցի Թիֆլիսի մասին, թէ և զգում եմ, որ տասներորդ մասն անգամ չասացի, ինչ որ հարկն էր ասելու: Իցէ թէ բան ու ման մոռացել եմ թող ներէ ինձ կարդացողը, թող չմոռանայ, որ ես գրում եմ այս տողերս ոչ նստած խաղաղ ու հանգիստ գրասենեակիս մէջ, ոչ, այլ ճամբու վրայ, պանդոկներումը և ուր հասաւ: Իսկ երբ որ, Աստուած տայ, տեղս հասնեմ, սովորական սեղանիս առջև նստեմ, այն ժամանակ իմ յիշատակներէս շատ ուրիշ բաներ կը քաղեմ, որն, զիտեմ, հետաքրքրութեամբ կը կարդաք, բայց այժմ դէպի աստանդական ճամբորդիս ներողամիտ եղէք, շատ մանրամասնութիւն մի՛ պահանջէք: Այժմ շտապէնք դուրս գալ Թիֆլիսէն, ուր աւելի մնացի, քան թէ պէտք էր: Մնաք բարեւ, առջևս քիչ ժամանակ կայ, բայց ճամբաս մեծ է:

Օգոստոսի 9-ին առաւօտեան ժամը 9-ին դուրս եկայ Թիֆլիսից. ճանապարհորդակիցս էր պ. Արզար Որբելին, Թիֆլիսի ղեկանական Թովսէփ քահանայի որդին, — պատուական մի անձն, որի բաւականին երկարատե կենակցութիւնը այս ծանրատաղտուկ ճանապարհի ժամանակ ինձ մեծազէս օրովեց, և որի բարեկամական հաւաստիքը երբէք մոռանալու չեմ: Պարոն հայրենակիցներ, դուք ինձ կը ներէք, եթէ ես ձեզ հետ

մի փոքր աւելի սրտաբաց լինիմ, քան որքան ընդունած է մեր «քաղաքավարի ընկերութեան» մէջ. ինձ համար չէք ասիլ, որ Սիւլեկը մարդոց փէշը ծնկէն վեր բարձրացնող է..... Ե՛հ, ի՞նչ եմ հոգում ձեր ասէ-կօսէէն. էն վաղէր, որ էշը կաղէր, էն հինութեան կարծիք էր, որ մի ազգի պակասութիւնները թաքցնելով կարծում էին ուղղել նորա մոլութիւնները. ահա 15 ամբողջ դար մեր սուրբ եկեղեցին «կաշիէն դուրս է գալիս» ու չէ կարողանում յղկել հայերիս բնաւորութեան անհարթութիւնները. դրեթէ նոյնքան ժամանակ է, որ զիր-կարդումը ևս ոչինչ զգալի բարւորութիւններ չկարողացաւ անել այդ մասին. հայի բնաւորութիւնը քանի գնում է՝ վատթարանում է. և նոյն իսկ այդ անյարմար բնաւորութեան և ոչ թէ խոշոր մոլութիւնների համար մեր ազգը ատելի է և՛ օտարին, և՛ իւր ազգին: Հայ անունով ոչ միայն օտարն է ուզում մեր սիրտը խոյտել, այլ և հայը հային, թէ որ կամենում է հողին մղկացնելու, «հայ» անունանում է, հայ ածականի մէջ ամփոփելով ամէն կերպ բարոյական ցեխ ու կեղտ: Ես ցոյց տալիս եմ ցաւը. իսկ ով որ զգում է իւր մէջ բժշկութեան ոյժ և քանքար, թող բուժէ ազգիս խորունկ վէրքերը: Բայց ես հաւաստի գիտեմ, որ քանի որ մեր մէջ անփոփոխ պիտի պահենք այս անգոսնելի «հայկական բնաւորութիւնը» ոչ մի թեթեւութիւն, ոչինչ ազգային սթափումն և քրդի ու թուրքի գէնքէն փրկութիւն չի պիտի սպասենք: Պատերազմենք ուրեմն նախ՝ մեր ամենոխերիմ թշնամու հետ, որ է՝ մեր հայկական բնաւորութիւնը. իսկ «գուշմանի օճաէն դալը» շատ զիւրիւն է այնուհետեւ:

«Օրբելի հիմա պիտի ճանապարհորդես, ասացին ինձ քանի մի մարդիկ... Օրբելին... Պետերբուրգ... հայոց ուսանողութիւն... չինօֆելք»... և այլն, և այլն, և այլն. հայկական լեզուն խզեց իւր կապանքը, ստացաւ ազատութիւն, գնա՛ ու գնա՛:

Սիրելի՛ եղբայրներ, սիրական հայեր, ես զարմանում եմ, թէ ինչո՞ւ դուք այս հողեղէն աշխարքումս փնտրում էք աննիւթական էակներ, իդէալական մարդիկ ու աստուածային կատարելութիւններ. մի՞թէ մարդ ձեզմէն սիրելի ու յարգելի լինելու համար անպատճառ զարդարուած պիտի լինի ամէն կերպ յատկութիւններով, որն մինչև անգամ երկնաքաղաքացիի մէջ զանեղ զփուար է: Հայ՝ երևի դու նկատած չես, որ լաւ մարդ դու միայն նորան ևս ասում, որին դու միայն ես հաւանում. իսկ ուրիշի հաւանածը ու լաւ ճանաչածը եր-

բէք կարող չէ քեզ համար լաւ լինել: Հայեր, ձեր թիւը, ասում են, հինգ միլիոն է. ասացէք, խնդրեմ, կայ մարդկային հնար այդքան մարդոց «խաթրը խօշ անել», որ հայերի աչքումը լաւ երևիս. այդ բանը առաւել դժուար է. քան թէ *perpetuum mobile* հրնարելը:

Գրեթէ մի ամիս է, որ օր ու գիշեր անցնում եմ Աբգար Օրբելիի հետ, և մինչև այսօր ոչ նա և ոչ ես մտղե չափ պատճառ ունեցած չենք իրարէ անբաւական մնալու. չը զիտեմ, հարապատ եղբօրէս այդքան կրփրուէի և կամ մերձաւոր արեւակցիս այդքան կը սիրէի ու կը յարգէի. երկբայելի է: Պ. Ա. Օրբելին, ըստ իւր դաստիարակութեան և կրթութեան այն հաղուաղիւտ երիտասարդներին է, որ ամէն լուսաւորեալ ազգի ընտանեկան ժողովը զարդը և պարծանքը կարող է լինել. իսկ հայերիս մէջ բամբասուած է: Զարմանալի բան:

Ես ասելէս ասացի. գիտեմ որ շատերը պիտի բարկանան վրաս. փոյթ չէ. մի օր կ'իմանան, որ խեղճ Սիւլիկը հայի անկեղծ ու անխարդախ բարեկամն էր, և զուցէ իմ յիշատակը (երբ ոսկորներս վաղուց հողէ մէջ փտած կը լինեն) բարի պտուղներ կը բերէ ազգիս վերածնութեան համար: Ինչեր չի տուող Աստուած է:

Թիֆլիսից որ դուրս եկանք ու մտանք արքունի ճամփու վրայ, օրը այնպէս մաքուր և հանդարտ էր ու երկինքը այնպէս պարզ էր, որ դպրոցից դուրս պրծած երեխերքի նման ուրախ էինք երկուսս. շուտ շուտ օդ էինք ծծում, կարծես թէ ամիսներով հեղձուկ սեւեռակի մէջ լինէինք փակուած. բայց այն էլ պէտք է ասել, որ յուրը և օգոստոսի սկիզբը Թիֆլիս ոչ մի կաթիլ անձրև չէր տեսիլ, փողոցների փողին մի մնա հաստութեամբ պառկած էր գետնին. հրապարակների, շուկաների և բակերի դարշահոտութիւնը քիթ էր ճղում. իսկ օդի տաքութիւնը հասնում էր գրեթէ միշտ 35ից մինչև 40 աստիճան: Այսպիսի օդին մարդս երկար ժամանակ ընտելացած պիտի լինի, որ կարողանայ նորա մէջ անպատիժ մնալ: Փօստի զանգակի ձայնը, որ վաղուց լսած չէի, դարձեալ զուարճացնում էր ինձ, ու միտս էր բերում տղայութեանս և պատանեկութեանս օրերը, երբ շողեկաւորը դեռ ևս Ռուսաստան չի մտած, շատ անդամ քաղաքէ քաղաք սուրհանդակի սայլով էր ճանապարհորդում: Վաղուց արդէն դուրս էինք եկած Թիֆլիսէն, բայց նորա հետքը տակաւին չէին անհետանում մեր աչքերէն. նախ ուղեկցում էին մեզ պ. Միրզոյեվը

անվերջանալի շէնքերը, յետոյ տեսնում էինք՝ Կուրի վրայ տնկած այգիները, ոռոգման անիւները և ջրաղացները: Ճանապարհը թէև ապառաժների միջով էր անցնում, բայց ամէն տեղ հարթած էր այնպէս, որ առանց դժուարութեան դարիւ վեր ու դարիւ վայր արագ արագ սահում էր մեր սայլը:

Ժամուկէս հազիւ թէ անցել էր, որ հասանք Սօղանլուխի իջևանը, ուր իջևանապետը մեզ ահա ուղղի մէջ ձգեց, հաւատացնելով որ այն կողմերի աւազակները միշտ անպակաս են, որ նոքա ոչ միայն մասնաւոր ճանապարհորդների վերայ են յարձակւում, այլ մինչև անդամ արքունի սուրհանդակի սայլը կողոպտում են, նամակաբերին, սայլորդին և ձիւսւոր թիկնապահներին (չափառ) սպանում են: Դժուար էր չի հաւատալը, որովհետև ամէնքը միաբերան նոյնը հաստատում էին: Այս կողմի աւազակները, այսինքն՝ ճանապարհորդներին կողոպտողները ու սպանողները, ոչ միայն մեծաւ մասամբ, այլ բոլորովին տեղական թուրքերն են: Լսուած բան չէ, որ քուրդները խաղաղ ճամիորդների վրայ յարձակուեն, կամ յափշտակեն, նոյա ինչքը, կամ իրանց սպանեն. այս կողմի քուրդները խելճ՝ մարդիկ են, բոլոր կեանքերը անցնում են երբեմն իրանց, իսկ մեծաւ մասամբ հայերի խաշիւքը (ոչխարի սիււրիւ) սարերի մէջ արածեցնելով:

Երևակայեցէք մեր դրութիւնը. ոչ ես ունէի գէնք պ. Խ. Չալտուշեանի շնորհօք, ոչ ընկերս և ոչ մեր մալքան սայլորդը. իսկ թուրքերը վերջին պատերազմէն յետ սպառազինուած էին Թիւրօղի ու Ուինչէսթուի տաճիկներից խլած արաղանետ հրացաններով: Հաւատացէք որ մի այդպիսի աւազակ կարող էր քսան-երեսուն հողի մեզ նմաններին տեղնիտեղ լօրերի նման ամիտփել, իսկ մենք ոչինչ հնար ու կտրողութիւն ունենալու չէինք նորան ամենափոքրիկ դիմադարձութիւն անելու: Այո, թուրքին ևս արդեւած է, ինչպէս և մեզ, վերոյիշեալ հրացաններէն ունենալու. բայց բանը այն է, որ թուրքը չի հնազանդում այդ օրէնքին, մինչ մենք անպայման հնազանդում ենք. թուրքը ձեռքէն եկած ամէն հնարը դործածում է թաքցնելու և պէտք եղած տեղը երկիր արկանելու: Դէհ, դնա ու քէֆ արա: Ասում են թէ՛ միայն երեսնի դաւառը տարին-տարեկան զոհ բերում է վաթսուոն չափահաս հայ հայրեր գերդաստանի, առողջ երիտասարդների, աշխատաւոր շինականների, աչքաբաց վաճառականների: Իսկ սպանողը

ով է, մէկ իմանայիք:—Մի քօսոտ, հոտած, պատառոտած հալաւով, գարշելն թուրք, մրուր մարդկային ցեղի, որին երբ տեսնում ես ժամանակէ ժամանակ մի էշի վրայ հեծած, Աստուած վկայ որ՝ մաքրիւ մէջ ասում ես միշտ՝ մեղք էշին... Այս մասին ես շատ դիպուած կունենամ խօսքս երկարացնելու, վասն զի, մինչև այս օրս, այսինքն՝ մէկ ամսի չափ ժամանակ, ամէն քայլափոխին և ամէն րոպէ երկիւղ կրել եմ զոհ լինելու մի կտոր արձձի, մի ժանգոտած դանակի, որն կարող է հանդիպել կրծքիս ամէն ժայռի ետեւէ, ամէն ձորի մէջէ: Այս կը նշանակէ՝ ճանապարհորդել դրախտանման Հայաստանի մէջ: Ես ոչ այնքան իմաստասիրում էի մեր հայրենիքի աւերակները, որքան որ այդ աւերակների մէջ խլրդող աւազակաբարոյ ժողովրդի բնաւորութիւնը, սովորութիւնները ու կենցաղը, ինձ այնքան հետաքրքրելի չէին խաչաքարերի վրայ սիրուն փորագրած յիշատակութիւնները, որքան թուրքերի կատաղի աչքերը, նոցա երեսների ապականուած տիպաբքը ու վայրագ բնութիւնը: Օսմանլուին տակաւին տեսած չեմ. նոցա մասին ոչինչ ասելու բան չունիմ. բայց Ռուսա - Հայաստանի մէջ բնակուած թուրքերին շատ լաւ սերտեցի և բոլորովին համոզուեցայ, որ սոքա այն ազգերէն են, որոնք անհաշտ պատերազմ յայտնել են բոլոր մարդկութեան — կամ նորան պիտի բնաջինջ անեն, կամ ինքները բնաջինջ պիտի լինին ու անհետանան աշխարհիս երեսէն: Հիմի ես կամաց կամաց հասկանում եմ հայերիս օրէ օր քիչանալու բուն պատճառը: Թողնենք այս խորհրդածութիւնները առանկա պատեհ դիպուածի ու ժամանակի, երթանք առաջ:

Ճանապարհը օձապտոյտ մանուածներով ձգվում էր դէպի հարաւ - արևելք սարերի կատարքից, սարերի լանջից, ձորերի երկայնութեամբ, իսկ երբեմն փոքրիկ դաշտերի միջով. դէպի ձախ միշտ տեսնում էինք Կուր գետը, որի ափին տասնեակ վերսթեր ձգվում էին Ղարա - Նազ ասուած տափերը, ուր սկսել են տնկելու անտառներ, պարտէզներ, այգիներ, սեխաստաններ (պօսթան) ու ցանելու դաշնաւան կանանչեղէն, որ ամէն օր կթոյց - կթոյց բերում են Թիֆլիսի շուկան. իսկ դէպի ւշ երևում էին անհուն տարածութիւն չոր ու ցամաք դաշտերի, ձորերի ու արևակէզ բլուրների: Չը գիտեմ ինչ տեսք ունին սոքա դարևանը, բայց ամառուայ մէջ շատ սգալի է նոցա կերպարանքը: Արդեօք Մեռեալ ծովի շրջակայքը աւելի՞ ամուլի են, քան այս տեղին, որ անջրպետ է Վրաստանի և Հայաստանի մէջ: Տես,

այն տեղումը քարերի կտորանք են զիգուած, զգուշացիր նոցա մօտենալու. մին էլ տեսնես կարիճը պոչը տնկած վրադ կը վազէ ու այնպէս կը ծակէ ասեղից սուր խայթով (կրճով), որ ցաւէն ամբողջ օր կը տանջուիս, երեսդ կը գունաթափի, սիրտդ ետ կուզայ, մահադուշակ նեղսրտութիւնը օրերով չի երթալ վրայէդ, ու խայթած տեղը ամիսներով կը տնքայ: Տես այնտեղ գետնի վրայ կարծես թէ քամին բերել ձգել է սարդիոստայն (մամուկի-բուն) և նորա մօտ կայ մի ծակ. չը լինի թէ մօտենաս և ոտայնին դիպչես. կայծակի տրագութեամբ մէջէն վրադ կը յարձակուի մորմ աւտուած գետնափոր սարդը, իւր բերնի չորս հատ թիւնաւոր աքցաններով կը խածնէ ձեռքդ, թուշդ, ճակատդ, կամ վեզդ. 'ի հարկէ, այդ խայթելէն չես մեռնիլ, բայց վայ այն քանի օրուան, որ պիտի անցնի մորմի խածնելու ու վէրքիդ ապաքինելու միջոցին: Ասում են թէ՝ չկայ այնպիսի կսկծալի ցաւ, որ հաւասարի մորմի խայթելուն: Տես, մի ուրիշ ծակ էլ կայ նորանից հեռու, այդ պիի ծակն է. այդ դա չունի մորմի արագութիւնը և նորա նման երեսիդ չի թռչում. բայց նորա խածածն էլ, ասում են, բաւականին թիւնաւոր է: Չափահաս պին ճնճղուկի մեծութիւն ունի, այդ ես ինքս աչքովս տեսայ: Նորա արտաքինը սարսափելի բան է, թաթերը, զլուխը ու բոլոր մարմինը բրդոտ, նայուածքը քստմենի, իւր ծակին մէջ պահուած ժամանակը մինչև անգամ նորա աչքերը փոսփորական լոյս են տալիս կատուի աչքի նման. առջևի թաթերը միշտ դէպի վեր են բռնած՝ իբր թէ ամէն բոլէ պատրաստ է կամ չարաչար յարձակուելու իւր թշնամիի վրայ կամ քաջութեամբ պաշտպանուելու նորա դէմ: Կարիճին, մորմին ու պիին պէտք է տեսնես խոպանացած արտերի ու դարերէ 'ի վեր անբնակ աւերակների մէջ, որ նոցա կատաղութեան մասին զաղափար ստանաս. այն որ բազմամարդ քաղաքներումն ու գեղերումն են կենում՝ հիւանդոտ արարածներ են: Ինձ հայերը ասացին, որ այս երեք կենդանիին և նոցա հետ օձասանդրը (scolopendra), առաջները չի կային նոցա տեղը, թուրքերի գալով միայն յայտնուել են. նոյնը ասում էին և մեծ մոկկի համար: Չը գիտեմ թէ որքան սուտ կամ ճշմարիտ է այս կարծիքը, միայն այն գիտեմ, որ նախ՝ Միջին-Ասիայի մէջ, որ թուրքերի բուն աշխարհն է, վժվժում են արդ թունաւոր միջատները և այդ վնասակար չորքոտանին, երկրորդ՝ Հայաստանի մէջ թուրքերի աներումը, արտերում և պարտէզներումը անհամար թուով շատանում են տարէջ-տարի,

և երրորդ՝ ուր հայր ոտք է կոխում, մի կարճ միջոցումը, հալածվում են նորա: Այս բանին ես ինքս տկանատես վկայ եմ: Թուրքի կեղտոտութիւնը և անհոգութիւնը դժուար է ոչ միայն հասկանալ, այլ երևակայելն անգամ:

Քանի որ մօտենում էինք Հայաստանի սրտին (Արարատայ՝ դաշտին) բնութիւնը աւելի և աւելի կերպարանափոխվում էր: Ամէն քայլափոխին հանդիպում էին մեզ սիրուն Տօբալներ, վայրի աղաւիններ, որ շատ անգամ այնպէս մօտիկ էին թռչում մեզ, որ հաւատաս, հրացանի մի նետուածքով կարող էի հինգ վեցը սպանել, եթէ պ. Չալսուշեան բարեկամս իւր բարի խրատը տուած չլիներ ինձ, որ Հայաստանումը շատ վատ հետեանքներ ունեցաւ: Ինձանից յետ Հայաստանի մէջ ճանապարհորդողն ես խորհուրդ կուտամ, թէկուզ քարն էլ ճաքի, անպատճառ ունենալ հետը շատ գէնքեր, որով նա ոչ միայն ապահովութիւն, այլ և զբօսանք ու վայելչութիւն կը գտնէ: Որսասէրը Հայաստան պիտի երթայ, որ համով երէններն ու չնաշխարհիկ թռչունների համը տեսնէ: Իսկ ձեւեր... պահ, պահ, պահ:

Ա.Լ.-Գէթ իջեանից սկսում են արդէն երևան դալ հայ սայլորդներ, որոնք, ճշմարիտ պէտք է տեսել, ձիերու հետ աւել գլծով ու խնամքով են վարվում, քան թէ թուրքերը ու մալականները: Հայ սայլորդին յանձնած ձիերը առաւել առողջ, դեր, վազուկ են լինում ու սայլը աւելի կարգի սարքի: Միայն մի անյարմարութիւն ունին հայ սայլորդները, որոյ մասին իւր տեղումը կը խօսիմ: Ա.Լ.-Գէթից մինչև Սիմեօնօվքայ, մալաքանի զիւղը, սայլորդները Շիրուանցի հայեր են, որոց խօսած բարբառը բոլորովին անհասկանալի է մեզ, որ անսովոր ենք ցայդ աստիճան հայ խօսքի աղճատութեանը. տաճկի ու պարսկի բառեր զործածելուն և ժողովրդի արագախօսութեանը: Մարդիկ ծիծաղում են Նոր-Նախիջևանի ոճի վրայ. թէ որ նորա լսէին Շիրուանցիներու բարբառը, մեր Նախիջևանի խօսքի մաքրութեան և զեղեցիկութեան փառք պիտի տային: Ափսոս որ՝ ոչ ժամանակ և ոչ յարմարութիւն ունէի՝ ի մօտոյ իմաստասիրելու այդ բարբառը, որ թերևս շատ լոյս պիտի ծագեցնէ հայոց լեզուի ու քերականութեան վրայ: Ժամանակէ ժամանակ այնպիսի խօսքի դարձուածներ էի լսում, որ գարմանում մնում էի: Շատ կամենում էի թէկուզ քանի մի բառ ու նախադասութիւն զրնլ. բայց, տարաբաղդաբար, ձեռքիս տակ ոչ թուղթ և ոչ մատիտ ունէի. միւս կողմից, սայլն անդադրում ցըն-

ցումը և սայլորդի արագախօսութիւնը մեծապէս պիտի արգելէին զրկուս:

Կէս ճամիին յանկարծ հորիզոնաձև զաշտազետինը սկսաւ դէպի հարաւ խոնարհելու այնպէս, ինչպէս որ Նախիջևանի Օրթայ Օպպէն բռնած դէպի Դօն գետը խոնարհում է գետինը: Խօսքս դարձանելով սայլորդին (վասնի զի պ. Օրբելին ևս ինձպէս առաջին անգամ ոտք կոխում էր այս տեղերը) հարցուցի «ինչո՞ւ դաշտը այդպէս խոնարհում է:» — Դէպի խրամ, ասաց, գնում ենք, հրէն (ահա) հիմի կարմիր-կամրջէն կանցնինք: — Եւ յիրաւի որ, քանի մի բույսէն երեսներիս զովութիւն սկսեց փչել, էլ մի քանի բույս անցած սկսան ուռնիներ, կաղնիներ, ընկուզենիներ, սօսիներ (չ ի նար), բարդիներ երևելու, որոնք բնութմէին խրամ գետի ափին, և այլևս մի քանի բույսից մօտեցանք և անցանք կարմիր կամրջից: Բւռն ուռն, ոտքս Հայաստան զրի վերջապէս: Խրամ գետը վրաստանի և Հայաստանի անջրպետն է. նա Հայաստանի ծաղկած ժամանակը միշտ եղել է սահմանադուի մեր հայրենիքին հիւսիսի կողմէն, բայց աւանդ աւանդ, խրամը մեր վրաստանցի եղբարց ուրիշ բան չի յիշեցնում, եթէ ոչ խրամուկի ձուկը, որ նա անորժակով ուտում է և աւելի անորժակով վրայից կոնծում է իւր սիրական կախեթուն:

Ուրեմն ևս Հայաստանումս եմ այժմ, վերջապէս կատարուեցաւ իմ վաղուցուայ ցանկութիւնը՝ երբ և իցէ ոտքս Հայաստանի հողին ղնելու: Ես կարծում էի թէ՛ հէնց որ հայոց հողի վրայ կոխեմ, իսկոյն աչքիս առջև կը հանդիսանան եթէ ոչ Հայկեր, Արամները, Վաղարշակներ ու Վարդաններ, զոնէ նոցա պայազատ, քաջ, անվահեր յեանորդները: Աւանդ, իմ յոյսերը ու ակնկալութիւնները այնպէս ցնդեցան, ինչպէս և շատ ու շատ յոյսեր մեր այժմուայ վիճակի մէջ ցնդել են: Ոչ Հայաստանը և ոչ նորա մէջի հայերը նման էին այն զաղափարներին, որն ստեղծել էի ես մտքումս և երևակայութեանս հեռաւոր ազգային պանդխտութեան մէջ: Բայց այս մասին ես, թերևս, երկարօրէն կը խօսիմ, երբ առաւել յարմար դիպուած կ'ունենամ, այժմ նայինք բանի վրայ սթափ խելքով ու բաց աչքով: Ոսկի երազները ու վառ երևակայութիւնը զրեթէ միշտ խաբել են հայերիս:

Եթէ Նոր-Նախիջևանէն ուղղակի, մի բույսի մէջ, ոտքս Հայաստան ղնէի, շատ կարելի է որ սաստիկ մեծ տարբերութիւն կը գտնէի իմ այժմուայ կենաց աշխարհի և իմ հայրենիքի մէջ, և

մտացոյց յափշտակութիւնը մեծ կը լինէր. բայց ամէն օր քայլ առ քայլ հեռանալով իմ մայրենիքէն՝ ետեւ ետեւէ տեսած տեղերըս շատ մեծ փոփոխութեան չէին ենթարկուում: Նախիջևանի և Տաք-Ձրի հողին, օղի և ջրի տարբերութիւնը այնքան մեծ չէ, որ մարդ տպւի. նոյնը իմացիր Տաք-Ձրի ու վլադիկաւկասի մէջ, նոյնը իմացիր վլադիկաւկասի ու վրաստանի, վերջապէս նոյնը պիտի ենթադրէի վրաստանի և Հայաստանի մէջ: Այսպէս ամէն օր առաջ զնալով՝ մարդուս ամենօրուայ տեսածի մէջ տարբերութիւնը այնքան աննշան է և մարդուս դիւրագգաժութիւնը այնպէս ընտելանում է, և բթամ-նում է, որ երբէք չի զարմանում և մեծ զանազանութիւն չի գրաւ-նում այն կէտի մէջ, ուստի դուրս է եկել նա և այն նպատակի մէջ, որին հասել է. սորա պատճառն է, ինչպէս ասացի, կամաց կամաց առաջ երթալն և ամէն օր, թէ և չնչին, բայց միշտ նորա-նոր բաներ, տեղեր, մարդիկ, և այլն, տեսնելն: Հայաստանի բնու-թեան հետ ես արդէն մօտաւորապէս ծանօթ էի վրաստանէն սկսած — նոյն տաք օդը, նոյն բոյսերի տեսակները, նոյն պտուղները, նոյն զետերի և առուների ձևերը, նոյն հալաւը ժողովրդի, նոյն երեսի տիպարքը մարդոց, թէ և փոքր ինչ փոփոխութեամբ, բայց չափու-յառաջ զնալուդ, և այդ՝ ամէն օր կամաց կամաց:

Այսու ամենայնիւ վրաստան և Հայաստան բաւական մեծ տարբերութիւն ունին իրարմէ. իսկ Հայաստանի բնութիւնը, նորա բերքը, նորա մէջ բնակող մարդիկ և նոյն բնակչութիւնը Նոր-Նա-խիջևանէն (իմ մայրենի քաղաքէն) այնքան տարբեր են, որքան որ երկինքը երկրէն: Այս տարբերութիւնը նկատելն և նորա ստորագրու-թիւնը անելն էր իմ ճանապարհորդութեան նպատակը:

Նոր-Նախիջևանի հողը սև է, իսկ Հայաստանինը, դէպի հիւսիս, գորշ է, մի փոքր առաջ՝ դեղնագոյն է, իսկ առաւել դէպի հա-րաւ՝ գրեթէ կեղտոտ — սպիտակի է մօտենում: Ես առաջին նուազ կարծում էի, թէ այդ կաւ է. բայց յետոյ իմացայ, որ այդ կարծած կաւը՝ աշխարհիս երեսին ամենապտղաբեր հողն է եղել — արտադրութիւն ոչ կենդանիների ու բոյսերի լուծման (փտութեան), այլ հեղեղատների միջոցով սարերից վայր եկած պատուական բուսահող, բոլորովին նման այն տղմին, որով բեղմնաւորվում է նեղուսեան հաւակաւոր հովիտը (Նդիպտոսը): Հայաստանի հողը այնքան հարուստ է քիմիական բաղադրութիւններով, որ մի և նոյն դաշտի վրայ կարող են բուսիլ աշխարհիս երեսին գտնուած ամէն յայտնի

օգտաւէտ բոյսերը, արիշ ցորենից բռնած մինչև բամբակը ու նուշը, հաւամբով ծառից բռնած մինչև նռան թուփը: Չկարծեմ որ ուր և իցէ գտնուի Հայաստանի դեղձի ու ծիրանի նմանը: Հայաստանի տանձը ս ի ա օ փ ի քաղցրութիւն ունի. Հայաստանի խաղողը ուտելէս յետ ամենաքաղցր թէյն հասարակ ջրի տալաւորութիւն էր անուամբ բերանիս մէջ: Հայաստանի հողին հող չի հասնիլ, և եթէ մի փոքր մշակուի նա, այն ժամանակ մեր հայրենիքի ամէն մի խորշիկը անհատական ոսկեհանք կը դառնայ մշակողի համար: Բայց... Հայաստան ամայի է ու խոպանացած... Ըստ չափու առաջ դնալու ես կը նկարագրեմ թէ ինչո՞ւ ամայացաւ և խոպանացաւ մեր դրախտանման Հայաստանը:

Քանի որ խորանում էինք դէպի ներքսակողմը Հայաստանին, այնքան թռչուններու տեսալները շատանում էին, նոցա փետուրի գոյնը աւելի ու աւելի ցոլուն էին դառնում և ինքեանք նոքա աւելի խոշոր ու սիրուն էին երևում մեր աչքին: Ձիերու ոտերի տակից հազարաւոր հօբալներ ու լօրեր թռչում ու անհետանում էին անսահման անապատի մէջ. սանդրով յոպոսները տարմերով թռչում էին աջ ու ձախիս. կաղնադուաւները, կապտագուաւները, բրէտակերները ու մանր բազէները անհամար թռուկ նստոտած էին հեռագրի թելերի վրայ ու անվախ աչքով ճանապարհ էին ձգում մեզ. թափաղուկս արէղաձագերը, որոնց կարելի է Հայաստանի բնիկ թռչուններ անուանել, մրջինների բազմութեամբ խորդում էին ճամփու վրայ, դաշտի մէջ ու օդումը վեր ու վայր թռչոտելիս: Այսպէս որ ամառուայ վերջերին էր, ապա ի՞նչ պիտի լինէր Հայաստանի երեսը, երբ զարնան օրերը բնութիւնը զարթնում է իւր մեռելանման քնէն, դժուար է մինչև անգամ երեակայելը: Ի դուր չէր ուրեմն մարդոց ինձ ասածը թէ՝ «Հայաստան ճանաչել ուղողը զարնան պիտի տեսնէ նորան», բոլորովին հաւատում եմ: Միտս զալիս է Պուշկինի մէկ խօսքը՝ «Մնաս բարև, ամայի, պատառոտած Հայաստան»: Երևի թէ խեղճ ուս բանաստեղծը, ինձ պէս, աշնան օրերն է տեսել մեր հայրենի աշխարհը:

Թէ ես և թէ իմ ուղեկից Ա. Օրբելին, առաջին անգամ լինելով այս կողմերը և տեղական պայմաններին անծանօթ լինելով, առած չէինք հետեւս ոչ մի կտոր ճամփու սլաշար (թէև դեղձ տանձ ու ծխախոտ բաւական շատ ունէինք), ոչ թէյ և ոչ շաքար: Այդէթ իջեանումը, վայ նաչարին, ինչ ասես ուտելու բան ու մի

շնչէլ երկբայելի կախեթու ճարեցինք. բայց որ յոգնած, ծարս ու
անօթի հասանք Սաւա հլուի իջևանը, մեր յուսահատութիւնը
չափէ դու անցել էր, փոքրական թէ յի ժամակը, իսկ նորա հետ
էլ մեր ախորժակը բոլորովն հանել էր (դուք գիտէք որ սոփորութիւնը
առնալու ժամանակը բռնաւորն է). ես չգիտեմ ինչ պիտի լինէր մեր
«հայր» եթէ իջևանում մի ամենաքաղաքավարի երիտասարդ, որ
նունը Պապիկեանն է, մեզ չառաջարկէր մի բաժակ թէյոյ: Մենք մի բա-
ժակի տեղ երեքը ախորժակով խմեցինք, ու նորից ընկանք քանա-
պորհ: Միւս անգամ իջևանում արդեօք այդ քաղաքավարի երի-
տասարդին, թէ ոչ, բայց նա թող վատահ լինի, որ երբէք չեմ մո-
ռանալ նորա հիւրասէր վարմունքը ինձ հետ: Երբ որ ճանապարհ ընկանք, արեւը արդէն փօս էր մայր մըտ-
նելու, արեւմուտքի կողմ սարերը ոսկի գոյնով էին ներկւում, իսկ
միւս կողմերինը ծիրանեգոյն էին, բոլորովն նման այն դաշտանկար-
ներին, որոնք սլաակերացնում են Խալիւայի քնու թէպտ տնտարանները:
Այն այն սիրելիներ, գեղեցիկ է մեր հայրենին, գեղեցիկ է նա մինչև
անգամ այս Լքեալ, վայրենացեալ վիճակի մէջ, ուր ես տեսնում էի
այժմ նորան: Մէկ ձգում էի աչքերս մուգ կապուտ երկնքի վրայ,
մէկ ներկում ճեռաւոր սարերի վրայ ու մէկ այն անհուն դաշ-
տերի վրայ, որոնք չորս կողմից պատում էին մեզ: Չէ, որբացած ու
այրիացած կնկայ չէի նմանեցնում մեր անգին Հայաստանը, այլ այն
խաթուն մօրը, որն իւր ամուսինին ու որդոցը ճամփեւէ հեռաւոր
աշխարհ և այժմ ինքը, աչքերը դուռը, սպասում են նոցա վերա-
դարձին: Չէ, հայերս էլ Լքած ու մոռացած չենք մեր զաւակասէր,
ու բազմակարօտ մօրը, այլ միայն երկնքի պարզուելուն ու ճամփաների
շտկուելուն ենք նայում որ զօտիներս կապենք, ցուպերը ձեռքներս առ-
նունք ու մեր ըղձալի յետադարձ դաղթութիւնը կատարենք: Մենք
Լքած չենք Հայաստանը, այլ միայն ժամանակաւորապէս թողել ենք
նորան: Այդ բանը այստեղի թուրքերն էլ լաւ գիտեալով զգում են:
Նայեցէք, ով նոյնանից հաստատ բնակութիւն դրել է նորա մէջ:
Թուրքերը մինչև անգամ տներ չունին Հայաստանում (խօսքս քանի
մի հարուստ բեգերու ու խաներու վրայ չէ). մի քանիսը լուսից վա-
խեցող խլուրդների նման գետնափոր որջերում են կենում, միւսները
ցխի կտորներ իրար վրայ դնում են ու արջերու բունի նման մի բան
չենում են ու կենում են մէջը:

Ճամփու վրայ տեսայ հողէ կոյտեր. «հարցուցի սայլորդէն:

Թուրքի գեղ է, ասաց նա: «Ես այստեղ ոչ մարդու և ոչ անասունի հետք չեմ տեսնում», ասացի ես:—Նորա այստեղ չեն այժմ, եայլախ են գնացել, պատասխանեց սայլորդը: Եայլախ կը նշանակէ ամառային տեղափոխութիւն դաշտավայրերէն դէպի սարերը. եայլախը երկու նպատակով է կատարվում. մէկ որ դաշտային տեղերի օթը և արիւնարբու մոծակները անտանելի են մարդոց ու անասունների համար. երկրորդ՝ ամառը դաշտերի խոտը չորանում է, ջրերը ցամաքում են, ուրեմն անասունների համար ոչ ուտելիք և ոչ խմելիք է մնում. իսկ սարերի մէջ թէ խոտը և թէ ջուրը անպակաս են և օդը աւելի բարեխառն. այս պատճառաւ եայլախը անհրաժեշտ պայման է Հայաստանի մէջ Թափառող քրդերի ու Թուրքերի համար, որոնց միակ հարստութիւնն է ձիերու երամակը, արջառը ու խաշնը: Հայաստանի աւերուելու ու խոպանաւորու գլխաւոր պայմաններից մինն է այս կիսավայրերի ազդերու եայլախ անելը, որոյ մասին ես աւելի մանրամասնաբար կը խօսիմ ուրիշ տեղ, եթէ հարկը պահանջէ:

Ինչպէս վերեւ նկատեցի, հայ սայլորդների ձիերը, ըստ մեծի մասին, լաւ վիճակի մէջ էին — առողջ, առոյգ, գէր, ուժեղ, ու սայլերը բարեկարգ: Այս մասին բացի գովասանքէ ուրիշ ոչինչ ասելու չունիմ. դորա հակառակ Թուրքերի ու մալազանների ձիանք վատ ուժ, քօսոտ, կեղտոտ, և նոցա սայլերը կոտրած փշրտած, անիւները խարխուլ: Ալ-Գէթ իջլանից մինչև Զուղա, մի փոքրիկ բացառութեամբ, բոլոր սայլորդները հայեր էին: Կարծես թէ հայ ճանապարհորդի համար դորանից էլ լաւ բան չէր կարելի լինիլ, այնպէս չէ, պատուելի կարգացող: Բայց զուտ սաստիկ կը սխալիս, թէ որ այդպէս կարծես. վասն զի հայ ճանապարհորդի համար հայ սայլորդը այնպիսի անտանելի անձն է, որի նմանը շատ հազիւ կը գտնուի այս լոյս աշխարհումս:

Հայ սայլորդը, ինչպէս և ամէն տեղի հայեր, հէնց որ տեսաւ թէ հայ մարդու հետ զործ ունի, իսկոյն զանց առնում է նորան տալու յարգը, պարտքը ու պատիւը, արհամարհում է իւր պաշտօնը ու պարտաւորութիւնը, մոռանում է իւր և առջևը կեցող մարդու յարաբերութիւնը, մոռանում է ամենահասարակ մարդավարութեան կանոնները. ոչ միայն աշխատում է նորան հաւասարուելու, այլ ամէն հնար փնտրում է մի ոտք առաջ կոխելու ու նորա գլխու վրայ նըստելու. յանկարծ նորա վազը կ'իջնուի սկսում են ծուլանալ ու յամբարաբայլ առաջ են գնում. երկու ժամի ճանապարհը անցնում են 4-5

ժամու մէջ. ճանապարհին երեսուն — քառասուն անգամ ձիերուն կանգնեցնում է, մէկ՝ նոցա լուծերը իբր թէ ուղղում է, մէկ՝ դուռ դալ ի փոկը իբր թէ ամրացնում է, կարձ՝ հազար ու մէկ սուտ ու մուտ պատճառներ գտնում է ճամփորդին յուսահատեցնելու: Եթէ նորան մի խրատ կամ յանդիմանական խօսք ես անում, նա քթի տակից տրտնջում է, իսկ շատ անգամ նաև բաւականին բարձր ձայնով կոշտ ու կոպտ պատասխաններ է տալիս և յետոյ, իբր թէ ձիերուն, բայց իրօք ճամփորդին այնպիսի սոսկալի մայրապիղծ յիշողներ է տալիս, որոց նմանը, հաւատացէք, Ռուսաստանի քարաքներումն (օղեսուն) անգամ լսելը անհնար է. հաւատ, մեռն, մօրը ծիծը, մօրը կաթը, և այլն և այլն, ամենը պղծվում են նորա անսանձ բերանի մէջ... Պիղծ մարդիկ: Այսպէս վարվում է հայ սայլորդը միայն հայ մարդու հետ, թէկուզ լինի նա ստոր դասակարգէ, թէկուզ բարձր աստիճանաւոր. իսկ եթէ իմանայ նա որ ճամփորդը ռուս է և թէկուզ լինի նա հասարակ զինւոր կամ ստոր աստիճանով պաշտօնատար, այն ժամանակ հայ սայլորդէն քաղաքավարի մարդ չես գտնիլ աշխարհիս երեսին: Ինչո՞ւ այդպէս է. ինչո՞ւ ցայդ աստիճան ատելութիւն, արհամարհանք, անպատկառութիւնք դէպի իւր համադրին և ինչո՞ւ այդքան ստրկանման խոնարհութիւն դէպի օտարը. արդեօք դա մի անյայտ վեճ է, որի պատճառը կորչում է պատմութեան մանուածքի մէջ, թէ՞ նախանձ է, թէ՞ վստահութիւն է, որ իւր հայրենակիցը ներողամիտ կը լինի նորա թերութիւններին և անպատիժ կը թողնէ նոցա — ես չհասկնայ. բայց այն հաստատ զիտեմ, որ հայ սայլորդը աշխատում է ամէն հայ ճանապարհորդի մի հնարով սիրտ ցաւցնելու, և հակառակ դորա, ամէն կերպով աշխատում է օտարի սիրտը շահելու, թէև այդ ստորաքնարչ շողորորթութեանը օտարը երբէք հաւատացած չէ, ուրեմն նորա աշխատանքը միշտ կորել է և միշտ էլ կորչելու է: Տղիտութիւն է, կասէք: Երկբայումեմ: Այս բանը միաբերան հաստատում են ամէնքը, որք միանգամ սուրհանդակով ճանապարհորդել են Հայաստանի մէջ:

Մի անգամ մի հայ սայլորդ ցայն աստիճան ինձ յուսահատեցուց, որ բարկութիւնս վերջին աստիճանի հասնելով, ես առ ժամանակ մի «ուրոյն» ի մի կողմն ծալեցի՝ ազգասիրական զգացմունքներս, և զորս դու պատուիրեցեր լաւ ներկեցի ու խոշոր խոշոր սպառնալիքներ էլ կարդացի զխուռն, և, ի՞նչ մեղքս պահեմ, դադարեցայ հետը հայերէն խօսելու, սկսայ ռուսերէն ասելու ասելիքս և

այնուհետև, երբ պէտք էր լինում նոցա մի բան ասել՝ ես խիստ ձայնով, հրամայաբար էի խօսում հետերը, եւ այդ օրից սկսած մինչև վերջը հայ սայլորդները մտան իրենց վայելուչ սահմանի մէջ, և մեր ճանապարհորդութիւնը շարունակվում էր, խաղաղ և արագ: Աւրիմն ձմարիտ է, որ ասիացի ժողովուրդը (ուրեմն և հայը) առաւել վայտին է լսում, քան թէ մարդկային խօսքին: Աստուած տայ, որ այդ կարծիքը սուտ լինի:

Զօր-Արիս իջևանին որ հասանք, ժամը արդէն զիշերուայ տասներկուսը կը լինէր: Երկինքը թէև սլարդ էր ու աստղերը իրանց բոլոր ցոլքով վայլում էին, բայց գետնի վրայ ոչինչ չէր տեսնուի: Եթէ ձիերը բնազդով ճամփան չի գտնէին, շատ հեշտ էր մոլորուելը այս ամալի դաշտերի մէջ, ուր մարդկային բնակութեան ոչինչ նշան չի կարող մի ձայն օդի, ոչ մի կայծ կրակի հովիւներու խարոյկի մէջ: Սօղանյութի իջևանապետը առաւօտը արդէն մեր սրտումը կասկած ձգել էր թափառական թուրք աւազակների մասին, որոնք իբր թէ 3—4 օր առաջ, մի ռուս աստիճանաւորի բռնի իջեցրել են սայլեց և բռնաբարել են հետը գտնուող կողակցին ու նորա քրոջը, վրայի քողը կողոպտել են ու այնպէս ճանփայ են դրել: Ուրիշ անգամ քսան հինգ հոգի աւազակ յարձակուել են արքունի սուրհանդակի վրայ, սպանել են սայլորդին, նամակաբերին, ու թիկնապահներին (չափառ), որ արքունի փողը, միլիոնէն աւելի, փախցրել են: Մի ուրիշ անգամ էլ ճանապարհորդներին ձիու կառքով ճամփէն հանել են, տարել են մօտակայ անտառը, ձեռքերը մէջքերին կապել են ու սայլի անիւի վրայ դրած նոցա վզերը՝ թրով բաժանել են գլուխները մարմնից: Այսպիսի սիրուն անցքերի պատմութիւնը, մեծ զիշերով ու այլ պիսի վտանգաւոր տեղերումը երբ միտքդ է դալիս, կարծեմ, շատ լուր տպաւորութիւն չի անիլ վրայ: Գարձեալ յիշոցներ տուի իմ խեղճ բարեկամ Խաչատուր Զալիսուշեանին, որ իւր խոհեմ խրատներով արգելադրութեղաւ հետս առնելու հրացանս և ատրճանակս, որոնք այն րոպէին, երբ նոցա տէրը չորս կողմից շրջապատած էր հազար ու մէկ երեւելի և աներեւոյթ թշնամիներով, ինքները հանգիստ ու անօգուտ կեցած էին տանս մի խորշումը: Դիցուք թէ մի որսի հրացանը և մի փոքրիկ ատրճանակը չնչին սլաշտպաններ են տասնեակ կատաղի աւազակների դէմ: Բայց փորձառու մարդիկ ասում են թէ սլաշտպանուելով սպանուելը զրեթէ անզգալի տանջանք է մարդո՞ր համար: Ես չեմ երևակայում ինձ առաւել խայտառակ և ամօթալի

մահ, քան մի քանի քօսոտ թուրքերէ բռնուել, կապուել ու յիշմար որչափի նման վեղը դնել նոցա թրի տակ: Տէր Աստուած, եթէ դու թէ ինձ և թէ իմ զաւակներիս պատրաստել ես մահ թշնամիի ձեռքէն, թող զայն (մահը) թշնամիի հետ դէմ առ դէմ կռուելիս և ոչ թէ նորամէն, ինչպէս զոհի դառն անպաշտպան դու գլուխը ծռած մորթուելիս:

Հայ մարդը, որ իւր ամենաշնչին ապրանքը աշխատում է ամեն նախանգ զնով վաճառել, ինչո՞ւ իւր ամենապատուական գանձը, որ է նորա կեանքը, այդպիսի արժանի զնով վաճառում է միշտ: Զարմանում եմ: Ասում են թէ, միայն երեանի գաւառը տարին տարին կան վաթսուհի հոգի առոյգ, չափահաս, ժիր հայ մարդիկ զոհ է բերում քանի մի կեղտոտ, տգէտ, ցնցոտ թուրք աւազակների: Ամա՞ չում են:

Երբ այս ու այսպիսի բաներու վրայ էինք խօսում ընկերին հետ, յանկարծ նորա միտքը եկաւ, որ հետը ունի մի ռէվօլվէր, և որովհետեւ ինքը խաղաղասէր բնաւորութեան տէր էր, ես ձեռքէն առի զէնքը, խոստացայ ցվերջին գնտակը պաշտպանել նորան և ինձ թուրք աւազակներից, ու ռէվօլվէրը կախեցի դօսիէս:

Մի զարմանալի ու անմեկնելի ազդեցութիւն ունի զէնքը մարդու վրայ, հէնց որ մարդ առնում է նորան իւր ձեռքը՝ իսկոյն կերպարանափոխվում է, վախկոտը դառնում է քաջ, վեհերոտը՝ դիմազրաւ ու փոքրոգի՝ յանձնապաստան. աւազակ, մութ գիշեր, դարան, արիւն և այլ այսպիսի քստմենքի բաներ, ինչպէս մառախուղը արեւ գակից, ցնդվում ու փարատվում են. մարդս զիտակցութիւն ստանում է իւր մարմնաւոր և հոգեկան ուժին, էլ իրան չի զգում անտէր, անպատուար և նշաւակ ամէն կերպ զրկանքի:

Որովհետեւ իմ ընկերը, լինելով տէրութեան պաշտօնատար, ունէր «բաց թերթ», որն տալիս է իրաւունք ամէն իջլանումը պահանջել ձիաւոր թիկնապահների, Զօր-Արխումը մենք պահանջեցինք, որ նոցանից երկու հոգի մեզ ուղեկցեն: Թիկնապահները, որոնք մեծաւ մասամբ թուրքեր (sic) են, սկսան իրանց զանազան սուտերը ու խորամանկութիւնները գործ դնել որպէս զի հետերս չի գան: Հաւատացնում էին սոսկալի երդումներով, որ ճամփորդ գ են երաւը տարել է նոցանից այսքան հոգի, արքունի փոստան տարել է այսքան հոգի, խոտ ու դարման զնելու համար զնացել են այսքան հոգի, այսքան ձի էլ հիւանդ էն, ergo մարդ չի կայ, որ մեզ ուղեկցէ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Պ. ԱԴԱՄԵԱՆԻ*)

ՊԱՏԿԵՐԱՀԱՆ ԵՒ ՄԵՂՈՒՆ

Քաջ նրկարիչ մը, որ ունէր համբաւ
Աշխարհիս առջև տաղանդովն անհուն,
Թաղուհւոյն կողմէն պատուով կանչուեցաւ՝
Որ զինք նրկարէ. նրման եւ նաշխուն:

Գնաց. և Թաղուհւոյն ներկայացուցին,
Որ ճոխայարդար, մենակ յիւր խրջիկ
Պառկած, հովահար բռներ էր ձեռքին,
Միւսողն ալ շոյէր իւր որսի շնիկ:

«Հա՛ ողջամբ եկիր» բսաւ. «պատրաստ եմ.
Տարազովն Աստղեկան, ծն զիս նրկարէ,
Դիր շուրջս ծաղկունք, հեշտութեանց զեղեմ.
Միայն իմ գեղս զանոնք թող գերազանցէ:

Մատն անցունց վարպետն իւր ներկայունակ՝
Եւ կտաւն իսկոյն ծեփեց մութ գոյնով:
Ու ճարտարաշարժ, գիտուն վրձնոյն տակ
Դուրս ցայտեց զլուխ մը գողտր երանգներով:

*) Պ Աղամեանը՝ Կ. Պօլսոյ և Թիֆլիսի հայկական բանի զարդն ու հոգին՝ միևնոյն ժամանակ մի... փոքրիկ բանաստեղծական ձիրք ունի. Նորա գրուածքների հաւաքածուն լոյս է տեսնելու մօտերումս պ. Սենեքե-րիմ Արծրունու ծախիւք: Ընթերցողները գուցէ գոհ կը լինին մեղանից, եթէ՝ կամենալով մի թեթև գաղափար տալ պ. Աղամեանի՝ իբրև պովէտի վրայ՝ զետեղում ենք հանդիսիս մէջ նորա մի քանի բանաստեղծութիւն-ները:

Քանի որ կտաւին զարնէր ըզվրձին,
 Հոն կենաց հետք մը, շուշան մը թողուր.
 Տայր նմանութիւն զշնոյն պերճ անձին,
 Մինչ սա արվեստերն դիտէր մունջ ու լուռ:

(* ԳԵՂԵՄԱՆԻ Փ ԴԵՖ. ԴԻՊԼՈՄ ԲԱՑԱՆՆԵՐԻ)

Հինգ նիստէն վերջը, երբ օր մը մենակ,
 Վարպետը պատկերն խնամօք աւարտէր՝
 Դուռը բացուեցաւ, և մի նըւիրակ
 Ծանոյց թէ, զշնոյն գայ և բամբիշներ:

Մըտաւ թագուհին, ու նկարին առջև
 Կանկ առաւ լուրիկ, ակնոցով դիտեց
 Պատկերն և ըսաւ. «շուքերն են շատ սև»:
 Յետոյ դառնալով իւր տիկնանց՝ յարեց:

«Գու՛ք ասէք, խնդրեմ, սա ինձ կը նմանի՞.
 Ասէք, իմ գոյնը այսպէս մթիւն է.
 Տեսէք, աչքերս՝ որ աշխարհ հաւնի՝
 Մութ ստուերաց մէջ ծածկեր պահեր է»:

«Վարդ կարմիր այտերս, այսպէս նկարեալ
 Ո՛չ փայլ մը ունին, և ոչ ալ հրապոյր.
 Կարծես՝ պատարի պէմք է զառամեալցնս մտաւ
 Որ 'ի դերեզման հայի մահաթոյր»:

«Ո՛չ, չէ՛ք, ջնջեցէք» ասաց, «խնդրեմ, շուտ,
 Հասկցայ, դուք դէմք չէք կարող նկարել».

Գծեցէք լիւններ, ձորք ապաւաժուալ,
 Մակայն կօշկէն վեր ջանացէք չէնել:
 Այսպէս օհաւ գողար զշնոյն, այլ կտնջան,
 Անհամբեր, ոտքովն ծեծէր ըզգետին,
 Բազմոցի մը վրայ դիրքով վալաշտ
 Փռուած սեւեռէր աչքն առատաւղին:

Այլ, այսուհանդերձ, նկարն էր նրման

Եւ հրաշալի, պարծանք վարպետին.

Զի նկարիւր էր ոճով Ֆլաման,

Յորում միշտ մրցի լոյսն ընդ ստուերին:

Իսեղճ նրկարիչը սրտէն վերաւոր,

Հոն՝ իբրեւ քարէ արձան մը կենար

Զայրացած, սրտին բաղխմունքն ահաւոր

Զանար խափանել աջովն, որ զողար:

Այլ նոյն պահուն իսկ ձայն մը բզզանաց

Տաղտկալի լուծիւնն ընդհատեց մէկէն.

Մեղու մըն էր այն, որ խոտորացնաց

Ներս էր մտեր անվոյթ բաց պատուհանէն:

Իբրեւ թէ մի լուր ուզէր հաղորդել՝

Ամենուն զատ՝ զատ, ականջին բզզաց.

Յետոյ քրչիկ մ' ալ խաղաց քնարին թել,

Եւ լըռեց իսկոյն նուազերգուն ծաղկանց:

Դ.

Նկարին այտերուն վրայ հանդարտիկ

Թառած էր. վարդին կարծելով նրման,

Եւ հոն կը թափէր փրփուրն ոսկեղնիկ՝

Որ ի ջուրց՝ ծնունդ տըւին Աստղիկան:

Նրկարիչն յանկարծ զոչեց, «Թագուհի՛,

Տեսէք, մեղուն իսկ ճանչցաւ ձեր այտեր,

Հոն թառած, կարծէ նկւթ քաղել մեղրի,

Մինչ զուր ասէիք, թէ ձեզ չէր նմաներա:

Պչրող թագուհին մեջեց. «վերջապէս»,
 եւ մօտ կանչելով նկարիչն՝ ըսաւ.
 «Եր խոստովանի՞ս, որ վարդըն իմ այտին
 Տեսնելով մեղո՛ւն նոյն իսկ խաբուեցաւ»:

«Ջի այսքան օր է, որ քեզ կուտամ նիստ՝
 Գովեստի բաւ մը չի լսեցի բերնէդ.
 Վրձինը ձեռքըդ՝ կ'աշխատիս հանգիստ.
 Անտարբեր կերպով, նայուածքդ անհեթեթ»:

«Փորձառութեան ալ ունեցիր արուեստ,
 եւ այս դիպուածը քեզ լաւ դաս մ' ըլլայ
 Գիտցիր որ կինը կը սիրէ գովեստ.
 Դշխոյ, սպասուհի, ինչ կ'ուզէ ըլլայ»:

«Եղբ'ր նորատի, ունեցիր հանճար,
 Գեղեցիկ արուեստ, ոսկի, ամեն բան.
 Արժէք մը չունիս բնաւ կանանց համար՝
 Թէ բերանդ իրենց չըլլայ գովաբան»:

Այս ըսաւ դշխոյն, եւ ձեռքըն փափուկ
 Կառկառեց նկարչին՝ զոր պագաւ խոնարհ.
 Յետոյ ժպտելով ասաց. «այ մանուկ,
 «Օ՛ն ինձ հետեւէ, պատկերն ալ հետդ առ»:

Ա Ռ Ա Կ Ա Ղ Ա Ի Ն Ե Ա Յ

Պատուհանիս շատ մօտիկ՝
 Այգաճաղկին տերւոց տակ
 Զոյգ մ' աղաւնիք բնակէին:
 Արուին գոյներն կապոյտ գորշ,
 Թւերն կանանչ, մթներանք,
 Էգը գողտր էր, խանդակաթ,
 Զեան պէս ճերմակ, այլ 'ի դրուխ
 Ունէր դեղին ապարօշ:

Արու՛ւն է՞ք, թուէր թէ՛
 Միմեանց շատ սիրէին.
 Կտուց կոյի, թւափար,
 Արուն «կուկու» մեղմ մնջէր,
 Յետոյ էգըն հեռանար՝
 Եւ օրուն մէջ սաւառնէր.
 Երեկոյին գայր ի բոյն,
 Ձագուց սընունդ կը բերէր:

Արու մ' օտար մոխրագոյն
 Սիրահարեալ էր էգին.
 Բունին դիմաց, ծառոց մէջ
 Ըսպասէր որ տէրն երթայ.
 Եւ սրաթըռիչ կը մանէր
 Ի բնակարան հոմանոյն.
 Չերկնչելով նախանձին
 Հետեանքէն, թարուն գայ:

Փետրացրցիկ օրն ի բուն
 Արբենային ի տուփանս.
 Իրիկունն երբ սիրելին
 Թողոյր զխշտին սիրելոյն,
 Էգն ըսպիտակ ուղեկից
 Կերթար իրեն քիչ հեռուն.
 Եւ գար յետոյ ընկերին

Գարձն ըսպասէր յիւրն ի բոյն:

Սակայն օր մ' ի պատուհան
 Ծաղկունքըս երբ ջըրէի,
 Յուլիսի մէջ, ուր արեւ
 Հնոցի նման հուր թափէր,
 Ահա՛ յանկարծ գորշ արուն՝
 Աղանեկին կողակից՝
 Կասկածելով վրայ հասաւ
 Տեսաւ ոճիրն վատշըէր:

«Կուկու՛ւ» երգերն զաղբեցան,
 Կտուց կտցի՛ մահացու՛,
 Երկուն արու՛, և մին էգ,
 Կռիւ օջաւն թշնամիք:
 Կարմիր արեան կաթիլներ,
 Իբրև նրշանք մատնութեան,
 Շուտ շիկագոյն ներկեցին
 Ձիւն փեսուրներն խեղճ իզին:

Երկու արուքն վէրք առին.
 Ձագունք բոլոր ցրուեցան.
 Ու փճացաւ թւաւոր
 Բոյնին խոնարհ զերդաստան:

Էգ աղաւնին մահացու
 Հարուած մ' առաւ իր կողին.
 Բակը ինկաւ ու խորաիկ
 Եղաւ քաղցած մեր կատուին:

«Ահա այսպէս ապօրէն»
 Կըսէր մայրըս սիրասուն,
 «Սէրը տուններ կը քանդէ,
 Աղաւնեկին մինչ ըզջոյն»:

Ա Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Մ Ո Ւ Ս Ի Ն Ք

Դատաստանի՛ մը ատենին առջև
 Խեղճ մարդ մը ելաւ, նիհար ու փոքրիկ,
 Պոռալով սաստիկ՝ իբր թէ ըլլար խււ:
 Գոչեց. «Տեարք իմ, ճն ինձ ըրէք մըտիկ.
 «Դժոխքէն վիժած
 Կին մը ունիմ,
 Փրկեցէք ինձ,
 Թէ չէ՛ մեռնիմ»:

Թէ զիտենայիք ինչ գորովով
 Սիրեցի կինս, բոլոր սրտով,
 Այլ նա սիրոյս չէր հաւատար,
 Ամուսնացիր հետս անպատճառ,
 Կ'ըսէր, սիրոյդ յայնժամ հաւատամ:
 Ամուսնացայ իբր անզգամ,

Իսկ արդ զղջամ.
 Օն մեզ բաժնեցէք,
 Ինձ ազատեցէք,
 Ըստ օրինի,
 Անօրինի
 Իմ կնոջմէն
 Վրէժս առէք,
 Զի թոյն ունի նրման իժի:
 Արժանի է բիւր պատիժի:

«Փողոց որ ելլենք,
 Երբէք մենակ չենք.
 Երիտասարդներ
 Թիթեւօրիկներ
 Քիթերնին ակնոց,
 Կոշիկնին կճռոց
 Ու երկայն օձիք,
 Եւ պզտի տոտիկ,
 Մեզ ամեն կողմէն
 Կը շրջապատեն
 Ու խօսին ցածէն:

Տէր Աստուած, որքան ալ ծանօթ ունի,
 Իսկ օր մ'անհամբեր իրեն հարցուցի.
 Ո՞վ են, ըսի, այս պարոններ:
 Վեր վերցուց ընթուին,
 Ժպտով ծաղրաղին

Ըսաւ, «Մօրեղբօրս որդիքներն են»:

«Օ'իս, տանը հատիկ
 Մօրեղբօրորդիք
 Որք ընտանեբար
 Եւ մտերմաբար

Կը դառնան չորսդին,
 Կոտրտունին, ծռուն.
 Տանը հատը քիչ մը շատ չէ՞,
 Ըսի իրեն. այնպէս չէ՞:
 Նա զլուխը շարժեց
 Ու պատանխանեց.
 «Հինգ մօր կողմանէ,
 Հինգ հատ ալ հօրմէ,
 Շատ բնական է՝
 Ու կարծեմ շատ չէ՞»:

Այո, սակայն իբր ազգականի
 Ըսի փոքրին չանբնական
 Երևին ինձ այդ կերպերը:
 Տեսնողն չըսեր այդ տղաքը
 Որդիք մօրկան քոյ եղբօրը:
 Զի առաւել քան ազգական
 Քեզ պատիւ տան, շուրջըդ դառնան:
 Նա ինձ գոչեց. «ալ չըռէ»,
 Հանդիստ թող զեւ, պանանձէ.
 Դիտողութիւնք չեմ ուզեր:
 Այս ամենուն անտարբեր
 Եթէ ըլլալ բնաւ չուզես,
 Լաւ է այժմէն ինձ արձկես:

Այո.

Լաւագոյն է բաժնրւինք,
 Քան թէ այսպէս միշտ կռուինք.

Զի նախանձիտ ես,

Զի կասկածոտ ես,

Հետս ով որ տեսնես,

Սիրահար կարծես:

Բ.

Ո՛հ, սակայն մի օր, օր աղէտալի.
 Երբ իւր սենեկին ես դուռը բացի,
 Մեծ եղաւ ցաւըս, զարմանքս, երբ տեսայ
 Մարդ մը, կնոջնս մօտ ու ծնկան վըրայ:

Ձիս որ տեսան,
Շատ շուարեցան.
Կնոջըս թեւէն բռնեցի,
Նախ աղէկ մը ցնցեցի,
Յետոյ ըսի.

Տիւր ինծի շուտ պատասխան.
Ո՞վ է այս մարդն, որ ոտքիդ տակ բռնեցի:
«Կօշկակարս է. ըսաւ, ապուշ, չե՞ս տեսներ,
Որ գետինն նստած, ոտքիս չափն առնէր»:

Ձայնով մը խեղդուկ,
Իբրեւ փախուկ,
Պռռացի:

«Միտքըդ դարձեալ զիս խաբէ՞լ է.
Անցեալ օր ալ կ'ըսէիր թէ,
Մօրեղջօրըս որդին է:
Միթէ սա ալ նոյնը չէ»:
«Այո, ըսաւ, հանդարտաբար,
Ըսածըս բնաւ չեմ ուրանար,
Մօրեղջօրորդիս է, այո,
Այլ արուեստով կօշկակար:
Ո՛հ, ալ այս անգամ կոկորդըս նեղցաւ.
Այս խոշոր սուտը ծակին մեծ եկաւ,
Եւ ճիշդ այն պահուն վազեցի փողոց՝
Կատղած խենդի նման, աչքերըս ի բաց,
Առաջին դէմըս հանդիպող խեղճին
Վիզը ցատկեցի՝ պոռալով ուժգին».

Կըրակ կայ, կըրակ,
Տունըս, տեղս քանդեց
Կընիկս անառակ:

Մարդն ինձ զթալով հոս առաջնորդեց:
Հիմայ, դատաւորք,
Ճիշդ եւ անողոք
Արդարութեամբ դատեցէք,
Ձիս կնոջմէս բաժնեցէք»:

Նախագահը եղունդները զննելով
Եւ զըլուխը մէկ քանի հեղ շարժելով

Բացաւ բերանն իւր ըստն
 «Երբոր այնքան սիրեցիր,
 Որ քեզէ կին ընտրեցիր,
 Պէտք է սէրըդ նորոգես:
 Գուցէ ընթացքն իւր ուղղես:
 Կինըն զողորմիկ և անուշ
 Ղարդ մ'է, որ շատ ունի փուշ:
 Ոյլ որ բռնամունքն իւր վայել՝
 Փշոց խայթումս ծածկերէ»:
 Յայնժամ թշուառ էրիկն իսկոյն
 Պատասխանեց. «Նա՛ ծծի թոյն
 Ունի, տէր իմ, եւ հրէշ մ'ըն է,
 Ինձ կը խաբէ, ու սէր կեղծ է:
 Եթէ անփուշ վարդ ալ լինի,
 Ալ չէ ինձ բնաւ ընդունելի,
 Թէ հրեշտակի ունենայ թև,
 Սրտին մէջ կրէ դժոխք ու դէ:
 Այս գիշեր իսկ քնոյս մէջ տեսայ ես որոշ,
 Որ պոչ ունէր ու կրակավառ գոյգ կտորշ:
 Այն, տէր իմ, նա պոչ ունիցս
 Այլ նորեկուկ ու ղեղանիս
 Զգեստին տակ ծածկէ զաղտնիս:
 Դատաւորն երբ զայս լսեց,
 Ըջալիւ ծիծաղն իւր զօպեց:
 Յետոյ հարցուց. «Պոչն ըզգեստով ծածկեցիր,
 Այդ շատ լաւ, բայց եղջերներն ո՞ւր, պահեցիր»:
 Պատասխանեց անտարբեր,
 «Զանոնք ալ ինձ է յանձնեալ:

Լեռնաբլուզնակ,
 Ծրվե մենակ
 Իմ Մանկչակ,
 Սիրազուշակ:
 Նա Մանկութեան,
 Նորեկ գարնան,
 Է նախնական,
 Ժպտին օրրան:
 «Գարնան վրեժն»,
 Մենջէ, «Ծաղրն եմ»,
 Յուրտ ձմեռն դէմ,
 Կեանք աւետեմ:
 Ընդ տերեօք՝
 Փրշոց ի գող
 Փրթթին անհող,
 Զերթ համեստ քորթ:
 Եւ սիրահոծ
 Իւրեանց ի ծոց
 Թըւի կայ բոց՝
 Մերթ սիրոյ խոց:
 Յետ վարդենայն,
 Ծաղիկ սիրոյն,
 Է սիրաբոյն,
 Խօսնակ կուտոյն:
 Զինքը քաղեն
 Զեռք ձիւնեղէն,
 Դաշտավայրէն,
 Կամ անտառէն:
 Զի իմ ծաղիկ
 Է շատ հեղիկ,
 Յամեն վայրիկ
 Բուսնի լուիկ:
 Նա կուտութեան
 Է ծիածան,
 Եւ լուրջ նըշան
 Անմեղիկեան:
 Նա ժերկնաբոյր
 Սիրոյ համբոյր
 Եւ սպասման
 Զերաց սամոյր:

*) Բնապատուճք այդպէս կ'անուանեն այս ծաղիկը (la violette de
 Parme) որ ընդհանրապէս աշնան և ձմեռուան վերջերը կուճի, և իւր
 անուշահոտութեամբը ամայացած անտառակիւն և բլրոց զարդն է: Քանի
 քանի հեղ Վոսփորի եզերքը չըջանաւո՞ղ զեղանդկար փանց վրայ կ'եր-
 թայինք ման դալ սիրելի բարեկամաց հետ եւ այս ծաղիկն փունջ կը կուզ-
 մէինք բաւականի զփուլարութեամբ: որովհետեւ զիւրաւ չի գտնուիր, զի
 կաղամախի զեղնած ու լայն տեղիներուն կամ ջամաք թփոց արմատնե-
 րուն տակ ծածկած կը բուրէ, իբրեւ առաջին և կամ յետին նախախայրիք
 բնութեան շքեղութեանց:

Հողեկան ձիւքերս մոռ
կարողութիւններս
Իւր մարմնոյնս մէջ
ձարպ են դարձերս
Իւր են կոպերս զի

Եւ միշտ ձկացնէ
Թ'ամեն բան գիտէ
ձիւդ ալդ ձեռով
Իւր բութ մտաց
Խաւարն յայտնէ:

Լոյսին մէկերեւար
Գընա տարիդ մէջ
Ըսի. ի խաւար
Ձի հոն բնակիլ
Ե քեզ յարմար:

Երկայնամիտ չէ
Որ ուսմունք սիրէ.
Թող տայ քաշենք
Թէ ակաջներն
Երկայնցնէ:

«Այս ի՞նչ անպիտան
Արարած անբան»
Ըսեն ամենքն.
Լոկ խօսիլը
Թէ իմանան:

Այլ աշխարհիս վրայ
Անպէտ բան չըկայ:
Նա էլ, զիտցիք՝
Պաշտօն ունի՝
Ամենօրեայ:

Ջայն ճանչցողները մտկերը

Շուտ ըզգան յարգը որոցար

Իմաստունին հոգան դուր

Ահա հայտնի մի բան

Իւր պաշտօնը մի բան

Իսկ անտանելի

Յաւ կը տայ գլխի.

Հիւանդութիւն

Է ունկրաց

Շատ տաղտկալի:

«Ո՛ր քարն որ շարժեն

Ե՛ս կ'ելլեմ տակէն», մտկեր

Այսպէս կ'ընէ հաստ մտկեր

Պարծենալով մի բան

Անմատչէն:

Այլ քար մը կայ,

Թէ դնեն իւր վրայ՝

Անոր տակէն,

Կ'աղաչենք որ

Երբէք չելլայ:

Պ. Ն. ԱԴԱՄԵԱՆՑ

Ի Կ. Պօլիս:

մտածումն չմ'ի սկսի.

մտածումն ճաղաղի

մտածումն մեղի

չոքի կուտի

մտածումն թող

կտրէ միջոցովն.

կտրէ մտի տակովն

կտրէ մտի տակովն

կտրէ մտի տակովն

կտրէ մտի տակովն

... 1846 թվականին ...
... 1846 թվականին ...
... 1846 թվականին ...
... 1846 թվականին ...
... 1846 թվականին ...

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Արարատեան ընկերութեան տեղեկագրի առիթով)

Մեզանում ընկերութիւնները առաջին անգամ սկիզբն առան
Տաճկաբնակ հայոց մէջ: Քսանահան և երեսունական թուականների
անձոնի կռիւը, որ բուցուել էր Պօլսոյ ուղղափառ և կաթողիկ հայ
եղբարց մէջ, բնականապէս ազդիւս կրթուած և զարգացած անդամ
ներին մեծ վիշտ էր պատճառում և միանգամայն բարոյական պարտա-
կանութիւն դնելով զոցա վրայ՝ յառաջը առնելու այնպիսի երևոյթ-
ներին, որոնք լոկ ազիրութեան հետևանք էին: Միայնակ զեղը այդ
ցաւին կարող էր համարուիլ կրթութեան, ուսման և գիտութեանց
ծառայումը ազդիւս մէջ: Եւ ահա ուղղափառ և կաթողիկ հայերից
իննը հոգի, այն է Մ. Սամանձեան, Յ. Տալութեան, Ա. Լութֆեան,
Խ. Գազազեան, Յ. Վարդանեան, Կ. Թիւլպէնտձեան, Ս. Ասկէրեան
և Ս. Ազնաւուրեան, որոնք մեծ մասամբ Մուրատեան և Ռաֆայէլեան
վարժարանումն էին կրթուած, 1846 թուի ապրիլի 1-ին բերայի մէջ
մի ընկերութիւն կազմեցին «ամազգեաց» անունով, որի կանոնադ-
րութիւնը խմբագրեց Վենետիկ վանքի միաբան Պետրոս վարդապետը:
Ընկերութեան նպատակն էր Անատոլիայի հայաբնակ քաղաքներում
և գիւղերում դպրոցներ բանալ, երկրագործութիւնը ծաղիկեցնել,
ազգային հնութիւնները պահպանելու համար մի թանգարան հաս-
տատել և հաւատոյ խնդիրները քննելուց բոլորովին հեռու պահել
հայերին: Ամենայն անգամ պարտաւոր էր ամսական տասը շուրջ
վճարել ընկերութեան սնդուկին: Այս ձեռնարկութիւնը այնպիսի
լաւ ընդունելութիւն գտաւ ազգայնոց կողմից, որ կարճ միջոցում

ընկերութեան անդամների թիւը հասաւ մինչեւ 600-ի: Այդ միջոցում հայ կաթողիկոսների պատրիարքական զահի վրայ բաղմամբ էր Հասունեան Անտօն. վարդապետը, որին Համազգեաց ընկերութեան յառաջադիմութիւնը վտանգալի էր թուում, որովհետեւ երկիւղ էր կրում, որ չլինի թէ հայ կաթողիկ երիտասարդների ջերմեռանդ մասնակցութիւնը ազգային կրթութեան գործի մէջ միասակար լինի կաթողիկոսութեան համար: Հասունը կամեցաւ կործանել այդ ընկերութիւնը, վասն որոյ հրաժարելով արձակումէն և հաղորդութիւն տալ ընկերութեան կաթողիկ անդամներին, յայտարարեց միեւնոյն ժամանակը Հռովմայ պապին, որ իւր կողմից մի կարգինայ ուղարկեց Պօլս տեղի ու տեղը ամենայն ինչ քննելու: Թէպէտ կաթողիկ անդամները նմանապէս դարձան գրով Հռովմայ պապին և իւրեանց ձեռնարկութեան անմեղութիւնը և բարի նպատակը բացատրելով, օրհնութիւն էին խնդրում, բայց 1850 թուին Հռովմը հրաման արտ. Հասունին կործանել. այդ ընկերութիւն, որ միանգամայն սպառնում էր հայ կաթողիկոսներին իւրեանց մայրենի Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը դարձնել: Ոմանց կարողացաւ համոզել Հասունը հեռանալ Համազգեաց ընկերութիւնից, բայց իւր ժողովրդից շատերը հաստատա մնացին իւրեանց եռանդի մէջ և ընկերութիւնը ստիպուած էր պատերազմ բանալ այս գերապայծառի դէմ: Իբրեւ նախաափնը Հասունին, Համազգեաց ընկերութիւնը իւր ծախսով մի մեծ քարուկրէտուն շինեց Բերայի մէջ, անուն տալով դորան Եկեղոն և խորհրդարան Համազգեաց ընկերութեան: Այն ժամանակ Հասունը բողոքեց Օսմանեան տէրութեան, որին դարձաւ և ընկերութիւնը պաշտպանութիւն գրտնելու մոքով: Բարձրագոյն Դուռը, քննելով ընկերութեան կանոնագիրը, համաձայն Հասունի ցանկութեան վճռեց, որ ուղափառ հայքը անդամ չընդունին և ընկերութիւնը միանգամայն կազմուած չլինի հայ կաթողիկոսներից: Թէև այս վճիռը չընդունուեցաւ, բայց և այնպէս անդամների եռանդը սառեց և փոքր առ փոքր քայքայուեցաւ այս գեղեցիկ ձեռնարկութիւնը:

Թէև անդրանկութիւնը տուեցինք մենք Պօլսոյ Համազգեաց ընկերութեանը, բայց ճշմարտութիւնը պահանջում էր ասել որ դեռ 1843 թւի յունվարի 1-ից Վիեննայի Մխիթարեան հայ կաթողիկ վարդապետները մի ստորագրութիւն բացին. «Արամեան» անունով ընկերութեան անդամ գրուելու: Իւրաքանչիւր անդամ գրեցրդ պէտք է տար Վիեննայի Մխիթարեան միաբանութեանը հարկեր ապստրիական

Ֆիզիկն բաժանորդագին և փոխարէնը կարող էր ստանալ մի մի օրինակ ընկերութեան տպագրութիւններէց: Բաժանորդագները կազմում էին մի անշարժ մայր գումար, որոյ միայն տոկոսէքը կարող էր գործ դնուիլ տպագրութեան վրայ: Ընկերութեան նպատակն էր ուսումնական և բանասիրական աժան գրքերի տպագրութիւնը: Հայ լեզուաբան գրքերի ընտրութիւնը և բոլոր գործերի կառավարութիւնը թողած էր միաբանութեանը և անդամ գրողները գործի մէջ խառնուելու իրաւունքից զուրկ էին: Յիշեալ 1843 թւից մինչև 1857 թիւը այդ «Արամեան ընկերութիւնը» 37 անգամ ունեցած, որոնցից շատերը երկու երեք և մինչև հինգ բաժանորդագին են վճարած: Ընկերութեան զրամագլուխը 1857 թւին հասնում էր 5900 արծաթ Ֆիզիկին կամ մօտ 5600 ռուբլի: Այս գումարի 13 տարւայ տոկոսով ընկերութիւնը սպած է ընդամենը եօթը զիւրք, որոնց մէջ ամենից նշանաւորն է Յ. Ն. Չազրճեանի «Հայոց պատմութիւնը»: Յիսունական թուականների վերջերին ընկերութիւնը դադարեցաւ և 5900 Ֆիզիկինը Մխիթարեան միաբանութիւնը անիրաւաբար իւրեան սեփականացրեց:

Պօլսոյ Համազգեաց ընկերութիւնը գրգռեց Զմիւռնիայի Հայոց եռանդը. սորա ևս 1847 թւին ազգիս մէջ ուսումն տարածելու նպատակով մի ընկերութիւն կազմեցին «Միւսնեաց» անունով: Ներսէս V Աշտարակցին, որ նոր էր բարձրացել կաթողիկոսական գահը, շտապեց թիֆլիսից օգնութիւն հասնելու այդ ընկերութեանը, նուիրելով դորան 1848 թւին բաւականին նշանաւոր գումար: Բայց և այնպէս այս ընկերութիւնն էլ երկարատեւ չէր: Դորան յաջորդեց նոյն Զմիւռնիայի մէջ «Հաշտենից» ընկերութիւնը, ապա «Վասպուրական» և ապա «Աղքատասիրացը», որ մինչև հիմայ էլ կայ, յիշեալ քաղաքի քանի մի հարիւր Հայ աղքատներին խնամք տանելով:

Սեր ունեցած հաշիով յիսունական թուականներին Տաճկաստանի (և Եգիպտոսի) այլ և այլ քաղաքներում բացած ու վաղ թէ ուշ գոցուած ընկերութեանց թիւը հասնում է 23-ի: Սակայն այդ դեռ ոչինչ է համեմատելով ընկերութիւններ կազմելու այն եւ ուսուրի հետ, որ ստացան Տաճկաստանի Հայք իւրեանց «Սահմանագրութիւնն» հաստատելու օրից: 1860 թւից սկսած ամէն օր Պօլսոյ և միւս նշանաւոր հայաբնակ քաղաքներում կամ մի պարբերական հանդէս է սկսւում, կամ մի ընկերութիւն ծագում ազգի մէջ լոյս և զիտութիւն տարածելու մտքով: Այդ երկու ձեռնարկութիւններն

էլ, ի հարկէ, նշան են ճաճ կատանի հայ հասարակութեան շարժման ղէպի կենդանութիւն, բայց մի և նոյն ժամանակը դոցա կարծառական կեանքը ապացոյց է այդ հասարակութեան զարգացման առաջի քալարտիւրի: Երեսունութի չափ պարբերական հրատարակութիւններ ծագեցան Պօլսոյ, Իզմիրի և Վանայ մէջ և մօտ 42 զանազան ընկերութիւններ հանդէս եկան 1860—1870 թ. Տաճկարեակ հայոց մէջ, որոնցից շատերը ուշադրութեան անգամ արժանի չեն: Ահիւ միայն երկու ընկերութեանց վրայ պիտի խօսինք այստեղ, որովհետեւ մէկը իւր արդիւնատը ընթացքով և միւսը իւր ունեցած միջոցներով տեղ պիտի բռնեն ազգիս զարգացման պատմութեան մէջ: Առաջին ընկերութիւնը «Անճունէք» անունն էր կրում: Այդ ձօն առնուն կողմ ընկերութեան գործունէութիւնը թէ և համեստ, բայց շատ արդիւնաւոր: Ով որ ելել է Պօլսու և կամեցել է հայ գրավաճառանոցների հետ ծանօթանալ, անշուշտ տեսած ունի հայ գրավաճառների նահապետին, Յարութիւն Էփէնտի Մարգարեանին: Այս բարձրահասակ նիհար մարդը, միշտ սպորնած և տկարոտ, բարի ղէվքով, երեսուն թէ քսուստուն տարի առաջ բացած է առաջին կանտնաւոր գրավաճառանոցը Պօլսոյ մէջ և իւր խանութից այդ երկար միջոցում մատակարարած է ընդհանուր հայոց ազգին բազմաթիւ զբոսի և պարբերական հանդէսներ: Հնդկաստանից սկսած մինչև Բուսաստան ամէնքը պիտի յիշեն Մարգարեանի տպագրած օրացոյցները, ժամագրքերը, սաղմոսները, հեղարանները և այլն, որովհետև ուրիշ տպագրութիւնները այնքան ևս կեղծ և անվաւեր էին համարոււմ, որքան մեր օրերում կեղծ դրամութիւնները: Մեծ բարոյական ճիգ պէտք է թափէին նոր երեցող գրավաճառները, որպէս զի արժէք արանային մանաւանդ զաւտացի հայոց աչքում և կարողանային մարտել Մարգարեանի հետ առևտուրի մէջ: Բայց Մարգարեանը միմիայն իւր շահի ետեւից ընկած գրավաճառ չէր, դա տպագրող էր, մասնակից էր ազգային յառաջադիմութեան ձեռնարկութեանց, դա մի ժամանակ հոգիէր հայ գործող — երիտասարդութեան: Անցան տարիք, հասաւ ծերութիւնը և այսօր Մարգարեանի փոքրիկ թոցոտ խանութում միմիայն կարելի է գտնել հին և սակաւազիւ տպագրութիւններ...: Այնու ամենայնիւ և այսօր զաւտացի հայք ամբողջ ժամերով ողորտու մի Պօլսոյ փողոցների մէջ Մարգարեանի խանութը գտնելու և նորա ձեռքից հեղարան ստանալու համար, այսպէս է հինօրեայ աւանդութեան գորու

Թիւնր: Այս գրի գուցէ ծանօթ է գաւառացի հայ գիւղացոց ձրգ-
 տումը ղէպի ուսումն, նոցա կրած աս ու վախը և հազար ու մէկ
 սիրտ ճմրդ պատմութիւնները այնքան, որքան Յարութիւն աղային,
 օտարական հայերի այս սիրած մարդուն: Ահա ահ ու դողով մտ-
 նում են նորա խանութը Հայաստանի խորքերից եկած երկու երեք
 հայ մշակներ և հեգարան են հարցնում: Մարգարեանը, բարի ժպի-
 տը երեսին, տալիս է նոցա ուզած տետրը և հարցնում է ճրտեղից են,
 երբ են եկել, ի՞նչ գործի, ի՞նչ համբաւ հայրենիքից: Սիրտ են առ-
 նում ինդ՝ մարդիկը ու իրանց ցաւերը մէկ առ մէկ պատմում
 Յարութիւն աղային, ապա սյս կողմը այն կողմը շուռ տալիս տե-
 րակը, գլխի վայր բռնած բաց են անում հեգարանը և խորը նա-
 յում տպածի վրայ, թէ և ամենեւին կարդալ չգիտեն, աս քաշում
 ու ծոցից հանում մի լաթի մէջ փաթաթած փարանները, ա-
 ծում Մարգարեանի առաջ: Նոյն իսկ Մարգարեանի բերանից կա-
 րկի է լսել, որ յիսուն վաթսուն տարեկան հայ մշակներ, գիր չգի-
 տեալու փեսաները տեսնելով, որովհետեւ շատ անգամ իւրեանց ա-
 նունով մութ հակ են տուած աւելի մեծ գումարի քան թէ պարտ-
 էին, դիմած են նորան և ամբողջ ոսկիներ խոստացած, որ միայն
 գրել կարդալ, մտնալանդ ազգանունը ստորագրել սովորցնէ իւրեանց:
 Ահա այս տեսակ շարժաւիթներից զրոյում և չբաւականանալով
 իւր հազարաւոր օրինակ ձրի բաժանած զրքերովը Մարգարեանը
 1860 թւի օգոստոսին ձեռնամուկս եղաւ մի ընկերութիւն կազմելու
 «Անճառէր» անունով: Այս ընկերութեան անդամները ոչինչ չէին
 վճարում, բայց պարտական էին չիրեն բնակած տեղին մօտ բնակող
 «նոթեհ» ազգայնոց կարդալ չգիտցող եղբայր ու քր երթալով և
 «ազգէն նուիրում մէկ մէկ քերական իր հետը տանելով, այլապէս
 «մինչև ֆէն գրերը ձրիաբար սովորցնել և այն անձին ձեռագրովը
 «անունը գրել տալու ջանքը ի գործ դնել, առանց փոխարինարար
 «նուէր մ' ընդունելու: Բայց եթէ ուսանողը մեծ ստիպումը ընէ
 «ընծայ մը տալու ընկերութեան, անդամ եղողին չվերաբերիր: այլ
 «անիկայ ազգային պաշտպանութեան տակ գտնուող որր և անտէ-
 «րունջ զաւակաց: Արդ այս ընկերութեան անդամ եղողը պիտի
 «ըլլայ ամէն թաղէն չորսական հոգի, որոնք կարգաւ մէկ մէկ շաբաթ
 «կերակի օրերը իրենց պաշտօնը պիտի կատարեն, բայց է որ չորս
 «կիրակին անգամ մը ամէն մէկ անդամին սխարաքն է անպատճառ սով-
 «րեցնել, իրենց սովահանեալ տեղը երթալով, որ ընկերութիւնը

«Իրենց պիտի ցուցնէ»։ Այս քանի է ընկերութեան կանոնադրութեան
 գլխաւոր կէտը։ Մի և միայն ժամանակ Պօլսոյ ազգայինը հրաւիրուած
 էին իւրեանց կարողացած ընդգրկները տնկարդ դրքերը և այլն նուի
 րել այդ ընկերութեանը, որ անմիջապէս դաւանացի ուսանող մշակ-
 ների ձեռքն էր անցնում զընկերութիւն սովորելու համար։ Որքան
 ուրախութիւն պատճառէր Պալատիայի և Բերայի փոփոցներում ծնւած
 նում էքսպրտի տակը հանգիստ առնող հայ չափահաս մշակներին,
 կողքի վրայ կրթնած հայերէն ընդիր կամ գրքոյ կարդալիս, մինչև
 որ բեռնակրութեան կանչին իւրեան։ Քանի քանի հայ մշակներ այս
 քսան տարւայ մէջ ընթերցանութիւն են սովորել Պօլսոյ մէջ Մար-
 դարեանի ստեղծած ընկերութեան ձեռքով և Հայաստանի խորքերը
 վերադառնալով հեղափոխական ժողովրդականութեան և զիմամբ։ Ս. յս-
 պէս էր Պալատիայի ընկերութեան պտուղը բայց դժբաղդաբար, քանի
 մի տարի առաջ մտած էր զազարեցան, ինչպէս ասում են, քանի մի
 խանութից անձանց շնորհիւ։

Երկրորդ ընկերութիւնը, որի անունը կուգէինք յիշել, դա Պօլ-
 սոյ Բարեգործական ընկերութիւնն է։ Սորա նպատակն էր Հայաս-
 տանի մէջ տարածել երկրագործութեան արհեստը և զիւրացնել, ու
 որքան անպիտան չուէր քառասուն տարւոյ տեսուհի տալ։ Հաւաքելով մինչև
 3000 օսմանեան ռուսի, որ մօտ 27,000 ռուբլի է անում, ընկերու-
 թիւնը գանձական պրոդաճաներով շուտով դարձանք իւր գործունէութե-
 թիւնից և մայրօր յիշեալ զրամագլուխը անգործ մնացած է մի հա-
 րոնտ վաճառականի մօտ տոկոսով։ Բայց թէ մինչև երբ և որչա-
 նապատակաւ ցուցանի չէ ոչ մէկ ոչ Պօլսեցի անտրամներին, որոնց
 կողմից քանի մի անգամ յարուցուեցաւ այս հարցը ընդորոթեան
 միջոցաւ։ Ինչպիսի ցամաքի մի մասագոյց ինչ ինչ հասցով տեղ մէկ
 ղիտցումն միջնա մի մ լմբոյցու հայտնիք սովոր մի մի միջնա
 դադամից տոկոս լմնաւ մ լմնաւ ծղորդ գլխաւոր այսու լմնա
 լմն Պէտք է դիտենալ, որ ճաշկաբանի հայքը մինչև այսօր 96
 պարբերական հրատարակութիւններ են սկսել և կարծ միջոցում
 դարձան լավ թանկեղէն թուականներին Պօլսոյ և Իզմիրի մէջ ա-
 մենայն դրամեղէն էր խմբագիր դառնալ։ Ուստի մարանների աշա-
 կերտները անգամ ձեռնամուխ էին լինում ընդգրկանութեան։ Այ-
 նուհետև Մարդարեանի «Անձնուէր» ընկերութիւնից օրինակ առնե-
 լով, զարմանալի արագութեամբ բազմացան Պօլսոյ թաղերի մէջ կի-
 րախօրեայ դասարանները, բայց սոքա էլ ապագայ շունեցան։ Եւ

տով Խսկանեցաւ ընկերութիւններ կազմելու հիւանդութիւնը որ անարակելով անյարաքաղաքի թաղերը անցնաւ գաւառները: Սակայն անոր երկրէն երեք տարի անց իսկու իստաութեամբ երիտաւարներ, անուանց մեծ մենայն դրամական միջոցի, բայց բարի ձգտումներով Կիւրդի ընկերութիւն էին կազմուած: որ Լեւոնից Կապուսկան անուն տալով զորան: Սկզբում Կոնստանդնուպոլսէն օգնելով թաղականներին բայց յետոյ այդ ընկերութիւնները դիմեցին ինքնակրթութեան հաստատելու խնայաններ և ընթերցարաններ: Մի ժամանակ ամեն թաղի մէջ հրապարակական դաստիարակութիւններ էին լինում: այդ խնայաններում և բերեմն Դառի առարկան լինում էր տեղութիւն Կապուսկանի, ներկայի և անցաւի վրայ մի ժամանակ դասի մէջ ամբողջութեամբ: Ետագալիք անունը պիտի տայինք այդ խնայաններին: Եթէ երբեմն երբեմն ամբիոնի վրայ հանդէս դուրս եկած էին քանի որ մի պատկանելի անձինք իւրեանց հմուտ Դառերով: Խնայանները հաստատող ընկերութեանց տեղը բռնեցին ընթերցարաններ: բացող ընկերութիւնները և այլն: Եղան թատրոններ հաստատող, զիբեր տպագրող, արհեստներ ուսուցանող և այլ տեսակ տեսակ ընկերութիւններ որոնք շատ հորձ էլինած անհետանցան: ստացաւ Կիւրդի ընկերութեան

Այս բոլորը վերաբերում է այն մօտիկ անցեալին, երբ ճաշկառքնակ հայ հասարակութիւնը Կիւրդի առաջին քայլերը էր անում արնկերական և անդդային պարգեցման ասպարիզի վրայ: Երբ ընկերութեան տարւայ ազգային գործունէութիւնը Պօլսոյ մէջ ցոյց տալիս բարեբաղդաբարի որ այնտեղի հայք աւելի լուսնի ընթացքն բռնում և աւելի հաստատ ու պինդ քայլեր են անում դէպի Եստաւոր Մեր խօսքերին ապացոյց կարող է լինել Պօլսոյ Արարատական ընկերութեան անցեալ երեք տարւայ գործունէութիւնը: Միայն հետևում ստանալ հայք էլ իւրեանց բարոյական պարտականութիւնը կատարելով օգնութեան ձեռք մեկնեցին Պօլսոյ Արարատական և Կիւրդի քայլերը: Արևելեան և Եւրոպական ընկերութեանցը և ինչպէս ցոյց տուինք, այդ նիւթական օգնութիւնը պէտք է մեծ լինի, եթէ հայ անուան արժան պէտք է գտնուին թիւսն. Արդի Յանկորդ շենք համարում ծանօթացնել ընթերցողներին այդ ընկերութեանց գործունէութեան հետ: (Սկզբում 1876-77-ի 6781-8781) անցաւ և

Արարատեան ընկերութիւնը նպատակ ունի Հայաստանի մէջ ձրիապէս ուսումնական և հաստատուած: Կ. Պօլսոյ մէջ 1876 թիւ ապրիլի 15-ին. թէև ամեն հայ անական 10 յուրուշ (պիղնա):

վճարողը կտրուի անգամ գրուիլ, բայց անքի առաջ ունենալով որ
ճաճ կաստանի զանազան ժամանակ կաղնած ընկերութիւնները խա-
փանուել են անդամների կամ անգործունէութիւնից կամ անկիրթ
բնութիւնից, Արարատեան վարչութիւնը ամէն միջոց գործ է դնում
մեծ ընտրութեամբ ընդունիլ անդամակցութեան ցանկացողներին:
Ընտրելով իւր գործունէութեան անպարէզի համար նախ վանք իւր
շրջակայքով, ընկերութիւնը զգաց որ իւր նպատակն յառաջ տա-
նելու համար մարդիկ չունէ. ինչպէս յայտնի է ուսուցիչների պատ-
կասութիւնը այսօր դեռ ընդհանրական է ազգիս համար: Սկզբում
դա միտք ունեցաւ Պօլսոյ մէջ գտնուող հայ պանդուխտ երեսփոխից
« ազգային վարժարանների մէջ դնելով կրթել և յետոյ դաստիա-
ւորակութեան պաշտօնիւ ի հայրենիս ուղարկել », բայց շուտով հա-
մոզուեցաւ, որ աւելի օգտաւետ է նոյն իսկ հայրենի աշխարհի մէջ
սկսել իւր փորձունէութիւնը: Դժբաղդաբար, Արարատեան ընկերու-
թեան բացուիլը ճաճ կաստանի և մանաւանդ Պօլսոյ հայրիկ ամենա-
տնայնող ժամանակում պատահեցաւ, երբ օսմանեան տէրութիւնը
դրամական վտանգալի տագնապի մէջ էր, երբ այդ թագաւորութեան
արժէթիւթերը այն աստիճանիւ ընկան, որ դեռ երէկեան հազա-
րաւոր ոսկիներ ունեցող հարուստը այսօր յետին աղքատութեան
հասաւ: Աւելացնենք սորա վրայ օսմանեան գոյութեանը սպառնացող
ստրաստիկի պատերազմները, որ տեղի ունեցաւ այս վերջի տարիները
և որ միանգամայն խանգարեցին տաճկահայատականների բարօրութիւնը
— հասկանալի կը լինի, որ մի այդպէս ժամանակ ամենայն անհատ
զբաղուած է իւր անձնական հոգսերով, մի կողմ դրած համարա-
կաց պիտոյքները և շահերը: Այնու ամենայնիւ ևս այդպիսի նեղ
ժամանակ վերոյիշեալ երեք ընկերութիւնները ոչ միայն գոյութիւն
ստացան Պօլսոյ մէջ, այլև տոկոսն ազգասիրական ջանքով օրէ ցօր
ընդարձակում են իւրեանց գործունէութիւնը ցած մասնակցութեամբ
« Արարատեան » ընկերութեան երեք տարուայ տեղեկագրերից իւր
մասում ենք, որ դորս անդամների թիւը եղել է՝ 1876-77-ի միայն 46, հոգի
1877-78-ի տարին (1877—1878 թ.) — 46, 1878-79-ի տարին (1878—1879 թ.) — 70: Եւ այնպէս
Սեղ շատ ուրախացում է ընկերութեան իւր անդամների այս-
պիսի զգոյշ ընտրութիւնը, որովհետև սորա մէջ չէ կայացած նորո՞ւ
նոյն իսկ յարատեւութիւնը: Ով միայն ծանօթ է Պօլսոյ հայ հաճ

սարակութեան հետ, նա պիտի տեսնէ որ այս ընկերութեանը անդամակցողները բոլորն էլ եռանդոտ, բայց և ծանրաբարոյ երիտասարդներն, բոլորովին նոր ոյժեր, որ վաթսուռական թուականների գործունէութեանը պատասխանատու չեն: Թէ և այս պարոնների ազգասիրական ջանքը պիտի գրգռէ շատերի ցանկութիւնը անդամակցելու, բայց ըստ մեզ, յուսով որ Արարատեանի վարչութիւնը այսուհետեւ եւ պիտի գործ դնէ իւր զուշութիւնը դոցա ընտրութեան մէջ, մանաւանդ որ այս կողմից ունեցած նիւթական վնասը միշտ տասնապատիկ աւելի պիտի վարձատրուի նուիրատու բաժանորդների օժանդակութեամբ: Մեր հետաքրքրութիւնը շատ զրաւեց այն նուիրատու բաժանորդների ցանկը, որ տպած է «Արարատեան» ընկ. տեղեկագրերի մէջ: Պէտք է կարծել, որ այդ ցանկերը մօտաւորապէս ցոյց են տալիս այս կամ այն հասարակութեանց տրամադրութիւնը, անգլիական զարգացումը և նիւթական կարողութիւնը, և կամ վերջապէս յետադիմութիւնը ու սաղնաարտութիւնը, թէ և ի հարկէ, միմիայն «Արարատեան» ընկ. ցանկերով դեռ որեւիցէ ճիշդ եղբայրացութեան չի կարելի դալ: Այնու ամենայնիւ պարտք ենք համարում յետոյ խօսիլ և այդ մասին:

Խօսք չկայ, որ ամենայն ընկերութեանց գործունէութեան շրջանը կախում ունէ նոցա դրամական միջոցներից: «Արարատեան» ընկերութիւնը ստացած է ընդամենը

Ա. տարին — 70 օսմանեան ոսկի
 120
 1960

Ընդամենը մինչև տարիի 30-ն ներկայ 1879 թուականի ընկերութիւնը եկամուտ ունեցել է 2150 օսմանեան ոսկի, որ 91/1 ռուբլի հաշուելով մօտ 20,425 ռուբլի է անում: Պէտք է գիտենալ, որ այդ գումարը աւելի քան թէ կրկնապատիկ էր համարելու, եթէ օսմանեան և ազա ռուսի արժեթուղթերը այս վերջին տարիները շատ ընկած չլինէին, որովհետև եթէ նուիրատուութիւնները օսմանեան ղուրուշների և մեր ռուբլիների հաշուով համարելու լինենք, բաւական մեծ գումարի է հասնում: Որինակ 1878—1879 թ. ընկերութեան նուիրատուներից գոյացած հասոյթը Պօլսոյ մէջ հասնում է 57,516 ղուրուշի, որ առաջուայ արժուութեամբ պիտի գոյացնէր մօտ 4,026 ռուբլի, այնինչ այդ գումարը այժմ հազիւ տալիս է 93 օսմանեան լիւրայ կամ մօտ 883 ռուբլի:

4 տիկնայք և 36 պարոնայք—112 ուրիշ վերջապէս մեր Ռուսիա-
բնակ հայերից՝ 1) նուիրաբերութիւն են արել թիֆլիսում 2 կրօնական,
17 տիկնայք, 382 պարոնայք տուած են 1775 ուրիշ և Վանայ հրկիզելոց
համար ընդունուած նպաստներից (Մշակի խմբագրութեան միջոցաւ)
—1000 ուրիշ, Ախալքալաքում 4 տիկնայք և 73 պարոնայք
432 ուրիշ, Գաւառը գիւղի բնակիչները (առանց թիւրքոյշերու) 417
ն: Յարիցին 49 պար. —417 ու: Բագու 1 քահանայ 2 տիկնայք և
115 պարոնայք—351 ու: Ղալար 48 տիկնայք և օրիորդք պաւնց
արական քեռի մասնակցութեան—339 ու: Երևան 1 քահանայ, 38
տիկնայք և 91 պարոնայք—303 ու: Գանձակ 1 քահ. 1 տիկին
և 47 պարոնայք—266 ու: Նոր-Նախիջևան 2 քահանայ, 1 տի-
կին և 48 պարոնայք—170 ու: Փոթի 47 պարոնայք—162 ու:
Ջալալօղլ 2 տիկնայք և 56 պարոնայք—140 ու: Վերին Աղու-
լին (առանց նուիրատուաց ցանկի)—135 ու: Շուշի 2 տիկին և 11
պարոնայք—133 ու: Մեծ-Ղարաբլիսայ 3 քահանայ, 18 տիկնայք
և 47 պարոնայք—119 ու: Մոսկվա (առանց ցանկի)—103 ու: Պետ-
րովսկ 25 տիկնայք և 18 պարոնայք—90 ու: Ախալքիս 45 տիկ-
նայք և 27 պարոնայք—86 ու: Ղուբա 2 քահ. 2 տիկ. և 75 պար-
ոնայք—73 ու: Լենքորան 18 պար. և 70 ուրիշ: Ղարաուրդանայ
19 անձինք 65 ու: Շուշավեր 3 քահանայ և 38 պարոնայք, 50
ուրիշ: Իզդիր 2 կրօնական և 17 անձինք—46 ու: Սարատով 9
անձինք—35 ուրիշ: Հին Նախիջևան 15 տիկնայք և 13 պարոն-
այք—31 ու: Վլադիկավկաս 1 տիկին և 26 պարոն—30 ու: Ղալա-
ղալսիւ 3 տիկնայք և 26 պարոնայք—29 ու: Շահրութ (?)—8

1) «Արարատեան» ընկերութեան երրորդ տարեգրի մէջ տպած Ռու-
սիաբնակ հայոց ցանկը լիքն է սխալներով, որոնց վրայ դարձնում ենք
նորա վարչութեան ուշադրութիւնը, Դեռևս ոչինչ, որ բոլոր «Արտէս»
«Եօլանէ», «Պաւլէ» և «Էլիզբար» անուն կրող այլ մարդկանց ապագորդը
ըստ իւր հաճոյից մտցրել է տիկնանց և օրիորդաց շարքը, իսկ «Նախիջ»
(Նատալիա) անուն տիկնաց նշանակել է պարոնների կարգում, բայց կար-
ծում ենք, որ անսերելի է աշխարհագրութիւն չգիտեալ Այդ ցանկի մէջ
Մազանիդարանը նշանակուած է Ռուսաստանում իսկ Դերբենդը Պարսկաս-
տանում: Բացի այդ, ցանկի մէջ երկու տեղ յիշուած են առանձին առան-
ձին Շուշու և Շուշի, իբր թէ դոքա տարբեր են միմեանցից: Ցանկայի էր
նմանապէս, որ այդ ցանկի մէջ տպւող աղբիւրը տաճկական ուղղագրու-
թեամբ չը սրբագրուէին, ինչպէս այս անգամ «Վահան Ռօմիսեանց» աղբը
երկու տեղ (եր. 89 և 91) դարձել է «Վ. Ռօմիսեանց» և այնուպէս

անձինք—28 ռ: Զայմ—4 անձինք—26 ռ: Արմեանսկ 1 տիկին և
 18 պարոն—25 ռ: Պետերբուրգ 7 անձինք—22 ռ: Սլավեանկա—7
 անձինք 21 ռ: Ալեքսանդրապոլ 2 տիկին և 2 պարոնայք 16 ռ:
 Մոզդոկ 1 տիկին և 9 պարոն 15 ռ: Համգաչիման գիւղ—24 ան-
 ձինք—13 ռուբլի: Գերբէնդ 36 անձինք—203 ռ: Այնուհետեւ մի մի
 անձինք նուիրած են՝ Նիժնի-Նովոգորոդ (առանց ցանկի)—20 ռ:
 Աստրախան—12½ ռ: Նովո-Իվանովկա—10 ռ: Եսանով—10 ռ:
 Վազարշապատ—5 ռ: Ղարապետ Բաղար—2 ռ: Ղնդամէնը Ռուսիա-
 ընակ հայերից մասնակցեց են նուիրատուութեան՝ 17 կրօնաւորք, 228
 տիկնայք և օրիորդք և 1380 պարոնայք կամ 1625 հոգի: Որով-
 հետեւ քանի մի տեղերի նուիրատուաց մանրամասն ցուցակը չէ տպած,
 այդ պատճառաւ մենք պատրաստ ենք ընդունել, որ ամբողջ գում-
 արը հասնում է մինչև 1800 անձանց, որոնք ընդամենը նուիրել են
 մօտ 7500 ռուբլի, որ ասել է թէ ամէն մի անձը միջին հաշուով
 նուիրել է մօտ 4 ռուբլի 16 կոպէկ: Պայտ 1, 134 նուիրատուք 57, 516 զ-
 ժողովելով, տուած են միջին հաշուով մօտ 50 ղուբուշ, որ թէ
 առաջուայ արժողութեամբ 7 կոպէկ հաշուելով լինէինք, կանէր 3½
 ռուբլի: Բայց այս հաշիւները զեռ վերջնական չեն կարող համա-
 բուրել: Ռուսիաքանակ հայոց մէջ գեռ շարունակում է թի հաբկէ
 այսուհետեւ աւելի յաջողութեամբ պիտի յառաջ երթայ նուիրա-
 տութեանց հաւաքելը յանուն Հայաստանի մէջ այբուբենի ծաւալ-
 ման: Նոյն իսկ տեղեկագրի մէջ անհնում ենք մոցրած միմիայն այն
 ցանկերը, որոնք վարչութեան ձեռքն են հասնել մինչև ներկայ 1879
 թուի փոքրիկ 15-ը, իսկ այնուհետեւ որքան մեզ յայտնի է՝ Մշակի
 խմբագրութեան ձեռքով քանի մի հազար ռուբլի դարձեալ փո-
 խադրուած է: Այդ է, գուցէ, պատճառը, որ տեղեկագրի մէջ գեռ չեն
 միշտաւ շատ հայաբնակ տեղեր և կամ թէ հաւաքած նուէրների
 ամբողջ ցուցակը զեռ չէր հասած ընկերութեանը: Մենք միայն ու-
 բախանում ենք, որ այս երկու երեք անցածող տարիների մէջ անգամ
 այդ ընկերութեան անունը ծանաչող, հնչատակը իմացող և համա-
 կրող ու իւր լոմայն չինայող հայ անձանց թիւը տեղեկագրերի ցու-
 ցակով հասնում է մօտ 4,350 հոգւոյ, որոնց մէջ են մօտ 65 կրօ-
 նաւորք և 423 տիկնայք և օրիորդք: Երբ մենք էլ այլոց վայրի վե-
 րոյ հաշիւների համեմատ ընդհանուր ազդիս թիւը ընդունենք 4
 միլիոն, այն ժամանակ դուրս կըգայ որ տակաւին նուիրատու է եղել
 Արարատեան ընկերութեանը հազար հայից մէկը, որ ի հաբկէ, շատ

քիչ է, բայց երբ յիշելու լինենք, որ ինքը ընկերութիւնը նոր է, գործունէութիւնը հանրածանօթ չէ, նուիրաբերութիւնները վերջացած չեն և, վերջապէս, որ միմիայն այդ ընկերութիւնը չէ, որին օգնում են հայք, այլ և ամէն տեղ եկեղեցիքը, ուսումնարանները, հիւանդանոցներ կամ որեւիցէ ազգօգուտ ձեռնարկութիւնները նմանապէս տեղացի ժողովուրդի խնամքով է պահուում և պահպանուում, այն ժամանակ, կտեսնենք որ հայ ազգը այսօր բաւականի ջանք ունէ կրթութեան ու անձնապահպանութեան: Ասկայն այս բոլորը մեր ներկայ հանգամանքների մէջ նոր պարտականութիւն է դնում ամեն տեղի հայերի վրայ՝ շտապել շահեցնելու իւրեանց գանձը, անխնայ գործ դնելով դորան ընկերութիւնների միջոցով ճաճկ. Հայաստանին օգնութիւն հասնիլ...: Արքան երազական է, գուցէ, Աւետեաց երկիրը հրէից համար, այնքան իրական է այսուհետև մերը մեզ համար...: Այս խնդրի վերաբերութեամբ պարտք ենք համարում նկատել, որ ճաճկաստանի հայաբնակ քաղաքներից մի քանիսը շատ քիչ եռանդ են ցոյց տալի ազգայնութեան գործի մէջ: Զմիւռնիայի նման քաղաքը, որ մօտ 10,000 հոգի հայ ունէ, ծովեզերեայ է և ամէն յարմարութիւնը ունէ աւելի մեծ գործ կատարելու, այսօր բաւականա՛նում է միմիայն իւր դպրոցներով և աղքատանոցներով և երեք տարւայ մէջ տուած է Վրարատեան ընկերութեանը ընդամենը մօտ 360 դուրուշ. այդ բաւական չէ. Զմիւռնիայիք, որ քանի անգամ Թուսիացոց կողմից դրամական և իրական նուերներ են ստացած (ներսէս կաթողիկոսի շնորհած հազար պօլուիսներեալը և այլն), և իւրեանց կողմից ոչ ոքի և ոչինչ չեն տուած, նոյն իսկ իւրեանց դպրոցները այսօր բարեկարգ չեն պահում: Քնականապէս, նոքա Ասնցոց և Մշեցոց նման աղքատութեան վրայ չեն կարող դնել իւրեանց արդարութիւնը և օւր չկան աղքատներ. մենք ևս ունենք մեր տնանկները, բայց օոցա խնամատարութիւնը չէր կարող մեզ արգելել վերջի տարիքը մեր լոման ձգելու յօգուտ Ասիացի բովկոց, Էջմիածնայ Գեմարանի շինութեան, Քերայի հրկիզելոց, Ասնայ հրկիզելոց, Ալաշկերտի դաղձականաց և այլն և այլն: Այս իրողութիւնը հարեանցի յիշում ենք յանուն արդարութեան:

Դառնալով դարձեալ Վրարատեան ընկերութեան տեղեկազրկելին, պիտի պարզենք, որ բացի վերոյիշեալ նուիրատուութեանց, ընկերութիւնը նշանաւոր շահ է ստացել (700 լիրայ) մի շքեղ պարահանդէսից որի մասին մանրամասնօրէն զբուեցաւ լրագիրների մէջ:

և մի թատրոնական ներկայացումից (53 լիրայ)։ Մենք ի հարկէ չենք
 դադարացնելու ընթերցողի յիշողութիւնը ընկերութեան այլևայլ մանր
 եկամուտների վրայ, յիշեցնելով միայն, որ դա իւր երրորդ տարուայ
 ընթացքում աւելացնելով կանոնադրութեան մէջ պատուոյ անդամ
 մակցութեան պայմանները, ընտրած է մշտնջենաւ որ պատուոյ անդամ
 մեծ. պ. Եսայի Գ. Փիթոյեանին, որ նուիրեց ընկերութեանը 500
 ռուբլի նոյն կանոնադրութեան վրայ հիմնուած ընկերութիւնը թըղ-
 թակից անդամ է ընտրած Փարիզի վաճառականական բարձրագոյն դըպ-
 րոցի տեսուչ պ. Պօլ Շըվաբէ և Հավրի վաճառականական բարձրագոյն
 դըպրոցի տեսուչ Հիպպոլիտ Չանկերին. նաև այն ի նկատի առնելով, որ
 49 յօդուածի համեմատ թղթակից անդամ կարող են ընտրուել
 միայն նոքա, որոնք ընկերութեան ուսումնական կարևոր ծառայու-
 չ թիւներ կը մատուցանեն, կամ ընկերութեան համար կարևոր աշ-
 չ խառնութիւններ յանձն կ'առնուն Պօլսէն դուրս, մենք չգիտենք
 թէ յիշեալ ուսումնականները ինչով օգտաւէտ գտնուեցան ընկե-
 րութեանը, մանաւանդ որ այս մասին տեղեկագրի մէջ ոչինչ չգտանք
 Իսկ տարեկան պատուոյ անդամ, որ ճաճ կապտանում տարին 2 լիրայ
 և Ռուսաստանում 20 ռուբլի տուող կարող է ընտրուել, ընկերու-
 թիւնը ոչ ոքի դեռ չէ ընտրած, Իբրեւ անպացոյց, որ «Արարատեան»
 ընկերութիւնը իւր գոյութեան կարճ միջոցում արդէն վարկ է ստա-
 ցել Ռուսիաբնակ հայոց աչքում, պէտք է ցոյց տանք յետևեալ
 կտակները։ 1.) Ալէքսանդրապօլի մէջ տիկին մահտեսհի Խանում
 Մարգարիտ Բաբայեանցը իւր մահաւանդ քանի մի օր առաջ կտա-
 կեց ընկերութեանը 50 ռուբլի, 2.) Հանգուցեալ տիկնոջ որդիք
 մեծ. պ. պ. Գէորգ և բժիշկ Աւետիք Մկրտչեան Բաբայեանները ի
 յիշատակ իւրեանց մօր կտակեցին Արարատեան ընկերութեան կամ
 այլ ուրեք նոր հիմնելի վարժապետանոցին 200 ռուբլի, և 3.) Հան-
 գուցեալ Թիֆլիսցի Աղէքսանդր Մ. Մովեանեանցի ընտանիքը և եղ-
 բայիները ի յիշատակ նորա նուիրեցին ընկերութեանը 500 ռուբլի։
 Մինչև այստեղ խօսելով «Արարատեան» ընկերութեան միմիայն
 ստացած համակրանաց վրայ, այժմ պարտք ենք համարում մի
 հայեացք ձգել այդ ընկերութեան երեքամեայ գործունէութեան վրայ։
 Արդէն ասացինք, որ ընկերութիւնը իւր գոյութեան առաջին օրերից
 զգաց, որ իւր նպատակներին հասնելու համար ամենայարմարաւոր է
 սկսել իւր աշխատութիւնը նոյն իսկ հայրենի երկրի խորքերում։ Այս
 մտքով ընկերութիւնը իւր ծախսով մարդ ուղարկեց Ասսպուրական

երկիրը, ու նորա ընտրած յարմարաւոր տեղում, այն է Վանայ գաւառի Ալիւր անունով հայաբնակ գիւղի մէջ մի նախակրթական երկսեռ վարժարան բացեց 1876 թուինոյեմբերի 1-ից: Առաջին օրից մօտ 200 աշակերտ և աշակերտուհի սկսեցին յաճախել այդ վարժարանը թէ յիշեալ Ալիւր գիւղից, և թէ մօտակայ Խաւենց, Դըռնաշէն, Ատնականց, Աննովանք, Ամենաշատ և Մարմետ գիւղերից: Այս վարժարանում 1878 թուի փետրուարի 1-ից բացեց ընկերութիւնը կիրակնօրեայ դասարան ժողովրդի համար: Սորանից յետոյ պատրաստ էր բռնալ մի դպրոց Վանայ ծովի արեւմտեան հարաւային եզերքում գտնուող Գատուան գիւղի մէջ և յետոյ մի երրորդը Գօրծօթ գիւղի մէջ, որ անհա սկսուեցաւ վերջին ժամանակուայ Տաճկա-Ռուսական պատերազմը: «Գատուան, բայց մանաւանդ Գօրծօթ, և Ինչպէս և ընկերութեան կէտ նպատակի եղող ուրիշ այլեայլ գիւղեր հրոյ և սրոյ ճարակ եղան և այդ սոսկալի ստուերը մինչև Ալիւր և գիւղի Արարատեան վարժարանին վրայ ևս տարածուեցաւ:» (Բ տեղեկագիր): Միմեանցից կէս ժամուայ հեռաւորութիւն ունեցող գիւղերը խզեցին իւրեանց երթևեկութիւնները և Ալիւր գիւղի վարժարանի աշակերտները կէս առ կէս քչացան, որովհետև նոքա մօտակայ գիւղերից էին դալիս: Արարատեան ընկերութեան կողմից ուղարկած և նորա անդամ պ. Մկրտիչ Փորթուգալեանը, որ պաշտօն ունէր վարժարաններ բանալու, Վասպուրական աշխարհի այդ շփոթ դրութիւնը տեսնելով, մի ան ժամանակ Պարսկաստանի վրայով հեռացաւ եկաւ Թիֆլիս: Իսկ Ալիւր գիւղի վարժարանը յանձնուեցաւ պ. Մարկոս Նաթանեանի տեսչութեանը: Աշակերտաց թիւը 1877—1878 թուին էր 119 տղայ և 16 աղջիկ: Բացի այդ՝ կիրակնօրեայ և գիշերային վարժարանը երթևեկող չափահաս աշակերտաց թիւն էր 17, ընդամենը ուրեմն 152 աշակերտք: Այս վարժարանի առաջի դասատուն էր նոյն իսկ Ալիւր գիւղի բնակիչ Զաքար Համբարձումեան, որ իւր կրթութիւնը ստացել է Պօլսոյ մէջ: Այս պատուական երիտասարդը չուտով վախճանեցաւ և ընկերութիւնը ուղարկեց նորա տեղը պ. Մ. Շտանեանին, որ նմանապէս Ալիւրցի լինելով, Պօլսէ դաստիարակուած: Իսկ մինչև սորա գալը, յիշեալ վարժարանի երկրորդ դասատուն վարում էր առաջինի պաշտօնը, իսկ երկրորդի պաշտօն վարողը եղաւ այս տեղ հիմնած կիրակնօրեայ վարժարանի յառաջողէմ աշակերտներից մէկը: Յետագայ 1878—1879 թուին վարժարանիս աշակերտաց թիւն էր 101 արական և 15 իգական, ամէնը

116 հոգի, իսկ կիրակնօրեայ և գիշերային վարժարանում ուսանում էին արդէն մօտ 30 հոգի, զիւղի ամենաընտիր երիտասարդները: Տեսուչ պ. Նաթանեանը զիւղացոյ աջակցութեամբ վարժարանի համար մի յարմարաւոր լոյս սենեակ շէնեց նմանապէս գրասեղաններ և նստարաններ պատրաստեց, այնինչ մինչև այն ժամանակ խեղճ երեխայքը նստում էին մի մութ շէնութեան խոնաւ յատակի վրայ:

Արարատեան ընկերութիւնը, որ անհամբեր սպասում էր պատերազմի վերջանալուն, մի առանձին եռանդոտ գործունէութիւն է ցոյց տալիս տէրութեանց մէջ խաղաղութիւն վերահաստատելու օրից: Նոյեմբերի 1-ին 1878 թ. ընկերութիւնը մի նախակրթարան բաց արաւ Կիւսնեց հայաբնակ զիւղում, որ զանաւում է վանայ արևելեան հիւսիսային կողմը 4 $\frac{1}{2}$ ժամ հեռաւորութեամբ: Դորան շրջապատում են կէս ժամից սկսած մինչև 1 $\frac{3}{4}$ ժամ հեռաւորութեամբ 4 հայաբնակ զիւղեր 77 տուն բնակիչներով, այդ տեղերից աշակերտներ են յաջախում յիշեալ նախակրթարանը: Կիւսնեց զիւղը 92 տուն հայ բնակիչ ունի՝ 287 արու և 263 էգ, որոնցից 105 տղայ և 57 աղջիկ գեռ դպրոցական տարիքի մէջ են: Կիւղացիք, որ երբէք դպրոց չէին ունեցած, աջակցեցին ընկերութեանը դպրոցական շէնութիւնը պատրաստելու համար: Այս նախակրթարանը ունի երկու դասատու 98 արական 17 իգական, ընդամենը 115 աշակերտ:

Աւեր և Կիւսնեց զիւղերի նախակրթարանները հաստատելուց յետոյ, ընկերութիւնը ձեռք է տալիս վան քաղաքի մէջ վարժապետանոց հիմնելուն: Պ. Մ. Փորթուզալեանի և Մ. Նաթանեանի ջանքով վարժապետանոցը բացուում է 1879 թ. յունվարի 1-ին: Վարժապետանոցը, որի ուսման ընթացքը չորս տարւայ մէջ պիտի աւարտուի, որոշել է ընդունել միայն 50 աշակերտ, թէև 100ի չափ ցանկացողներ են ներկայացել, բայց քննութիւնից յետոյ միայն 35 աշակերտ են ընդունուել, որոնցից կազմուել է առ այժմ երկու դասատուն՝ առաջինի մէջ 21 և երկրորդի մէջ 14 աշակերտ. բացի տեսչից (պ. Փորթուզալեան) և փոխ-տեսչից (պ. Նաթանեան), որ մի և նոյն ժամանակ հայերէնի և ընդհանուր պատմութեան դասատու է, վարժապետանոցը ունի հինգ ուսուցիչ և մի կարգապահ:

Այս երեք հիմնարկութեանցը ներկայ 1879 թւի մարտի 16-ին ընկերութիւնը աւելացրեց և մի երրորդ նախակրթարան. Գանտուան զիւղի մէջ, որ վանայ ծովի վրայ է, նորա արևմտեան հարաւային

կողմը ընկնելով: Սորա մօտերքում ոչ հեռու գտնւում են 7 զիւղ 166 հայ տներով: Ինքը Գատուանը ունի 68 տուն հայ 294 արու (26 անձը պանտխտութեան մէջ են) և 233 էգ: Սոցա մէջ 5—20 տարեկան հասակում 119 արու և 5—12 տարիքի մէջ 51 իգական: Ուսանում են այդ նախակրթարանում 62 արական և 18 իգական, ամէնը 80 հոգի: Գատաւուն միմիայն քահանան է և սկսած ժամանակը դեռ օգնական չունէր:

Պալով ընկերութեան ծախսերին, պէտք է ասենք, որ առաջի տարին (Ալիւր զիւղի նախակրթարանի համար) դպրոցական ծախս եղել է մօտ 4000 դուրուշ (գրամի հին հաշւով մօտ 280 ռուբլի): Երկրորդ տարին (դարձեալ նախակրթարանի համար) եղել է ծախս մօտ 7000 ղ. (մօտ 490 ռուբլի): Երրորդ տարին (3 նախակրթարանի և 1 վարժապետանոցի համար) ծախսած է մօտ 152 լիրայ (մօտ 1450 ռուբլի): Թէև ընկերութեան կանոնադրութեամբ ժողոված հասոյթի միմիայն տասներորդ մասը կարող է պահեստի մնալ, իսկ մնացածը անմիջապէս գործ դնելու է նոր ուսումնարաններ բանալու վրայ, բայց տեղեկագրից իմանում ենք, որ այս երրորդ տարին հասոյթի համեմատութեամբ եղած քիչ ծախսի պատճառն այն է, որ մեծ մասամբ նշանաւոր գումարները ընկերութեան ձեռքն են հաւսել միմիայն տարւայ վերջին: Բացի դպրոցական ծախսերից, ընկերութեան հաշուեկշիռների մէջ ցոյց են տուած կեդրոնական և այլ և այլ մանր ծախսեր՝ ա. տարին 210 ղ., բ. տարին մօտ 4,500 ղ. և գ. տարին մօտ 70 լիրայ: Ներկայ 1879 թ. ապրիլի 30-ին Արատեան ընկերութիւնը ունէր սնդուկի մէջ պատրաստ դրամ մօտ 209 լիրայ, և վասպուրականի տեսչութեան մօտ պատրաստ դրամ և գիրք մօտ 70 լիրայ, ընկերութեան դրամապահի մօտ (Վիւլպէն կեան էֆէնտիք) շահով 1000 լիրայ, Մշակի խմբագրութեան մօտ 474 լիրայ և Մօստիճեան էֆէնտիի մօտ (?)—109 լիրայ— ընդամենը պատրաստ դրամ մօտ 1860 լիրայ: Բացի այդ ընկերութեան գոյքի և կարասիքի արժողութիւնն էր 31 լիրայ և զբառան — մօտ 68 լիրայ:

Այսպէս ահա Արարատեան ընկերութիւնը իւր գոյութեան չորրորդ շրջանի սկզբում մօտ 1860 (որից պահեստի դնելու է միայն 204 լ.) լիրայ կամ մօտ 17,680 ռուբլի պատրաստ դրամ ունենալով միջոց ունի աւելի ընդարձակ գործունէութեան դիմել: Եւ ահա տեղեկագրի խօսքով իւր ներկայ չորրորդ շրջանի մէջ ընկերութիւնը

յետադայ գործերը միտք ունէր կատարելու: 1.) Մեր վերև յիշած ու այժմ թէ և 3000 լիրայի տէր, բայց գործունէութիւնից դատարած, բարեգործական ընկերութիւնը, Արարատեանի հետ բանակցութեան մտնելով, միտք ունի իւր հաշուով, բայց Արարատեանի խնամակալութեան տակ, Վանայ Հայոց — ձորի Վեմ գիւղի մէջ մի նախակրթարան բանայ: 2.) Պօլսոյ պատրիարք ամենապատիւ Ներսէս սրբապանի հրաւիրմամբ, ընկերութիւնը միտք ունի այս տարի վարժարաններ բանալու Զարսանձախ, Քղի և Զմէկածագ, ուր հայերը կամ քրդացած են կամ քրդանում են իւրեանց անկրթութեան պատճառով: Լրագիրներից իմացանք, որ ընկերութիւնը արդէն ուղարկել է այս ամառ իւր անդամներից պ. Պ. Վասիլեանին այդ տեղերը պտրտելու և բացուելիք վարժարանների տեղը որոշելու համար: Բացի այդ, ընկերութիւնը խոստանում է ընդարձակել աղջկանց կրթութեան և չափահասների համար կիւրակնօրեայ և գիշերային դասախօսութեանց շրջանը: Այս չորրորդ շրջանի համար պատրաստուած հաշուեկշռից իմանում ենք, որ 1879 — 1880 թ. ընկերութիւնը սպասում է 1.) իւր գումարից գործ դնելիք — 1186 լ. և բարեգործական ընկերութեան կողմից — 70 լ. ընդամենը — 1256 լիրայ կամ մօտ 12,000 ռուբլի, որից միտք ունի գործ դնել Վանայ վարժապետանոցի վրայ — 206 լ. Ալեւր գիւղի նախակրթարանի վրայ — 42 լ. Վիւսնեց նախակրթ. — 37 լ. Դատուանի նախակրթ. — 43 լ. Գործոթ կամ ուրիշ գիւղի մէջ բացուելիք նախակրթ. — 31 լ. Վեմ գիւղի նախակրթ. — 70. Կոցա տեսչութեան վրայ — 115 լ. Զարսանձաղի վարժարանի վրայ — 103 լ. Քղի վարժ. — 72 լ. Զմէկածագի վարժ. — 65 լ. սոցա տեսչութեան վրայ — 70 լ. և վերջապէս այդ վարժարանների դասադրքերի վրայ — 200 լ. ու կեդրոնական ծախք — 202 լ.: Ընդամենը 1256 լիրայ:

Տայ Աստուած որ եկող տարւայ մեր հաշիւը Արարատեան ընկերութեան գործունէութեան մասին աւելի ճոխ լինի:

Պօլսոյ մէջ եօթանասուն թուականներին կազմած բազմաթիւ ընկերութեանց հաշուան էին՝ 1870 թւին սկսած «Կարոցասիրաց», 1876 թւին Արեւիկեան և դարձեալ 1871 թւին — Վիլիկիեան ընկերութիւնները: Երեքի նպատակներն էլ մի և նոյնն էր՝ Հայաստանի ժողովուրդի կրթութեան գործին նպաստել: 1878 թւի սկզբին Կարոցասիրացը և Արեւիկեանը միանալով

կազմեցին մի ընկերութիւն «Գարոցասիրաց—Արեւելեան» անունով, որ իւր գործունէութեան համար ասպարէզ ընտրեց Մուշը: Ընկերութեան կողմից ուղարկած անձը անցեալ 1878 թւի նոյեմբերի 13-ին բացեց Մշոյ Ս. Մարիանէ թաղի մէջ մի վարժարան, 50 հատ աշակերտներով: Ներկայ 1879 թւին ընկերութիւն միտք ունէր Մշոյ վարժարանի համար ունենալ մի տնօրէն, երեք դասատու, մի տնտես և 20 գիշերօթիկ աշակերտ պահել, ծախս անելով դոցա վրայ ընդամենը 160 լերայ: Մի վարժարան ևս ձեռնարկեց բանալու Բաղէշի մէջ, որի վրայ պէտք է ծախս անէր 51 լիրայ: Վերջապէս ընկերութիւնը վճռել է սոյն 1879 թւին բանալ և մի երրորդ վարժարան: Այս ընկերութեան վրայ, որ ամենայն համակրանաց արժանի է, աւելի մանրամասն խօսելու տալիս կ'ունենանք, երբ առաջիկայ 1880 թուան կանխ կը հրատարակուի նորա տարեկան տեղեկագիրը:

Վերջապէս գալով Կիլիկեան ընկերութեանը, պէտք է ասել որ սա հիմնուած է 1871 թւին Պոլսոյ Խաս գիւղի Նուբար-Շահնազարեան վարժարանի սանիկների ձեռքով: Յայտնի է որ հանգուցեալ Կարապետ վարդապետ Շահնազարեանը մի գումար կտակեց Կիլիկիայի մէջ մի ազգային վարժարան հիմնելու համար: Կտակահատար Նուբար փաշան իւր կողմից ևս աւելացրեց մի գումար նոյն նպատակի համար, բայց զանազան պատճառներից ստիպուած, այդ վարժարանը բացուեցաւ ոչ Կիլիկիայի մէջ, այլ Պոլսոյ Խաս գիւղ թաղում: Բնականապէս դարոցի մէջ ժողովուեցան ոչ միմիայն ազգային սղաք, այլ և մայրաքաղաքի նշանաւոր հայ գերդաստանների զաւակները, որոնք ինչպէս ասացինք, իւրեանց մէջ մի փոքրիկ ընկերութիւն կազմեցին վարդանեան անունով, որի նպատակն էր որքան և իցէ նպաստել Կիլիկեացոց կրթութեանը: Նուբար-Շահնազարեանի ցաւալի փախճանը յայտնի է: Յիշեալ ընկերութիւնն էլ միշտ կապ ունենալով դարոցի ղեկութեան հետ, մերձ էր յիմա՜հ, երբ յանկարծ ներկայ 1879 թ. փետրուարի 18-ին Ներսէս սրբազան պատրիարքի հովանաւորութեան տակ վերակազմուեցաւ Կիլիկեան անունով, իւր գործունէութեան համար ասպարէզ ընտրելով ամբողջ Կիլիկեան:

զոր իրենց համարվելով — քաղաքացիական իրավունքների վրա միջամտելու և իրենց իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ դեպքերում զենքի օգտագործումը թույլատրելի է համարվում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

ԿՆԼԻԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ընդ թարժող հիվանդությունները և պաշտպանությունը Ա. Ենուպատի և ըստ ընդհանուր Տ. Տ. Ներսիս Ս. Արքեպիսկոպոս, Պատրիարքին ամենայն Հայոց Թուրքիոյ.

Կիլիկիան ընկերության գործադիր ժողովը պարտ անձին կը համարի այսօր Ձեր պատրական թերթին միջոցաւ ծանուցանել մեր ուստիանակ սիրելի ազգայնոց թէ ամսոյս 20-ին, չաբաթ օրը, պ. Բովհաննէս և Տիւրքիւն Եսարոս Նաքաշեաններն Հաճըն ուղևորեցան Ամենապատիւ Ս. Պատրիարք Տօր մասնաւոր յանձնարարական կոնդակովը, պարունը՝ Հաճընի Կիլիկիան վարժարան տղայոց. Կիլիկիան վարժարան աղջկանց և Կիլիկիան նախակրթարան երեք կրթական հաստատութեանց իբր ընդհանուր Տնօրէն—դասատու. և Տիւրքիւն մասնաւորաբար իբր վարժուէի Կիլիկիան վարժարանի օրիորդաց:

Արդէն ծանօթ է թէ Կիլիկիան Ընկերութիւնը իւր առաջին կրթական երկսեռ հաստատութիւնը Հաճընի մէջ հիմնած է ասկէ 9 տարի յառաջ՝ Հաճընայ վարդանեան Ընկերութիւն անուան տակ. և կրնայ պարծենալ թէ իւր կրթական այս երկսեռ յարկերն բաւական պտուղներ նուիրած են ազգին, որոնցմէ ոմանք ցայսօր մեր Հաճընայ վարժարանաց մէջ, ոմանք Կիլիկիոյ դանազան կողմերը թէ դպրոցներու և թէ տէրութեան պաշտօններու մէջ և ոմանք ալ նոյն իսկ Կիլիկիայէն դուրս դանազան ազգային վարժարաններու մէջ օգտակար եղած են ազգին. ան այս իբր ապացոյց ուրախութեամբ կը հրապարակեմք հետեւեալ նամակը, զոր մեր Հաճընի վարդանեան վարժարանի նախորդ սաներէն պ. Մինաս Թուրքիսեանց մեզ ուղղած է Պաղդատէն սեպտեմբեր 5 ամսաթուով:

« Բարեջան Անդամք Կիլիկիան Ընկերութեան ի Պօլիս

« Աղգասէր Տեալք,

« Ընկերութեանդ շնորհիւ ուսումն անած եմ և այժմ կը իրաւադիմ ընկերութեանդ հաստատելիք վարժարաններէն միոյն մէջ պաշտօն վարելով պարտքս վճարել Ձեզ և սիրելի ազգիս: Երկու օրէն կը մննիմ Պաղ-

տառէն և ի Տիգրանակերպ կը մնամ Ձեր պատասխանին: Ազգութեան ոգի,
հայրենեաց սէր և եղբարցս ծառայելու փափագ չեն պակասիր յիս: Կա-
րող էք յօգուտ և ի պատիւ Ընկերութեանդ գործածել իմ այս զգացում-
ներս, որովք մնամ

(Ստորագրութիւն) Մինաս Թուրսարգիսեանց

Սոյն պարոնը յանձնարարուած է մեզ նաև Հաճընոյ վարժարանաց
նախորդ տնօրէն—դասաւու պ Միհրան Սվանիտի կողմանէ որ ի Պաղ-
տատ կը դասախօսէ այժմ: հետեեալ կերպով կը խօսի մանր վրայ իւր ան-
ընկերութիւնս ուղղած մը գրութեան մէջ:

« Պ. Մինաս Թուրսարգիսեանց բնիկ Հաճընցի երիտասարդ մ է, որ
իւր այր բնն գինն ստացաւ Հաճընոյ վարդանեան վարժարանին մէջ, և
զարմանալի յաջողակութեամբ յառաջանալով կատարեալ ուսման հոն ին-
դասատուութեամբ հայերէն և թուրքերէն լեզուներն, և բաւականին
ֆրանսերէն. նաև թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւնը
և այլն, և ապա բաւական ժամանակ ես երբեմն վարդանեան և երբեմն վար-
դուհեան օրիորդաց վարժարանին մէջ օգնական դասատուութեամբ գործածեցի
զինքն ի Հաճըն: Հաճընէն մեկնելէն յետոյ, այդ պարոնն ժամանակ մը
պ. Մարտիրոս Պոյաճեանի իւր մէկ ուրիշ ընկերակցին հետ կառավարեց նոյն
երկսեռ վարժարանները, մինչև որ յաջորդեց մեզ պ. Մեկընէ Ս. Կնիկի գերջն
պ. Մինաս Պէրէճիկ քաղաքն դասատու եղաւ երկու տարուայ չափ, և
հուսկ ապա Հայէպի վարժարանի դասատուութեան հրաւիրուեցաւ: Ասկէ
ալ քիչ ատենէն Պաղտատի մէջ ինձ օգնական դասատու մը պէտք ըլլալով
զինքն ի Պաղտատ հրաւիրեցի. բայց ափսոս որ այդ աղատ լեռանց և հո-
վասուն վայրաց մէջ ծնած ու մնած երիտասարդին համար բոլորովին վնաս-
աբեր եղաւ այս քաղաքի դժոխմբեր օդն և սուբթօր Մուրադեանի խորհր-
դովը վերջապէս տարի մը յետոյ մեկնիլ հարկ եղաւ այս քաղաքէն: »

Այսօր սոյն երիտասարդը ժողովոյս որոշմամբ ի Մարաշ հեղեարած է
հոն պ. Միսաք Էմանսեանի քով, և անտի ընկերութեանս նոր բանալիք
վարժարաններէն մէկուն մէջ դասատուութեան պաշտօն պիտի ծառնան:

Խմբագրապետ Տէր,

Այս և ասոր նման արդիւնքներն բաւական մեծ ապացոյց մը են թէ
ազգին առ ընկերութիւնս ըրած անատաճեցնութիւնները ապարդիւն չեն
մնացած, և առ այս իբր կրկին ապացոյց կրնամք յառաջ բերել ընկերու-
թեանս Հաճընի մէջ կարգած խնամակալին մեղտեմբեր 20 ամսաթուով
մեզ ուղղած պտուղներէն որ հեռեապէս կը տեղեկագրէ:

« Այս օրերս Մեծին Բրիտանիոյ Տէրութեան կողմանէ վերակարգեալ կե-
սարիոյ փոխ—հիւպատոս վսեմ. Հարրի Բուբլըր, և իւր թարգման կեսարացի
մեծ. Դէորդ Էֆէնտի Ֆրէնկեան, Հաճըն գալով մեզ վանքը հիւր եղան, և
ըստ կարողութեան քաղաքիս պէտք եղած հիւրնկալութիւնը գտնելէն զատ

այժմուսմէն մ վիճակար մաս

երրորդ օրը Նորին Վսեմութիւնը, թարգման էֆէնտին, տեղւոյն Առաջնորդ
Գերապատիւ Պետրոս Սրբազանը, ի միասին վարժարանին այցելութիւն մը
տուին: Նորին Վսեմութիւնը՝ աշակերտներէն թէրդեան և Էքմէքճեան պա-
տանները կանչելով՝ համատարածի վրայ հարցումներ ըրաւ, և ինքը ոտքի
կայնած տախտակի վրայ իւր ձեռք թռւաբանական խնդիրներ գրելով, և
գաղղիարէն ու տաճկերէն գիր գրել տալէն ի զատ՝ թարգման էֆէնտին ալ
դասական հարցումներ ըրաւ, և ըստ բաւականին պատասխան առնելէ
յետոյ՝ հրամայեց որ երգեն, աշակերտք ալ ճշուիրագործ է Հայրենիք երգը
երգեցին: Այնուհետև Նորին Վսեմութիւնն սկսաւ, նախ վարժարանիս
չէնքը, բարեկարգութիւնը, գովեց աշակերտաց յառաջադիմութիւնը, չնոր-
հակալութիւն մատոյց կիլիկեան Ընկերութեան, պատուեց դաստու-
պ. Մեղքոնը՝ ձեռքը սեղմելով, և ի չնորհա Ձեր պատուարժան Ընկերու-
թեան չնորհակալութիւն մատոյց խնամակալութեան և բոլոր աշակերտաց,
«Ձեր դպրոցին կանոնաւորութիւնն ու յառաջդիմութիւնը պիտի գրեմ
փարլամէնթին, ըսաւ, և յուսով եմ որ կրկին զալստեանս աւելի յառաջա-
դէմ պիտի տեսնեմ, և այն ժամանակ աւելի մեծամեծ հարցումներ ընեմ»:
ըսելով բաժնուեցաւ: Նոյն օրը մեր ազգային երեսիւններէն մէկուն տունը
խնճոյք տրուեցաւ յանուն ազգին և միւս օրը առաւօտեան ժամը մէկին
քաղաքէս բաժնուեցաւ դէպի Կեսարիա: Տեղւոյս տեղակալը, իշխաններէն
մին, և նուաստս քաղաքէս կէս ժամ հեռու ճամբեցինք: Նոյն տեղն ալ
դարձեալ գոհութիւն մատոյց վարժարանիս վրայ և յետոյ բաժնուեցանք:
Ընկերութիւնս իւր ցարդ ըրած ջանից և գոհողութեանց արդիւնք-
ները վայելելու բաղդն ունենալով և իւր Հաճընի երեք կրթական հաս-
տատութիւններն աւելի յառաջադէմ վիճակի մէջ դնելու ստիպողականու-
թիւնը նկատողութեան առնելով՝ պարտաւոր էր իւր վարժարանաց աստի-
ճանը աւելի բարձրացնել, ինչ որ արդէն վաղուց ղգացած էինք, սակայն
միշտ երկու գօրաւոր արգելքներ մեր ջերմ փափաքները կը սառեցնէին:
մին դրամ, միւսը այնպիսի դասատու մը գտնել որոյ կրնն ևս վարժուհի
ըլլալու արժանաւորութիւններովն օժտեալ ըլլար: Ժամանակն իւր պարա-
գայներովը յաղթեց սակայն այս երկու դժուարութեանց ալ: Ժողովրդին
ազգային գործերու համար առատաձեռնութեան յօժարակամ տրամադրու-
թիւնը մէկ կողմէն և մեր ջանքերն ու Նաքաշեաններու հայրենասէր պատ-
րաստակաւորութիւնը միւս կողմէն պսակեցին վերջապէս թէ մեր փափազ-
ներն և թէ մեր Հաճընցի ուսումնականքօտ ազգայնոց իղձերը:

Կիլիկեան Ընկերութիւնն իւր այս ընտրութեամբը բարեբաղդ կը հա-
մարի ինքզինք, զի պ. Յովհաննէս Նաքաշեան քաղքիս Մեղպուրեան բա-
րեհամբաւ վարժարանի Ընդհանուր Տնօրէն—դասատու և իւր կինը նոյն
յարկին մէջ վարժուհի ըլլալով բաւական երաշխաւորութիւն մ' է իրենց
արժանաւորութեանց ի մասին հմտութեան, բարոյականի, վարուց ու
բարուց:

Երկուքն հայերէնի և ֆրանսերէնի հմուտ. Տիկին Նաքաշեան ծանօթ
նաև դաշնակի և ձեռագործի:

Մեր այս տնօրէնութեան օգտակարութիւնը քաջատրութեան կարօտ չըլլալը գիտնալով հանդերձ՝ աւելորդ չեմք համարիր մեր Հաճընոյ վարժարանաց պ. Խնամակալին միենոյն նամակէն հետեւալ տողերը մեր ուստիաբնակ ազնիւ և սիրելի ազգայնոց ուշադրութեանը յանձնել:

Ճշարտորդ գրութիւննիդ առնելէս յետոյ երբ բողոքականք լսեցինք Ձեր Հաճընոյ վրայ ունեցած սէրն ու ազգին յառաջադիմութեան փոյթը, աւելի նախանձած կը ջանան իրենց վարժարանները բազմացնել և գոլէճ մը բանալ, որպէս զի առնեն զՀայոց զաւակունս տանին միսիոնարաց սառած գիւղեր նետեն, որ մարի նոցա սրտին մէջ գոյացած ազգութեան սիրոյ աղբիւրը: Այդ մասին ես անհոգ եմ, վասն զի ի չնորհս Կիլիկեան Ընկերութեան նոցա տասը վարժարանէն աւելի յառաջադէմ պիտի հանդիսանայ Կիլիկեան ուսումնարանը: Եթէ աշակերտք քննութեան ենթարկուին առնոց առաջին աստիճանի աշակերտք չեն կարող մեր երրորդինհն հաւասարիլ, ինչպէս որ տեսած եմք քննութիւն տուած ատենին: Ամենին ուսումն չունենալով՝ միմիայն Պօղոս Պետրոս առաքեալները կը քարոզեն խեղճերը: Նաև կը խոստանաք աւելի բարձր և արժանաւոր դասատու մը զրկել: Այս մասին թէ նուաստս և թէ բոլոր տեղոյս ազգայինք յանհունս դո՛ւ պիտի ընէք: Քաղաքիս բողոքականք խեղճ ազգերնիս որսալու համար միսիոնարաց ոգուով լեցուած քանիցս օրիորդ ու տիկին վարժուհիներ բերած ու վարժարաններ բացած են: Եթէ մեր օրիորդաց վարժարանը լաւ շարունակէ ու աւելի բարեկարգ վիճակ մ' առնէ, անշուշտ մեր ազգայնոց օրիորդք ալ հարկ չպիտի տեսնեն անոնց վարժարանները: Եւ յաճախել այս պատճառաւ անս ամենէն աւելի օրիորդաց վարժարանը պէտք է մեզ, բայց հոս տիկին Մանուկեանէն արժանաւոր ուրիշ վարժուհի մը չգտնուելուն համար՝ ուսումնական և ձեռագործութեան հմուտ ու բարոյականի տէր վարժուհի մ' անպատճառ պէտք է զրկել այդ կողմէն, ազգին ապագան պաշտպանելու համար: Վասն զի քաջ գիտէք որ ազգի մը յառաջադիմութիւնը արականէն աւելի իգական սեռի դաստիարակութենէն կախնալ է: Ուստի կողաչեմ որ այս մասին լաւ մտածելով՝ վարժուհի մ' ալ օր յառաջ փութայք զրկելը:

Մեր Մեծ. Պ. Խնամակալին պահանջները, ինչպէս որ տեսնուեց, լրացուցած եմք արդէն: Բայց Կիլիկիոյ մէջ քանի քանի քաղաք ու գիւղեր կան դեռ ևս որք մտաւորական մշակութենէն բոլորովին զուրկ՝ անզգայութեան մէջ կը խորդան: Առ այս իբր ապացոյց կը փութամք Ձեր Մեծ. ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրել հետագայ կէտերուն վրայ զորս մեր Հաճընոյ վարժարանաց նախորդ Տնօրէն պ. Մ. Սվաճեանի նոյն գրութենէն քաղած եմք, և որք կարող են բաւական դադափար մը տալ մեր Կիլիկեցի ազգայնոց կարօտութեանց վրայ:

Ճերեցէք, կը գրէ պ. Մ. Սվաճեան, որ իմ անձնական փորձառութեամբ գիտցածս ու լսածս ըսեմ Կիլիկեան. . . Ընկերութեան: Կիլիկիոյ մէջ ամենէն աւելի ուսման պէտք ունի վահկայ գիւղը (նախնի՝ վահկայ

ամբողջ) ուր երեք հարիւր տուն հայ կայ մէկ եկեղեցիով. ժողովուրդը թէև սրտոտ, արի և աներկիւղ, բայց իսպառ անտարբեր ազգութեան զգացմանց, և մինչև իսկ լեզունին կորսնցուցած թուրքերէնով կը վարուին այդ անմախ ու բնական քաջերն: Եթէ դաստիարակութեամբ ալ զօրանան, ինչեր չեն կարող լինել... Երկրորդ ուսումնական քաղաք տեղն է Կիլիկիոյ մէջ Միսիս գիւղաքաղաքը, վեց հարիւր տուն բնակչօք, Ատանա քաղաքի մօտերը, Միլեթիականի ծովեզրէն գրեթէ մէկ օր վեր. այստեղ ալ բնաւ ուսումն չկայ, և քաղաքի ամբողջ մանուկներ սաղմոսն ունին իրենց ուսմանց վախճան ու լրումն, միայն այս տեղի օգն սակաւ ինչ վառաճող է: Երրորդն է Սիս քաղաքը, նախկին մայրաքաղաք Կիլիկեան թագաւորութեան ուր եօթն հարիւր տան չափ հայեր կան, միայն երկու հասարակ ընթերցանութեան վարժարաններ ունին: Զորրորդն է Շար—Տէրէսի ըստած նորաչէն հայ գիւղը, Հաճընէն մէկ օր դէպի Հիւսիս, 150 տուն հայով, կիսաչէն եկեղեցի մ' ունին, դպրոց ի՞նչ ըլլալը լսած չեն, և կը լսեմք թէ բողոքականք ալ նորերն հաստատուած են: Ուշադրութեան արժանի են նաև Զօք Մէրգիվէն, Օճաքլը, Իզերլի, Էրզնէ, Պախլէ և Էյպէզ գիւղաքաղաքներն, սրոց մէջ կը գտնուին 1200 տան չափ հայեր անուս և անդաստիարակ. Նա մանաւանդ Էյպէզ ուր իտալական վանք մ' ալ կայ և ժողովուրդը եկեղեցի իսկ չունենալով՝ անդ կը յաճախէ:

Ահա համառօտիւ Կիլիկիոյ վիճակը ի մասին դաստիարակութեան: Կը մնայ որ ամեն հայ աշակցի մեզ որ առանց ժամանակի կորստեան դարման տանկմք: Կիլիկեան Ընկերութիւնը այժմ ունի վարժարան ի Զէյթուն, երեք վարժարան ի Հաճըն և ուսումնարան ի Մարաշ: Բերկրութեամբ կարդացինք «Մեղուծի 13 հոկտեմբեր թուոյն մէջ պ. Յովակիմ Գեղամեանի ստորագրութեամբ Ախալցխայից նամակ մը որով կը ծանուցանէր յիշեալ հայրենասէրն թէ յատկապէս Զէյթուն համար 1000 ուսուցիչ մօտ գումար մը հաւաքուած լինելն, և յիշեալ քաղաքի հայրենասէր և կրթասէր ազգայնոց կողմանէ տարեկան 500 ուսուցիչ ևս յատկացնելն Զէյթունի վարժարանաց համար:

Կիլիկեան Ընկերութիւնը ամբողջ Կիլիկեան (Տաւրոս) իւր գործառնութեանց չըջան ունենալով պարտ անձին կը համարի ծանուցանել, ինչպէս պ. Գեղամեան իսկ խնդրած է, թէ ինքն է ի Զէյթուն աշխատողն և ոչ Արարատեան, ինչպէս ուզած են ներկայել: Արարատեանն ունի վասպուրականը, ինչպէս Գալոցասիրաց—Արեւելեանն ալ Տարօնը: Ուստի յանուն Զէյթունցի հայ քաջազանց՝ խորին շնորհակալութիւննիս յայտնելով պ. Յովակիմ Գեղամեանի և իւր ազնիւ ընկերակիցներուն, որ սիրած են խորհիլ Կիլիկիոյ ապագային վրայ կը ինչդեմք միանգամայն որ բարեհաճին ուղղել ունէ գումար և նուիրատուութիւն առ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայոց, Պաշտպան Կիլիկեան Ընկերութեան:

Բարեհաճեցէք կանխաւ ընդունիլ Մեծապատիւ Խմբագրապետ, մեր խոր շնորհակալեաց և մեծարանաց հաւաստին:

Մնամք մեծաւ յարգանք ի զիմաց գործ ժողովոյ Կիլիկեան Ընկերութեան

Մեծնապիր Ստեփանյան Ատենայտն

Յ. ԱՌԱՔԵԼԵԱՆ Գ. ԱՊՏՈՒԼԼԱՋ

Գանձապետ

ԱՐՇԱՎՈՒՆԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կ. Պոլիս, 29 հոկտ. 1879.

3. Եթե տարած գումարն լինի 500 ռուբլի կամ 1,000 ռուբլի կամ 5,000 ռ.

կամ 8,000 ռ. 10,000 ռ. կամ 25,000 ռ. և կամ 40,000 ռ. յայնժամ այդպիսի գումարներն լինելու են սեփականութիւն յիշեալ օրիորդաց միջնակարգ ուսումնարանին իբրև մայր գումար, որոց տոկոսիքը վարչութիւնդ ունի իրաւունք գործածել ուսումնարանիդ համար որպէս և կամի, յատկացնելով բարի գործ ինչ Տիգրանիս յիշատակ, զոր օրինակ յանուն նորա որդեգրուհի պահել կամ գրքեր տպել կամ դասագիրք ձրի բաժանել խեղճերուն կամ նրանց համար զգեստ կարել տալ և այլն ինչ որ արժան կը դատէ վարչութիւնդ, հրատարակելով այն արարքը յընդհանուր գիտութիւն:

4, Եթէ տարած գումարն լինի 75,000 ռուբլի. դրանից վարչութիւնդ պարտաւոր է տալ հինգ հազար ի սեփականութիւն Ներսիսեան Հայոց հոգևոր ազգային դպրոցին. իսկ մնացած 70,000 ռուբլի լինելու է մայր գումար օրիորդաց ուսումնարանիդ, որոց տոկոսիքը վարչութիւնդ ունի իրաւունք գործածել ինչպէս վերել յայտնած է:

5, Եթէ 200,000 ռուբլի. դրանից 10,000 վարչութիւնդ պարտ է տալ սեփականութիւն յիշեալ Ներսիսեան դպրոցին, իսկ հարիւր հազար ռուբլիով դնէ վարչութիւնդ կամ կառուցանէ սուրբ Գայիանեան օրիորդաց ուսումնարանիդ համար մէկ յարմար տուն իր պարտիզով. մնացած 90,000 մնալու է մայր գումար այդ ուսումնարանիդ համար, որոց տոկոսիքը վարչութիւնդ գործածելու է ինչպէս վերել յայտնած է:

6, Ներսիսեան դպրոցի վարչութիւնը առնելով յիշեալ 5,000 և կամ 10,000 պարտաւոր է իւրաքանչիւր հինգ հազարի տոկոսից պահել նոյն դպրոցի միջում յանուն Տիգրանի Առուանեանց մէկ մէկ ստեպենդեանտ յառաջագէմ խեղճ աշակերտներից, որոնք եթէ ուսման ընթացք աւարտելից յետոյ հոգևորական լինին, կամ քահանայ կամ վարդապետ հոգաբարձութիւնը դպրոցին յայնժամ պարտաւոր է տալ նրանց միանուագ իւրաքանչիւրին երեք հարիւրական ռուբլի. մնացած տոկոսիքն լինելու են յօգուտ դպրոցին: Իսկ եթէ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը չը համաձայնի այս պայմաններին, կամ ապագային չը կատարէ այս պայմանը. այդ միջոցներում վարչութիւնդ ունի իրաւունք, յիշեալ գումարն չը տալ, եթէ տուած է յետ առնուլ և տալ (այլ) Հայոց ազգային ուսումնարանի միում որ կամի կատարել յիշեալ պայմանը:

7, Եթէ կրկին և կրկին վիճակախաղից տրուի տոմսակով գումարներ յայն ժամանակներում վարչութիւնդ այդ գումարները ևս գործածելու է համաձայն վերոյիշեալ 3, 4, 5, 6, յօդուածներին միայն այնու բացառութեամբ, որ եթէ երկու հարիւր հազար ռուբլի ընկնի նրանից հարիւր հազար ռուբլին տայ ի սեփականութիւն Հայոց ազգային չքաւոր ծխական տասը ուսումնարանների հինգը Ռուսաստանում եղած, ի թիւս որոց լինելու է Սուրբ Էջմիածնի ճեմարանը, իսկ հինգը Թուրքաստանի Հայաստանում եղածներուն իւրաքանչիւրին տասը հազարական ռուբլի (10,000 ռուբլի):

8, Վիճակախաղից ընկած յօգուտ ուսումնարանիդ մայր գումարները վարչութիւնդ պարտաւոր է տալ չահեցնելու ուր և ում և որքանի կամն-

նայ, միայն դրամսին իմացում տայ գրաւոր և զինի մեր մահուան մեր ժառանգներուն:

9, Եթէ վարչութիւնդ բարեհաճի յիշեալ պայմանները կատարելու, ուստի խնդրում ենք առնել հետեւեալը. նախ այս մեր նուիրական թուղթը տպել տալ Հայոց լրագիրներում և ամսագրներում, երկրորդ սրա օրինակները վարչութիւնդ վաւերացմամբ և ուսումնարանիդ կնիքով հաստատած տալ մէկ հատ մեզ, մէկ հատ Թիֆլիսու Ներսիսեան հոգեւոր ուսումնարանի հոգաբարձութեան, մէկ հատ Կօնստանդնուպօլսոյ ազգային ժողովոյն և մէկ հատ Սրբազան Սինօդին Էջմիածնայ, վասն զի ամէնքս էլ ունինք իրաւունք հսկելու վերոյգրեալ պայմանների կատարման, ինչ որ իւրաքանչիւրներիս կը վերաբերուի:

10, Եթէ վարչութեանդ կողմանէ յիշեալ պայմաններից մէկն ու մէկն, կամ քանիսը, և կամ բոլորովին չը կատարուին, կամ եթէ յիշեալ Սրբոյն Գայիանեան ուսումնարանը որ և իցէ պատճառով խափանուի, յայնժամ մենք կամ մեր ժառանգները իրաւունք ունինք յիշեալ մայր գումարները թէ տունը և եթէ տոմսակը կամ ներկան և կամ փոխարինածը յետ առնուլ և անպատճառ ընծայել Հայոց ազգային մէկ ուսումնարանի, որտեղ որ լինի և ինչ պայմանով կամենանք, միայն յանուն Տիգրանի Խաչատուրեանց Առուսեանց, հանելով նրանից տասնհարկ մեր կամ մեր ժառանգների ծախսի համար:

Ստորագրութիւնք:

Խաչատուր Թորոսեան Առուսեանց

Սալօմէ Աւետիքեան Առուսեանց

Համաձայն է ընդ իսկակա նիսն՝ նախագահ սուրբ Գայիանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի վարչութեան՝ տեսուչ ուսումնարանի Նկիողայոս Խոսրովեանց:

Վաւերացրեց՝

Քարտուղար վարչութեան Ա. Քիչիկեան:

25 մարտի 1879 թ.

ԿՆԻՓ

Թիֆլիզ.